

5980

1900

081

4-13

2610

• 820071

ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ  
ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՈՅ Կ. ՊՈԼՍՈՅ

XX

081  
4-13

218

# ՆԻԻԹ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԵՒ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Հ Ա Տ Ո Ր Ա .

Կ. ՊՈԼՍՈ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

1900

*Handwritten signature*



Գործիս անունն, ՆԻԹԵ Բանասիրական, Ռեսուսանական եւ Մանկավարժական, ինքնին բաւական կը բացարեւ իր նպատակը: Ճոխ Հաւաքածոյ մը, կամ թէ ըսենք, Մատենադարան մը պիտի լինի այս՝ բանասիրական-պատմական շահագրգիռ նիւթերու եւ ուսումնասիրութիւններու, ինչպէս եւ ուսումնական եւ մանկավարժական պիտանի ծակօրութիւններու եւ նորութիւններու նորումած. սեւակ մը Հանրագիտարան ուրիշ պիտի կրնան օգտուիլ արեւն դասակարգի ընթերցողի, զարգացածն ու թերուն, ուսուցիչն եւ ուսանողը: Իրաւ է թէ օրաթերթեր մասամբ կը յրացեն այս թերին, բայց յաճախ՝ անոնց մէջ հրատարակուած շատ պիտանի նիւթեր խիստ շատերու համար կորուսուելու, եւ կամ ի հարկին փնտնուելու գտնուելու անհնարութեան եկարկուած են, մանաւանդ թէ օրաթերթի՝ մասնագիտական հանգանակի չունենալով՝ յաճախ անկարող իսկ կը մնան հրատարակելու կարեւոր ուսումնասիրութիւններ: ՆԻԹԸ կոչուած է, իր դիւրասար դիրքով, ընտրեալ պարունակութեամբ եւ հետզհետէ կազմելի առանձին հատորներու շարքով, մասամբ դարմանելու այս անպատեհութիւնները, պարագաներու ներածին չափ: Մանկավարժական բաժինը պիտի պարունակէ՝ ի մէջ այլոց՝ զանազան Դասընթացներ, որք պիտի ծառայեն դիւրացնելու Ռեսուսանորհրդոյ Ռեսուսանց Ծրագրին գործադրութիւնը: Կը հաւասանք թէ այսպիսի աշխատասիրութիւն մը պիտի կրնայ՝ իր կարգին՝ դուրեւարեալ ծառայութիւն մը մատուցանել հայ գրականութեան բանասիրական, ուսումնական եւ մանկավարժական ճիւղերուն. կը հաւասանք որ մեր բանաստեղծ եւ ուսումնաստեղծ՝ այժմ արեւի քան երբեք ստուարաթիւ՝ սիրով պիտի փարին մեր այս ձեռնարկին եւ իրենց կրցած կերպով

Ոչ ոք իրաւունք ունի ՆԻԹԵն արտատպումներ ընելու՝ առանց մեր մասնաւոր թոյլտուութեան: Հախառակ գործողները օրինական պատասխանատուութեան կ'ենթարկուին:

Յ. Գ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ



Քանի՞ հատ 365 ունինք մինչեւ 10 թիւը. համրեցէ՛ք.   
 ատար հատ. ուրեմն երբ տասր տարի կ'ըսենք, 10 անգամ   
 365 օրն ամբողջացած է արդէն, եւ 10 ին յաջորդող Յուն-   
 ուար, Փետրուար, Մարտ, եւայլն, ամիսներն ուրիշ բան չեն   
 այլ 11րդ տարւոյն մասերը:

Նոյնպէս, երբ կ'ըսենք 100 տարի, յաջորդող Յունուար,   
 Փետրուար, Մարտ, եւայլն, ամիսները չեն որ պիտի կազ-   
 մեն 100րդ տարին. 100րդ տարին կազմուած վերջացած է,   
 քանի որ  $365 \text{ օր} \times 100 = 100 \text{ տարի}$ . 100 տարւոյն յաջորդող   
 ամիսները կը վերաբերին 101րդ տարւոյն:

Շարունակենք: Երբ կ'ըսենք 200 տարի, ունինք 2 ան-   
 գամ 100 տարի, հետեւաբար 200րդ տարին կատարելապէս   
 լրացած է եւ անոր յաջորդող օրերն ու ամիսները 200րդ   
 տարւոյն չեն պատկանիր, այլ 201րդ տարւոյն: Նմանապէս   
 երբ « 900 յունուար 6 » կ'ըսենք, այս կը նշանակէ թէ 900   
 տարին ամբողջացած եւ 6 օր ալ անցած է, քանի որ ունինք   
 9 անգամ 100 տարի եւ 6 օր: Երբ 1000 տարի կը գրենք,   
 1000րդ տարին ոչ թէ նոր կ'սկսի, այլ լրացած է, քանի որ   
  $100 \text{ տարի} \times 10 = 1000 \text{ տարի}$ : Միտ դնել նաեւ հետեւեալ   
 ձեւին.

տր	տր	տր	տր	տր	տր	տր	տր	տր	տր	տարի
100	200	300	400	500	600	700	800	900	1000	
100	100	100	100	100	100	100	100	100	100	
տր	տր	տր	տր	տր	տր	տր	տր	տր	տր	

Բացորոշ է թէ 10 հատ ամբողջ 100 տարի պէտք է,   
 որ 1000 տարի կամ 10 դար ըլլայ: Ուրեմն երբ 1000 տարի   
 կ'ըսենք, 10րդ դարը վերջացած է արդէն, եւ ո՛չ թէ յա-   
 ջորդող 12 ամիսներով պիտի ամբողջանայ. այդ յաջորդող   
 ամիսներ կը պատկանին 11րդ դարուն:

Շարունակենք հիմա դարերն համրել 1000 էն անդին:   
 տարի տարի տարի տարի տարի տարի տարի տարի տարի   
 1000 1100 1200 1300 1400 1500 1600 1700 1800 1900   
 100 100 100 100 100 100 100 100 100 100   
 տր տր տր տր տր տր տր տր տր տր

Քանի՞ անգամ 100 տարի կամ քանի՞ դար ունեցանք   
 մինչեւ 1900: Համրեցէ՛ք եւ պիտի գտնէք ճիշդ 19 դար:   
 1900 ին յաջորդող յունուար, փետրուար, մարտ, ապրիլ,   
 եւայլն, ամիսները եւ այս ամիսներէն ալ կազմուած տարի-   
 ները պիտի ծառայեն 100 տարի եւս կամ դար մ'եւս կազ-   
 մելու (20րդ դարը), եւ երբ տարիները 1901, 1902 . . .   
 1999 համրելով, հասնինք ի 2000, 20րդ դարը վերջացած   
 պիտի ըլլայ, կամ թէ ըսենք՝ 20րդ դարը պիտի վերջանայ   
 1999 դեկտ. 31 ի հետ ի միասին:

Ուրեմն 1899 դեկտ. 31ին կը վերջանար 19րդ դարը:   
 1900 յունուար 1ին՝ 20րդ դարուն առաջին օրուան մէջ է-   
 ինք, եւ այսօր՝ մայիս 1՝ 20րդ դարուն 5րդ ամսուան սկիզբն   
 ենք:

Անոնք որ ինքզինքնին տակաւին 19րդ դարուն մէջ կը   
 կարծեն եւ կ'ըսեն թէ 1900 դեկտ. 31 ին պիտի վերջանայ   
 19րդ դարը, ասութեան սովորական բանաձեւին պատճա-   
 րաւ է որ կը սխալին: « 1900 մարտ 25 » ը՛ օրինակի համար՝   
 իրենց կարծեցնել կուտայ թէ մարտ 25 ը կը պատկանի 1900   
 տարւոյն. մինչդեռ եթէ սովորութիւն եղած ըլլար ըսել.   
 « 1900 եւ մարտ 25 », կամ, « 1899 եւ ապրիլ 4 », եւայլն,   
 սոյն սխալ ըմբռնմունք տեղի չպիտի ունենային: Երեւոյթն   
 է որ կը սխալեցնէ: Շփոթութեան տեղի տուողը այդ զեղչը-   
 ւած պտըլիկ եւն է:

Պարզ նմանութիւն մ'ալ, եւ վերջացնենք: Հաճեցէ՛ք   
 ձեր ծոցէն վայրկեան մը հանել ժամացոյցը եւ քննել: Դի-   
 ցուք թէ երկու սլաքները 12 ին վրայ եկած ըլլան: « Ժամը   
 12 է » կ'ըսենք. ի՞նչ կը նշանակէ ասիկայ. 12 ին յաջորդող   
 60 վայրկեաններով է՞ որ 12 ժամը պիտի լրանայ թէ՛ լրա-   
 ցած է արդէն եւ այդ 60 վայրկեաններ նոր ժամ՝ մը կազ-   
 մելու պիտի ծառայեն: Երբ 12ը քառորդ կամ 15 վայրկեան   
 անցած ըլլայ, այդ 15 վայրկեանը 12 ժամուն կը պատկանի՞.   
 ո՛չ. այլ նոր կազմուելիք առաջին ժամուն: Երբ ժամը 3 ըլ-   
 լայ, — աղէկ նայեցէ՛ք ժամացուցին վրայ — 3 անգամ 60

վայրկեան անցած է, որ կը նշանակէ թէ 3 ժամը ամբողջ եղած է, եւ ո՛չ թէ յաջորդող 60 վայրկեաններով է որ ամբողջ պիտի ըլլայ: Ժամը քանի՞ է. կը պատասխանենք «Երեք ու կէս»։ Եւ ամէն մարդ կը հասկնայ թէ 3 ժամ ամբողջանալէ ետք՝ կէս ժամ ալ անցած է: Ամէն շիթութիւն կը փառատէ ու ին յայտնապէս գործածութիւնը: Երբ ըսենք թէ «ժամը 11ը 59 վայրկեան անցեր է» կամ «12ին 1 կայ», ասիկայ չի նշանակեր թէ 1 վայրկեան յետոյ 11 ժամը պիտի լրանայ, այլ կը նշանակէ թէ 12 ժամը պիտի լրանայ: Նմանապէս երբ կ'ըսենք «1899 (եւ) դեկտեմբեր 31», ասիկայ կը նշանակէ թէ 1899 տարիէն յետոյ 12 ամիս եւս անցաւ, այսինքն 1900րդ տարին ամբողջացաւ:

Միասին ողջունենք ուրեմն Քրիստոսի Ծննդեան 20րդ դարը, այս նոր դարու մէջ Քրիստոսի սիրով ատգորուելու, Քրիստոսի շնորհքով զարդարուելու, եւ այս նոր դարու կրթական եւ գիտական նորութիւններով զարգանալու եւ ազնուանալու հաստատ մտադրութեամբ:

## Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն

ԱՐԱՐՈՂՊԻԹԵԱՆՅ ՎԵՐԱԲԵՐԵԱՒ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Քանդատներ կան հասարակութեան մէջ թէ մեր եկեղեցական արարողութիւնք բարեկարգ չեն: Տըրտունջներ կան թէ ժամերգութիւնք երկար են: Բողոքներ կան թէ եկեղեցականք իրենց պաշտօնին համապատասխան չեն, և այլն, և այլն:

Այս առարկութիւնները հաստատելու կամ հերքելու համար, պէտք է անպատճառ հարցասիրել

թէ ե՞րբ մուտ գտած են նկատուած արարողական խանդարմունք, ի՞նչպէս մուտ գտած են. եկեղեցականաց և ժողովրդականաց համակամութեամբ թէ՛ ուրոյն ուրոյն և կամ միոյն անտարբերութեամբ և միւսին թեւադրութեամբ:

Այսպիսի մի քննութենէ իրական օգուտ քաղելու համար, պէտք է նախ հմուտ ու բանիբուն եկեղեցականաց ու ժողովրդականաց կարծիքներն ի մի ամփոփել և ապա՝ ըստ այնմ՝ կշռադասել:

Դիւրութեան համար, խնդիրը կը ներկայացնենք հարցումներու ձեւով:

Ե՞րբ մտած է իսաչախսակցի սովորութիւնն Պոլսոյ եկեղեցեաց մէջ, ո՞ր Պատրիարքի հրամանաւ, և կա՞յ արդեօք այս մասին արձանագրութիւն ի պատրիարքական գիւանի: Ի՞նչ բանաւոր հիման վրայ ընդունուած է այս սովորութիւնն ի Պոլիս և անտի ի գաւառըս, քանի որ Ռուսաստանի և Պարսկաստանի Հայոց եկեղեցիք բնաւ չունին զայն, այլ միայն Աւետարանի միսթարութիւնները կը սիւսեն փափաքողաց վրայ:

Ո՞ր Պատրիարքի կամ ո՞ր կրօնական ժողովոյ հաւանութեամբ մուտ գտած է Պոլսոյ եկեղեցեաց մէջ և անտի ի գաւառս՝ ծնծղահարութիւնն, որ բոլորովին օտար է նոյն տեղերու Հայոց համար:

Ե՞րբ և ի՞նչպէս սովորութիւն դարձած է՝ պատարագիչ եպիսկոպոսն կամ վարդապետն զգեստաւորել եկեղեցիէն արտաքոյ և այնպէս մուծանել յեկեղեցին, մինչդեռ նախնական կանոնագրութիւնն

պահարան կամ աւանդատուն սահմանած է այդ մասին :

Ե՞րբ և ի՞նչ հիմնական պատճառներով թոյլ տրուած է , կանոնական ժամերգութենէն արտաքոյ , Այսօր դասերգել ի տեղիս տեղիս , և այն ևս յոյժ բմահաճ եղանակաւ :

Ի՞նչ աւետարանական պատմութեան հիման վրայ սովորութիւն եղած է ի Պոլիս , ի տօնս Ս. Խաչին , ի տեղի հանդստեան շարականին , Այսօր անճառ երգել , և ի Կիւրակէս Մեծի Պահոց ո՛չ թէ մի հատուածն միայն երգել (նոյն աւուր Աւետարանին համեմատ , ինչպէս կ'երգուի Աստուած անեղն) , այլ բովանդակն Ա. էն մինչեւ Ք :

Ո՞ր Պատրիարքի կամ ո՞ր Կրօնական ժողովոյ թոյլատրութեամբ իրաւունք ստացած են աշխարհիկ դպրապետք՝ օտարոտի երգերու եղանակներն մուծանել յեկեղեցի և նոյն եղանակներով Տէր Ողորմեա , Ամեն Հայր Սուրբ և այլ եկեղեցական երգեր երգել : Պէտք է՞ որ դպրապետք անկախ լինին եկեղեցակահայ հսկողութենէ և ի հաճոյս՝ եղանակներ հնարեն :

Ռուսաստանի և Պարսկաստանի Հայեր , Տէրունական Աւուրց մէջ , առաւօտեան ժամերգութիւնն և Ս. Պատարագն միասին չեն կատարեր , այլ ընդհատմամբ . իսկ Արեւմտեանք միասին կը կատարեն և անանջատ : Ո՞ր եղանակն արդեօք աւելի նախնական է և պատշաճ :

Ի՞նչ օրինական հիման վրայ Ս. Պատարագն արարողութեան մէջ կ'երգուին այնպիսի Շարականներ , որ ըստ

խմաստին բնաւ կապ չունին Ս. Խորհուրդին հետ , ինչպէս է գրիխոսոս , և այլն :

Ո՞ր Պատրիարքի կամ Կրօնական վարչութեան հաւանութեամբ ընդունուած են սեաւ սարսակերն ննջեցելոց յուղարկաւորութեան ժամանակ , ինչպէս են սեաւ փորուրտներու , դագաղակիրներու հագուստներն , և այլն , և այլն :

Մեծ Պահոց մէջ վարագուրաւ սեղանն ծածկելէ զկնի , միթէ հակառակ չէ՞ Տօնացուցին՝ վերստին սեղանաձեւ պատուանդաններ պահել վարագուրէն դուրս , պատկեր կախել և մամեր վառել : Վերոյիշեալ տեղերու Հայեր չունին այս սովորութիւնը :

Ե՞րբ և ո՞ր Կրօնական վարչութեան հրամանաւ արտօնուած է՝ Յիսուսի Քրիստոսի թաղման յիշատակի Տօնին՝ յատուկ գերեզման շինել և չրջեցնել եկեղեցիէն արտաքոյ : Ի՞նչու հարկ տեսնուած է , Տօնացուցի հրահանգէն արտաքոյ , այսպիսի մի նորութիւն մուծանել : Կո՞յ արդեօք այս մասին արձանագրութիւն ի Պատրիարքարանի :

Կան տակաւին այսպիսի արարողական և վարչական խնդիրներ , զորս յառաջ պիտի բերենք , եթէ տեսնենք որ պարզ , օրինաւոր և հիմնաւոր պատասխաններ կը տրուին , որով և ինքնին կը պարզուին ու կը փարատուին հասարակաց կարծիքներն ու տարակոյսներն :

Մենք առաջին նախանձախնդիրներէն ենք որ մինչանախեց անգամ պէտք չէ որ փոխուի ժամակարգութեան մէջ , ինչ որ նախնական է , ինչ որ այս տեղ



և այն տեղ միասին կը կատարեն Հայք, ինչ որ մեր նախնեաց շունչն ու հոգին կը պատկերացնէ, և ինչ որ ի վեր է անշուշտ ներկայ եկեղեցականաց մը-տաւորական կարողութենէն և ձեռնհասութենէն:

Եւ այնպէս իսկ կը կարճենք թէ հասարակաց տրտունջներն մեր յիշած տեսակներու մասին են և ո՛չ երբէք նախնականին: Պէտք է ուրեմն փարատել տարակոյսներն, պէտք է պարզել թէ ի՞նչու միեւնոյն եկեղեցւոյ զաւակունք, տարբեր երկիրներու մէջ, ինչ ինչ արարողութեանց նկատամբ կը տարբերին իրարմէ: Պէտք է հետազօտել ծագման շարժառիթներն, նշանակել՝ մուտ գտնելու ժամանակներն, ծա-նօթացնել հեղինակներն: Երբ այս մթութիւնները փարատուին և հորիզոնը պարզուի, այնուհետեւ ամէն ոք կը խոստովանի թէ Հայոց եկեղեցին մի արեգակ է, որ բնաւ բիծ չունի, այլ ունի լոյս և ջերմութիւն, որ կարող է մտքերը լուսաւորել և սրտերը ջերմացը-նել: Մի ճրագ է՝ Հոգւոյն Սրբոյ շնորհաց իւրով վառ-ուած, որ անշէջ կը մնայ միշտ, եթէ իւր զաւակաց սրտերն ու մտքերն օժտուած ու լուսաւորուած են այդ շնորհքով, և չեն տարուբերուած թերահաւա-տութեան և անտարբերութեան հակումներով:

ՓԻԼԻՄՈՆ

## ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐԴԸ



Մարդ միշտ գոյութիւն ունեցած չէ այս երկրի վրայ: Հազարաւոր եւ թերեւս միլիոնաւոր տարիներ թուին անցած ըլլալ ընդ մէջ այն ժամանակին յորում երկրագունտին տա-կաւին տաք կեղեւին վրայ կուտակուեցան առաջին մորական խաւերը, և այն ժամանակին յորում մարդն երեւցաւ:

Այս երկու ժամանակամիջոցներու միջեւ, կենդանական եւ բուսական անթիւ կերպարաններ յաջորդաբար երեւան եկան, մեծ մասամբ անհետանալու կամ ձեւափոխուելու համար, երեւման ընդհանուր կարգն ըլլալով պարզէն ի բա-ղադրեալն, ստորնագոյնէն ի բարձրագոյնն: Կենդանական եւ բուսական ցեղերն հետզհետէ աւելի բարձրացած եւ կա-տարեւագործուած կը գտնենք ապահովաբար, քանի՛ քննենք երկրաբանական աւելի նոր խաւեր: Ամենէն վերջ երեւ-ցաւ մարդը: Ե՞րբ: Խնդիր է գիտնալ թէ երրորդակա՞ն թէ՛ չորրորդական ժամանակաշրջանի մէջ: Կը թուի սակայն թէ, գոնէ Եւրոպիոյ մէջ, մարդ գոյութիւն ունեցած է երրոր-դական ժամանակաշրջանէն ի վեր. զայս կ'ապացուցանեն Պուրկուէն աբբային միջոցաւ Թէնէյի մէջ գտնուած գործի-ներն ու կայծքարերը, ինչպէս եւ նորագոյն հանածոյները պարունակող երրորդական հողերու խաւերուն մէջ զանազան խուզարկուներու ձեռամբ գտնուած կմախքները:

Ճշմարիտն ըսելով, մարդուն երեւման՝ այս կամ այն ժամանակաշրջանին մէջ տեղի ունեցած ըլլալը մեծ կարեւո-րութիւն մը չունի. այսպէս կամ այնպէս, երրորդական շըր-ջանի կէսէն անդին չանցնիր: Գտնուած բոլոր գանկերն եւ ուրիշ ոսկորոտիք ցոյց կուտան թէ մարդկային սանդուխին ստորնագոյն աստիճանին վրայ դրուած մարդ մ'էր այն, եւ մարդուն ամբողջ հնէաբանութիւնը ցոյց կուտայ թէ անդա-դար եւս առաւել զարգացած բարձրացած է նա. թափա-

ուաշրջիկ դժբաղդ վայրենի, մերկ, անզէն, հաւանականաբար անլեզու, անհագուստ, նախ սովրեցաւ կայծքարէ գործիներ շինել, նետեր, դանակներ, սղոցներ, անտաշ կամ ողորկ:

Այս գործիներէն առատութեամբ գտնուած են կեղրոնական Եւրոպիոյ ամենամեծ մասին մէջ, եւ մասնաւորապէս Ֆրանսայի մէջ ամէն օր կը գտնուին: Տեղեր կան ուր կարելի չէ հողը մշակել՝ առանց գտնելու կացին մը, նետերու սլաքներ, դանակներ, եւ այլն, ամէնն ալ կայծքարէ:

Մարդկութեան այս առաջին վիճակը կոչուած է քարի դար: Այս ժամանակաշրջանէն սկսած է արուեստը, եւ դանդաւած են (առաջին անգամ ի Սօլիւդրէ) կակուղ քարեր որոց վրայ փորագրուած են կենդանիներու եւ մարդերու կոշտ պատկերներ: Մամուլութիւն (փղանման վիթխարի կենդանի մը որ ժամանակակից եղած է նախնական մարդուն) ժանիքը, զանազան որոճող կենդանեաց եղջիւրը, ամէն տեսակ կենդանեաց ոսկորը նոյնպէս ծառայած են այս առաջին տձեւ գծագրութիւններուն: Մարդը կը բնակէր քարայրներու մէջ, զիտէր կոշտ կերպով կարել բարակ ոսկորներով շինուած ասեղներով, եւ թամամնիացիք, այն վիճակին մէջ յորում իրենց գոյութիւնը կը պահէին տակաւին դար մը առաջ, բաւական աղէկ կը ներկայացնէին թէ ի՞նչ պէտք էր ըլլալ քարի դարուն մարդը:

Այս դարը կը բաժնուի նախնական քարի եւ յղկեսալ քարի դարերու. մարդ քիչ առ քիչ կը սովորի իր կայծքարէ գործիներն յղկել, եւ իր հանճարեղութեան փորձը կուտայ զանազան արհեստագործութեանց մէջ: Այլ եւս եղած է քիչ մը երկրագործ եւ քիչ մ'ալ հովիւ. ունի ընտանի կենդանիներ, ի մէջ այլոց շունը. կը հաւաքէ սերմեր (մասնաւորապէս ցորենական), կը շինէ բնակարաններ:

Քարի դարին կը յաջորդէ պղինձի դարը, եւ ասոր՝ անագազինկախառն պղինձի դարը: Մարդ հողի տակէն երեւան կը հանէ զուտ պղինձը, զայն կը կռէ եւ անով կը

շինէ զանազան գործիներ: Քիչ մ'աւելի ուշ, կրակ շինելու արուեստը կը գտնէ անշուշտ, վասն զի անագազինկախառն պղինձը հալումով կը պատրաստուի եւ կաղապարներու մէջ կը ընցուի: Պղինձէն ետք գտնուած է երկաթը. այն ատեն՝ երկաթի դարը: Կրակը մեծ դեր մը կը խաղայ միշտ, վասն զի անոր շնորհիւ է որ երկաթի հանածոյները, տաքութեան ենթարկուելով, կը թողուն զուտ մետաղը, որ այնուհետեւ կը ծառայէ զէնքերու շինութեան:

Շնորհիւ նախնական մարդէն մնացած նշխարներուն, ինչպէս՝ կմախք, գերեզմանատեղիներ, զանազան գործիներ, կաւեղէն անօթներ, փորագրուած ոսկորներ, կոշտ հիւսուածքներու կտորներ, եւ մինչեւ իր նախնական աղբատուփերուն, կարելի է ըստ բաւականին դատել թէ ի՞նչ կերպով կ'ապրէր եւ կ'ըբաղէր, ի՞նչ թշնամիներ ունէր, ի՞նչ ապաւէններ, ի՞նչ օժանդակներ: Բոլոր վայրենի ցեղերն անհրաժեշտաբար չեն ունեցած նախնական քարի, յղկեսալ քարի, անագազինկախառն պղինձի եւ երկաթի դարերու չորս վիճակներն. օրինակի համար, հոն ուր պղինձ չը գտնուիր, ի՞նչպէս կրնայ գոյութիւն ունեցած ըլլալ անագազինկախառն պղինձի դարը: Այսու հանդերձ, քարի դարը միշտ աւելի առաջ գոյութիւն ունեցած է քան մետաղի դարը: Աւելորդ է ըսել նաեւ թէ, որ եւ է կարեւոր համաժամանակութիւն չը կայ: Այն ինչ տեղ քարի դարը կը տեսէր դեռ, եւ այլուր մարդ բաւական քաղաքակիրթ վիճակ ունէր, եւ, իրապէս, շատ ժողովուրդներ նախնական քարի դարուն մէջ պիտի գտնուէին տակաւին, եթէ քաղաքակիրթ ազգաց խուզարկութիւններն եւ աշխարհակալութիւնները չըլլային:

Երկայն ժամանակ ընդունուեցաւ սա կարծիքը թէ արդի Եւրոպացիք սերունդն են Արիական ըսուած արեւելեան ժողովրդոց որոնք աշխարհակալած էին զԵւրոպա: Այս ենթադրութիւնն օր ըստ օր է կը կորսնցունէ իր արժէքը:

Իսկ այդ վայրենիներուն ծագումն ի՞նչ է: Անոնք այնուան անկատար, այնքան մօտ ստեղծուած ե՞ն ուղղակի կա-

պիկին: Եւ կամ՝ ընդհակառակն՝ ասոնց մօտ էակէ մը կը սերին, եւ պիտի ըլլայինք մենք՝ ո՛չ թէ կապիկի որդիներ, այլ անոր հօրեղբորորդիները:

Այս մասին բան մը չենք գիտեր, բացարձակապէս ոչինչ. բայց ամէն ինչ սերտ առնչութիւն մը ցոյց կուտայ մարդուն եւ բարձրագոյն կապիկներուն միջեւ: 1894-95ին Ճափայի մէջ գտնուած կարծուեցաւ՝ մարդուն եւ կապիկին միջին էակի կմախք մը, բայց լաւ եւս կը թուի թէ Պր. Էօփէն Տիւպուա երեւան հանած է ճշմարիտ մարդու մը կմախքը, թերեւս նախապատմական ապուշ մը: Անկարելի է որոշել այն ժամանակին յորում մարդ նախապատմական (անգիր, անյիշատակ) ժամանակաշրջանէն անցած է պատմական ժամանակաշրջանին (յորում կ'սկսին բերանացի աւանդութիւնք):

Բայց ստոյգ է որ այդ ժամանակին խիստ փոփոխական եղած է ըստ պարագայից. այն ինչ ցեղերն այդ շրջանին հասած են ուրիշներէ շատ առաջ, եւ արդի այն ինչ վայրերն են որ տակաւին նախապատմութեան մէջ են կամ հաղիւ անկէ ելնելու վրայ են: Չինաստան այդ շրջանէն ելած է խիստ շատ առաջ, եւ կը յաւակնի յիշատակարաններ ունենալ 80 կամ 100 հազար տարիներէ ի վեր: Սեւ ցեղը տակաւին որ եւ է կարեւոր դեր չէ ունեցած աշխարհի պատմութեան մէջ. ո՛չ ալ կարմիր ցեղը, եւ սպիտակ ցեղն է միայն որ ամէն բան ըրած է երկրագունտին մեր մասին համար:

Արդի մարդը սերած է միակ զոյգէ մը (միասերոքիւն) որուն յաջորդները փոխուած ըլլան միջավայրերու համեմատ: Բրիչառ եւ ար Գաթրըֆաթ այսպէս կը կարծեն. ուրիշներ կ'ընդունին քազմասերոքիւնը (polygénisme). ասոնց նայելով, արդի մարդիկ սերած պիտի ըլլան բազմաթիւ անջատ նախնիքներէ, որոնք ծնունդ առած պիտի ըլլան երկրագունտին տարբեր մասանց մէջ:


### ԽԵԼՕՔ ԿԱՐԱՊԵՏ



Խելօք Կարապետ Մինասեան ծնած է ի Կիւրիւն, դարուս սկիզբը, աղքատ ոստայնանկ ծնողէ: Մինչեւ 25-30 տարեկան հասակը, հօրմէն տեսած կերպովը տեղական բուրդէ ապա եւ շարվարցու կը գործէր. քանի անգամ հօրը առաջարկեց որ հօրին (քեզիեանին) ձեւը փոխեն եւ ապա ու շարվարցուէ գատ ուրիշ տեսակ ապրանք ալ գործեն: Հայրը սաստեց, ըսելով թէ չի տեսած բանն ընել կ'ուզէ: Կարապետ, որ ան ատենը տակաւին խելօք չէր, լռեց, մտքէն չի կրնալ հեռացնելով սակայն երեւակայած փոփոխութիւնները եւ գործելիքը: Շատ չանցաւ, Կարապետի հայրն ի Տէր հանգեաւ ի մեծ ցաւ եւ ի փոքր ուրախութիւն իրեն:

3/505-65

Կարապետ, որ ա՛լ խելօք էր, շարաթ չանցուց, հօրը հօրը քակեց, եւ նոր դրութեամբ հօր մը շինեց. իր մտադրած մէկ ուրիշ հնարքն ալ ձեռնարկեց ի գլուխ հանել, այն է առանց եզի գետին հերկող գործիքի մը (հիմակուան գութանը) շինութիւնը: Յաջողեցաւ, եւ փորձն ալ ըրաւ, Իէթէն-Չայիր ըսուած հրապարակին վրայ, ի ներկայութեան կառավարական պաշտօնէից: Սակայն գործիքը փայտէ շինուած ըլլալով, եւ երկաթէ շինել կամ շինել տալու միջոցներէն զուրկ գտնուելուն համար բարկացաւ, ու այս բարկութեան շնորհիւ վրան բանաստեղծական ոգի եւ աւելի խելօքութիւն մը գալով, երգ մը յորինեց իր վրայ եւ ինքզինքն այս երգին մէջ լաւ մը լուաց՝ յիմարութեամբ այս տեսակ օգտակար գիւտի մը հոգնելուն համար: Հերկող գործիքը տուն տարաւ պահեց, միտքը դնելով սակայն որ Պոլիս երթայ եւ պէտք եղածը հոն շինէ՝ աղայի մը օգնութեամբ: Մինչեւ 5-6 տարի առաջ նոյն փայտեայ գործիքներէն քանի հատը խելօք Կարապետին տունը պահուած կը մնային, իսկ այդ միջոցին հրոյ ձարակ եղան:



Գութանի գործիքին խորհուրդը ուրիշ ատենի թողելէ վերջ, իր շինած նոր հորին վրայ պարսկական շալի նման շալ գործելու ձեռնարկեց: Ասիկայ շատ դժուար չէր, քանի որ անոր պիտոյքն կրնային ամբողջապէս փայտէ շինուիլ: Յաջողեցաւ, եւ այս նոր քեզկեանին վրայ շինեց զուտ բուրդէ զանազան նկարներով ու ծաղիկներով աճեւ շաղիի նմանութիւններ: Բուրդը ուզած գոյնով ներկելու կերպն ալ զըտաւ: Քանի՛ տարի ասոնց զիւտը գաղտնի պահեց, եւ այնուհետեւ իրեն զիմոզներուն անխտիր սովբեցուց արհեստը: Այս թուականէն սկսաւ Կիւրնոյ արհեստական գործունէութիւնը: Ամբողջ Կիւրին աշխատելու գործ ունէր: Հարիւրաւոր տեսակ շաղեր ու գօտիներ կը գործուէին ու կ'արտածուէին. « ընդ ամենայն երկիր ել շաղ նորա »: Կիւրին իրեն շաղին հետ համանիշ եղած էր: Յաճախորդ մը՝ շաղ գնելու համար՝ Կիւրին ունի՞ս կը հարցնէր: Մերաստիայէն, Կեսարիայէն, Հալէպէն, Այնթապէն, Եւայն, յատկապէս Կիւրին կուգային շալագործութիւն սովբելու համար: Կը սովբէին ու կ'երթային: Կիւրին այս միջոցին վաճառաշահ քաղաք մը դարձած էր. հարուստը դրամագլուխ կը դնէր, վարժապետըն ու ժամկոչը թողած էին իրենց պաշտօնը ու շաղ կը գործէին. քանի մը քահանայներ չէին թողած իրենց պաշտօնը ու շաղ կը գործէին:

Այն ատենները, Ալի բաշայի եպարգոսութեան ժամանակ, խելօք Կարապետ Պոլիս կուգայ՝ իր արհեստն աւելի կատարելագործելու ու, եթէ հնար ըլլայ, ի՛ր գիւտին համար իրեն իրաւունք մը յատկացնել տալու համար: Այն ատենի նշանաւոր մարդոց հետ կը ծանօթանայ: Միշտ փողոցները կը պտըտէր, եւ անցորդներուն հանդերձին քղանցքէն բռնելով՝ կը քարոզէր ու կը հասկցնէր թէ « սխալ կ'ընեն որ երոպական չորխա կը հագնին. պէտք է մեր երկրէն ելածը հագնինք. մեր երկրին մէջ երոպական չորխա հագնողն անվրէպ դժոխք կ'երթայ »: Օր մը կը հարցուի իրեն թէ « խելօք, ի՞նչ է այս որ կ'ըսես թէ երոպական չորխայ հագ-

նողը դժոխք կ'երթայ »: Կարապետ կը պատասխանէ թէ, այո՛, ամէն չուխայ հագնող դժոխք կ'երթայ. չուխայ անելով ու դրամը Երոպայի տալով ու տալով՝ երկիրը կ'աղքատցնեն ու դժոխք կը դարձնեն, ու այսպիսով դժոխքը իրենց վրայ կը բերեն կամ դժոխք կ'երթան: Մեծամեծներէն շատեր ակործանօք մտիկ կ'ընէին զինքը. կարեւոր անձնաւորութիւն մը կ'ուզէ հարկ եղած տեղը ներկայացնել զինքը եւ իր խնդիրքը, սակայն խելօք յանձն չառնելով չուխայէ լաթ հագնիլ, այլ սովորական հագուստով ներկայանալ ու զերուն համար, գործը ետ կը մնայ: Զինքը Մեքքայի քեհնային (Սրհեստական վարժարան) կը դնեն, սակայն քիչ ատենէն պայմաններ առաջարկելով՝ կը հեռանայ եւ կ'սկսի դարձեալ ինքն իր հաշուոյն աշխատիլ:

Կարապետ՝ ի Պոլիս այսպէս քանի մը տարի անցունելէ յետոյ՝ կը դառնայ Կիւրին, ուր ամբողջ Կիւրիւնցիին արհեստական գործունէութեան մէջ տեսնելով, ինքզինքն իր նըպատակին հասած կը համարի, եւ քիչ յետոյ ի Տէր կը ննջէ 65-70 տարեկան հասակի մէջ:

Խելօք Կարապետ շատ տաղեր ու երգեր ունի տաճկերէն եւ հայերէն, կղերականներու եւ աշխարհականներու ուղղեալ: Երգի մը մէջ խտիւ կը հեգնէ չորխայ հագնող կղերք, ուրիշ երգով մը յուրի սովորութիւնները կը պատարակէ: Երբ յաճախորդ մը իր (Խելօքին) գործած շաղին արժէքը չի հասկնար ու պակաս գին տար, երգ մը կը յօրինէր անոր վրայ եւ ոտքէն ցզուրի կը զարդարէր զանիկայ:

Խելօքին մեռնելէն վերջ, Կիւրին շարունակեց իր շալագործութիւնը մինչեւ 1880 թուականը եւ մեծապէս օգտուեցաւ: Այն թուականին Երոպան Կիւրնոյ շաղին կեղծը զուտ խոտէ եւ կանեփէ շինելով, 20-30 դրուչի շաղ մինչեւ 2 1/2 դրուչի վաճառել սկսաւ: Այս տարօրինակ աժանութիւն 2-3 տարի կասեցուց Կիւրինի շալագործութիւնը, մինչեւ որ գիւղացի ու քաղաքացի երոպական շաղին ի՛նչ ըլլալը հասկցան, մինչեւ որ գիւղացին՝ դնած գլխի գօտիին 3 օր վերջ գզուիլ

ու գլխէն մինչեւ կէս մէջքը՝ անձրեւ եկած օրը՝ կարմրերանգ ներկուելը տեսաւ: Կիւրին վերստին սկսաւ շալագործութեան: Բայց եւրոպական շալին երեւմամբը՝ Կիւրիւնցիք՝ անգործ չմնալու համար՝ իրենց ուշադրութիւնը ուրիշ արհեստներու վրայ դարձուցած եւ գիւտեր ըրած ըլլալով, շալագործութիւնն եւ զանազան տեսակ տնական պիտոյից վերաբերեալ բոլորէն զործուածներն իրենց զբաղում ըրին: Հետեւաբար եւրոպական կանեփեայ շալի չարիքէն սաբարիքը յառաջ եկաւ որ, այսօր Կիւրին կրնայ գործել, բաց ի շալէ, շանագներ, վերմակի եւ բարձի երեսներ, պատուհանի վարագոյրներ, սեղանի սփռոցներ, սեփեակներ, սեփեակներ, եւայլն, եւայլն, զուտ բուրդէ, զոյնզոյն ծաղիկներով եւ նկարներով:

Խելօք Կարապետ՝ Կարապետ անունով զաւակ մ'ունեցաւ, ո՛չ նուազ Խելօք, որ նպատակ դրած էր իրեն՝ նոյնպէս Կարապետ անունակ իր մանչ զաւակն, երբ որ ունենար: Եւ ունեցաւ եւ այնպէս ալ անուանեց: Խելօք Կարապետ Որդին կատարելագործեց իր հօրը գիւտերն, եւ ինքն ու իր զաւակը մեռան 5-6 տարի առաջ:

Խելօք Կարապետի մասին վերոյգրեալ կենսագրական տեղեկութիւնները Խելօք Կարապետ որդին ինքն գրած ու բարեկամի մը հաղորդած է 1889 ին. պատճէնն այժմ մեր ձեռքն անցնելով՝ փութացինք « Նիւթ » ին մէջ հրատարակել:



**ԻՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ**  
ԵՒ ԳԱՍԱԻԱՆԳՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Իրագիտութիւնը շատ նոր բան մը չէ: Ռապրլէ եւ Քոմէնսքի, գարեր առաջ ի վեր հանած են անոր կարեւորութիւնը: Եւ սակայն, եւրոպայի վարժարան-

ները ամերիկեաններէն շատ վերջը իրենց դուռները բացած են այդ սիրուն հիւրին, այդ օգտաշատ ուսման, որուն վրայ հիմայ կը գուրդուրան իրաւամբ: Իսկ մեր վարժարաններու ծրագրին մէջ հազիւ քանի մը տարի է որ այդ ուսումը մտաւ, առանց յաջողած ըլլալու՝ մինչեւ այսօր՝ « քաղաքացութեան իրաւունք » ստանալ ինչ ինչ դպրոցներու մէջ:

Բաւական է քիչ մը ինկատ առնել այս ուսման բնութիւնը՝ անմիջապէս համադուելու համար թէ՛ մանուկն, առաջին օրը որ սաքը դպրոց կը գնէ, պէտք է հանդիպի այս ուսման, որոյ շնորհիւ դպրոցը անոր երեւակայած շարչարանաց տեղն ըլլալէ կը դադրի ու կ'ըլլայ ընտանեկան յարկին զուգականը, ուր մայրիկին պէս անձնուէր, գթոտ, բարի եւ մայրիկէն աւելի լուսամիտ, իր հողին, իր պէտքերը ճանչցող « աիկին » մը կամ « օրիորդ » մը զուարթագէտ կ'ընդունի զայն գրկաբաց, հեշտիւ եւ զըւարճօրէն շարունակելով ու լրացնելով՝ տան մէջ մայրիկէն, հայրիկէն, եղբայրներէն, քոյրերէն առած իրագիտութեան դասերը: Որովհետեւ մայրիկը իրագիտութիւն կ'ուսուցանէ իր մանկան՝ երբ կը պատասխանէ այս վերջնոյն հաղարումէկ յեղյեղուկ հարցումներուն, որովհետեւ այդ մանկան ապրած մըթնոլորտը լի է իրագիտութեամբ: Ա՛հ, այդ մայրերն, ա՛հ, այդ մանկապարտիզպանուհիներն, շատ ունի՞նք անոնցմէ . . . :

Շատ բնական տրամաբանութեամբ մը կը հասկըցուի ուրեմն թէ ազան՝ ինքզինքը օտար աշխարհ փո-

խաղբուած չգտնելու համար մէկէն՝ ա, բը, գը թու-  
թովելէ առաջ, իրագիտութեան պէտք ունի, բայց,  
լաւ հասկնանք, այնպիսի իրագիտութեան մը՝ որ  
բարոյական խօսակցութեանց միջոցաւ, սիրուն պատ-  
կերներու և առարկաներու շնորհիւ, դսպար բանաս-  
տեղծութեանց օգնութեամբ, տղուն զգայարանքը,  
գիտելու ոգին զարգացնէ ։

Իսկ երբ Մանկավարտէզի սանիկը նախակրթա-  
րանի աշակերտ եղած է, այսինքն ըմբռնած է թէ  
դպրոցը բոլորովին « մայրիկին տունը » չկրնար ըլլալ,  
իրագիտութիւնը իր դոյութեան իրաւունքը չկրնար  
կորսնցնել նախակրթարանին մէջ . ընդհակառակը,  
անոր կարեւորութիւնը աւելի կը բարձրանայ, կը  
վսեմանայ, քանի որ, ինչպէս կ'ըսէ Բեսդալօցցի,  
մին իրագիտութիւնը ընդհանրացնողներէն, « մարդը  
իրապէս կը մշակուի կեանքի յայտանդիման իմացո-  
ղութեամբ (intuition) և զինքը չըջապատող առարկա-  
ներու միջոցաւ », կամ թէ, մանկավարժներու լեզ-  
ուաւ, vie cultive ուլ ։ Բաւական է գաստիարակ ըլլալ  
գիտնալու համար թէ՛ ի'նչ կարեւոր դեր կը կատա-  
րեն զգայարանք՝ նոյն իսկ մտաւորական և բարոյա-  
կան դաստիարակութեան մէջ, և, գոնէ նախակրթ-  
թարանի տղոց համար, « չկայ իմացողութեան մէջ  
բան մը՝ որ նախ զգայարանաց մէջ եղած չըլլայ »  
առածը մասնաւոր ոյժ մը կուտայ զգայաւոր (sensualiste)  
դպրոցի փիլիսոփաներու գատին ։ Իրագիտութիւնն է  
որ կը զարգացնէ տղուն այն հետաքրքրութիւնը « որ  
կարծես ընդ առաջ ուսման կ'երթայ », վարժեցնե-

լով տղուն միտքը գիտելու, խորհրդածելու . կրա-  
ւորական միտքը կը փոխէ ինքնագործ մտքի մը, կը  
շարժէ հոգւոյն բոլոր կարողութիւնները, սրոց դոր-  
ծունէութիւնն անհրաժեշտ պայման է գաստիարա-  
կութեան մէջ, քանի որ տղան ու է է բան սովորելու  
համար պէտք է գիտնայ խորհիլ, դիտել, հասկնալ, դա-  
սել, յիշել ։

Բայ ի այս բարձր կարեւորութենէն, իրագիտու-  
թիւնն ունի նաև աւելի գործնական առաւելութիւն-  
ներ. կ'աւելցնէ աշակերտին բառերուն պաշարը, կը  
թեքէ ու կը մաքրէ անոր լեզուն և ոճը ։ Գարձեալ,  
իրագիտութիւնն է որ նախակրթարանի յառաջացեալ  
աշակերտներուն կ'աւանդէ — Բնական Գիտութիւնք  
անուան տակ — գործնական գիտելեաց կարեւոր  
պաշար մը, կարեւոր՝ ի'նչ վիճակի մէջ որ ալ գտնը-  
ուի մարդ ։ Վերջապէս, իրագիտութիւնն է որ ամէ-  
նէն աւելի ազդու դասերը կուտայ բարոյականի,  
թանձրացեալ ձեւով մը տղուն ցոյց տալով աշխատու-  
թեան արդիւնքները, ճարտարութեան արտադրու-  
թիւնները, գիտութեան աշխարհակալութիւնները,  
նախախնամական օրէնքի մը տեսանելի դրոյմը՝ բնու-  
թեան ամէնէն մեծ և ամէնէն պղտիկ երեւոյթներուն  
մէջ ։

Ահա՛ իրագիտութեան կարեւորութիւնը՝ ուրուա-  
գծուած այնքան համառօտիւ որքան կարելի է ։  
Այս կարեւորութեան համար է որ նախակրթարանի  
բոլոր դասերու աւանդումը իրազնական ըլլալ կը  
ձգտի հետզհետէ ։

Այս կարեւորութիւնը շատ քիչ ըմբռնուած է ,  
 դժբազդաբար , մեր գպրոցներուն մէջ : Թողունք  
 մէթօտը , որուն մէջ կը կայանայ մանաւանդ իրագի-  
 տութեան արժէքը , ունինք վարժարաններ՝ ուր այս  
 ուսումը գոյութիւն չունի , և ուրիշներ՝ ուր շատ ան-  
 կատար կերպով կ'աւանդուի այն : Իսկ մեծագոյն մա-  
 սին մէջ մեր այն վարժարաններուն ուր իրագիտու-  
 թիւն կ'աւանդուի , իրագիտութիւնը իր նպատակէն  
 շեղեցուցուած և « բառ » ի գիտութեան մ'է վերած-  
 ուած : Առանց իբր ցոյց տալու իրագիտութիւն ուսու-  
 ցանող դաստիարակներն ընդհանրապէս կ'առարկեն  
 թէ՛ գպրոցը չունի իրագիտական թանգարան : Արդ ,  
 թողունք որ ճանչցած եմ վարժարաններ ուր գտնը-  
 ուած ինչ ինչ իրագիտական նիւթերը և գործիները  
 վոշիներու տակ մաշելու դատապարտուած էին , իրա-  
 գիտութեան դասերու համար պէտք եղած նիւթերը  
 առանց մեծ ազմուկի կրնան հայթայթուիլ , և ճիշդ  
 ազո՛նք են ամէնէն գրաւիշները աշակերտաց հա-  
 մար , որոնք յաճախ պիտի մասնակցին այդ պղտիկ  
 թանգարանի կազմակերպութեան . թող տղաք բերեն  
 տարբեր տարբեր ծառերու տերեւներ՝ զորս իրարմէ  
 զանազանել չեն մտածած . մին կահագործի զաւակ  
 է , թող բերէ փայտի նմոյշներ . ուրիշ մը նպարա-  
 վաճառի որդի է , թող հաւաքածոյ մ'ընէ իր հայ-  
 րիկին խանութէն՝ ի պէտս գպրոցին թանգարանին .  
 սա միւսն ունի գեղագործ կամ պարտիզպան ազգա-  
 կան մը , ահա՛ մեծ գիւրութիւն մը դաստիարակին  
 համար : Ասով ըսել չեմ ուզեր թէ գպրոցին Հոգա-

բարձութիւնը ազատ է իրագիտական թանգարան մը  
 կազմակերպելու հոգէն . բնա՛ւ . ի բոլոր սրէ կը  
 փափաքիմ որ մեր վարժարաններուն մէջ ընդհան-  
 րանան Տէլհէզի , Սաֆրէի , Տօրանժօնի և մանաւանդ  
 Տէրպլի հաւաքածոյները : Կը փափաքիմ նոյն իսկ որ  
 մեր Նախակրթարաններն ունենան projection lumineuse-  
 ներու գործիներ , ի հարկին ցոյց տալու համար շատ  
 ազգու , շատ կենդանի եղանակաւ՝ ալքսլամուլութեան  
 աւերներն , օրինակի համար : Բայց , կը կրկնեմ՝ ա-  
 մէնէն առաջ փափաքածս՝ դասխարակին եւ աշակերտին  
 միջոցաւ իրագիտական թանգարանի մը կազմակեր-  
 պութիւնն է . թերեւս նուազ կատարեալ ըլլայ այս ,  
 բայց , միւս կողմէն , որքա՛ն աւելի գրաւիչ . և յետոյ ,  
 ասկէ տարբեր միջոց չունի դաստիարակն այն վար-  
 ժարանին՝ որոյ Գանձապետ էֆէնտին դատարկ դրա-  
 մարկղի ահեղ խրտուիլակը ի տես կը գնէ՛ իբր միակ  
 պատասխան : Մնաց որ , դաստիարակներէն ոմանք  
 երբեմն անհարկի պահանջումներ կ'ունենան , « ստքդ  
 վերմակէդ անդին մ'երկնցներ » կամ « բերանդ քը-  
 սակիդ համեմատ կառավարէ » ի առակը չիշելով  
 ամէն ատեն . ինչո՞ւ , օրինակի համար , պահանջել որ  
 Նախակրթարանն ունենայ բնագիտական , բնալուծա-  
 կան գործիներու կատարեալ ըսպօնադառ մը : Հաւ-  
 կիթը՝ որ կը մտնէ սրուակի մը մէջ ուր պարունակ-  
 ուած օգը անօսարացուցուած է կտոր մը թուղթ այ-  
 րելով , նոյնքան լաւ չա՞պացուցաներ միջնորդական  
 ճնշումը՝ որքան crève\_vessie՞ն որուն մէջի օդը պարպը-  
 ւած է օդահան մեքենայով : Կը յիշեմ մանկավար-

ժական թերթի մը մէջ կարգացած ըլլալ նախակըրթարանի մը մէջ պէտք եղած բնալուծական փորձերու համար մանրամասն հաշիւ մը, ընդ ամէնը վեց ֆրանք արժողութեամբ (գործիք և նիւթ) : Դարձեալ, սրքա՞ն աղէկ կ'ըլլայ երբ դաստիարակն ինքն իր ձեռքով պատրաստէ բնագիտական գործիներ : Ժընէվի ցուցահանդէսին մէջ ի ցոյց դրուած այս տեսակ աշխատութիւններն ամէնէն աւելի նախանձս շարժող առարկաներէն էին, միտքս բերելով որ չկա՞ն արդեօք Հայ դաստիարակներ որ կամքի ուժով արժեցնեն ձեռքի իրենց բնական ճարտարութիւնը և իրենց դպրոցն օժտեն իրենց ձեռարուեստն եղող բնագիտական գործիներով :

Դարով դասաւանդութեան, ընդհանրապէս առանց բանաւոր մեթոտի կամ մանաւանդ առանց ու է է մեթոտի կ'աւանդուի մեր դպրոցներուն մէջ ճիւղ մը՝ որ ամէնէն աւելի ճարտարութիւն կը պահանջէ դաստիարակին կողմանէ : Դաստիարակը նախապէս չէ ծրագրած իր դասին յատակագիծը, և կըրնաք դուշակել թէ ի՞նչ արժէք կընայ ունենալ այսպիսի դաս մը. ժամը կ'սպառի անօգուտ և անյարիր տեղեկութիւններով, շատոնց արդէն ծանօթ՝ պզտիկ ունկընդիրներուն, կամ ճապաղ ծանօթութիւններով՝ որոնք դուրս են նոյն դասարանի ծրագրէն կամ շատ հեռաւոր ազերս մը միայն ունին դասին նիւթին հետեւի շատ տեղեր, փոխանակ սոկրատեսն մեթոտի, որ միակն է յարմար այս ճիւղին, փոխանակ տղուն հետադննող միտքը քրքրելու՝ պատշաճ հարցումներու

միջոցաւ, առաջուց դոց սովորուած հարց ու պատասխաններու տուրեւաւ մըն է դասը :

Առանց մանրամասնութեանց մտնելու այս յօդուածին մէջ՝ որ արդէն բաւական երկարեցաւ՝ իրազիտութեան դասաւանդութեան մեթոտի մասին, կը բաւականանամ սա չափ միայն դիտել տալով թէ՛ ներածութենէ մը վերջ, դասին առաջին մասը պէտք է կազմէ յայտյանդիման իմացողութիւնը, աղուն զգայարանաց ենթարկուած առարկային կամ գոնէ անոր պատկերին անունին, թիւին, նիւթին, ձեւին, և ընդհարագրութիւն), գործածութեան և օգտակարութեան վրայ ուղղուած հարցումներու միջոցաւ, յաճախ դիմում ընելով նաև գծագրութեան . յետոյ պէտք է բաղդատութիւններ ընել տալ. դաստիարակը պիտի ըլլայ ճարտար ֆերադրող մը, հո՛ս է մեծ արուեստը. գտնողը պիտի ըլլայ աշակերտը : Դասին այս ամէնէն փափուկ մասին կը յաջորդէ վերացումը (ընդհանրացում), որ կը կայանայ կատարուած գննութիւններէն ու դիտողութիւններէն օրէնք մը հանելուն մէջ : Այս երկրորդ մասն ալ կը վերջանայ նոյն դասին վրայ շարադրութեամբ մը, ընթերցուածով մը, զրուցագրութեամբ մը, բանաստեղծութեամբ մը, երգով մը, և այլն : Այս մեթոտը՝ որու համաձայն պատրաստուած տիպար դաս մը կը ներկայացնեմ քիչ մ'անդին՝ նոյնն է ուսմանց բոլոր ճիւղերուն համար և կը վերաբերի Հերպարդի դպրոցին, այն է կըթիչ ուսուցութեան դպրոցին՝ որ կը ծաւալի օրքան զօր :



Վերջացնելու համար ըսեմ որ, եթէ իրազիտու-  
 թիւնը մեծարժէք է մանաւանդ իբր գերազանցա-  
 պէս մտամարզական ուսում, զուրկ չէ, սակայն, կա-  
 բուրութենէ իբր գործնական ուսում ևս, ինչպէս  
 ըսի արդէն: Սյս տեսակէտով, պէտք է ցոյց տալ  
 աչակերտին՝ գործնական, խիստ գործնական կիրա-  
 ութիւններն: Աղջկանց համար, իրազիտութեան  
 գործնական կողմը պէտք է ի սպաս առանին անտե-  
 սագիտութեան դրուի. ո՛րքան աչակերտներ գիտա-  
 կան մեծ մեծ սկզբունքներու վրայ կը խօսին, առանց  
 կարենալ խելք հասցնելու ամէն վայրկեան իրենց  
 աչքին տակ անցած դարձած երեւոյթներու վրայ,  
 առանց տեղեակ ըլլալու առողջապահութեան և առ-  
 անին բժշկութեան ամէնէն տարրական և պիտանի  
 դիտելիքներուն, առանց կարենալու իրենց այդ մեծ  
 գիտութիւնն կիրարկել լուացքի, խոհարարութեան,  
 ուտեստներու պահպանման պէս շատ պարզ և սա-  
 կայն շատ կարեւոր բաներու: Գաղափարաց նոյն շար-  
 քով, կը բերուինք նոյն գիտողութիւնն ընել երկրա-  
 գործական տեղեկութեանց համար. շատ գործնական  
 ըլլալու են այդ տեղեկութիւնները, և գործնական  
 ըլլալու համար ալ անհրաժեշտ են խոտաքաղու-  
 թիւններ, պղտիկ մշակութիւններ՝ դպրոցին պար-  
 տէզին մէկ մասին մէջ, և այլն: Գաւառական դպրոց-  
 ներու մէջ մանաւանդ կը կարծեմ թէ աղէկ կ'ըլլայ  
 որ դպրոցին դասերուն երկրագործական գոյն մը  
 արուի՝ այս ճիւղին պատշաճեցնելով զրուցադրու-  
 թիւնները, շարագրութիւնները, ընթերցումները,  
 թուաբանական խնդիրները:

Յ. Թ. Հին Դ. ԵԱՆ

### ԱՆԳԼԻԱՅԻ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐՆ ԵՒ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆրանսական վարժապետանոցի մ'ուսուցիչը, Պ. Լ. Պա-  
 քան, մանկավարժական ուղեւորութիւն մը կատարած ըլլա-  
 րով յԱնգղիա, իւր մէկ ժողովրդական հրապարակախօսու-  
 թեան մէջ պարզած է իւր կրած տպաւորութիւնները, նկա-  
 րագրելով Անգլիացի Ուսուցչին զանազան տիպերը, դպրո-  
 ցականներն ու անոնց ի վարժարան յաճախումը, անգլիական  
 դասարանի մ'ընդհանուր տեսարանը, նախակրթարաններու  
 ընդհանուր հանգամանքը, — այս նկարագրութեան կցելով  
 միանգամայն իւր շահական դիտողութիւններն ու հանած  
 եզրակացութիւնը:

\* \* \*

Հարկ չէ, կ'ըսէ, շատ հեռուն երթալ գիւղին մէջ հան-  
 դիպելու համար Անգլիոցի հինաւորց վարժապետին (տեղ  
 օրտ սքուլ մէսթըր): Առանց նեղութիւն կրելու կրնայ ճանչ-  
 ցուիլ իւր կարկատուն լօղիկէն, իւր խոշոր ակնոցներէն, իւր  
 նահապետական երկայն մօրուքէն, իւր ծանր ու դանդաղ  
 եւ միտնգամայն հանդիսաւոր քաղուածքէն, ինչպէս կը վա-  
 յելէ լրջախօս անձնաւորութեան մը: Նա իւր թեմին մէջ  
 առաջին անձն է՝ կղերէն (քլէրճիմըն) յետոյ: Կ'ուսուցանէ  
 ընթերցում, գիր, ուղղագրութիւն, հաշիւ, մանաւանդ Աստ-  
 ուածաշունչ Ս. գիրք: Ահա իւր շարժական գրադմանքը:  
 Կիրակին իւր յաղթանակին օրն է. երգեհոն կ'ածէ եկեղեց-  
 ւոյ մէջ, կամ Աւետարան կը կարդայ եւ կամ երաժշտու-  
 թիւն կ'ընէ: Այն օրը, ինքն է որ կը կազմէ միութեան գի-  
 ծը քարոզչին ու դպրոցին միջեւ, աշխարհական եւ եկեղե-  
 ցական տարբերուն միջեւ. երկուքին ալ մասնակից է: Սա-  
 կայն եւ այնպէս պատուական մարդ մ'է, քիչ գիտուն՝ բայց  
 շատ եռանդուն. օրինակելի վարք մ'ունի, մէկէ աւելի սե-

րունդներ կրթած է եւ արժանապէս կը վայելէ ընդհանուր համարում:

Ասկէ շատ տարրեր է սակայն քաղաքի երիտասարդ ուսուցիչը: Սա իւր զգեստով բնաւ չորոչուրի հասարակ մահկանացուներէն. ըստ սովորութեան կը հագուի, եւ մինչեւ իսկ՝ վայելչօրէն: Նախակրթարանի մէջ իւր ուսմանց ընթացքն աւարտելէ վերջը, չորս տարի մնացած է օգնական-ուսուցիչներու վարժարանի (1) մը մէջ. յետոյ երկու տարի՝ վարժապետանոցի (2) մը մէջ, եւ հանրային կամ մասնաւոր

(1) Օգնական ուսուցիչներու վարժարանները (փիուփիլթիչըր սէնթըրը) հաստատութիւններ են, ուր 15էն 18 կամ 19 տարեկան պատանիներն ու դեռահաս աղջիկները, մուտքի գոհացուցիչ քննութիւն մը տալէ յետոյ, կը պատրաստուին նախնական կրթութեան: Ուսմանց շրջանն է քառամեայ: Աշակերտք ի միասին ներկայ կը գտնուին միեւնոյն ուսուցիչներուն դասաւանդութեանց, չաբաթական որոշ դասաժամերով կը պաշտօնավարեն յարակից դպրոցի մը մէջ եւ իբր թոշակ կ'ընդունին 300-400 Փրանք: Չորրորդ տարին երբ լրացնեն, պարտին ներկայանալ վարժապետանոցներու մուտքի քննութեան: Լոնտոնի մէջ օգնական-ուսուցիչներու յատուկ 12 վարժարան կայ, որոցմէ իւրաքանչիւրը կը պարունակէ 250 աշակերտ՝ միջին հաշուով:

(2) Վարժապետանոցները (Թրէյնինկ Բօլէճը) բարձրագոյն հաստատութիւններ են, որոցմէ 40 հատ կայ միայն Անգլիոյ եւ Կալէսի մէջ: Ասոնք հիմնուած են անհատական նախաձեռնութեամբ, մանաւանդ կրօնական ընկերութիւններու կողմէ, եւ պետութենէն դրամական նպաստ կ'ընդունին որոշ պայմաններով: Երկսեռ աշակերտաց թիւը փոփոխական է, որք պարտին առնուազն ըլլալ 18 տարեկան եւ անցընել մուտքի յաջող քննութիւն մը: Ծախքերը կը մատակարարուին գլխաւորաբար պետական նպաստներով, նուիրատուութիւններով ու աշակերտաց տարեթոշակներով:

վարժարանի (1) մը մէջ օգնական-ուսուցչի պաշտօն վարելէ յետոյ, տնօրէն եղած է մէկէ աւելի դասարաններ ունեցող

Ուսմանց երկամեայ շրջանէ մը յետոյ, կ'անցընեն Սերքիփիֆէյքի քննութիւնը, որ կը համապատասխանէ Պրանսացոց Պրըլէ պիւլիտեքիտի քննութեան, յաւելցուելով նաեւ մանկավարժական կարողութեան փորձերը: Սերքիփիֆէյք ստացողներն իրաւունք կ'ունենան իբր տեսուչ պաշտօն վարելու տարրական նախակրթարանի մը մէջ:

(1) Անգլիոյ մէջ, տարրական նախակրթարաններն երկու տեսակ են.

1. Կամաւոր դպրոցներ (վոլընթէրի սքուլս), ժողովական նախակրթարաններ, եկեղեցիներու կամ մատուռներու կողմէ հիմնուած, որք առանձինն կը կառավարուին եւ որոց հասոյթի աղբիւրներն են կամաւոր հանգանակութիւններ, աշակերտներուն ծնողաց կողմէ վճարուած տարեթոշակներ եւ մանաւանդ պետութեան կողմէ յատկացուած նպաստներ: Այս նպաստներն ստանալու համար, բաւական է որ այդ դպրոցներն իրենք գիրենք ենթարկեն կառավարական քննիչներուն իրաւասութեան:

2. Ազգային կամ աշխարհական նախակրթարաններ (Պորս սֆուլս), որք 1870 էն ի վեր հիմնուած ըլլալով կը կառավարուին թեմականներուն կողմէ ընտրուած տեղական մասնախմբի մը ձեռք, եւ որոց ծախքերը կը հոգացուին դպրոցական տարեթոշակներով, պետական նպաստներով եւ տեղական մասնախմբին ընտրողներէն գանձուած որոշ տուրքով մը:

Այսօր, Անգլիոյ եւ Կալէսի մէջ կան իբր 20,000 նախակրթարան, 15,000 կամաւոր դպրոց եւ 5,000 Պորս սֆուլս: Նախակրթարանները կը պարունակեն իբր 4 միլիոն աշակերտ, կամաւոր վարժարանները՝ 2 միլիոն 400,000, իսկ Պորս սֆուլսները՝ 1 միլիոն 600,000: Բոլոր այս դպրոցներուն մէջ պաշտօն վարող ուսուցչաց թիւն է 92,000, որոցմէ 42,000՝ օգնական-ուսուցիչ:

դպրոցի մը մէջ: Սա հմուտ է այնքան գիտութեանց եւ գրեթէ այնքան դպրութեան՝ սրբան հմուտ են ֆրանսական նախակրթարաններու լաւ ուսուցիչները. թեթեւ ծանօթութիւն մ'ունի Յունարէնի ու Լատիներէնի, եւ երբեմն երբ-րայերէնի, կցիտուր Ֆրանսերէն մը կամ Գերմաներէն մը կը խօսի, երաժշտութեան եւ գծագրութեան համար մասնաւոր վկայագիրներ ունի յաճախ. համառօտիւ՝ շատ նշանաւոր ուսուցիչ մ'է, կարելի է ըսել նաեւ շատ նշանաւոր մարդ մը, *Անկրլըմեն* (1) մը: Իրօք պէտք չէ կարծել թէ իւր գիտութիւնը անչնօրհք կամ պատուելի ձեւեր առնուլ կուտայ իրեն. ընդհակառակն, կը նպաստէ իրեն հեշտիւ վարուիլ ակումբի մը մէջ, ինչպէս իւր վարժարանին մէջ: Ուսուցչական բոլոր խնդիրներուն փոյթ տանելով հանդերձ, կը սիրէ աշխարհը, թատրոնը, հեծելանիւր, դրօսական պըտոյտները, եւ գրեթէ միշտ կ'անցընէ իւր արձակուրդի մեծագոյն մասն եւրոպական ցամաքին վրայ: Աւելորդ չէ դիտել տալ թէ իւր թոշակն երկու կամ երեք անգամ աւելի բարձր է քան իւր Ֆրանսացի պաշտօնակիցներուն թոշակը: Եւ ազազատ է բնաւորութեամբ. շարժական աշխատութեանէն յետոյ, կը մեկնէ Աստուածաշունչը կիրակնօրեայ դպրոցին (2) մէջ եւ կը հանգչի ընտանեօք:

(1) *Ճեկրլըմեն* բարձրադիր մարդ մ'է, որ ազատական արուեստ մ'ի գործ կը դնէ կամ հարստութեան տէր է: Երբ իրեն նամակ գրուի, հասցէին վրայ նախ կը գրուին սկզբնատաւերը, յետոյ անունը եւ ապա Esq. բառը, որ համառօտագրեալն է esquire (աղնուական, վահանակիր) բառին: Ա. յապէս, G. W. Smith, Esq.:

(2) Կերակնօրեայ դպրոցը (Սընտի սքուլ) երբեմն կը բացուի առաւօտեան ժամը 10էն 11, բայց աւելի յաճախ կէս օրէն յետոյ ժամը 2 էն 4: Այս դպրոցը զուտ կրօնական է. ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ, որոց պաշտօնը ձրի է, կ'ուսուցանեն Աստուածաշունչ կամ Քրիստոնէական վարդապետութիւն, ինչպէս նաեւ կրօնական երգ:

Անգլիացի ուսուցիչներուն վրայ բաւական ճշգրիտ եւ կատարեալ գաղափար մը կազմելու համար, երեւակայութեամբ պէտք է դայնս տեղաւորել սա կրկին ծայրերուն միջեւ, հինաւուրց ուսուցչին եւ երիտասարդ ուսուցչին, որոցմէ առաջինը կը ներկայացնէ անցեալը, իսկ վերջինն իւր երեսը դարձուցած է դէպ ի սպազայն: Իրարմէ տարբեր ծանօթութիւններ եւ ընդունակութիւններ ունենալով հանդերձ, ամենքն ալ հաւասարապէս ժրջան են, խզճալիտ, իրենց պաշտօնին սիրահար, իրենց աշակերտներուն անձնուէր:

Անոնց նկարագրին գլխաւոր մասը, անոնց բնորոշ հանգամանքը, այն է՝ ձեռներէց ոգին, զօրեղապէս կ'երեւի իրենց սեպհական մանկավարժական մեծածաւալ ընկերակցութեան մէջ: Ուրեմն քանի մը վայրկեան կանգ առնունք այս Անգլոյ-Սաքսոն հաստատութեան առջեւ:

\* \*

Իբր քսան տարի յառաջ, Անգլիացի Ուսուցիչներն սպասաւորներ էին գրեթէ, եւ անոնց մեծագոյն մասն ամէն մարդու սպասաւորներն էին: Այս վիճակն ինչ ինչ տեղերու մէջ երկարաձգուած է մինչեւ ցայժմ:

« Իմ սովորական աշխատութենէս ի դատ, կը գրէ ծեր վարժապետ մը, ստիպուած եմ շարել կիրակնօրեայ վարժարանին նստարաններն ու սեղանները, դայնս կարգի դընել երկուշաբթի առտուան դասին համար. կիրակնօրեայ դպրոցին մէջ դասեր աւանդել ժամ մ'առաւօտուն եւ ժամ մը կէս օրէն վերջը. ժամերգութեանց միջոցին հսկել աշակերտաց վրայ. դպրոցին յարակից իշխպին անդամներէն հաւանաբար վարձուած են իբր ժողովարահ ծառայելու համար, եւ պատասխանատու ըլլալ ամենափոքր վնասներուն զոր կրնան գործել վարձակալները. վերջապէս, ներկայ ըլլալ մեր՝ երիտասարդներու բարեկամական ընկերու-

Թեան նիստերուն, անոր վճարել իմ բաժնետուրքս ու մար-  
զանքի դասեր տալ շարաթն երկու երեկոյ: Բոլոր այս ծա-  
ռայութեանցս փոխարէն փող չիսկ չեմ ստանար: »

« Ութեւտանամեայ ծառայութենէ յետոյ, կը հաւաստէ  
ուրիշ ուսուցիչ մը, եւ կտառավարական քննիչին երկու նպաս-  
տաւոր տեղեկագիրներն ստանալէ վերջը, անտարակոյս ան-  
հաճոյ թուեցայ մեր յարանուանութեան պետին, որ մեր  
դպրոցին վերատեսուչն է, քանզի գտաւ յանկարծ թէ տա-  
րիքս բնաւ չէր համապատասխաներ վարած պաշտօններուս: Սա  
պարզապէս պատրուակ մ'էր, քանզի ես քսան եւ ութ  
տարեկան եմ: Իսկոյն միջոցներ ձեռք առաւ զիս արձակելու  
համար: Իմ նախորդս էր կիրակնօրեայ վարժարանի մը տը-  
նօրէնը, քարտուղար, տեղական քարոզիչ, եւ այլն. ըստ ո-  
րում այս վերջնոյն չափ լաւ օժտուած չեմ ես, հարկադրուե-  
ցայ խնդրել պաշտօնի փոփոխում: » Կ'երեւի թէ իմ յաջոր-  
դըս մեր պետին բոլոր առտնին գործերը վարելու ընդունակ  
անձ մ'է: Բարի վայելում կը մաղթեմ: » Պէտք չէ մոռնալ  
սակայն թէ Ֆրանսացի ուսուցիչներն ալ անցուցած են այն-  
պիսի օրեր:

Կարելի է ի մէջ բերել նմանօրինակ բազմաթիւ պարա-  
գայներ, եւ մինչեւ իսկ յոռեգոյններ, բայց ինչ օգուտ ու-  
նի: Միեւնոյն կանոնադանցութիւններն են ու միեւնոյն տըր-  
տունջները: Արդ, ճիշդ այդ տրտունջները բառնալու եւ այդ  
կանոնադանցութիւնները դարմանելու մտօք հիմնուած է  
Անգլիացի ուսուցիչներուն միութիւնը, նպատակ ունե-  
նալով գլխաւորապէս բարուօքել ազգային դաստիարա-  
կութիւնը եւ ուսուցիչներուն վիճակը: Այդ ընկերութեան  
անդամներ ունին Սկոտլանդի (վարժապետ) անուն հանդէս  
մը, գրամագլուխներ եւ Հասարակաց Խորհրդարանին մէջ  
ներկայացուցիչներ: Ասոնց տարեկան գումարումը կը հրա-  
ւիրէ բոլոր մանկավարժական մամուլն ու շարժութիւնը,  
եւ ասոնց առաջարկութիւնները մատնանիչ կ'ընեն առ որ  
անկ է՝ գործադրելու պատշաճ բարենորոգումները: Ժա-

մանակէ մ'ի վեր պայքար կը մղեն որպէս զի ուսու-  
ցիչները հանգստեան թողակ ստանան՝ ինչպէս այլուր, եւ  
պատճառներ կան հաւատարմութէ այս ձեռնարկը պիտի յա-  
ջողի: Այս տարի իսկ, մեծապէս նպաստեցին պահպանողա-  
կաններուն մէկ օրինադժին անյաջողութեան, որով կ'ուզուէր  
նպաստաւորել կրօնական վարժարաններն ի վնաս աշխարհա-  
կան վարժարաններուն: Ապահովարար, բարձրէն ղիտելով,  
սքանչելի գործ մ'է սա, զի կը կրէ սղջմտութեան եւ հաս-  
տատակամութեան դրոշմը: Անգլիոյ նման մեծ ազգ մը կըր-  
նայ աներկիւզ վտանջիլ իւր գուակներուն դաստիարակու-  
թիւնն այսպիսի մարդոց: Ու Ֆրանսացիները կրնան պարծիլ  
թէ իրենց մէջ արդէն ունին զոր ինչ կը պահանջեն Անգլիացի  
ուսուցիչները:

\* \* \*

Մինչեւ հոս ի նկատ առինք միայն ուսուցիչները: Բայց  
պէտք չէ աւելի ընդ երկար անտես առնել աշակերտները.  
ասոնց տրտունջներն ալ կրնան իրաւացի ըլլալ: Շրջագայե-  
ցէ՛ք Լոնտոնի նախակրթարանի մը մօտակայ վայրերը, ա-  
ռաւօտեան վերամուտէն քիչ մ'առաջ, եւ ըսէ՛ք թէ կարելի՞  
է տեսնել աւելի ատղջութիւն, աւելի կորով, աւելի մեծա-  
ժխոր շարածձիւթիւն: Յստակ տպաւորութիւններ կրելու  
համար, դիտեցէ՛ք ո՛ր եւ է տղայ մը. ամենքն անոր կը նմա-  
նին զեղուն կենդանականութեան կողմէ: Ժողի գլխարկն  
մինչեւ աջերը պինդ կերպով իջուցուած, պայուսակն ուսե-  
րուն կազած կամ աջ ու ձախ յարածօձ, նա կը վազէ, կը  
ճչէ, կը հետապնդի իւր ընկերներուն, կը ձեծկուի անոնց  
հետ, կ'ինկնայ, նորէն կ'եղնէ, կը ծիծաղի, կը պոսայ եւ կը  
վազէ դարձեալ: Կրակ ու բոց է, կը նմանի Փարիզի արու-  
արձաններուն տղայոց, միայն թէ իւր սկրային կազմածն  
աւելի հաստատուն է եւ իւր շարժումներն աւելի դեղեկոտ:  
Կապրօշ անոր անձին մէջ պիտի գտնէր լաւ ընկեր մը:

Դիրին է գուշակել թէ ուսումը շատ հաճելի չի կրնար

ըլլալ այս խառնուածն ունեցող կայտառ տղու մը . իրեն պէտք է շարժում , լայն միջոց : Այս խոկ է որ ըսել կուտար Շէքսպիրի , աւելի քան երեք հարիւր տարի յառաջ . « Իւր փոքր պայուսակով եւ արշաւըյսի պէս պայծառ երեսով , խղունջի մը նման կը սողայ ակամայ դէպ ի դպրոց » : Ակամայ : — Ուրեմն ճիշդ էր Շէքսպիրի տեսութիւնը : Իրօք , աննշան բան մը բաւական է՝ ըմբատութեան գրգռելու այս մատաղ ուղեղները , ինչպէս եղաւ 1889 հոկտեմբեր ամսոյ մէջ , քաթի պատժոյն դէմ կատարուած ցոյցերով : Բայց այս նոր Ֆրոնաը յարդի բոց մը միայն եղաւ , ըստ սրում ուսուցիչները , ծնողներն ու ոստիկանութեան գործակալները միաբանեցան , եւ ամէն ինչ վերստին կարգին մտաւ :

Այսու ամենայնիւ , դպրոցականներուն հետ վարմունքը չէ գլխաւոր արգելքը դպրոցական կանոնաւոր յաճախման : 1876 ի պարտաւորիչ օրէնքին հակառակ , բացակայութիւններն իրօք յոյժ բազմաթիւ են : Դպրոց յաճախելու պատշաճ տարիքն ունեցող վեց միլիոն տղայոցմէ , 4,800,000 միայն արձանագրուած են դպրոցական տոււարներուն մէջ : Իբր 1,200,000 տղայք ուրեմն զուրկ կը մնան ուսումէ եւ կրթութենէ : Եթէ դարձեալ բոլոր արձանագրուածները կանոնաւորապէս յաճախէ՛ին : Բայց օրական բացակայութիւններուն միջին թիւը մէկ միլիոնէն աւելի՛ է , այնպէս որ 5 տղայոցմէ՝ որք կրնային արձանագրուիլ , 4ը միայն արձանագրուած են , եւ արձանագրուած այս չորս աշակերտներէն մէկը , միշտ միեւնոյնը , շարունակ բացակայ է : « Ազգային ամօթ մ'է այս » , կը յայտարարէր 1892 ին Պ . Մաքնամարա , Անգլիացի ուսուցիչներուն միութեան նախագահը , որոյ խիստ գնահատութիւնը դադրած չէ իրաւացի ըլլալէ :

Այս ողբալի վիճակին պատճառներէն մէկն է անշուշտ մեծ քաղաքներուն թշուառութիւնը : Աղքատներն այնչափ բազմանդամ ընտանիքի տէր են՝ որ չեն կրնար իրենց գաւակներուն ճարել ո՛չ դասազիրք , ո՛չ հագուստ , ո՛չ կոշիկ : Ուստի այս թշուառ տղայք չեն ստանար ո՛ր եւ է կրթու-

թիւն : Թախտայած կը շրջին փողոցներուն մէջ ու չարիքը հանդերձ իւր բոլոր ձեւերով կը սովորին փողոցային դպրոցին մէջ : Նկարագեղ բացատրութեան մը համեմատ , ասոնք « վայրագներ » են , մինչեւ որ « պատժապարտներ » լինին :

Պաշտօնական աղբիւրներէ քաղուած տեղեկութիւններուն համաձայն , սոօրեայ միլիոնաւոր բացակայութիւններուն բացատրութիւնը պէտք է որոնել անկարողութեան մէջ , անհոգութեան մէջ , եւ մինչեւ խոկ օրէնքը յարգել տալու պաշտօն ունեցող դպրոցական մասնախմբերուն մեղսակցութեան մէջ : Քանի մը մեծ քաղաքներու բացառութեամբ , այս մասնախմբերը կը նմանին ֆրանսացիներուն դպրոցական յանձնախմբերուն , որք կա՛մ այն է որ չարաչար կը պաշտօնավարեն կամ ամենեւին չեն պաշտօնավարեր : Իրենց խստութեան օրերուն մէջ , յառաջ կ'երթան մինչեւ սահմանել 60 սանթիմի տուգանք մը , բայց իբր ընդհանուր կանոն՝ անպարտ կ'արձակեն յանցաւորները : Այսպիսի ներողամտութեան մ'առջեւ , այս վերջինները շատ անիրաւ պիտի լինէին՝ եթէ նեղանային :

\* \* \*

Հիմա որ քիչ մ'ընտելացանք Անգլիացի ուսուցիչներուն եւ աշակերտներուն հետ , տեսնե՛նք զայնս գործի մէջ , մըտնենք որ եւ է նախակրթարան մը : Անցնի՛նք տարրական դասարաններէն . փոքր մանչերուն ու փոքր աղջիկներուն զուարթ դէմքերն անշուշտ շատ հաճելի են , բայց մեր պարապոյ ժամերը չեն թոյլատրեր մեզ կանգ առնուլ ամենուրեք : Երթա՛նք մտնուանդ մեծերուն դասասրահը . հո՛ն է անտարակոյս որ լիուլի կը փթթի անգլիական դասաւանդութիւնը :

Մինչդեռ աշակերտները զլխահակ կ'ուսումնասիրեն իրենց դասագրքերն ու դասատետրերը , արագ հայեացք մը նետենք մեր շուրջը : Դասարանն ընդարձակ է , լայն պատուհաններէ ըյս կ'ընդունի , խոկ ցեղունը շատ բարձր է : Պահ մը յետոյ պիտի յայտնենք մեր խնդակցութիւնները

տնօրէնին՝ հոս տիրող ծայրագոյն մաքրութեան առթիւ : Դասարանին խորը կը գտնուի ուսուցչին գրասեղանը, ճիշդ վերելը՝ Վիքթորիա թագուհւոյն կիսարձանը, որ հոն դետեղուած է՝ ամենուն յիշեցնելու համար « հաւատարիմ հրպատակներու » պարտականութիւնները. պատերն ի վար կախուած են բնապատմական տախտակներու քարտէսներ, ժամանակացոյցը, աշակերտներու բաւական լաւ յաջողուած քանի մը դժագրութիւններ : Ուսուցիչն երեսուն տարին անցուցած չէ, հաստատակամ ու զիրարհամբոյր կերպարան մ'ունի : Իւր մէկ նշանին վրայ աշակերտներու խումբ մը կ'երթայ գրատախտակին առջեւ՝ թուարանական խնդիրներ ուղղելու համար : Ուսուցիչը պարզ, շատ սրտ հարցումներ կ'ընէ : Փոխանակ պատասխանելու ըստ զխլաց եւ անխորհրդարար, աշակերտները լռութիւն կը պահեն, կը խորհրդածեն, կը խօսին վերջապէս յամբութեամբն այնպիսի խահական մարդոց որ ճշմարտութիւնը կը մնասեն առ խարխափ : Այսպէս կը տեսէ ամբողջ քառորդ ժամ մը. դասարանին մէջ ո՛չ խանդ կայ ո՛չ եռանդ, այլ հարցումներու եւ պատասխաններու սերտ կապակցութիւն մը : Ինչ որ պիտի թմբեցնէր ժաք Պօնօսի միտքը, կը հետաքրքրէ ձօն Պուլի միտքը . ի՛նչ հակապատկեր : Երբոր ուսուցիչը կը տարակուսի թէ աշակերտները կատարելապէս հասկցած չեն իւր բացատրութիւնները, բնաւ չի վարանիր երկրորդել իր օրինակները, լրացնել իր բացատրութիւնները, եւ նոր դժուարութիւններու չի մօտենար՝ առանց ապահով ըլլալու թէ իւրաքանչիւր աշակերտ կարող է հետեւելու դասընթացքին : Այս մարդիկ ունելի ծայրով չեն դործեր, այլ կը յառաջանան միշտ, անսայթաք եւ հաստատուն քայլերով :

Այժմ՝, ընթերցանութեան դասին ներկայ ենք : Մարմնամարզի ուսուցիչ մը պիտի հիանար, զիտեղով այս աշակերտներուն դիրքը . անձնիքն (պիւսք) ուղիղ, գլուխը՝ բարձր, ուսերն ետ քաշուած, դասագրքերը՝ պաշտած հեռուորութեամբ . — կատարեալ : Դիտեցէ՛ք թէ որպիսի՛ խնամով

կ'արտասանուին ձայնաւոր գրերը, որպիսի՛ ազդուութեամբ կ'որոշուին բաղաձայնները : Թերեւս արտայայտութիւնը քիչ մը կը պակսի, բայց վայելուչ, յստակ եւ լաւ կշռուած առողանութիւնն ալ բան մը չէ՞ միթէ : Չար լեզուներն ի դուր կ'ըսեն թէ Անգլիերէնը հեշտալուր չէ : Մեր տեսակէտով, հոս ալ ոգեւորութիւնը կը պակսի, բայց ի՞նչ փոյթ : Բոլոր աշակերտք զիտակցօրէն կը հետեւին հրահանգին . բացատրութիւնները հիւթեղ են . աշակերտներուն ուշագրութիւնը միշտ լարուած կը մնայ . այս պատանիներ ստուգիւ նշանաւոր են զօրաւոր կամքի կողմէ : Ո՛հ, չը չափազանցենք . արդարեւ խումբին մէջ կան երկու կամ երեք աշակերտներ՝ սրոց միտքը թարթափուն է եւ որք կարծես թէ բան մը չեն զիտեր կամ իրենք զիրենք կը զիտեն : Այս տարտամ, հայեցողական արտայայտութիւնը դուն ուրեք կը ցողանայ Ֆրանսական դէմքերով . . . : Յաւալի՛ է, եթէ չգիտէք Շէքսպիրի լեզուն : Պիտի հաւատա՞ք, երբ ըսեմ թէ անմահ բանաստեղծին մէկ հատուածն է որ կը կարդացուի այժմ դասարանին մէջ : Ինչո՞ւ համար Ֆրանսացիներն ալ իրենց տղայքը շփման մէջ չընեն Քոռնէյլի, Մորիէօի, Լաֆօնթէնի եւ Վիկթոր Հիւկոյի հետ : Այս մեծ մարդեր միթէ արժանի չե՞ն պատուոյ տեղեր գրաւելու բոլոր նախակրթարաններուն մէջ :

Նայեցէ՛ք, ուրիշ ուսուցիչ մը երգի դաս կ'աւանդէ աշակերտներուն : Այս առթիւ կարելի պիտի լինի մեզ դատել թէ Անգլիացիներն այնչա՞փ տկար են երաժշտութեան մէջ սրչափ կը պնդէ ամէն մարդ : Թուարեալ (չիֆրէ) մեթոտին կը հետեւին, որ կ'երեւի թէ աւելի պարզ է եւ աւելի արագ քան հին մեթոտը : Իրօք, դեռահաս տղայք բաւական լաւ կը խողերդեն (սոլֆեժ) այն քաղճրանուագ փոքր դարձուածքները զորս մեր աչերուն առջեւ գրեցին գրատախտակին վրայ : Այժմ՝ խմբերգ մը կ'եղանակեն երկձայն . չափը կանոնաւոր է, երանգներուն մէջ քիչ մը թերութիւն կայ, բայց ընդհանուր առմամբ լիուրի են : Քանի մը սուր

ձայներու ազդեցութիւնը մեղմելու համար, լաւ կը լինէր դիմել կանացի ձայներու օգնութեան. այսու հանդերձ, փորձը կրնայ համոզել զմեզ թէ՛ երաժշտութեան նկատմամբ Անգլիացիներուն «անդարմանելի ոչնչութիւն»ը լիկ առասպել մ'է:

Որովհետեւ աշակերտները կը պատրաստուին դուրս ելնել զբօսանքի համար, այս առիթէն օգուտ քաղենք՝ վարժարանին տնօրէնէն ստանալու համար ինչ ինչ տեղեկութիւններ ընդհանուր բարեկարգութեան մասին:

\* \* \*

«Պարոններ, կ'ըսէ մեզ այս տնօրէնը, քաղցր դէմքով մը, — Անգլիացի պաշտօնեաները միշտ քաղցրութեամբ կը վարուին օտարներու հետ —, բոլորովին ձեր տրամադրութեան ներքեւ եմ. ինչ ծառայութիւն կրնամ մատուցանել ձեզ:

— Գուցէ չարաչար դործածենք ձեր այնուութիւնը, բայց այնչափ քիչ ժամանակ ունինք Լոնտոնի մէջ մնալու՝ որ հարկադրուած ենք որչափ հնար է աւելի տեղեկութիւններ ստանալու:

— Կը հասկնամ, Պարոններ: Հաճեցէք ընել ինձ ձեր հարցումները, որոց պիտի պատասխանեմ իմովսանն:

Կը հարցնենք անոր թէ մարմնական պատիժները գործադրելի ե՞ն դեռ նախակրթութեան մէջ: — «Անշուշտ, դէժ տարրական դպրոցներուն մէջ: Բարոյական պատիժներն ամենեւին չեն ներգործեր մեր չարածճիւններուն վրայ, մինչդեռ պոզերն (ֆիլոֆի) ու ձեռաց վրայ քանոնի հարուածները զիրենք յուզութիւն կը հրաւիրեն՝ առանց վիրաւորելու իրենց արժանապատուութիւնը: Վարժապետանոցներուն մէջ, ուր պարագայները տարբեր են, ուրիշ միջոց ի գործ կը դնենք. ամէն տեսակ պատիժ անձանօթ է հոն. աշակերտներուն գիտակցութեան կը դիմենք, եւ սա կը բաւէ: Կը տեսնէք, մեր կարծիքն այն է թէ պէտք է մարդոց

հետ վարուիլ իբր մարդ եւ չարածճիւններուն հետ՝ իբր չարածճի, ինչպէս կը պատուիրէ Առաքեալը:

Ահա պատասխան մը՝ որ վերժ է երկդիմութենէ: Քաջաբերիչ համարելով այս համարձակասութիւնը, կը խընդրենք մեր խօսակցէն որ բարեհաճի ըսել մեզ թէ նախնական կրթութիւնը ճի՞ր է Անգլիոյ մէջ՝ ինչպէս է արդէն Յրանսայի մէջ:

— «Այո՛ եւ ո՛չ, կը պատասխանէ մեզ: Թէ եւ նախնական կրթութիւնը ճի՞ր հռչակուած է 1891ի օրինօք, բայց այս օրէնքը ջնջած չէ ո՛չ թոշակ ընդունող վարժարանները, ո՛չ ալ այն տարեթոշակը՝ զոր դիւրակեցիկ ծնողներ կրնան վճարել իրենց զուակներուն կրթութեան համար: Սակայն դպրոցական բոլոր պիտոյքները ճի՞ր են, ինչպէս եւ դասագրքերը փոխ կը արուին աշակերտներուն. այլ է եթէ այս վերջիններն ուզեն զայնս գնել՝ իրենց անձնական սեպհակաճութիւնն ընելու համար: Վերջապէս, մեր ճիւղութիւնը չափաւորուած է եւ կը նպաստէ աղքատիկ աշակերտներուն, ինչ որ կարեւոր է. ընդհակառակն, չընէր հարուստներուն այնպիսի նուէրներ որոց կարօտ չեն: Միթէ բանաւոր կը լինէ՞ր յումպէտս խճողել մեր ելեւմտացոյցը»:

Անօգուտ վիճաբանութենէ մը խոյս տալու համար, փափաք կը յայտնենք դիտնալու թէ նախնական կրթութիւնը դաւանական է՞ թէ ոչ: — «Այդ խնդիր, մեզ կ'ըսէ տնօրէնը, այն է որ ամենէն աւելի վիճաբանութիւններ յարուցած է վերջին տարիներուս մէջ, ու կը խանդավառէ դեռ այնչափ մտքեր՝ որ դժուար է անկողմնակալ ոգևով խօսիլ ադոր վրայ: Սակայն, ես պիտի փորձեմ խօսիլ այնպէս: 1870ի Կրքակալ Օրէնքին 7րդ յօդուածը կը տրամադրէ թէ ամէն հանրային վարժարանի մէջ, աշխարհական թէ ժողովական, աշակերտները պիտի կարենան չհետեւիլ կրօնական ուսման՝ եթէ իրենց ծնողները փափաք յայտնեն այս մասին: Այս ազատական տրամադրութիւնը համբաւուոր եղաւ խղճի պայման անունով: 1871 մարտ 8ին, Լոնտոնի առա-

չին Սքուլ Պօրաբ, այսինքն՝ աշխարհական դպրոցներուն դասաւանդութեան վրայ հսկելու համար մայրաքաղաքին ծխականներէն ընտրուած դպրոցային մասնախումբը, կը քուէարկէ իրաւախոնորքուն (ֆոնկոսմի) կոչուած որչում մը, որուն համեմատ Աստուածաշունչ գիրքը պէտք է կարդացուի աշխարհական դպրոցներուն մէջ, բայց առանց տալու այնպիսի մեկնութիւններ՝ որք ազանդաւոր հանգամանք ունենան: Ամբողջ քսան տարի եւ աւելի իսկ, ո՛չ ոք լրջօրէն մտածեց վնասել վերոյիշեալ իրաւախոնորքեան եւ խղճի պայմանին: Այսու ամենայնիւ, պահպանողականները դժկամակութեամբ կը համակերպէին այս կացութեան որ չէր նպաստաւորեր իրենց ծրագիրները: Ուստի 1892էն սկսեալ, կը փորձեն ուսուցանել սալ Փրկութեան եւ Երրորդութեան վարդապետութիւնները Լոնտոնի բոլոր վարժարաններուն մէջ: Բնականաբար, Պօրտ Սքուլի կուսակցութիւններէն մին կ'ընդգլխմանայ ազդուօրէն. պայքար մը կը ծագի սստի, մամուլը կ'արծարծէ զայն եւ հանրութիւնն իւր կարծիքը կը յայտնէ առ խարխափ: Վրայ կը հասնին ընտրութիւնները՝ Սքուլ Պօրտի եռամեայ վերանորոգման համար. հայրեր, մայրեր, ուսուցիչ, կղեր, օրագրապետներ, ամէն մարդ կը նետուի պայքարին մէջ. երկուստեք ցոյց կուտան անհաւատալի, աննկարագրելի մոլեգնութիւն մը: Վերջապէս, կուսակցութիւններէն մին 150,000 ձայնի առաւելութիւն մը կը ստանան պահպանողականներուն վրայ, բայց ընտրական շրջանակներուն անհաւասարութեան հետեւանօք, դարձեալ պահպանողականները մեծամասնութիւն կը դրաւեն նորընտիր Պօրտ Սքուլի մէջ: Կը գուշակէք անշուշտ թէ ի՞նչ արդիւնք կրնայ յառաջ գալ:

Կը հաւաստեմ զձեզ թէ իմ պաշտօնակիցներս ու ես եռանդագին պիտի մաքառինք որ նախնական կրթութիւնը բացարձակօրէն չէզոք լինի կրօնական տեսակէտով:

Սոսակցութիւնն այնպիսի շահեկան հանգամանք մը կ'ստանայ որ չենք երկմտիր զայն շարունակելու:

— Անգղիոյ մէջ կա՞յ Քրանսացիներուն ուսմանց վկայագրի (Սեռքիփիֆա ս'էքիւս) քննութեան նման քննութիւն մը:

— Ո՛չ ճշդիւ, եւ այս բանը ցաւալի է, քանզի այդ քննութիւնը պարտի ըլլալ ազդու խթան մը: Այս ընդհատին պատճառը պէտք է փնտռել մեր այն ատելութեան մէջ զոր ունինք անշահ թուղթեր պահելու եւ ճղճիմ կանոններ սահմանելու մասին: Սակայն մեր աշակերտներէն անոնք որ յաջողակ են՝ վարժարանէն չեն մեկնիր, առանց հետ տանելու իրենց աշխատութեան ու իրենց վարքին մէկ վկայութիւնը: Յաւարտ իրենց ուսմանց վերջին տարւոյն, կ'անցունեն քննութիւն մը զոր մենք անձամբ կը կատարենք, եւ նիշերը զորս կ'ստանան՝ կ'արձանագրուին համեստ մագաղաթի մը վրայ: Կրնաք հաւատալ թէ անոնք տեսակ մը հպարտութիւն կը զգան, ցոյց տալով զայն իրենց ընտանեաց:

— Ուսմանց ո՞ր ճիւղերուն մէջ կը քաղէք ամենէն լաւ արդիւնքները:

— Ընթերցման մէջ, գրավարժութեան մէջ, ուղղագրութեան մէջ եւ թուարանութեան մէջ. մեր աշակերտները գրեթէ զոհացուցիչ կերպով ճշգրիտ ծանօթութիւններ ունին աշխարհագրութեան վրայ, բայց, հսկառակ մեր կողմէ թափուած ճիւղերուն, տկար կը մնան պատմութեան մէջ: Նոյնպէս, հոգ չեն տանիր կամաւոր առարկաներուն. եթէ վերջերս քիչ մը յառաջադէմ են երաժշտութեան եւ դժադրութեան մէջ, ասոր պատճառն այն է որ կատարելագործած ենք մեր մեթոտները, հրապուրիչ եւ միանգամայն գործնական հանգամանք մը տալով անոնց . . . : Մեթոտներու եւ ուսման առարկայներու առթիւ, թոյլ տուէք ինձ դիտել թէ Քրանսացի ուսուցիչներու ընծայուած է այնպիսի պարագայ մը՝ որուն արժէքը լի ու լի չի գնահատուիր թերեւս իրենց կողմէ. մինչդեռ Յ ամիս իրենց կը բաւէ մեթրական դրութիւնն ուսուցանելու, գրեթէ Յ տարի պէտք է մեզ՝ մեր տղայց ուսուցանելու համար անգլիական չափերն ու կշիռները, որոնք՝ կրնաք ըմբռնել թէ՛ ո՛րչափ դժուարութիւններ յառաջ կը բերեն մտաւոր հաշուոյ գործողութեանց մէջ:



— Պետութիւնը որ եւ է հսկողութիւն ի գործ կը դնէ՞ նախակրթարաններուն վրայ:

— Անշուշտ. այս հսկողութիւնը կամ համարառութիւնը կը կատարէ ի փոխարէն այն դրամական նպաստներուն՝ զորս կը շնորհէ մեզ: Պետութիւնը կ'անուանէ ամէն աստիճանի քննիչները. վարչաբաժնի քննիչներ, նախնական քննիչներ, էնթաքննիչներ, օգնական քննիչներ: Ասոնց զլխաւոր պաշտօնն է այցելել վարժարանները: Տարւոյն սկիզբէն մինչեւ վերջը, շատ անգամ յանակնկալս կուգան ստուգելու թէ օրէնքներն ու կանոնադրութիւնները ճշգիւ կը գործադրուին, կամ ո՛չ: Բայց մեզ համար ամենէն աւելի նշանակութիւն ունեցողն է տարեկան համարատուութիւնը՝ զոր քննիչները կը պահանջեն մեզմէ: Այս առթիւ, ասոնք կանխաւ կ'ազդարարեն մեզ որ պատրաստուինք զիրենք ընդունելու, եւ ամէն ինչ կը քննեն մանրամասնաբար: Ամբողջ օրեր, կը թղթատեն արձանագրութեան տոււարները, աչքէ կ'անցունեն տետրակները, ներկայ կը գտնուին դասերուն, կը հարցաքննեն աշակերտները: Վերջապէս, երբոր տեղեկանան ըստ բաւականին, կը խմբագրեն տեղեկագիր մը որ պարտի ընդօրինակուիլ յատուկ տոււարի մը մէջ եւ պահուիլ վարժարանին դիւանին մէջ: Ահա՛ այս տեղեկագրի մէջ կ'որոշուի յաջորդ տարուան համար պետական նպաստին քանակը:

Այս պահուն, զանգակը կ'ազդարարէ թէ վերջացած է զրօսանքը, ուստի կը փութանք շնորհակալութիւն յայտնել Տնօրէնին՝ իւր ազնուամտութեան համար, ու կը մեկնինք, ազատ թողլով զինքն իւր աշխատութեան մէջ:

\* \* \*

Արդ, ի՞նչպէս պէտք է ամփոփել այն տպաւորութիւնները զորս կրեցինք մեր՝ յԱնգղիա ըրած ուղեւորութեան միջոցին: Այս տպաւորութիւններ այնքան բազմակողմանի են, այնքան այլազան, ընութեամբ այնքան հակասական, որ մեր մտքին մէջ կը խռնին ազմկասէր ամբոխի մը պէս: Փոր-

ձենք սակայն որոշել ամենէն էականներն ու զայնս շարադասել լաւ կարգով:

Անգլիացի ուսուցիչք քիչ մը պաղ կը թուին թէ՛ մեթոտի եւ թէ՛ բնաւորութեան կողմանէ. մեր կարծեօք, բաւականաչափ ոգեւորութիւն ու գորով չեն ծաւալեր իրենց շուրջը: Բայց պէտք է խոստովանիլ թէ ամէն հաստատուն բարեմասնութիւններով օժտուած են. հաստատամտութիւն, համբերութիւն, կորով, յարատեւութիւն, եւ այլն, ըստ կարգին: Մարդ ուրախ կը լինի տեսնելով թէ անոնք լաւ ըմբռնած են իրենց պաշտօնին կարեւորութիւնն ընկերային կեանքի մէջ. նկատելով անոնց անխոնջ եւ համեստ անձնուիրութիւնը, մարդ կը զգայ թէ կը սիրեն իրենց պաշտօնը: Իսկ եթէ ի նկատ առնուի թէ իրենց կացութիւնը շատ դժուար է ո՛չ միայն վասն զի անբաւական պաշտպանութիւն մը կը վայելեն պետութենէն, այլ եւ վասն զի ունին մրցիլ դաւանական ուսուցման հետ, մարդ յօժարակամ կը հաստատէ անոնց բարձր արժանիքը:

Ճշմարիտ է թէ անոնց աշակերտք յոյժ օգտաւէտ ու շահեկան կ'ընեն անոնց պաշտօնը: Այս վերջինք նուազ աչալուրջ կ'երեւին քան Ֆրանսացի սաները, բայց անոնք աւելի խոհուն են: Անոնք զրօսնելով չեն քաղեր գիտութիւնը, այլ անկասելի աշխատանքէ մը յետոյ կը հնձեն զայն: Աշխոյժ են խաղի մէջ, կարգապահ՝ դասարանի մէջ, հլու եւ ձեռներէց ոգևով տոգորուած, յարաբերապէս կարեւոր եւ արդիւնաւոր եղող ինքնաշխատութեան կարող, վերջապէս այնպիսի աշակերտներ են որոց նմանները յոյժ սակաւաթիւ են այլուր, եւ որք կաթոգին կը սիրեն լաւ ուսուցիչները: Շըրջանաւարտ ըլլալով վարժարանէն մեկնելէ յետոյ, փոխանակ կարծելու թէ ամէն բան գիտեն եւ թէ այլ եւս ոչինչ մնացած է իրենց համար ուսանելու, կը շարունակեն ուսանիլ ու զարգանալ, զիչերային դասընթացքներու կը հետեւին, եւ այսպէս կը լինին այն ճարտարագործներն ու վաճառականները՝ որք կը կազմեն Անգլիոյ հարստութիւնը: Իցի՛ւ թէ ի-

րենց օրինակին հետեւէին մատաղատի ամէն պատանի ու երիտասարդ :

Անգլիացաց նախնական կրթութիւնը ուրիշներէ կը գտնազանի իւր դրական նկարագրով՝ որ շատ ազդու է : Այս կրթութիւնն նուազաթիւ ընդհանուր գաղափարներ կը բովանդակէ եւ կը զգուշանայ վերացական գաղափարներէ՝ ինչպէս վտանգաւոր խռովերէ : ասոր փոխարէն, լիահոծ է իրողութիւններով, թանձրացեալ իրականութիւններով, հաւատարմութիւններով, թանձրացեալ իրականութիւններով, հաւատարմութիւններով, թանձրացեալ իրականութիւններով : Այս կրթութիւնն չի փայլիր, բայց հաստատուն է եւ անփկանդ : Եթէ կարելի է գործածել այս պատկերը, այս կրթութիւնն կ'ընծայէ նուազ ակործելի բայց հիւթեղ սնունդ մը : Սա կը մերժուի փափուկ մտքերէ, բայց կը պատշաճի կորովի մըտքերու :

Վերջապէս, ժողովրդեան կրթութիւնը կը տարբերի Մանչի կրկին եզերքը. Ֆրանսայի մէջ, ջանադիր կը լինին կազմելու այնպիսի մարդեր, որք ամէն բանէ մէկ մէկ քիչ գիտնան, ամէն բանի հետաքրքրուին, որոց առջեւ բացուին կեանքին բոլոր ճամբայները, ամենէն հասարակներէն սկսեալ մինչեւ այն ճամբայները՝ որք կը տանին ընկերային գաղափարնակեալերը. իսկ Անգլիոյ մէջ, կրթութիւնը դժնդակ կեանքի մը կը պատրաստէ գործնական մարդեր, գեղեցիկն արհամարհոտ, միմիայն օգտակարը գնահատող, մարդեր որոնք գերազանցօրէն պիտի յաջողին արուեստանոցին մէջ, հանքերուն խորը, եւայլն : Սոյն կրկին հակոտնեայ կրթութիւններուն նկատմամբ ի՞նչ է ձեր կարծիքը : Առաջինը շատ սահմանափակ է, երկրորդը՝ շատ ընդարձակ. եթէ երբեք կարելի լինէր ի մի ձուլել զայնս, իտէական դաստիարակութեան տարրերը գտնուած պիտի ըլլային :

Թարգ. Ա. Ն. Թ.

Լ. ՊԱՔԱՆ

# ՊՁՏԻԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

(ՄԱՅՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԾԱՂԿՈՑ, ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋ)

## ԸՆՏԱՆԻ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Օրը պէտք է սխի ընտանի խօսակցութեանը մը, որուն մեջ վարժուիին նպասակ պիտի ունենայ մանուսակը. 1. խիստ մօտէն ուսումնասիրել շղայքը, 2. շարունակական կերպով կերպործել ակնոց գզգռումներուն եւ ակնոց սովորութիւններուն վրայ : Նիւթերու ընտրութեան համար պիտի օգտուի պարագայներէն. երբ պէտք ըլլայ, միեւնոյն նիւթին քանակը պիտի վերադարձուց. հարցափորձուած շղան իրեն համար չպիտի ըլլայ բնու կրաւորական ակնոցն եսկ մը, այլ դեռածին ակնաստիակներուն մը՝ որ ունի իր յասուկ կենցաղը, իր ընտանեկան դիրքը, իր քիչիքիական կարողութիւնները, իր բարոյական պարտականութիւնները եւ իր մտաւորական ընդունակութիւնները : Իբրեւ օրինակ յառաջ կը բերեմք խօսակցութեան մեկ փայլուն նիւթեր :

ՄԱՅՐԸ. — “Դուք ամէնքդ ալ կը սիրէք ձեր մայրիկը. ձեզմէ ո՞վ այս առտուստ անոր ձեռքը համբուրեց . . . : Ձեզմէ ո՞վ անոր ձեռքը պիտի համբուրէ գպրոցէն վերագարձին . . . ” :

“Ձարուհի՛, ի՞նչ ըսիր մայրիկիդ՝ տունէն դուրս չելած . . . : Ի՞նչ պատասխանեց քեզի . . . ” :

“Օննիկ, ի՞նչ կ'ընէ մայրիկդ՝ քու գպրոց եղած ժամանակ . . . : Ի՞նչ պիտի ըսես իրեն, երբ վերըստին տեսնես զանիկայ . . . ” :

“Պօղոս, մայրիկիդ վիշտ պատճառեցի՞ր . . . : Ի՞նչ ըրիր . . . : Նորէն պիտի ընես . . . ” :

“Արուսեա՛կ, բացաարէ ինձ թէ ի՞նչ կ'ընես որ մայրիկդ գոհ ըլլայ . . . ” : Եւայլն :

**ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ**

**ՓՈՔՐԵՐՈՒՆ ՀՍՄԱՐ** : — ԱԶԵՐԸ . — Վարժուհին կ'ըսէ և բոլոր աղայք կը կրկնեն . Ես ունիմ երկու աջ . մենք ունիմք երկու աջ . իմ պեպեքս (գաւառական բառով՝ խամաճիկ) ունի երկու աջ . պզտիկ կիսուն ունի երկու աջ . . . :

Բոլոր աղայք վարժուհուն ըրած շարժումները կ'ընեն և անոր հետ կ'ըսեն . Կը գոցեմ աչքերս . կը բաւաւ աչքերս . վեր կը նայիմ . վար կը նայիմ . ձեռքդ կը ծածկեմ աչքերս . աչքերս դեպ ի աջ կողմ կը դարձնեմ . աչքերս դեպ ի ձախ կը դարձնեմ . . . :

Բոլոր աղայք կը գիտեն ինչ որ վարժուհին կը ցուցնէ , և կ'ըսեն . Գեորգիս աչքերը բռնի եմ . Աղաւնիս աչքերը կապոյտ եմ . Փիսիկիս աչքերը դեղիս եմ . մեր պեպեքիս աչքերը սեւ եմ . Խաչիկիս աչքերը կը ցաւիս , եւայլն :

**ՄԵԾԵՐՈՒՆ ՀՍՄԱՐ** . — ՔԻՉ ԱՏԵՆԷՆ . — Հարցափորձուած աշակերտք պիտի ըսեն ինչ որ պիտի ընեն , ինչ որ պիտի տեսնեն , ինչ որ պիտի լսեն . . . քիչ ատենէն :

Քիչ ասեցեմ , ես միևս պիտի գաւ դպրոց : — Քիչ ասեցեմ , նոր գլխարկ մը պիտի ունեցնաւ : — Քիչ ասեցեմ , գիւղ պիտի երթաւ : — Քիչ ասեցեմ , հայրս գիրք մը պիտի գնէ ինձ : — Քիչ ասեցեմ , պիտի կրնաւ շունչս դարձնել , եւն :

**ԱՄԵՆՈՒՆ ՀՍՄԱՐ** . — Ա . ՊԱՏԿԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ :

Պատկերներու յատուկ դպրոցներու մէջ , պատկերներու հաւաքածոյները խիստ կարեւոր են . պէտք է կարելի եղածին չափ ճոխացնել զանոնք և անոնց դիմում ընել անդադար : Օգտակարապէս կրնան գործածուիլ՝

1. Մեծ պատկերները (կենդանիներու , բնական րաններու , երկրագործական կամ արուեստական աշ-

խատու թիւներու , և այլն) զորս ամբողջ դասարանը կրնայ տեսնել , պատմել կամ բացատրել , իմաստուն ուղղութեան մը ներքեւ :

2. Սե կամ գունաւոր պատկերները , որոցմէ պէտք է տալ երկու աշակերտի մէկ հատ , առիթ տալու համար անոնց որ գաղափարի փոխանակութիւններ ընեն , միանգամայն չարթուցանելու համար անոնց մէջ նախաձեռնութեան սղին : Վարժուհուն պէտք պիտի ըլլայ մտիկ ընել , աշագիւր ըլլալ , թելագրել , ի հարկին ուղղել :

3. Զանազան տեսակ մանր պատկերներ պարունակող տետրակներ , որոնք կրնան ձեռքէ ձեռք անցնիլ և թղթատուիլ :

Բ . ԽԱՂ . — Տղայք կը կանգնին երկու առ երկու . մին բժիշկն է , միւսը՝ հիւանդը : Կը խօսակցին այսպէս .

- Պարոն բժիշկ , հարբոյս եղած եմ :
- Փոքրիկ բարեկամս , եթե հարբոյս եղած ես , պէտք է քնքի (օխշաւուր) կաւ քեյ խնու :
- Պարոն բժիշկ , կը հագաւ :
- Փոքրիկ բարեկամս , եթե կը հագաս , օշարակ խնու :
- Պարոն բժիշկ , մեկ ակոսս փսած ե :
- Փոքրիկ բարեկամս , եթե մեկ ակոսայ փսած ե , պիտի հանեմ զայն :

Երկու աղոցմէ ո՛վ որ ըսելու բան մը չի գտնէ , հիշանդանոց կ'երթայ (այսինքն իբրև հիւանդանոց սահմանուած նստարան մը) :

**ԸՆԹԵՐՑՈՒՄ — ԳԻՐ**

Արդի մանկավարժութիւնը կ'արդիւն ընթերցումը 2 Էն 4 տարեկան աղոց համար , և քիչ մ'աւելի մեծերուն համար ալ կը պահանջէ — շատ իրաւամբ —

որ ընթերցումը չուսուցուի անհասկանալի բառերու  
և խրթնաբանութեանց վրայ, այլ գործնական բա-  
ռերու և պարզ պարբերութիւններու վրայ:

Գիրը պէտք է համընթաց ըլլայ ընթերցումին  
հետ: Պէտք է սկսիլ նօսր կամ ընթացիկ գիրէն և  
յաճախ սև տախտակին վրայ գրել տալ:

**ՀԱՆԻԻ**

ՄԷԿ ԹԻԻԸ. Բերանացի եւ իրագնևակաև վարժութիւնք: —  
Ցուցուցէ՛ք մէկ ձեռքով առարկայ մը, և միւս ձեռքով՝  
չաւ առարկայներ (գաւազանիկներ, մատիտներ, կա-  
ղիններ, կայլն): Տղայք կ'ըսեն. Աջ ձեռքիս մեջ՝ մեկ  
մասիս. ձախ ձեռքիս մեջ՝ շաւ մասիսներ. — աջ ձեռքիս  
մեջ՝ շաւ կաղիններ. ձախ ձեռքիս մեջ՝ մեկ կաղին... Եւն:

Տրուած հրամանին համեմատ, տղայք կը բարձ-  
րացնեն մեկ կամ շաւ մատներ, — կը զարնեն մեկ կամ  
չաւ անգամ, — կ'արտասանեն մեկ կամ շաւ բառեր,  
— կ'անուանեն մեկ կամ շաւ ընկերներ, — կ'ընեն  
մեկ կամ շաւ շարժումներ, կայլն:

Վարժուհւոյն առաջարկութեան համեմատ, տղայք  
կ'անուանեն իրենց շուրջը գտնուած միակ առարկայ-  
ները. սեղան մը, — վառարան մը, — գանդակ մը,  
— կանթեղ մը, — առատտաղ մը . . . : Յետոյ կ'ան-  
ուանեն բազմաթիւ իրերը. շատ գրասեղաններ, —  
շատ պատեր, — շատ սրտուհաններ, — շատ տը-  
ղայք . . . կայլն:

ԴԻՏՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐՃՈՒԹԻՒՆԷ ԵՒ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻԷ.  
— Դիտող և մտիկ ընող տղան՝ մտաւորապէս փրկուած  
տղայ մ'է: Փութանք ուրեմն դիտող ընել զանիկայ,  
որպէս զի կոյր և խուլ չի մնայ իր բոլոր կեանքին մէջ:  
Հետզհետէ պիտի ներկայացնենք վարժութեանց նա-  
խատիպեր, որոց նմանները յօրինել գիւրբին պիտի  
ըլլայ մտացի վարժուհւոյն համար. դաշտն անսպառ է:

ՅԵՏՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐՃՈՒԹԻՒՆԷ. — Մեծ մայրը:

Պե՛սք հ սիրե՛ղ զայն, մեծ մա՛յրը,  
ձեռմակ մագերով մեծ մա՛յրը,  
Դսողոջուն ո՛սքով մեծ մա՛յրը,  
Դժուարաւ կսեղևո՞ղ մեծ մա՛յրը:

ԻՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԱՐՃՈՒԹԻՒՆԷ.

(Գծագրութիւնով). — Փոքրիկ ընտանիք. — Երկայտացու-  
ցէ՛ք մայր մը իր երկու մանկիկներով. մեծին ձեռ-  
քէն բռնած է. պղտիկը օրօրոցին մէջ կը քնանայ:

ՁԵՌՔԻ ՎԱՐՃՈՒԹԻՒՆԷ. — Կազմութիւնք. — Տղայք  
ունին իւրաքանչիւրը վեց, ութ կամ տասը խորա-  
նարդ. անոնցմով յաջորդաբար կը ձեւացնեն պատ  
մը, դուռ մը, կամուրջ մը, վառարան մը, կառաշար  
մը. կայլն:

Ծաղուռն. — Թերթ մը կամ երես մը թուղթ առ-  
նել. ուղիղ ծալք մը յառաջ բերել (երկայնքին,  
լայնքին, շեղակի): — Փորձել ծալքը ջնջելու: —  
Պատուել ծալքին ուղղութեամբ:

**ՁԵՌԱԳՈՐԾԻ ԴԱՍԸ**

Ձեռագործ կամ ասեղնագործութիւն կ'ըսուին այն ա-  
մէն աշխատութիւնք որոնք կը պահանջեն զանազան  
տեսակ ասեղներու գործածութիւնը:

Այս ուսուցման նպատակն է ազջիկներուն տալ  
ձեռքի այն ճարտարութիւնն որ անհրաժեշտ է ամէն  
լու տանախիկով և ամէն մօր համար. նաև նպատակ

անոնց դաստիարակութեան, վարժեցնելով զանոնք պարտականութեան կատարման, կարգ կանոնի, մաքրութեան, աշխատասիրութեան, խնայութեան:

Այս կարեւոր արդիւնքն ստանալու համար, այս ուսուցումն հիմնուած ըլլալու է յստակ և նպատակին յարմարցուած մեթոտի մը վրայ, որ պէտք է ըլլայ

1. Բնական: Ուսուցումը պէտք է կատարելապէս պատշաճի տղայոց տարիքին եւ կարողութեանց:

2. Տարրական: Պէտք է միշտ սկսիլ ամենէն պարզէն, հիմնականէն, եւ հետզհետէ անցնիլ աւելի դժուարիններուն, չի կանխելով բնաւ յաջորդը:

3. Իրատեսչական: Աչքը մին է մարմնոյն այն մասերէն որոցմով արտաքին աշխարհը կը ներկայանայ տղուն մտքին, եւ ճիշդ գաղափարները ճիշդ տեսնելով միայն կը կազմուին: Ինչ որ լսուած է միայն, որչափ ալ լաւ եւ գեղեցիկ ըլլայ, տղուն համար սակայն յիշողութեան խնդիր է միայն. ահա՛ թէ ի՞նչու՝ ձեռագործի ուսուցման համար անհրաժեշտ է կանխաւ բացատրել աշակերտաց, յստակ եւ ձգբիտ կերպով, իւրաքանչիւր առարկայի յօրինումը: Նաեւ ահա՛ թէ ի՞նչու՝ գծագրութիւնը այնչա՛փ օգտակար է ձեռագործի համար:

4. Խղճամիտ: Բացատրեցէ՛ք, ցոյց տուէ՛ք, ի հարկին գծագրեցէ՛ք գրատասխտակին վրայ, եւ հարցափորձեցէ՛ք տղաքը մինչեւ որ աղէկ մը հասկցած եւ տեսական կերպով ըմբռնած ըլլան դասը. յետոյ վարժութիւններ ընել տուէ՛ք մինչեւ որ պէտք եղածին չափ յաջողակութիւն ստանան: Ե Գործնական վարժութիւնն է որ մարդը վարպետ կ'ընէ:

5. Հանայնախաժական: Դասարանի մը աշակերտները պարտին միասին կատարել միեւնոյն աշխատութիւնը, միեւնոյն ժամանակամիջոցի մէջ: Վարժուհին՝ բացատրութեանց եւ սպասուցութեանց համար՝ խօսքը կ'ուղղէ բոլոր աշա-

կերտաց, որպէս զի ամենքը միանգամայն օգտուին: Պարտի հսկել որ իւրաքանչիւր ձեռագործ դիւրութեամբ եւ հաճութեամբ յառաջանայ եւ ամենուն ձեռքին մէջ գրեթէ միեւնոյն ժամանակ աւարտի: Եթէ կան տկար աշակերտներ որոց, հսկառակ նուիրուած ուշադրութեան, այս համայնավարժական ուսուցում չի բուեր, պէտք է անոնց հետ զբաղել նաեւ ի մասնաւորի. այս միջոցին՝ յառաջադէմները կ'աշխատին այս նպատակաւ. պատրաստուած երկրորդական գործի մը:

\* \* \*

Որովհետեւ Ազգ. կեդր. վարչութեան Ուսումն. խորհրդոյ կրթական Ծրագրին Ձեռագործի մասը նոյնութեամբ և միօրինակ կերպով չի գործադրուիր վարժարանաց մէջ՝ առ ի չգոյէ առաջնորդի, «նիւթ»ին մէջ վարժուհիներու արամագրութեան ներքեւ պիտի գնենք Ձեռագործի կանոնաւոր դասընթացք մը, համապատասխանող նոյն կրթական Ծրագրին պահանջումներուն:



ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ ԵՒ ԶԲԱՂՈՒՄՆԵՐ  
ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶՆԵՐՈՒ, ԽԱՂԿՈՑՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՅՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Ծ Ա Լ Ո Ւ Մ Ն

ԳՆՏԱԿԸ

Ահաւասիկ քառասուն, յիսուն մանկիկներ, որոնք հազիւ խօսիլ սկսած են: Մի՛ ըսէք բնաւ. ի՞նչպէս զբաղեցնելու, ի՞նչպէս կրթելու է զանոնք: Ամէն բան կրթութիւն է փոքրիկներուն համար:

Առէ՛ք լրացիր մը, հին տետրակի մը թերթիկները, պատուեցէ՛ք թուղթը և անկէ կտոր մը տուէ՛ք մէն մի տղու : Հրամայեցէ՛ք, օրինակը ցուցնելով, պլորել թուղթը և գնտակ մը շինել՝ ինչպէս պիտի ընէին պզտիկ կատուն խաղցնելու համար : Այս հրաման գիւրաւ պիտի կատարուի :

Որչա՛փ դիտողութիւններ կան ընելի՛ք՝ այս թուղթի կտորին վրայ :

Ի՞նչու համար գնտակի ձև կ'առնէ . անոր համար որ զայն կը պլորենք մեր ձեռքերուն մէջ . . . ձեռքին խոռոչը կաղապար մը կ'ըլլայ անոր համար :

Ի՞նչու համար բոլոր գնտակները միեւնոյն մեծութիւնը չունին : Անոր համար որ կտորները հաւասար չէին, և մէջէ քանի տղայք ալ աւելի սեղմած էին թուղթը :

Պիտի ընտրել տա՞ք ամենէն աւելի կլոր գնտակները : Տղայք պիտի խաղան անոնցմով : Նետել տուէ՛ք գնտակները օգին մէջ . թո՛ղ բռնեն զանոնք նախ երկու ձեռքով, յետոյ մէկ ձեռքով (փոփոխակի աջ և ձախ ձեռքերով) :

Առարկայ մը սրոչեցէ՛ք : Օրինակի համար, թուղթէ ձագար մը շինեցէ՛ք և դրէ՛ք ձեր գրասեղանին վրայ : Տղայք իրարու ետեւէ թո՛ղ անոր նետեն իրենց գնտակները, կա՛մ երկերկու հոգի թո՛ղ նետեն, և կա՛մ ամենքը մէկանց : Որչա՛փ պիտի ուրախան : Այս խաղի պահուն, տղայք պիտի կրնան կանգնած ըլլալ կամ նստած : Իրենց գործունէութիւնը գոհացում պիտի գանէ : Զանազան ձեւափոխութիւններով, պիտի կրնաք շատ անգամներ կատարել տալ այս խաղը :


Եթէ գնտակները գունաւոր թուղթերով շինուցան, տղայք այս առթիւ գոյներուն անունները պիտի սովորին՝ անուանելով կարմիր գնտակը, կապոյտ գնտակը, կանաչ գնտակը :

Բայց յետոյ ի՞նչ պիտի ընէք այս պլորուած թուղթերը, — վասն զի պէտք է սովորեցնել տղոյ՝ հոգածու ըլլալ և շատ մաքուր պահել զասարանը : Պիտի բանան այդ պլորուած ճմռթկած թուղթերը, պիտի շտկուեն, արցակ մը պիտի շինեն զոր դուք պիտի կապէք և դարանի մը մէջ պիտի պահէք՝ ուրիշ անգամ վերստին գործածելու համար :


ՔԱՌԱԿՈՒՄԻՆ

Առէ՛ք ուղղանկիւնաձեւ թուղթի կտորներ : Բաժնեցէ՛ք տղայոց : Պիտի շինենք հողմաղաց մը որ կը դառնայ բայց ասոր համար՝ քառակուսի թուղթ մը պէտք է :


Քառակուսին ունենալու կերպը : — Զեւ 1ը կը ներկայացնէ ուղղանկիւնաձեւ թղթի կտորը : Զեւ 2ը միեւնոյն թղթի կտորը կը ներկայացնէ, միայն թէ Ա. անկիւնը վար




Զեւ 1



Զեւ 3



Զեւ 2




Զեւ 4

դարձուած է: Բ մասն ամբողջապէս պիտի զտուենք. բայց որպէս զի զատենք առանց պատուելու, նախ ծաղկեցէ՛ք թուղթը այն գծին ուղղութեամբ որ Բ մասը կը բաժնէ վար դարձուած մասէն: Այս մասը հիմա կրկին է: բանալով զայն, պիտի ունենանք քառակուսին (4 հաւասար կողմեր, 4 ուղիղ անկիւններ):


Քառակուսին ծաղկե՛լ՝ տրամանկիւններու ուղղութեամբ: — Ձեւ 3ը շինուած քառակուսին է: Ձեւ 2ին մէջ ծաղլուածքը բանալով եւ Բ մասը զատելով, ունեցանք Ձեւ 3ին միայն ա բ ծաղլը. բայց բը ա ին վրայ իջեցնելով, ունեցանք միւս գ դ ծաղլը: Այս երկու տրամանկիւնային ծաղլերուն պէտք ունինք՝ հողմաղացքը շինելու համար:

Հողմաղացիք. — Ձեւ 4ը ցոյց կուտայ թէ, քառակուսին անկիւններէն իւրաքանչիւրը երկու հաւասար մասերու բաժնած ենք՝ մինչեւ կիտանշուած տեղը, որով կ'ունենանք 8 անկիւններ կամ ծայրեր: Տղայք կրնան զայս իրենց մատներով ընել, առանց մկրատի:

Ձեւ 5 եւ 6 ցոյց կուտան ծայրերը միացունելու կերպը:




Ձեւ 5



Ձեւ 6

Կ'առնէք գնտասեղ մը. նախ կ'անցունէք ա ծայրը, յետոյ ե, գ, ե ծայրերը, յետոյ կ'անցունէք գնտասեղը թուղթին մէջտեղէն եւ կը մտցնէք լուցիկի կամ գրչակալի ձեւով փայտիկի մը մէջ:



Հողմաղացքն աւարտելէ յետոյ՝ կրնաք գնտասեղը հանել այսպէս. կ'առնէք ասեղ մը որուն ծակին մէջ գիմացկուն դերձան մը կ'անցունէք. դերձանը կ'անցունէք թուղթին իրարու մօտեցած ծակերուն մէջ, ետ կը բերէք դերձանը իր չուկէտը, եւ հանգոյց մը կը շինէք, զգուշանալով հողմաղացքին թեւերը սեղմելէ. յետոյ գնտասեղը կը հանէք:

Դերձանին երկու ծայրերէն խաղալիքը բռնելով եւ վրան փչելով, պիտի դառնայ:



Ներկայ Ուսումն. Խորհրդոյ ամենէն աւելի օգտակար գործերէն մին եղաւ Կիրակնօրեայ Մանկավարժական դասախօսութեանց հաստատումը՝ Բերայի նախկին Արհեստանոցի սրահին մէջ: Առ ի չգոյ՛ Վարժապետանոցի, եւ անոր հաստատման միշտ հետամուտ լինելով հանդերձ, Ուսումն. Խորհուրդը կարեւոր համարեց գէթ առ այժմ ունենալ սոյն Կիրակնօրեայ կարանը, որ արդարեւ պսակուեցաւ լրակատար յաջողութեամբ: Դասախօսներու ձեռնհաս խումբ մը, կանխապէս որոշուած նիւթերու եւ ժամանակացուցի համաձայն, փետր. 27 էն ի վեր կանոնաւորապէս կը շարունակեն իրենց հմտալից դասախօսութիւնները որոնք պիտի տեսնն մինչեւ յուլիս 27, այսինքն 20 նիստ, իւրաքանչիւր նիստի մէջ 2 կամ 3, ընդ ամենը 44 դասախօսութիւն: Ուսուցչական արուեստին մէջ զարգանալու եւ մանկավարժական նորութեանց հմտանալու հետամուտ խումբ մը ուսուցիչք եւ ուսուցչուհիք, ինչպէս եւ ուսուցչական ընտրելիք, սկիզբէն ի վեր կանոնաւորապէս կը հետեւին դասերուն եւ անտարակոյս առաւել կամ նուազ կ'օգտուին: Իսկ ուսուցիչներու ուրիշ խումբ մը, սովորաբար աւելի ծանօթ դէմքեր, ցաւալի է թէ ոչ-ուսուցիչներու չափ իսկ (1) չեն հետաքրքրուած կըրթական այս կարեւոր ձեռնարկով եւ սկիզբէն ի վեր յամառաբար կը շարունակեն բացակայիլ դասախօսութիւններէն, ընդհանրապէս չի կրնալով իրենց «ես»ին հետ հաշտեցնել բան սովորելու համար եկած երեւալու գաղափարը, ինչ որ ունայնամտութեան, գոռոցութեան եւ հետեւաբար տգիտութեան նշանակ է, նաեւ նորութեանց չըլլալով բնաւ հետամուտ, եւ իրենց հնօրեայ ուսուցչական աւանդամուղ եղանակներէն չուզելով բնաւ շեղիլ եւ անոնցմէ դուրս ուրիշ բան

իմանալ, սովորիլ եւ գործադրիլ: Այս կարգի ուսուցիչք այսպէս եկեր են, այսպէս պիտի երթան. ասոնք չեն որ ուսուցչական ասպարիւրին մէջ պիտի զարգանան եւ մեր նորահաս մանկութենէն լաւ դաստիարակուած սերունդ մը յառաջ պիտի բերեն. մեր յոյսը դաստիարակի կոչում ունեցող, իրենց պարտքը ճանչցող եւ արուեստին պահանջումները ուսումնասիրող ուսուցիչներու վրայ է, եւ ուրախ ենք որ այս ուսումնասիրող թիւ մը կը կողմեն արդէն, եւ իրենցմէ անոնք՝ որոնք դիւրութիւն ունին՝ կ'օգտուին առիթէն. իսկ անոնց համար՝ որոնք սեղւոյ հետաւորութեան պատճառաւ չեն օգտուած, եւ անոնց համար որոնք դասախօսութեանց ներկայ գտնուած ըլլալով հանդերձ՝ մասնաւոր ուսումնասիրութեան պէտքն եւս կ'զգան, որոշած ենք «նիւթ»ին մէջ նոյն դասախօսութիւնները հետզհետէ հրատարակել նոյնութեամբ: Ուսուցչութիւնը շնորհապարտ է Պատ. Ուսումն. Խորհուրդին որ այս ձեռնարկով առիթ եւ դիւրութիւն կ'ընծայէ իրեն՝ ինքնազարգացման. շնորհապարտ է նաեւ յարգելի դասախօսներուն որոնք բարութիւնն ունեցան յանձն ստանելու իրենց առաջարկուած դասախօսութիւնները, իրենց թանկագին ժամերը եւ կիրակնօրեայ հանգիստը զոհելով ի սէր կրթութեան:

Ահաւասիկ անուններն դասախօսութեանց նիւթերուն եւ դասախօսներուն.

1. Կրօնական դասխարակութիւն. 3 դաս. Ամեն. Տ. Մաղաքիա Սրբազան:
2. Բարոյական դասխարակութիւն. 3 դաս. Մինաս էֆ. Մալեան:
3. Հոգեբանութիւն. 8 դաս. Ռէթէոս էֆ. Պէրպէրեան:
4. Ֆիզիքական դասխարակութիւն եւ դպրոցական առողջապահութիւն. 5 դաս. Տօք. Վ. էֆ. Թորգոմեան:
5. Ընդհանուր սկզբունքի դպրոցական կազմակերպութեան եւ ուսուցման. 3 դաս. Ռ. էֆ. Պէրպէրեան:

(1) Արդարեւ ո՛չ նուազ արհեստաւորներ եւ առեւտրականներ փափագ յայտնած են ներկայ գտնուելու, ինքնազարգացման համար առիթէն օգտուելու նպատակաւ:



6. Պատկերաբան Մանկավարժութեան եւ բարոյական մանկավարժութեան. 6 դաս. Յովհ. Էֆ. Հինգէան:

7. Մայրենի լեզուի ուսուցումը. 3 դաս. Յակոբ Էֆ. Գուրգէն:

8. Լեզուաց ուսուցումը. 2 դաս. Պետրոս Էֆ. Կարապետեան:

9. Բնական եւ ուսողական գիտութեանց ուսուցումը. 3 դաս. Յովսէփ Էֆ. Եւսուֆեան:

10. Պատկերաբան եւ աշխարհագրութեան ուսուցումը. 5 դաս. Աւետիս Էֆ. Սուրէնեան:

11. Գրի եւ ընթերցանութեան ուսուցումը. 2 դաս. Գալուստ Էֆ. Մալաթեան:

12. Երաժշտութեան առողջապահիկ սզեցութիւնը դրպորոցաց մէջ. 1 դաս. Տօք. Վ. Էֆ. Թորգոմեան:

Պիտի սկսինք՝ արդէն ամբողջովին աւարտած դասախօսութիւններէն:

\* \* \*

## ԳՐԻ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՅՄՈՒՆՔ

Ա. ԳՍՍ

(1900 մարտ 5ին Բերայի Մանկավարժական Լսարանին մէջ արտասանուած)



Կարգալ-գրելու ուսուցումը այլ եւս ընկ մեքենական գործ մը չէ այսօր, ինչպէս որ էր մեր մանկութեան օրերը: Զարգացուցիչ, կրթիչ աշխատութիւն մը նկատուած է ան, եւ իրաւամբ: Արդի մանկավարժութիւնը իբր նպատակ չի դաւանիր ընթերցումը. այլ միջոց մը գաղափարաց աւանդման, զգացումներու մշակման ու կամքի կազմութեան. եւ գրելը չի նկատեր կրաւորական հետեւողութիւն մը տղուն կողմա-

նէ, այլ մտքին գիտակցական մէկ ցոլացումը նշաններու մէջ, նոյն իսկ այս սկզբնական դասերէն հաղորդ կ'ընէ զմանուկն իր կրթութեան գործին՝ առաջնորդութեամբ ուսուցչին:

Եւ ուսուցչին նպատակն ըլլալու է, ամենէն առաջ, կրթել իր սանիկին միտքը, գաղափարներ աւանդել անոր, զգացումները մշակել ու զանոնք արտայայտել տալ կենդանի բարբառով կամ նշաններով: Ասոնք կատարելու միակ միջոցը ընթերցանութիւնը եւ գիրը չեն. միակ գործին այբբենարանը, գրիչն ու կաղամարը չեն: Ամենէն պատուական գործիները տղան ուրիշէն առնելու պէտք չունի. ինքն իր մէջ եւ իր վրայ կը կրէ զանոնք. միտքը, զգայարանները եւ լեզուն:

Զգայարաններուն միջոցաւ է որ նախ արտաքին աշխարհը իմանալի կ'ըլլայ մանուկին. անոնցմով է որ մանուկը եւ չափահասը բնութեան բազմաթերթ գեղազուարճ գրքէն եւ ընկերութեան յօդուածոյ կնճառոտ ծալքերէն կը քաղեն զգացողութիւններ, կ'ընդունին ըմբռնումներ, կը կազմեն մտապատկերներ եւ կը կերտեն անոնցմով զանազան կարգի գաղափարներ:

Գիրը չի հնարուած՝ մարդիկ չէ՞ին զարգանար միթէ, եւ քաղաքակրթութիւնէ: անմասն էին բոլորովին: Այսօր ալ, կարդալ գրել չի զխտցող մարդիկը, ամէնն ալ, կատարեալ յետամնացնե՞ր են արդեօք. — Պատմութիւնը, փորձառութիւնը եւ մեր բանականութիւնը կը հաստատեն թէ մարդ՝ առանց կարդալ գրել զիտնալու՝ կրնայ զարգանալ յառաջըլիմեւ. եւ թերեւս աւելի լաւ, եթէ տրուի իրեն առիթ սպորելու սյազան եւ ընդարձակ շրջանակներու մէջ: Զափահասներս տարիներով կը թաղուինք գրքերու մէջ, մինչեւ որ կը սորվինք օտար լեզուէ մը թօթովեւ քանի մը խօսք, եւ մանուկը, երկու տարիէն արդէն կը սովորի խօսիլ մայրենի լեզուն համարձակօրէն, առանց գրի մը ծայրն անգամ տեսած ըլլալու: Ծուկային մէջ մեծցող տաանամեայ տղեկ մը աւելի՛ արթուն, աւելի՛ սրամիտ եւ աւելի՛ զիտուն է քան թէ դպրոցին մէջ օրն ի բուն գիրք, թուղթ ու մեկան սպա-

ուղ տասն եւ հինգամեայ պատանին, որ կարծես թէ աչք ունի ու չի տեսներ. ահանջ ունի ու չի լսեր:

Հիւպէր կոյր էր. բայց իր սպասաւորին միջոցաւ փորձեր կատարեց մեղուներու աշխատութեանց վրայ եւ անոնց կեանքէն նոր իրողութիւններ յայտնեց մեզ:

\* \*

Արտաքին աշխարհը ճանչնալու երեք զլխաւոր պայմաններ կան. Առաջին՝ պէտք է որ ունենանք գործարաններ. աչք, ահանջ, քիթ, լեզու եւ մորթ: Երկրորդ. պէտք է որ այս գործարանները ուղեղին հետ կապուած ըլլան զգացող ջիւղերով: Երրորդ, պէտք է որ գործարանաց վրայ տալաւորութիւններ ըլլան եւ ջղերուն միջոցաւ հաղորդուին ուղեղային կեդրոններուն:

Անցողակի, հոս քանի մը բառերու իմաստը կ'ուզեմ ճշգրտել. որովհետեւ շատ անգամ պիտի հանդիպինք անոնց:

Տպաւորութիւն մը, երբ հաճոյք կամ ցաւ միայն կը պատճառէ, կ'ըսուի զգացողութիւն. երբ այդ տպաւորութիւնը, մտքին միջոցաւ, ուշադրութեան օգնութեամբ, աւարկայի մը յատկութիւնները, հանգամանքները կը ծանօթացնէ մեզի, կ'ըլլայ ըմբռնում:

Պէտք չէ իրարու հետ շփուել զգացողութիւն եւ ըմբռնում բառերը. զգացողութիւն եւ ըմբռնում նախ եւ առաջ իբր թէ զօրուած եւ իրերախառնուած են սերտիւ, բայց էապէս կը տարբերին իրարմէ: Զգացողութիւնը, երկարած գուռ եւ լով կամ կրկնուելով, կը նուազի աստիճանաբար՝ եւ վերջապէս անհետ կ'ըլլայ. ընդհակառակը, ըմբռնումը երկարած գուռ եւ կրկնուելով, աւելի պայծառ, աւելի ապահով եւ աւելի արագ կը դառնայ: Գինեմուր՝ իր ճաշակի զգացողութեանը գերի՝ կը բթացնէ դայն, իրարմէ աւելի զօրաւոր ըմպելիներ գործածելով՝ որպէս զի զգայ անոնց համը. մինչդեռ համուտը, որոշելու հասկնալու հետամուտ, կրթութեամբ կը նրբացնէ իր ճաշակելու ըմբռնումը:

Ինչ որ մտքին մէջ կը մնայ ս եւ է տպաւորութեան դադրելէն ետքը, այն ալ կը կոչուի մնացածութիւն: Ըստ այսմ, կ'ուենենանք ամէն զգայարանքի համապատասխան մտապատկերներ. ծովուն վրայ նաւակ մը կը տեսնեմ ուր մարդ մը կ'երգէ. նաւակը հեռոջետէ կը հեռանայ եւ վերջապէս անհետ կ'ըլլայ աչքէս, եւ երգն այլ եւս անլսելի կ'ըլլայ ինծի. բայց նաւակին պատկերը եւ երգին թրթռումները մնացած են մտքիս մէջ՝ թէեւ աղօտ վիճակաւ. տեսողական մտապատկեր մը եւ լսողական մտապատկեր մը ունիմ հիմա: Այսպէս նարնջի շերտ մը կը դնեմ բերանս, տնոր համն ու հոտը կ'զգամ զօրեղուպէս ցորչալի բոլորովին կուլ տուած չեմ գայն. բայց կուլ տալէս ետքն ալ անոր հոտէն ու համէն բան մը կը մնայ մտքիս մէջ. կ'ուենեմ ճաշակի մտապատկեր մը եւ հոտի մտապատկեր մը: Իսկ գաղափարը կը ծնի՝ զանազան մտապատկերներու բազդատուէնէն որ կը հաւաքէ անոնց միջէն նման եզրերը եւ ի բաց կը վանէ աննմանները. ու մինչդեռ մտապատկերը մասնաւոր հանգամանք մը ունի, գաղափարն աւելի ընդհանուր իմաստ մը կ'ընդգրկէ. ջղջիկ, կէս, եզ բառերը մտապատկերներ են ստեղծող բառին քով որ գաղափար մը կը ներկայացընէ:

Քանի որ մեր գաղափարաց աղբիւրը արտաքին աշխարհն է. քանի որ զմեզ անոր հետ յարաբերութեան դնողը մեր հինգ զգայարանքներն են, եւ՝ ի բացակայութեան անոնցմէ մէկուն կամ միւսին, մեր ծանօթութիւնները թերի կամ դժուարաստանալի պիտի ըլլային, պէտք է որ գաղափար կամ ծանօթութիւն աւանդողը, ստուցիչը, գիտնայ չէ թէ միայն ինչ որ պիտի սովորեցնէ, այլ նաեւ ճանչնայ բնութիւնն այն կարեւոր օժանդակներուն առանց որոց բան մը չի պիտի կրնար ընել: Այս հիմնական պատճառաւ, աւելորդ չեմ համարիր համառօտ ակնարկ մը նետել հինգ զգայարանաց գործարաններուն եւ անոնց պաշտօնին վրայ:

\* \*

Շոշախեղիք. — Շոշախուժը կը կատարուի մորթին մա-  
կերեւոյթովը, որուն զգացողութիւնը կը փոխուի մարմնոյն  
այս կամ այն մասին հետ: Կռնակին վրայ մորթին զգացող-  
ութիւնը այնչափ սուր չէ որչափ լեզուին ծայրը. ականջին  
մերձակայքէն դէպ ի չրթունք մորթին զգացողութիւնը կ'ա-  
ւելնայ: Հազորդիչ ճամբաներն են այն ջիզերը որոնք ուղե-  
ղէն եւ ողնածուծէն կը ծնին. շոշախեղեաց ուղեղային կեդ-  
րոնը որոշապէս ճշգրտած չէ: Այս զգայարանքը մեզի ծանո-  
թութիւն կուտայ մարմիններու ձեւին եւ բարեխառնութեան  
վրայ:

Ճաշակեղիք. — Ճաշակեղեաց զգացողութիւնը կը կրենք  
լեզուին վերին մակերեւոյթովը եւ անոր ծայրովը, որոց վը-  
րայ ցրուած են փոքրիկ պոկիկներ: Գիտունք չեն կրցած  
դեռ վճռապէս ըսել թէ քիւլքն ալ ունի համ աննշու կարո-  
ղութիւն: Այնպէս կը կարծուի թէ լեզուակոկորդային ջիզը  
եւ լեզուային ջիզը ճաշակեղեաց մասնաւոր ջիզերն են: Դեռ  
չէ գտնուած ուղեղային կեդրոնը ուր կը յանգին ասոնք:  
Որպէս զի ճաշակեղեաց զգացողութիւնը կատարուի, պէտք է  
որ լեզուին վրայ դրուած նիւթը լուծելի ըլլայ: Ճաշակելի-  
քով կ'որոշենք միւսայն անուշ եւ լեղի համերը: Միւս համ ըս-  
ուած զգացողութիւնները հուզաթաղանթներով ալ կ'զգանք,  
մինչդեռ՝ անուշը եւ լեղին միայն լեզուով կ'զգանք:

Հոտոտեղիք. — Հոտոտեղեաց գործարանն է քթի խոռո-  
չին վերի անցքը եւ մասամբ ալ միջին անցքը. հոտերը ու-  
ղեղին կը հազորդուին մասնաւոր ջիզով մը որ կը ծնի ու-  
ղեղի կիսագունտերէն եւ անոր առաջակողման ըլթակէն անց-  
նելով կուգայ կը սիւռուի քթի հուզաթաղանթին վրայ: Հո-  
տոտեղեաց զգացողութիւնը կը կատարուի այն ատեն միայն,  
երբ նիւթը ցնդելի կամ լուծելի է եւ երբ քթի անցքին մէջ  
օդը կը նորոգուի շնչառութեամբ: Հոտերու գիտական դա-  
սակարգութիւն մը չէ եղած:

Լսելիք. — Լսելեաց գործարանն է ականջը, իր արտա-  
քին, միջին եւ ներքին մասերով. անոր հազորդիչ ճամբան է

լողական ջիզը. կեդրոնն է՝ ուղեղին մէջ՝ քունքի ըլթակին  
յետասկողման մասերը: Թրթռացումները կը թափանցեն մին-  
չեւ ներքին ականջը, կը հասնին խոնջայլին մէջ ուր կը գանը-  
ւին 3000 է աւելի մանր գաւազանիկներ. ասոնք դաշնակի  
մը ներքնակողմին երեւոյթը կուտան խոնջայլին: Լսողական  
ջիզը, որուն ամէն մէկ նեարդը հաւանականաբար յիշեալ  
գաւազանիկներէն մէկուն կը յանգի՝ տպաւորութիւնը կը  
հազորդէ այս գործարանի կեդրոնին եւ զգացողութիւնը կը  
կատարուի. տպաւորութիւնը չուկ կը կոչուի՝ երբ օգին շար-  
ժումները կանոնաւոր եւ պարբերական չեն. ճայն կը կոչուի՝  
երբ անոնք կանոնաւոր եւ պարբերական են:

Տեսանեղիք. — Տեսանեղեաց զգայարանին գործարանն  
է աչքը. լուսեղէն ճառագայթները հետզհետէ կ'անցնին թա-  
փանցիկ եղջերիկին արտաքին մակերեւոյթէն, ջրեղէն խոնա-  
ւահիւթէն, ոսպնեակի յետասկողման եւ առաջակողման մա-  
կերեւոյթներէն, ապակեղէն խոնաւահիւթէն՝ յաջորդաբար  
կրելով բեկեղեկումներ. կուգան, վերջապէս, ցանցենիին վրայ  
կը կազմեն չրջեալ պատկերը այն առարկային ուրկէ եկած  
էին իրենք. այս երեւոյթը կը կատարուի ճիշդ ինչպէս լու-  
սանկարչին խաւարին սենեկին մէջ կը կազմուի պատկերը  
այն առարկայից որոնք որոշ հեռաւորութեամբ մը կը գտնու-  
ւին անոր դիմաց: Աչքին գունտը խաւ ի խաւ պատող թա-  
ղանթներէն մէկուն, սերեկենիին, կծկիչ մկանովը կրնանք  
ոսպնեակը աւելի կամ նուազ կորնթարդ ընել եւ ըստ այնմ  
ճիշդ ցանցենիին վրայ կազմել մենէ հեռի կամ մեզի մօտ  
գտնուած առարկայից պատկերը: Գործատեսները եւ հեռա-  
տեսները այս բանը ընելու կարող չեն. այդ սխառաւ,  
կարճատեսներու աչքին մէջ առարկային պատկերը ցանցե-  
նիին առջեւը կ'իյնայ. հեռատեսներու աչքին մէջ՝ պատկե-  
րը ցանցենիին ետեւը կ'իյնայ: Առաջինները կը կարօտին գո-  
գաւոր ակնոցի, երկրորդները կորնթարդ ակնոցի:

Ցանցենին՝ որ աչքին խորը կը պատէ՝ իր կեդրոնը, ճիշդ  
բիւրն դիմացը, ունի դեղին կէտը. ասոր վրայ կը գտնուին

գաւազանիկներ եւ կոնաճեւ վերջաւորութիւններ. իսկապէս ասոնք են լոյսը զգացող գործարանները եւ մանրամանք թեւիկներով կապուած են տեսողական ջղին որ լոյսին ազաւորութիւնը կը հաղորդէ ուղեղային կեդրոնը, ծոծրակային բլթակին:

Տեսողութիւնը մեզի կուտայ գոյներու եւ մակերեւոյթներու ծանօթութիւնը: Գոյներու զանազանութիւնը առաջ կուգայ լուսոյ թրթռացումներէն աւելի կամ նուազ երկար ալիքներէն. ամենէն կարճ ալիքները առաջ կը բերեն մանիշակագոյնը. ամենէն երկար ալիքները առաջ կը բերեն կարմիրը:

\* \* \*

Մենք զգայարանները քննեցինք անջատաբար, բայց անոնք կը գործեն ընկերովի: Զգայարանաց միջոցաւ միասնաբար ստացուած ընթանումները կը զուգորդուին մեր մշտքին մէջ, իրարու կը միանան ու կը կազմեն ամբողջութիւնն այն յատկութեանց որով կ'որոշենք առարկայ մը ուրիշ առարկայներէ: Բայց զգայարանք, ի սկզբան, սուր ըմբռնողութիւն չունին, եւ շատ անգամ իրաց ու երեւութից մէջ զանազանութիւնները կը շփոթեն իրարու հետ: Աշուն եւ գարուն տարբերութիւն չո՞նին շատ մը տղոց համար. ճանճ եւ մեղուն նոյն կենդանին կը համարին շատերը: Երեք, չորս տարեկան տղու մը ներկայացուցէք խել մը գոյներ. ո՛չ կըրնայ որոշել զանոնք եւ ո՛չ անուանել: Այս բանին մէջ նոյնչափ ապիկար պիտի գտնէք վայրենի մը կամ անմշակ մարդ մը: Դիմեցէք նկարչի մը, եւ զարմացումով պիտի տեսնէք թէ անիկա տարբեր երանգներ պիտի որոշէ այն առարկայից մէջ որոնք ձեզի համագոյն կ'երեւային: Նմանապէս, երաժիշտ մը կարեւոր տարբերութիւններ պիտի գտնէ այնպիսի ձայներու մէջ զորս համանման կը կարծէր ուրիշ մը իր անմըշակ ականջով: Վայրենի մը իր ականջը գետինը զնելով՝ պիտի ձանձնայ բնութիւնը եւ թիւը իր թշնամիներուն որոնք

չատ հեռի են դեռ իրմէ: Վայրենիները, իրենց մէջ, տարբեր ցեղի մարդիկը կ'որոշեն անոնց հոտէն: Քաղաքակիրթ երկիրներու մէջ ուր խոհարարութիւնը բազմադաս կերակուրներ կը մատակարարէ մարդոց քիմքին՝ հազուադէպ են նոյն ճաշակը ունեցող մարդիկ. մինչդեռ վայրենեաց մէջ, ինչ որ մին կ'ուտէ, միւսն ալ կը սիրէ: Ի ծնէ կոյրի մը շօշափելիքը չափազանց նրբացած կ'ըլլայ. եւ Լորտ Պրիճման, վեց Թարեկան հասակին մէջ խուլ, մունջ, կոյր եւ զրեթէ զուրկ հոտոտելիքէ, միմիայն իր շօշափելիքով մնացած՝ կըրցած է, չնորհիւ մարդասէր բժիշկի մը ջանքերուն, լրացունել կորուսած զգայարանները իր շօշափելիքով. կըրցած է իր նմաններուն հետ յարաբերութեան մէջ մտնել եւ ստանալ կարգ մը ծանօթութիւններ զորս ընդհանրապէս միւս զգայարանները միայն կուտան մեզի:

Մէն մի զգայարան թէեւ իր մասնաւոր պաշտօնն ունի, եւ կրթութեամբ աւելի նրբազգած կը դառնայ, սակայն միասնաբար գործելով, զիրար կը կրթեն եւ իրարմով կը սորվին ճանչնալ նաեւ այնպիսի յատկութիւններ զորս յառաջադոյն չէին կրնար ճանչցնել մեզի: Այսպէս, ճաշակելիքն ու հոտոտելիքը, համտեսներուն վրայ, աչքի տեղ ալ կը բռնեն. զինի մը հոտոտելով կամ ճաշակելով կը հասկընան անոնք թէ քանի՞ տարուան է, ո՛ւր տեղի բերք է: Ինչ ինչ գոյներ կտաւի մը վրայ ճարտարապէս յարդարուած՝ մեր մէջ կ'արթնցունէ գաղափարը առարկաներու, կենդանիներու եւ մարդերու որոնք տարբեր մակարդակներու վրայ գետեղուած են, եւ որոց ձեւը ու հեռաւորութիւնը նախ ճանչցած ենք շօշափելիքով: Այս պարադային մէջ, շօշափելիքի գործ ալ կը կաասրէ աչքը որ կարծես շեռուէն կը գործէ ամէն ուղղութեամբ:

Երբեմն սակայն, զգայարանաց միասնական գործողութեան հետեւանօք, կ'ունենանք նաեւ սխալներ: Զորօրինակ, երբ սենեակի մը մէջ վարդի հոտ կ'առնեմ եւ միայն այս զգացողութեանս յենով, կը հաստատեմ թէ սենեակին մէջ

վարդ կայ, որոշ ձեւով ու գոյնով վարդ. երբ կը կարծեմ թէ այս ինչ ձայնը հանողն է իմ ծանօթներէս այս ինչ անձը զոր չեմ տեսներ. ես նոյն վայրկենին, կրնամ սխալ մը գործել: Երբ տղան կը դատէ թէ բեկեալ է գաւազանը զոր կը տեսնէ ջուրին մէջ կիսովին ընկղմած շեղակի, կամ թէ երբ կը կարծէ թէ լուսինը կանթեղ մըն է ա՛յնքան մօտ մեզի որ կրնանք զայն իրեն տալ, կը սխալի դարձեալ:

Այս ամէն պարագայից մէջ ալ զգայարանաց դատարարակութեան վերադրելի են սխալները: Երբ մեր կրած տը պաւորութիւնները, զգացողութիւնները փորձարկուած չեն զատ զատ մեր զգայարանաց միջոցաւ, միտքը յանիրաւի կը կարծէ այն ատեն թէ այն յատկութիւնները որոնք յաճախ միասին ներկայացած են մեր զգայարանաց, իրականութեան մէջ ալ միշտ միացեալ կը գտնուին: Փորձը կրնայ, սակայն, ուղղել այս կարգի սխալները, եւ փորձը կը կատարենք՝ կօչում ընելով, մէն մի ըմբռնումի համար, այն զգայարանքին որ առանձինն կարող է մեզի տալ նախապէս այն ըմբռնում մը, եւ կօչում ընելով բանավարութեան որ մեզի կը բացատրէ սխալանքին պատճառները: Փորձառութեամբ է դարձեալ որ տղան կը հասկնայ թէ իր մարմինն է, իր անձնն դուրս կը գտնուին պատճառներն այն տպաւորութեանց զորս զգայարանացը միջոցաւ կը կրէ իր ջլային կեդրոններուն մէջ: Փորձառութեամբ կը հասկնայ թէ իրմէ դուրս առարկաներ կան եւ արտաքին աշխարհ մը կայ: Տղան ի սկզբան կը կարծէ թէ իր կրած տպաւորութիւնները արդէն իր մէջը կան, եւ արտաքին աշխարհին վրայ ո եւ է գաղափար մը չունի: Նախ կը բերուի տպաւորութիւնը գնել ծայրն այն ջղին որ զայն փոխանցած է ուղեղին. երբ տեսնէ արեան հոսիլն իր մատէն, կը կարծէ թէ զգացած ցաւին պատճառն է նոյն իսկ արիւնը զոր կը կորսնցնէ. յետոյ, երբ վերստին կը տեսնէ դանակին մոտները իր մատին մէջ եւ վրանգամայն արիւնին հոսումը, իրմէ դուրս՝ դանակին մէջ՝ կը գնէ պատճառը ցաւին զոր զգացած է: Կը հասկնայ նոյնպէս թէ, քաղելով հակառակ ուղղութեամբը այն ուղղութեան որուն վրայ կը

տեսնէ կրակը, հեռզհեռէ կը պակսեցունէ իր մէջ զգացած տաքութիւնը. թէ՛ քաղելով դէպ ի առարկան զոր կը նշմարէ սչքերովը, վերջապէս կը բռնէ զայն ձեռքովը. թէ նոյնպէս կը բռնէ այն առարկան որուն թրթռացումները ազդած էին իր ախանջին: Այս կերպով, իրմէ դուրս, կարճ կամ երկայն հեռաւորութեանց վրայ, կը տեղափոխէ պատճառները իր զգացողութեանց: Ի մի բան, մանուկը՝ իր զանազան զգայարանաց միջոցաւ ընդունած բոլոր ըմբռնումները կը միացընէ, անոնցմով կը ձուլէ կը շինէ ամբողջ մը որուն կ'ըսենք առարկայ. յետոյ կը միացնէ այս զանազան առարկաները եւ անոնցմով կը շինէ արտաքին աշխարհը:

Վայրկեան մը հետեւինք միասին այն մտաւոր գործողութեանց զորս անգիտակցօրէն կատարելով, տղան կը քաղէ գաղափարներ արտաքին աշխարհէն:

Եւ փութանք ըսել թէ տղուն առաջին անգամ կազմած գաղափարները մասնաւոր գաղափարներ են, մտապատկերի պէս բաներ: Երբ զանգակ կ'ըսէ, տղան իր թաղի եկեղեցւոյն զանգակատնէն կախուած զանգակը միայն կը հասկնայ. ձի բառով կը հասկնայ այն կենդանին միայն որուն վրայ յաճախ կը տեսնէ թէ կը հեծնէ իր հայրը: Մշակ բառը յայտարարն է իրեն համար այն անձին միայն զոր տեսած է, օրինակի համար, վանքի մը շրջափակին մէջ, վանքին ծառայութեանց նուիրուած:

Ի՞նչպէս կազմած է տղան այս մասնաւոր գաղափարները: Օր մը տեսած է, զոր օրինակ, որ իր հայրը կենդանիի մը վրայ նստած տուն է եկեր, զրանք առջեւ իջեր է ձիէն եւ սանձը կը հանէ բերնէն: Որովհետեւ յաճախ տեսած է արդէն հայրը, շատ չի հետաքրքրուիր անով, այլ իր ամբողջ ուշադրութիւնը կը նուիրէ կենդանիին որուն՝ կը լսէ թէ՛ ձի կ'ըսեն: Անոր գոյնը, գրախիւն ձեւը, չորս անգամ կը կրկնուի, կեցողութիւնն ու փառաբանքը կը դիտէ զատ զատ. միտք կը պահէ զանոնք: Ուրիշ անգամ մը նորէն կը տեսնէ հայրիկին ձին. այս անգամ ալ անոր խոսքիւնը, բառը եւ

երկայն պոչը իր ուշադրութիւնը կը դրաւեն: Առաջին դիտողութենէն ստացած ա, ք, գ, դ, ե մտապատկերներուն վերայ կ'աւելցնէ երկրորդ դիտողութեամբ տացած գ, ե, ը մտապատկերներն ալ, եւ կը կազմէ՝ անոնց համադրութեամբը՝ Ձի մասնաւոր գաղափարը: Երբեմն կը պատահի որ տղան նուազ ուշադիր՝ զկենդանին յատկանշող հանգամանքներէն երեքը կամ չորսը միայն դիտած կ'ըլլայ: Այն ատեն ձի կը կոչէ ամէն այն կենդանիները որոց վրայ կը նշմարէ նոյն մասնակի հանգամանքները, թէեւ անոնք բաւական չըլլան որակելու իր տեսած կենդանին ձի անունով:

Այսպէս, տղան իր ուշադրութիւնը սեւեռեց կենդանիին մը վրայ, դիտեց զայն, վերլուծեց, վերացուց, համադրեց անոր հանգամանքները, եւ իր մտքին մէջ կազմեց ձի գաղափարը որ մասնակի տարածութիւն մը միայն ունի իր մըտքին մէջ, այսինքն կը պատշաճի այն կենդանիին միայն զոր կը տեսնէ թէ կը գործածէ իր հայրը: Այնուհետեւ, տղան՝ հետզհետէ ընդլայնելով իր կեանքի շրջանակը, կը տեսնէ որիչ կենդանիներ որոնք թէեւ իր հօրը ձին չեն, բայց անոր հետ նմանութեան կէտեր ունին: Այն կենդանիները կը բաղդատէ իրարու հետ, անոնց տարբերութիւնները մէկզի կ'ընէ, եւ՝ նման կէտերն առնելով՝ կը պատշաճեցունէ զանոնք ձի գաղափարին որ՝ այս անգամ՝ ընդհանուր է:

Ու առաջին օրը, երբ տղան Ծաղկոցէն ներս կը մտնէ, ըմբռնումներու, մտապատկերներու եւ նոյն իսկ գաղափարներու բաւական մթերք մը ունի արդէն իր մտքին մէջ արտաքին աշխարհէն, թէեւ տարտամ, շիտի ու անկատար մեծ մասամբ: Ուսուցչին պարտքն է այն ատեն՝ իր դասերովը՝ հաստատ, որոշ եւ կատարեալ ձեւ մը տալ իր սանիկին ըմբռնումներուն, մտապատկերներուն, կաղապարել զանոնք ու նաեւ նոր գաղափարներ աւանդել: Ասոնք ընելու համար, ուսուցիչը պէտք չունի անմիջապէս գիրք մը տալու տղուն ձեռքը: Տղուն միջափայրը պիտի ըլլայ նախ իր գիրքը, եւ զգայարանքներն ու լեզուն պիտի ըլլան անոր կրթութեան գործիները:

Չննութիւն եւ փորձ, ահա՛ դասին մեթոտը. թելադրիչ, ճնուցիչ խօսակցութիւն, ահա՛ դասին ձեւը:

Եւ որպէսզի անօգուտ տեղը չի վատնուին ուսուցչին աշխատութիւնները, պէտք է որ ամենէն առաջ ուսումնասիրէ ան իր սանիկին զգայարանաց վիճակը: Եթէ խուլ է տղան կամ թէ ծանրալուր ականջ ունի, պարտաւ տեղը պիտի խօսի անոր. եթէ կարճատես է կամ տեսողական ուրիշ թերութիւն մը ունի, պարտաւ տեղը դարձեալ ցոյց պիտի տայ անոր ձեւեր, գոյներ, եւ յանիրաւի պիտի յուզուի կամ պատժէ տղան՝ երբ սա չի հասկնայ իր ըսածը: Եւ շատ մը ճնողքներու, մայրերու անհոգութիւնը կամ ազիտութիւնը մասնաւոր պարտք մը կը դնէ ուսուցչին վրայ, լուսագոյն կերպով սիրով, գորովով կատարելու իր սանիկին ուսումնասիրութիւնը: Հայ ուսուցիչները եւ ուսուցչուհիները, մասնաւորապէս, դեռ երկար ժամանակ իրենց սանիկներուն հանդէպ հայր ու մայր ալ պիտի ըլլան՝ դարմանելով անոնց պարտազանցութիւնները:

\*  
\* \* \*

Բայց զգայարանքները, որչափ ալ առողջ ըլլան՝ կրթութուելու պէտք ունին, որպէսզի ըլլան աւելի փափուկ, աւելի ճարտար եւ աւելի գիտուն: Զգայարանքները որչափ լաւ մարզուած ըլլան, այնքան դիւրաւ կրնան ձօնացնել մտքին մթերքը: Ասիկա ըսի արդէն քիչ մը առաջ: Ինչ որ հիմա պիտի ըսեմ, ուրիշ կէտի մը կը վերաբերի, այն է թէ Ուսուցիչը, նոր գաղափարներ, ծանօթութիւններ տալով հանդերձ, կամ նոյն իսկ տալէ առաջ, սրելու է իր սանիկին զգայարանքները մասնաւոր միջոցներով:

Զգայարանաց կրթութեան խանդավառ յանձնարարութիւնը ըրած է Բուսօ. իսկ Բէստալօծի եւ Ֆրէժուէլ այդ կրթութեան համար հնարքներ գտած եւ դրութեան մը մէջ խտացուցած են զանոնք:

Զգայարանքներէն հստատելիքը եւ ճաշակելիքը կը վե-

րաբերին աւելի մեր կենդանական կեանքին եւ քիչ առնչութիւն ունին մեր մտաւոր կեանքին հետ: Անոնց կրթութեան մէջ, մեր տեսակէտն ըլլալու է մանաւանդ տղուն առողջութիւնը: Ճանչցած եմ երեք տարեկան տղայ մ'որուն ծնողքը յաճախ զօնեալ խնցուցած են իրեն ի զուարճութիւն. տղան վերջ ի վերջոյ զօնեալ խմելու կիրքն ունեցած է: Ճանչցած եմ ուրիշ տղայ մը որ իր սիրած մէկ կերակուրը կերած ատեն կ'ըսէր. փորս կշտացաւ, բայց բերանս չի կշտացաւ:

Գալով շօշափելեաց, տեսանելեաց եւ ընկեաց զգայարաններուն, իմացական կեանքի հետ սերտ առնչութիւն ունին անոնք. ուստի կ'արժէ զանոնք մշակելու կրթելու միջոցները քննել՝ գոնէ հարեւանցի կերպով:

Շօշափելիքը մարդելու համար ուսուցիչը կը ներկայացընէ տղուն խել մը այլազան կերպաներ, զորօրինակ, եւ յաջորդաբար դասաւորել կուտայ զանոնք՝ իրենց հաստութեանը, իրենց փափկութեանը, իրենց բարեխառնութեանը եւ մեծութեանը նայելով: աչքը կը կապէ եւ անոր ձեռքը տալով զանազան առարկաներ, կը հարցնէ թէ ի՞նչ մեծութիւն, ի՞նչ ձեւ ունին. կ'առաջարկէ աշակերտին անուանել այն առարկաները: Կը հրամայէ որ՝ աչքերը կապած՝ դասարանին մէջ այս կամ այն կողմ երթայ գայ: Ֆրէզօպէլեան գրադմունք, նոյնպէս, իրր ընտիր միջոցներ կրնան գործածուիլ այս զգայարանին կրթութեանը: Գրի եւ գծագրութեան դասերը յետոյ պիտի աւելնան ասոնց վրայ, աւելի թեքելու համար տղուն մատները:

Տեսանելիքը մարդելու համար ուսուցիչը կը ներկայացընէ տղուն գրիչ մը կամ մատիտ մը, եւ կ'առաջարկէ անոր գիտնալ թէ գրատախտակին երկայնութեանը մէջ քանի՛ անգամ կը պարունակուի գրիչին երկայնութիւնը. կը հարցնէ. ո՞րը աւելի երկայն է, քարետախտակը՞ թէ տետրակը, մատիտը՞ թէ գրիչը, գրասեղանէն մինչեւ դասարանին դուռը կամ պարտէզին պատէն մինչեւ այս ինչ ծառը քանի՞ քայլ կայ: Երկրաչափական մտկարդակ մը կամ հաստատուն մը

կը բռնէ աչքին դիմացը, զանազան դիրքերու մէջ, ու դիտել կուտայ անոր թէ նոյն ձեւով չի տեսնուիր միշտ: Միեւնոյն մարմինը հեռու կամ մօտ կը բռնէ եւ կը հարցունէ թէ ի՞նչ մեծութեամբ կը տեսնէ զայն: Կէտ մը կամ նպատակ մը կ'որոշէ եւ կ'առաջարկէ որ գնտակով մը կամ քարով մը նշան առնէ անոր: Զանազան գոյնով առարկաներ, զոր օրինակ, կերպաներ կամ զօնաւոր մատիտներ, ուլունքներ կուտայ տղուն եւ անոնց գոյները, միեւնոյն գոյնին երանգները որոշել կուտայ: Շատ մը մարդիկ, հրահանգուած չըլլալուն համար անշուշտ, ո՛չ միայն նոյն գոյնին երանգները, այլ եւ իրարմէ բոլորովին տարբեր գոյներ չեն կրնար որոշել. զորօրինակ՝ կանաչը կարմիրէն, դեղինը մանուշակագոյնէն, նարնջագոյնը կապոյտէն: Աչքին այս վիճակը Տալթօնակասնութիւն կ'ըսուի:

Լսելեաց կրթութեանը համար, ուսուցիչը մէկ կողմ դարձնել կուտայ տղուն երեսը եւ ինք կը զարնէ առարկայի մը. յետոյ գուշակել կուտայ տղուն թէ ի՞նչ էր ան առարկան: Զանազան կողմերէ ձայն կը հանէ եւ կ'առաջարկէ որ տղան՝ առանց տեսնելու՝ գիտնայ թէ ո՞ր կողմէն եկած է ձայնը: Տարբեր հեռաւորութեանց վրայ նոյն ուժգնութեամբ ձայներ կը հանէ կամ հանել կուտայ եւ կը հարցնէ թէ ո՞րը մօտէն, ո՞րը հեռուէն կուգայ: Նուագարանի մը վրայ տարբեր ձայներ կ'արտաբերէ եւ որոշել կուտայ թէ ո՞րն էր ամենէն բարձրը, ամենէն ցածը: Փնտուել կուտայ պատճառը՝ պատին կամ առաստաղին մէջէն լսուած ձայներուն եւ ամէն այն ձայներուն որոց պատճառը կ'իմացուի միտքով:

Այս կրթիչ միջոցները կրնան յանհունս բազմապատկուիլ ու փոփոխուիլ՝ ճարտար եւ մանուկին սիրովը վառ ուսուցիչներու ձեռացը մէջ:

Ուսուցչի մը՝ որ գործադրած չէ այս միջոցները, կըրնանք ըսել՝ սաներդ աչք ունին՝ չեն տեսներ, ականջ ունին՝ չեն լսեր:

Բայց երբ իր պարտականութիւնը կատարած է ուսու-

ցիչը եւ ապահով է թէ իր սանիկներուն զգայարանները առողջ են ու բաւական կրթուած, այն ատեն պէտք է նաւատակ ունենայ ծանօթանալ անոր հոգեկան վիճակին, անոր մտաւոր պաշարին քանակութեանը եւ որպիսութեանը: Այս բանին անհրաժեշտ պէտք ունի ուսուցիչը՝ իր տալիք ծանօթութիւնները կարենալ կապելու համար տղուն արդէն ունեցած ծանօթութեանց հետ. անո՛նց մէջ է որ ուսուցիչը պիտի գտնէ որոշ չուկէտ մը իր դասերուն. անո՛նց գիմելու, անոնց կտոջելու պէտք պիտի ունենայ յաճախ՝ իր բացատրութիւնները աւելի բացայայտ ընելու համար տղուն: Ժամովաճառ չըլլալու, մանաւանդ օգտակար ըլլալու զխաւոր պայման մըն է որ խօսողը՝ համուզելու կամ տարհամուզելու համար՝ գիտնայ իր ունկնդիրին մտքի զարգացման աստիճանը: Ըստ այսմ, ես եւս կրնայի շատ մը յապաւումներ կամ ընդլայնում ընել տեղւոյն համեմատ իմ այս խօսածներուս մէջ՝ եթէ պատիւն ունեցած ըլլայի աւելի մօտէն ճանչնալու զՁեզ:

Արդ, ուսուցիչը ուսումնասիրեց իր սանիկին զգայարանները, յղկեց, փայլունցուց, դիւրագգած ըրաւ զանոնք, ծանօթացաւ անոր հոգեկան վիճակին, մտաւոր պաշարին. ի՞նչ պիտի ընէ հիմա:

Հիմա կարգն եկած է նոր գաղափարներ աւանդելու, եւ զայս ընելու համար, պիտի հետեւի այն ճամբուն որով տըզան, տեսանք թէ, առանձինն՝ ինքն իրեն՝ կազմեց ձիու մասնաւոր եւ ընդհանուր գաղափարները: Մանուկին ուշադրութեանը պիտի ենթարկէ առարկայ մը, զորօրինակ, նարինջ մը, պիտի վերլուծել տայ զայն իր մասերուն, այսինքն՝ զատ զատ պիտի քննել տայ՝ անոր հանգամանքները, ձեւը, գոյնը, հոտը, համը, ծագումը, եւլն: Այնուհետեւ նոյն նարնջին վրայէն աւնուած անջատ ըմբանումները համադրել պիտի տայ սանիկին, անոր մտքին մէջ կազմելու համար նոյն նարնջին ամբողջական գաղափարը որոշ կերպով: Ուսուցիչը կրնայ այսպէս ցոյց տալ ուրիշ նարինջներ. կրնայ

ուսումնասիրել զանոնք ալ իր աշակերտաց հետ: Յետոյ զանոնք բաղդաւել տալով իրարու, երեւան բերել կուտոյ անոնց ամէնուն հասարակ եղազ յատկութիւնները, հանգամանքները, որոյմով կը կազմէ նարնջին ընդհանուր գաղափարը տղուն մտքին մէջ:

Պտուղի մասնաւոր գաղափարը տղան ինքնին կ'ստանայ արդէն, այնչա՛մի շատ կը սիրէ զայն. բայց ընդհանուր գաղափարը աւանդելու համար, պէտք է յաջորդաբար քննել տալ զանազան ծաղիկներ:

Ենթադրենք հիմա թէ ուսուցիչը պտուղի ընդհանուր գաղափարը պիտի հաղորդէ իր սանիկին, առանց ծաղիկներ ենթարկելու անոր ուղղակի գիտողութեանը: Այս պարագային, ինք մի առ մի պիտի թուէ պտուղին հանգամանքները. այսինքն այդ գաղափարին վերլուծումը պիտի ընէ եւ ունկնդիր աշակերտը զանոնք պիտի համադրէ՝ իր մտքին մէջ կազմելու համար պտուղին գաղափարը:

Բայց որպէս զի յաջողի աշակերտը իր համադրութեանը մէջ, պէտք է որ արդէն ունեցած ըլլայ այն ամէն տարերքը զորս ուսուցիչը կը յիշատակէ մայր գաղափարին. եթէ այդ տարրերէն մէկը պակաս աշակերտին՝ կազմած գաղափարը թերի, շիտթ կ'ըլլայ: Եթէ աշակերտը յիշատակուած տարրերէն մին նոյնութեամբ չըմբռնէ, այլ տարրեր կերպով, այն ատեն կազմուած ամբողջական գաղափարը ճիշդ չըլլար: Ու եթէ աշակերտը՝ իր վերաշինութեանը մէջ՝ անջատ մասերն այն կարգով չի շարէ ինչ կարգով որ ուսուցիչը կը բացատրէ ամբողջը, այն ատեն ալ վերակազմուած գաղափարը նման չըլլար մայր գաղափարին. վասնզի միեւնոյն տարրերը տարրեր կարգով շարայարուեղով կրնան նախատիպէն շատ տարրեր գաղափար մը արտադրել, զոր օրինակ, ը եւ զ, ս եւ ո տառերը հայերէն այբուբէնի մէջ:

Ուստի խօսիլը բաւական չէ, կրկնել եւ ի հարկին ալ գծել տալու է. փոյթ չէ թէ տղուն այդ գծագրութիւնը գաղափարին ստուերագիծը միայն ուրուագրէ:



Իրաների է որ, պարզ, բոլորովին սրբազան գաղափարները, զորօրինակ՝ կրամիտի, անուշի գաղափարները, չեն հաղորդուել որ ուրիշին, եթէ ուղղակի անոր դիտողութեանը չենթարկուին: Հետեւաբար, անհաղորդելի կ'ըլլան նաեւ այն գաղափարները որոց մէջ մաս կը կազմեն ասոնք կամ ասոնցմէ մէկը միայն:

Ուրեմն պէտք է անպատճառ իրազննական ըլլայ դասը, մանաւանդ երբ պիտի հաղորդենք պարզ գաղափարներ:

Կարգ մը գաղափարներ աւանդեց ուսուցիչը իր սանիկին. բայց զանոնք թողլու չէ անոր մտքին մէջ անյարիր, զանոնք գործածելու է իբր ատաղճ գաստողութեանց: Ինչպէս որ տարրաբանը բնութենէն կ'առնէ զանազան տարրեր, զանոնք կը բաղալցէ եւ անոնցմով կը կազմէ նախապէս անձանօթ նորանոր մարմիններ՝ նոր յատկութիւններով օժտուած, նոյնպէս ընելու է ուսուցիչը: Ստացուած զանազան գաղափարներ իրարու մօտեցնել տալու է, ցոյց տալու է անոնց յարաբերութիւնները իրարու հետ եւ այսպէս վարժեցնելու է տղան արամատնութեան:

\* \* \*

Իբր կամ երեւոյթը ցուցադրելին ու զայն քննել տալէ ետքը, պէտք է տրուի՝ զայն յայտնող նշանը, բառը, վասնզի գաղափարը՝ որչափ ալ ճիշդ ըլլայ՝ առանց բառին մարմին չունենար: Գաղափարը շիտթ ու երեւումն կը մնայ մինչեւ որ բառին մէջ չի մարմնաւորի: Բայց նախ գաղափարը, յետոյ բառը, կամ երկուքը միասին. բառը ինքնին հոգի չունեցող մարմին է. սրամիտ հեղինակ մը այդպիսի բառերը նմանցուցած է՝ հին աւանդավէպերու մէջ յիշուած պատժապարտ հոգիներուն որոնք թափառայած կը շրջէին՝ ամէն տեղ փնտռելով մարմիններ որոց մէջ կարենային բնակիլ, եւ չի գտնելով ու եւ է կայան, չի կրնալով խառնուիլ կենդանի մընացողներուն մէջ, կ'անհետանային անմիջապէս որ արշալոյսին առաջին ցոլքերը ծագէին:

Եւ մեր խեղճ փոքրերուն մտքերը ո՛րչափ կը խճուղենք տակաւին բառերով որոց գաղափարը բնաւ չունին անոնք եւ զորս թութակօրէն կ'արտասանեն: Զարաշար կը խարուինք երբ կը կարծենք թէ ինչ որ տղան կ'արտասանէ իրերան ուսնելով, կը հասկնայ զայն: Կը յիշեմ որ մանկութեանս, հինգ վեց տարեկան հասակիս մէջ, պապուս ունկնդրութեամբ սորված էի թուրքերէն լեզուով, եւ բաւական գրա-

կան լեզուով գրուած՝ Հայր մեր մը: Թաղին մարդիկը, գիւղին մարդիկը կը կեցնէին զիս իմ՝ մանկական խաղերուս մէջ եւ կամ ճամբան, ու իբր զարմանալի երեւոյթ մը կրկնել կուտային ինձ զայն. ես ալ կը կրկնէի առանց ու եւ է մէկ բառը, նոյն իսկ մէկ տառը հասկնալու. հիմա կը յիշեմ անկէ հատուկուոր բառեր որոց նշանակութիւնը շատ ետքը սորված եմ. սեւա, մուզսսեա, արա, եւն, միւսարեփ:

Ամէն տղայ ալ մեծ դիւրութիւն ունի միտք պահելու մեքենորէն միտք կամ խօսք՝ ուղեղին հիւսուածաբանական եւ բնախօսական այսինչ վիճակներուն բերմամբ: Բայց ուրիշ բան է բառը, խօսքը արտասանել, ուրիշ բան է գաղափարը ունենալ, իմաստը հասկնալ:

Եթէ վիճակագիր մը ընելու եղնք մեր Մանկապարտէզներուն մէջ, պիտի գտնենք որ մեր մանուկները շատ բաւ կ'արտասանեն, բայց գաղափարէ զուրկ են գրեթէ:

Իբր կամ երեւոյթը, գաղափարը եւ բառը լծորդուած ըլլալու են իրարու հետ սերտիւ, վասնզի երեքը զիրար կ'ամբողջացնեն:

Եւ որովհետեւ ուսուցման եղանակը իրազննական է, ուսուցուելիք առաջին բառերը արտայայտութիւնները պիտի ըլլան այն իրաց, կենդանեաց եւ անձանց որոնք կը վերաբերին տղոց սպրած միջավայրին, անոնց յատկութեանց եւ անոնց կատարած գործողութեանց: Մէկ խօսքով, տղոց ուսուցուելիք առաջին բառերը պիտի ըլլան, քերականական լեզուով, անուններ, ածականներ եւ բայեր: Այս երեք կարգի բառերը բաւական են արդէն տղան լեզու հանելու:

Բայց բառը ի լուր մանուկին արտասանելով գոհանալու չէ ուսուցիչը. նոյն իսկ առանց մասնաւոր խնամքի մը արտասանելով ալ գոհանալու չէ. բառը պէտք է արտասանել, մանաւանդ երբ նոր կ'աւանդուի՝ որոշակի, յստակօրէն ու բարձրաձայն: Առանց այս մասնաւոր հոգածութեան, մանուկը բառին վանկերէն մէկը կամ միւսը չի լսեր կամ տարբեր կերպով կը լսէ զայն. ուստի եւ սխալ կ'արտասանէ. լաւ ըսելը էական սրայման մըն է լաւ խօսելու, ու նաեւ ուղիւ գրելու:

Ահաւասիկ արտասանութիւն մը ճիշդ այնպէս, ինչպէս քաղուած է տղու մը բերնէն.

«Շուտ ըրէ ներս ետկու տղայ  
«Մի նայի ախտիկն վրայ,

- « Մութը կոր ե, օդն ալ թոց ե.
- « Ի՞նչ կը նայիս աչքերդ վեր անկած.
- « Մայրիկ ինձի շատ անգամ կըսէիր թէ
- « Աստուծոյ անունը ամէն անգ զրուած է.
- « Հիմա կը նայիս անհետուն մէջ
- « Կրնան գտնել քեզն ես անուն
- « Հոն է զրոյս հոն է Աստուծոյ անուն
- « Բայց պե՛հի աչքերով գաղաղ զայն :

Ահաւասիկ սոյն հատուածին բնագիրը.

- « Շուտ ըրէ, ներս եկուր, տղայ,
- « Մի՛ նստիր պաղ քարին վրայ.
- « Մութը կոխեց, օդն ալ է թոց,
- « Ի՞նչ կը նայիս աչքերդ տնկած.
- « Մայրիկ, ինձի շատ անգամ կըսէիր թէ
- « Աստուծոյ անունը ամէն անգ զրուած է.
- « Հիմա կը նայիս մէջ աստղերուն,
- « Կրնամ գտնել գրուած իր անուն.
- « Հոն է, տղաս, հոն է Աստուծոյ անուն,
- « Բայց հոգւոյ աչքերով պէտք է կարգալ զայն » :

Տղան տարբեր կերպով, ճիշդը, պիտի արտասանէր, եւ թէ ուսուցիչը ինք հոգ տարած ըլլար բառերը արտասանելու յստակօրէն եւ բարձրաձայն: Բուսօ դիտել կուտայ թէ գիւղացի տղաք քաղաքացի տղոցմէ աւելի շուտ խօսիլ կը սորվին, որովհետեւ գիւղացի տղաք բաց օդին մէջ կը խաղան եւ պարտաւորեալ են բարձրաձայն խօսելու. մինչդեռ քաղաքացի տղաք այս պայմանաց մէջ չեն ապրիր:

Բայց նոյն իսկ եթէ ճիշդ ու ամբողջ ալ լսած ըլլայ բառը, դարձեալ տղուն ձայնական գործարանները ճկունելու, թեքուելու կը կարօտին՝ ձայնի բազմաօդ արտաբերութեանց, ինչպէս զգայարանները կը կարօտէին յղկուելու: Տղայ մը կրնայ իր մտքովը, ներքին ձայնովը, բառի մը արտասանութիւնը ընել, եթէ կարելի է այսպէս ըսել. բայց երբ փորձէ բարձրաձայն ի լուր ուրիշներու լսելի ընել զայն կը ձախողի: Մենք ալ կրնանք մտովի երգ մը երգել իր ամէնէ նրբին ելեւէջներով. բայց երբ բարձրաձայն երգել ուղենք, ի՞նչ վրիպումներ կ'ընենք, ի՞նչ սխալ խաղեր կ'արձակենք: Ստոյգ է ուրեմն որ, նոյն իսկ բառի մը ճիշդ արտասանութեանը համար, պէտք է մարդուն ձայնի գործարանները, մանաւանդ որ կամքի ազդեցութեան ենթակայ են անոնք:

Գիտէք թէ անյօդաւոր ձայնի գլխաւոր գործարանն է խոչակը կամ հագագը իր ձայնական երկու լարերով. եւ թէ ձայնը յօդաւոր ընելու կ'օժանդակեն մասնաւորապէս դուն, շրթունքները, ակունները եւ ռեզոնանսը:

Բաղաձայններու եւ ձայնաւորներու հնչման համար, նական գործարանին տարբեր մասերը ի գործ կը մտնեն Ձայնաւորները կը կազմուին բմբանին եւ բերնին երկրորդական թրթռացումներովը միայն: Բաղաձայնները ուրիշ բան չեն եթէ ոչ ձայնաւորներ որոց արտաբերումին հետ, որոց արտաբերումէն ետքը կամ առաջ, կը կատարուի մասնաւոր շարժում մը այն յարակից գործարանաց մէջ որոնք ձայնը աւելի հնչական ընելու կը ծառայեն: Բաղաձայնները կը կազմուին, երբ խոչակագունէն վեր գտնուած ձայնի երկրորդական գործարանները, տարբեր կէտերու վրայ, արգելքներ հանեն օդի սիւնակին առջեւ. արգելքներ որոնք ձայնատու օդին հոսանքէն տարբեր կերպով կը թրթռան: Այս արգելքներն են շրթները, կոկորդը, լեզուն, ակունները:

Այն ջիղերը, որոնք խօսքի, արտասանութեան ուղղիչներն են, կը ծնին ուղեղին մէջ շատ որս կէտէ մը. այս կէտը կը կոչուի ձայնաբերութեան կեդրոն, եւ կը գտնուի ուղեղի ձախ կիսագունտին առաջակողման գալարներուն մէջ: Ուղեղին մէջ ուրիշ կէտ մըն ալ կայ որ անհրաժեշտ է խօսելու համար. այդ կէտն է բառերու յիշողութեան կեդրոնը: Երբ ուղեղային հիւանդութիւն մը ջնջէ այս կեդրոններէն մէկը կամ միւսը, խօսելու անկարող կ'ըլլանք: Բայց եթէ ձայնաբերութեան կեդրոնը կրած է հիւանդութեան հարուածը, հիւանդը մոռցած չըլլար բառը, թէեւ չի կրնար զայն արտասանել, սակայն կրնայ գրել. երբ բառին յիշողութեան կեդրոնն է որ կրած է հիւանդութեան յարձակումը, այն ատեն ո՛չ կրնայ արտաբերել եւ ո՛չ իսկ գրել:

Կակագումը ջղային հիւանդութիւն մըն է որ թէեւ երբեմն տարիքին յառաջացումը կը մեղմանայ, բայց փոքր հասակի մէջ անտեսելու չէ բժշկական եւ առողջապահական խնամքը:

Ձայնաբերութեան վերաբերեալ կազմախօսական ու բնախօսական այս յարակից ծանօթութիւնները դիտմամբ իմէջ բերի՛ խեղամուտ ընելու համար զձեզ թէ ո՛ր աստիճան պարտաւոր ենք մեր սանիկին ուսումնասիրութիւնը խընամով կատարելու. ծուռ ակուայ մը, ատամնաշարին մէջ

խրամատ և շրթանց երկարութիւնը կամ կարճութիւնը, շահութիւնը կամ հաստութիւնը, ոնգաց, խոռոանոնց բժշկութիւնը վիճակը կը բացատրեն մեզի տղու մը արջին կ'ոթեան մէջ յայտնած դժուարութիւնները եւ կ'ատարողներն մեզ՝ միջոցներ ձեռք առնելու, անոր արտասանութիւնը դիւրացնելու կամ տարերջը աղէկ արտասանել նրա:

Ընթերցման նիւթը աղէկ գիտնալ եւ ընթերցման հատուածին բառերու ծանօթութիւնը ունենալ պայման են լաւ ընթերցանութեան: Պարզ մարդ մը այնչափ լաւ չի կրնար կարդալ օրէնսգիրտական հատուած մը որչափ օրէնսագէտը. հայերէն տառերով գրուած թուրքերէն մը դժուար պիտի կարդայ այն անձը որ քիչ ծանօթ է թուրքերէն լեզուի բառերուն:

Ուրեմն, մեքենական ընթերցումը սկսելէ առաջ, պէտք է՝ նախ պատրաստութեամբ մը՝ ծանօթացնել մանուկը գաղափարին, իմաստին ու բառին:

\* \*

Քանի մը բառով ամփոփենք եւ վերջացնենք:

Ընթերցման եւ գրի ամենէն նոր մեթոտին համեմատ, ընթերցանութիւն եւ գիր ուրիշ բան չեն, եթէ ոչ մասեր զննական ուսուցման որ ինքն ալ սահմանուած է նպատակու տղուն մէջ լեզուի եւ դիտողութեան զարգացման:

Աշակերտին աչաց տակ կը դրուի ո եւ է առարկայ մը. ուսուցիչը անոր համառօտ նկարագրութիւնը կ'ընէ կամ ընել կուտայ, անունը կ'ըսէ: Աշակերտը կը դիտէ, կը մասնակցի ուսուցչին աշխատութեան, կը կրկնէ առարկային անունը. ցոյց կուտայ անոր զլիարար յատկութիւնները, կարելոր հանգամանքները, գործածութիւնը, օգտակարութիւնը. նոր գաղափար ստանալով հանդերձ կը խօսի տղան:

Բայց տղան դեռ չի սորվեցաւ իր լեզուն տարրադարձել խօսքերու, բառերու, վանկերու եւ գիրերու: Տղան առաջին անգամ միաձայլ ամբողջ մը կը նկատէ խօսքը: Ուստի այս վերլուծումը պէտք է լեզուի ուսուցման մէջ՝ ո՛չ թէ հեռուոր նպատակաւ, այլ եւ անմիջական նպատակաւ, այն է կարդալու եւ գրելու դիւրութեան համար:

Մեր յաջորդ խօսքը պիտի նուիրենք բացատրելու ընթերցման եւ գրի միասնական ուսուցման գործնական միջոցները:

## ԳՐԻ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՄՈՒՆԷՐ

Բ. Կ. Ա. Ս

(1900 մարտ 26 ին Բերայի Մանկավարժական Լսարանին մէջ արտասանուած)

Ա.

Նախադասուքիւնը կը խօսի, գիրը չի խօսիր: — Գաղափարաց աւանդման եւ իրաց բմբունումին համար, զննական եղանակաւ տղուն վերլուծել, համադրել ու հանրացնել տուինք առարկայի մը կամ իրողութեան մը զանազան հանգամանքները:

Ընթերցանութեան ուսուցման համար ալ պիտի հետեւինք նոյն եղանակին: Ուսանելի առարկան պիտի ըլլայ հոս՝ նախադասութիւն մը որուն արդէն ծանօթացած ըլլայ տղան նախապատրաստական խօսակցութեանց մէջ:

Նախադասութիւնը կենդանի է իրեն համար. կը հասկընայ զայն, կը հետաքրքրէ զինքը. ու այս կը բաւէ ուշագրութիւնը գրաւելու, մտաւոր գործունէութիւն մը դարձութեանը իր մէջ եւ ներշնչելու փափաք առարկային ուսման. պայմաններ որոնք ամենէ զօրաւոր լծակները պէտք է նկատուին՝ ուսուցչին ձեռաց մէջ՝ իր աշխատութեան դժուարութիւնները հարթելու:

Ընդհակառակը, գիրը՝ ո՛չ միայն անծանօթ է տղուն, այլ եւ անկենդան, անիմաստ: Գիրը չի խօսիր անոր, չի հետաքրքրեր, չի հրապուրեր: Քերականին թուղթը, որ կրնայ գալարիլ ծարուիլ եւ ձեւափոխուիլ իր մատներուն տակ՝ աւելի՛ կենդանի ու աւելի խօսուն է քան այր, քեմ, զիմը որոնք սեւազգեստ լուս տողանցումով մը կը պարզուին տրուին վառ ու կայտառ աչքերուն տակ:

Եւ չի գարմանանք որ այսպիսի քերականներ ուրիշ բանի չի ծառայեն՝ տղոց ձեռքին մէջ՝ բայց եթէ թղթէ մարդուկ-

ներ շինուելու, ու՛ ծամուած թղթի զանգուածով մըն ալ դասարանին առտատողին փակցուած՝ կախուելու երբուռն, եւ կամ՝, թեւով մը ճանճի մը ստքերուն կապուած՝ օղին մէջ արձակուելու, իր ետեւէն քարչելով խնդագին նայուածքը մանկական երամին: Չի դարմանանք որ այս քերականներու հետեւողութեամբ, լիկ համադրական եզանակով, գրերու ծանօթութենէն մեկնող ուսուցիչք, դժուարութիւններ կրեն տղուն ուշադրութիւնը կապելու դասին հետ, սիրցնելու դասը, հետաքրքիր ընելու զանի դասին նիւթով: Եւ եթէ աւստնք յաջողին վերջապէս կարողալ սորվեցնել, պէտք է գիտնանք թէ՛ ձեռք բերուած արդիւնքը համապատասխան չէ բնաւ ժամանակին եւ աշխատութեան որոնք նուիրուած են անոր: Այս կերպով, արդարեւ, տղան կը սորվի կարողալ, բայց իր առաջին քայլերուն մէջ իսկ դժուար գտնելով ուսումը՝ կը խրտչի անկէ. անձնապատահութեան զգացումը՝ մատաւոր աշխատութեանց մասին կը թուլնայ. եւ, ասկէ զատ, միտքը կրաւորական գեր մը միայն կատարելով, չի մարդուիր, չի կրթուիր: Ընդհակառակը, աղուն միտքը գործունէութեան մէջ կը մտնէ, երբ՝ փոխանակ առաջին անգամ ներկայացնելու իրեն այբուբենի տառերը որոնք համար ու անկենդան են ու նշանակութենէ զուրկ, կարողալ տանք իրեն նախադասութիւն մը որուն կազմիչ տարրերը — բառ, արտասանութիւն, նշանակութիւն եւ իմաստ — արդէն սորված է նախապատրաստական դասերու մէջ. զոր օրինակ. « Ես ուլ մը ունիմ » նախադասութիւնը: Գիր չի ձանչցած մէկէ՛ն կարգալ . . . տարօրինակ յեղաշրջում մը չէ՞ այս բանը: Տարօրինակ, այո՛, բայց զարթուցիչ յեղաշրջում զոր կատարելու համար ժագօգօի ճշմարտագանցիկ միտքը պէտք էր:

Ընթերցանութեան ուսուցման մէջ ժագօգօի մտցուցած բարեփոխումը շատ կարեւոր նկատուած է նոյն իսկ Գերմանիոյ մէջ: Թի՛լ՝ ընթերցանութեան եւ թէ՛ լեզուի ուսուցման համար ժագօգօի նախասիրած գիրքն էր Տելեմաքը: Ամբողջ նախադասութիւն մը կ'առնէր նախ անկէ. զոր օ-

րինակ. « Կախպսէ շէր կրնար մտիթարուլ Ողիսեւսի բաժանմանը վրայ »: Բարձրաձայն կ'արտասանէր զայն, կը բացատրէր եւ գոց կը սորվեցնէր աշակերտին: Յետոյ, գիրքը անոր աչքին դիմացը դնելով կը կարդացնէր այսպէս.

Կաշիպսե. — Կաշիպսե չեր. — Կաշիպսե չեր կրնար. — Կաշիպսե չեր կրնար մխիթարուիլ. — Կաշիպսե չեր կրնար մխիթարուիլ Ողիսեւսի քաժակնման. — Կաշիպսե չեր կրնար մխիթարուիլ Ողիսեւսի քաժակնման վրայ:

Աշակերտը յետագարձ կրկնութեամբ կ'արտասանէր բառերը մինչեւ որ կարենար զանոնք ձանչնալ. յետոյ բառերուն վանկերը, եւ վանկերուն ալ գիրերը գատել որոշել կը արուէր անոր: Հուսկ յետոյ հրահանգներ կը կատարուէր վերականգնելու՝ ո՛չ միայն ծանօթ նախադասութիւնը, ընթերցուած բառերը, այլ եւ նոր բառեր ու նոր նախադասութիւններ: Այս կերպով աշակերտը շուտ կը սորվէր կարգալ չէ թէ՛ կրաւորաբար, այլ մտքին գործօն մասնակցութեամբ:

Եւ արդարեւ, երբ տղան՝ առանց գիրերը ձանչնալու, տեսողական նշաններու վրայ նայելով, յետագարձ կերպով յաջորդաբար արտասանէ.

Ես, — Ես ուլ, — Ես ուլ մը, — Ես ուլ մը ունիմ, այն ատեն իր լսողական մտապատկերները, այսինքն նախապէս լսած ձայները, կը զուգորդէ տեսողական նշաններուն հետ զորս պարզուած կը գտնէ հիմա իր առջեւ. լսողական մտապատկերին վրայ կ'աւելցնէ տեսողականն ալ, ու երբ ուրիշ անգամ մը, ուրիշ տեղ հանդիպի գրուած բառին, անմիջապէս իր մտքին մէջ կ'արթննայ նաեւ ձայնը որուն յարակցած էր այդ բառը. — կը կարդայ. փոյթ չէ թէ այդ բառը կազմուած ըլլայ քանի մը գիրերէ որոց իւրաքանչիւրին յատուկ ձայներն անձանօթ եղած ըլլան իրեն:

Տղուն միտքը՝ այս պարագային՝ կը գործէ այնպէս որպէս թէ՛ գտնուէր պատկերի մը հանդէպ: — Կատուն մուկ

ե քոներ, կ'ըսէ սղան ի տես պատկերի մը որուն վրայ նը-  
կարուած ըլլայ կատու մը մուկն ի բերան: Տղուն այս խօս-  
քը — կասուռն մուկ ե քոներ — սեսակ մը ընթերցանու-  
թիւն, ձայնական արտայայտութիւն չէ՞ տեսողական նշան-  
ներու, ինչպէս են շինական գաղափարագրերը եւ ինչպէս  
էին ժամանակաւ եզրպատական նշանագրերը:

Պատկերին ընթերցանութեանը եւ բառերու այս կերպ  
ընթերցանութեանը մէջ տարբերութիւն չի կայ էսպէս. քա-  
նի որ երկուքին մէջ ալ յօդուածոյ գիծերու թարգմանու-  
թիւն մըն է որ կ'ընէ սղան ձայնի արտաբերութեամբ:

Գծական ձեւերու եւ ո՛չ թէ գրերու ձայնական թարգ-  
մանութիւնն է որ կ'ընենք մենք ալ, չափահասներս, երբ՝  
զոր օրինակ, կը հանդիպինք հին ձեռագրերու կամ գրքերու

մէջ սա նշաններուն ( ~ , Կ , ԱՃ , ԿՕ . ) եւ կը  
կարդանք զանոնք. (Աշխարհ, այսինքն, Աստուած, զոր օրի-  
նակ). թուրքերէն գրքերու մէջ՝ սա նշաններուն ( ڤ , ۛ )  
եւ կը կարդանք (սենիգ, Աղան). Ֆրանսերէնի մէջ՝ սա  
սեղմեալ ձեւիւ. (etc.), եւ կը կարդանք. (եղսեղերս):

Ուստի ո՛չ բանավարութեան եւ ո՛չ ալ ընկալեալ սո-  
վորութեանց հակառակ է որ՝ դեռ գիրերուն ձայնական ար-  
ժէքը չի սորվեցուցած տղուն՝ ներկայացնենք անոր բառեր,  
անոնց ընթերցումը սորվեցնենք ու կարդալ տանք զանոնք  
կարգաւ, խառն, յետագարձ, զոյգ կամ անջատարար:

Ասկէ տարիներ առաջ, պատանեկութեանս ատեն, բա-  
րեկամներէս մէկուն յանձնարարականովը այցելութիւն մը  
տուած եմ Գուլէ-գափուի գերմանական վարժարանին,  
Պիւրկըր Շուլէին: Այս այցելութեան մէկ պզտիկ պարագան  
ի դէպ կը համարիմ հոս յիշել. վասն զի կը հաստատէ բա-  
ցայայտ թէ արգարեւ մարդ կրնայ՝ գիրերը դեռ չի ձանչ-  
ցած՝ կարդալ սորվիլ, սկսելով անմիջապէս նախադասու-  
թեանց ընթերցումին:

Վարժարանին տեսուչը զիս առաջնորդեց ընդարձակ  
դասարան մը ուր 10-12 տարեկան 50 ի մօտ ուսանողներ,

երկու սեռէ, ընթերցանութեան դաս կ'առնէին երիտասարդ  
ուսուցչէ մը:

Ուսուցիչը պատուասիրեց զիս՝ աթոռ մը ու դասագիրք  
մը դնելով տրամադրութեանս տակ: Թէեւ գերմաներէնի  
բոլորովին անգէտ եւ անոր գոթիկ գրերուն անձանօթ, բայց  
չի մերժեցի դասագիրքը. որովհետեւ հետաքրքիր էի դիտել  
մեթոտը եւ հնարքները որսցմով նա պիտի վարէր իր դասը:  
Ուստի, գրքին վրայէն ուշադիր կը հետեւէի կարդացող ա-  
շակերտին ընթերցանութեանը, քոտային տպաւորութիւն մը  
կրելով ձայներէն, զորս կ'արտասանէր, եւ բառերէն որոնք  
կը պարզուէին աչքերուս տակ, գրքին վրայ: Երկրորդ ա-  
շակերտ մը, երրորդ մը, յաջորդաբար, կը կարդար մի եւ  
նոյն հասուածը. եւ ուսուցիչը մերթ յաջողակ աշակերտնե-  
րուն ուղղել կուտար սխալները, մերթ ինք կ'ուղղէր: Քատը  
հետզհետէ կը մարմնաւորուէր, կը կերպաւորուէր. անորոշ  
ձայները կ'որոշուէին, կը յստակուէին. բառերը իրենց միա-  
պաղալ ձոյլէն դուրս կը ցըցուէին կը ձեւաւորուէին առանձ-  
նակի. եւ տառերը, իրենց յօգնակոր գալարուն ձեւերով,  
ձայնական նշանակութիւն մը կ'ստանային ինծի համար, այն-  
չափ պայծառ որ կը հասկնայի ընթերցման սխալները ա-  
շակերտին, թէեւ չէի կրնար տակաւին կարդալ հասուածը  
առանձին:

Արդ, եթէ 30-40 վայրկենի մէջ, այս արդիւնքին կըր-  
ցաւ յանդիլ մէկը որ ընաւ նախապատրաստուած չէր ո՛չ  
բառերուն արտասանութեանը, ո՛չ պարբերութեանց իմաս-  
տին, նախապատրաստուող մը՝ ժամանակի համեմատութիւ-  
նը նոյն պահելով՝ անշուշտ աւելի դիւրաւ պիտի ստանար  
վարժութիւն ընթերցման եւ ծանօթութիւն տառերու ձայ-  
նական արժէքին:

Մեր առաջին բանախօսութեանը մէջ, պատշաճ չափով  
բացատրուեցաւ, զնկակալ մեքոսին կիրառութիւնը գաղա-  
փարաց առանդման դասերուն համար: Կանխենք բսելու թէ  
զնկակալ մեքոսը պիտի ըլլայ նաեւ խարխիւր ընթերցանու-  
թեան դասերուն:

Եւ ընծայելով խորին յարգանք ժողովոյն, մարդասիր վարժապետին, որ ցոյց տուաւ մեզի՝ ընթերցման եղանակին մասմարդիչ զարթուցիչ սկզբունքը, քնադէր հին եղանակի մը մութին մէջէն, կ'անցնի՝ բացատրելու նախ միջոցներն ու հնարքները զորս, աւելի կամ նուազ բարեխօսեալ, կը գործածէ արդի Մանկավարժութիւնը՝ հիմնակէտ ունենալով վերլուծական ու համադրական եղանակը:

\* \*

Ականջը եւ ձայնակաւ գործարարները մարգող վարժութիւնի: — Տղան՝ կարգաւ սկսելէ առաջ, բերանացի պէտք է վարժուի բանաւոր լեզուն վերլուծել խօսքերու, բառերու, վերջապէս առաւել (ձայնաւորներու, բաղաձայններու):

Լեզուն տարբազարելու համար իր կազմիչ տարրերուն, ուսուցիչը կ'առնէ պարզ նախադասութիւն մը այն գինական խօսակցութեան մէջէն զոր կատարած է մանուկին հետ այս կամ այն իրին կամ երեւոյթին վրայ: Նախադասութիւնը բաժնել կուտայ բառերու, եւ բառերը վանկերու՝ զգալի ընելով իւրաքանչիւրին մէջ գտնուած ձայնաւորը: Ծանօթ վանկի մը կամ վանկերու վրայ աւելցնել կուտայ ուրիշ ձայն մը այնպէս որ կազմուի այս ինչ բառը՝ աշակերտին արդէն ծանօթ: Փնտռել կուտայ բառ մը որ այս ինչ վանկով սկսի կամ աւարտի:

Նպատակայարմար բառերու վրայ, զոր օրինակ, աղ, եզ, էշ, իժ, օձ, ոչ, ընծայ՝ դիտել կուտայ թէ ձայնաւորները կը հնչուին ազատ, բերանարաց՝ առանց ո եւ է արդէքի մը հանդիպելու լեզուին, տկոտներուն, չրթներուն կամ քիմքին կողմանէ: Մինչդեռ բաղաձայնները կը հնչուին՝ երբ ձայնաւորները լեզուին կա՛մ տկոտներուն կա՛մ չրթներուն եւ կա՛մ քիմքին բաղխուելէ ետք կ'արտասանուին:

Ուսուցիչը այս վարժութեանց մէջ պիտի սորվեցնէ արտասանել ձայնաւորները իրենց յատուկ ձայներով. ա՛, ե՛, կ՛, օ՛, ի՛, ո՛, ը, իսկ բաղաձայնները՝ իրենց որոշիչ շշուկ-

վը. ս գիրը պիտի արտասանել տայ ոչ թէ ոչ, այլ սսս՝, իրրրեւ թէ սուրբ ուղէինք ակաաներուն մէջէն. յ գիրը պիտի արտասանել տայ ոչ թէ յը, այլ միջտաի մը թաւելու առն հանած ձայնին պէս յ յ յ յ, եւսյն:

Առանց ժողովոյ հանձարարութեանը հասնելու, իրմէ առաջ՝ ժէ. գարուն մէջ, յանսենեան (janséniste) աղանդաւորք յանձնարարած են արդէն՝ իրենց վարժարանաց մէջ ի գործադրութիւն՝ ժր միմիայն ձայնաւորները եւ երկրարբառները հնչել տրուին տղաց. իսկ բաղաձայնները հնչել չի տրուին առանձին, հապա այն բաղաձայն զուգորդութեանց մէջ զորս անոնք կը կազմեն ձայնաւորներու եւ երկրարբառներու հետ:

Վերլուծման ու համադրութեան այս բերանացի վարժութիւնները՝ իրազնական խօսակցութեանց զուգընթաց՝ պէտք է տեսնել երկու ամիս, երբ տղան վեց տարեկան հասակին մէջ՝ իր կազմակերպեալ ձայնական գործարաններով եւ ըստ բաւականին սնեալ ուղեղով՝ վարժարան կուգայ եւ յարմար կը դատուի ընթերցանութեան դաս առնելու:

\* \*

Այլի եւ ձայնակաւ գործարարաց վարժարարներ: — Աշակերտը հիմա կը հասկնայ շարայարեալ խօսքը: Կրնայ բերանացի արտաբերել զայն, կ'արտասանէ ուղիղ՝ առանց թեւրութեան: Նախադասութիւնը կը լուծէ բառերու, բառերը՝ վանկերու, եւ վանկերը՝ ձայնաւորներու, բաղաձայններու: Վանկի մը մէջ, կ'որոշէ սկզբնական բաղաձայնը, միջին ձայնաւորը, աւարտական բաղաձայնը:

Հիմա առնեն է որ անցնինք նշաններու, տառերու ուսման: Ասոր համար, կատարուած խօսակցութեանց մէջէն նախադասութիւն մը կ'ընտրենք, կը գրենք գրատախտակին վրայ. «Նս ուլ մը ունիմ»: Տղան կը սորվեցնենք, մէն մի բառը ձանձնալ, ու կարգաւ զայն՝ իրրրեւ ձայնատու ամբողջական նշաններ: Այդ բառերուն մէջէն, ի վերջոյ, կ'առնենք

մասնաւորապէս տիպար բառ մը — ուշ — զոր կը վերլուծենք իր ձայնաւորին եւ իր բաղաձայնին:

Տիպար բառերը այնպէս մը պէտք է ընտրել որ նախ՝ համադրական շատ մը վարժութիւններ կարելի ըլլայ կատարել անոնցմով օգտակարապէս, եւ երկրորդ՝ անոնց ամէն մէկը ներկայացնէ կարելի եղածին չափ քիչ նոր տարրեր տղուն համար: Առռ, սառ, սագ, նռռ, ուրագ, բառաւան, գառնուկ, բուրփառ, փառեակ, ուշ, բառերը, թուով տասը՝ կրնան, շատ պատշաճութեամբ, իբր տիպար բառեր գործածուիլ կարգաւ:

Չանոնք իրարու հետ բաղդատելով, պիտի տեսնենք թէ, առաջին բառէն ետք որ երեք տարր կը հաղորդէ աշակերտին (ա, ու, ո), միւսները, ամէնն ալ, մէյմէկ նոր տարր միայն կը պարունակեն, երկրորդ բառը ս (սառ), երրորդը՝ գ (սագ), չորրորդը՝ ն (նռռ), հինգերորդը՝ ր (ուրագ), եւայլն: Այս տասը տիպար բառերով աշակերտը կը ձանձնայ երեք ձայնաւոր (ա, ու, ե) եւ ինը բաղաձայն զրեր (ն, ս, գ, ն, շ, ր, ք, կ, ղ): կը հասկնայ ասոնց ձայնական զօրութիւնը եւ կրնայ ընել բազմազան զուգորդութիւններ անոնցմով: Այս զուգորդութիւնները կարելի կ'ըլլան արդէն նոյն իսկ առաջին բառէն սկսեալ. հետզհետէ կը շատնան ու տասներորդ բառին վրայ թոյլ կուտան տղուն կարգալու հետեւեալ նախադասութիւնները. փեր եկո՛ւր, փար գնա՛, կարագ ա՛ն ու փեր բե՛ր, կերակուր կե՛ր, ե՛րք կուգաս, շեռ եշեր են, բաջ գնե՛ր են, արբեշու բսնե՛ր կան, բշուր կ'եղնե՞ս:

Պէտք է դիտել տամ թէ վերոյիշեալ բառերու ընտրուցութեանը մէջ կարեւոր տեսակէտ մը ի մտի ունեցած ենք. այնպէս մը ընտրուած են անոնք որ ո եւ ր, գ եւ կ լծորդ տառերը յաջորդական բառերու մէջ չեն մտներ. իրարմէ հեռացուցուած են դիտմամբ՝ շփոթութեանց տեղի չի տալու համար:

Չափահասներու համար անգամ, ձանձնալու, որոշելու էական պայման է որ տարրերութիւնները զգալի ըլլան: Երկ-

ւորեակներ դժուարաւ կը զանազանուին շատ անգամ. համազգեստի մէջ մարդիկ դիւրաւ չեն ձանձցուիր:

Մանուկին համար աւելի՛ մեծ ըլլալու է տարրերութիւնը այն իրաց զորս ձանձցնել կուզենք իրեն: ո եւ ր տառերը թէեւ ձեւով տարբեր են, բայց սրովհետեւ իրենց հնչիւնով նման են, աղան կը շփոթէ անոնց ձայները եւ զանոնք իրարու տեղ կ'առնէ, երբ՝ առանց ժամանակամիջոցի՝ առանց մին լու մը իւրացնել տալու հրահանգումով, միւսը ներկայացնենք անմիջապէս:

Տիպար բառերու վերլուծումէն ետք, երբ նոր համադրութիւններ կ'ըլլան, ի բաց կը վտարուին այնպիսի վանկեր որոնք ո եւ է նշանակութիւն չունին լեզուին մէջ եւ չեն կազմեր բառ: գօ, գի, գը, գա, քա, քի, քօ, քը, փա, փի, փօ, փը, ալ, ալ, իլ, օլ, ուլ մերժելի վարժութիւններ են:

Տիպար բառերու ընտրութեան մէջ կարեւոր է նոյնպէս ի նկատի ունենալ որ անոնք նախ շրթնային բաղաձայնները, յետոյ շեղուայինները եւ ապա կոկորդայինները ներկայացունեն աշակերտաց. վասն զի աղան ա՛յս կարգաւ կ'արտասանէ զանոնք:

Ուսուցիչը քանի մը զաս ետքը գրատախտակին վրայ համայնացոյց ամփոփ մէկ պատկերը կը կազմէ այն համադրութեանց զորս ըրած են աղաք մինչեւ այն ատեն. Առռ, սառ, սագ տիպար բառերէն ետքը կրնայ կազմուիլ հետեւեալ ամփոփումը.

	Առռ	սառ	սագ
Չայնաւորք	ու	ս	ս
	ուռ	սռ	. . .
	գուռ	գաս	. . .
	ուս	սսռ	. . .
	սուս	սսգ	. . . .
	սուգ	սսռ	. . .

	Առու	սառ	սագ
Բաղաձայնք	ռ	ւ	գ
	առ	սա	գառ
	ռռ	սս	սագ
	ռռս	ռս	սռգ
	գռռ	սռս	գաս
	գառ	սառ	գռռ
		սագ	

\* \*

Ընթերցանութեան ուսուցման սլոգան երեւոյթները կրնանք որեւմն ամփոփել հետեւեալ հինգ աստիճանի վարժութեանց մէջ.

1. Տիպար բառին վրայ աղուն հետաքրքրութիւնը պրթբնցընել համառօտ բացատրութիւններով, կարճ ու պարզ պատմութեամբ մը, դնական ուսուցմամբ, գունաւոր պատկերներով:

2. Տիպար բառը վերլուծել իր տարրերուն:

3. Վերակազմել տիպար բառը այն զրբերով որոնք կը ծառայեն կազմելու դայն:

4. Իրարու հետ բաղդաստել տիպար բառին զանազան մասերը եւ անոնցմով կազմել նոր բառեր:

5. Ամփոփել ուսուցուած բառերը:

Իւրաքանչիւրին միջոցաւ մէկ տարր մը միայն աւանդելու պայմանաւ, քառասուն տիպար բառեր կը բաւեն սորվեցնելու այբուբէնի բոլոր տառերը երկրարբառներով միասին: Եւ մէկ շարթուան մէջ երեք տիպար բառ միայն ներկայացնելով աշակերտին, զրեթէ երեք ամիսէն արդէն, ո՛չ միայն ճանչցուցած կ'ըլլանք ամբողջ այբուբէնը, այլ եւ բաւական վարթեցուցած կ'ըլլանք տղան՝ ընթերցանութեան եւ ուղղագրութեան միանգամայն, վասն զի՝ ինչպիս վերջը պիտի տեսնենք՝ ընթերցման այս վարժութիւնները զուգընթաց պիտի ըլլան զրելու վարժութեանց:

Ընթերցանութեան այս առաջին դասերը կը կատարուին

ձեռագրի վրայ, պարզ տառերով, առանց զլխագրի գործածութեան: Դասը կը ներկայացուի տղոց՝ գրաստ խտակին վերայ կաւիճով կամ շարթական տառերով, որոնք, պէտք չէ մտնալ, պիտի ըլլան ձեռագիր: Տիպար բառէն առաջ ցոյց կը տրուի նախ պատկերը այն իրին որու գաղափարին ներկայացուցիչն է բառը: Աշակերտին՝ դասը կարգալ կը տրուի դասագրքին վրայէն կամ յատկապէս պատրաստուած մեծադիր տախտակներու վրայէ:

Տիպար բառերու ուսուցումը, դասագրքին մէջ կամ մեծադիր տախտակին վրայ, պէտք է մշտիւած ըլլայ ձեռագրով:

Երեք ամիսէն ետք ձեռագրի ուսման կը յաջորդէ տըպագրի ուսումը որ՝ նմանապէս՝ կ'աւանդուի մի եւ նայն տիպար բառերու միջոցաւ, հետեւելով այն կարգին որով ներկայացուեցան անոնք նախապէս աշակերտին: Տիպար բառը ցոյց կը տրուի ձեռագիր ու տպագիր դէմ առ դէմ. բաղդատութիւն մը բաւական կ'ըլլայ ըմբռնել տալու սանկին՝ նմանութիւններն ու տարբերութիւնները ձեռագրին տըպագրին, եւ այս վերջինը ճանչցնելու անոր:

Եւ որովհետեւ մէկ դասին մէջ կրնանք ներկայացնել առ նուազն երկու տիպար բառ տպագրերով, կարելի կ'ըլլայ երկու ամիսէն սորվեցնել տպագրին ալ ընթերցումը:

Ուրեմն հինգ ամսուան մէջ կը վարժուի տղան կարգալու ձեռագրին ու տպագրիը՝ պարզ տառերով: Բայց անոնց զլխագրերը տեսած չի պիտի ըլլայ դեռ: Եթէ երկու ամիս եւս յատկացնենք՝ անոնց զլխագրերուն ուսուցմանը, հանդերձ վարժութեամբ, ինը ամիսէն՝ նախապատրաստական երկու ամիսներն ալ հաշուելով՝ սորվեցուցած կ'ըլլանք կարգալ ընտանի խօսքեր ձեռագրով ու տպագրով միանգամայն, իրենց ամէն ձեւերուն տակ:

\* \*



ԳՐԵԼ. Նախապատասխան վարժուրիւնք, գծագրութիւն: — Բայց այս ինք ամսուան միջոցին՝ գրել ալ պիտի սորվի աշակերտը. եւ ա՛յս նպատակաւ էր մասնաւորապէս որ ձեռագրով սկսանք ընթերցման դասերը:

Տղան գործունի էակ մըն է. օր ըստ օրէ իր մէջ աճող ու մթերուող ուժը կ'արտայայտուի շարժումներով. շարժումը իր հոգեկան վիճակին ցոլացումն է. գործունէութեամբ է որ տղան կ'ստանայ գոհացում:

Տղան գործունէութիւնը կը յայտնուի՝ ի մէջ այլոց՝ նաեւ նկարելու գծագրելու բնագրով: Կարդալ սկսելէն շատ առաջ, խօսիլ սկսելուն պէս՝ տղան կը գծագրէ արդէն մարդ կամ անասուն: Նոյն իսկ տեսած եմ տղաքներ որոնք, դեռ այքը չի ձանչցած՝ գրքի մը մէջէն գծագրած են բաւերը բաւական նմանութեամբ:

Հոգեբանական պատճառ մը չի կայ որ մեզի արգելէ սկսիլ գրի ուսուցումը նոյն իսկ ընթերցանութեան առաջին դասին զուգընթաց: Ընդհակառակը, բնախօսական-հոգեբանական նոր յայտնութեանց նայելով՝ խօսելու եւ գրելու համար կարեւոր եղած շարժման կեդրոնները նոյն են ուղեղին մէջ: Եթէ՛ այդ կեդրոնը՝ կը թելադրէ մէկ կարգի շարժումները, միւսներն ալ կը թելադրէ անտարակոյս: Բառերն անգամ մը մտքին մէջ մուտ գանելէ ետքը, պէտք է որ ձեռքը թղթին վրայ փոխադրէ զանոնք: Եւ ձեռքը այս գործը չի կրնար կատարել մինչեւ որ հրահանգուած չըլլայ՝ աչքին ըմբռնած ձեւերը վերարտադրելու գրի կամ խիստ տարրական գծագրութեան մը միջոցաւ:

Աշակերտը՝ գրել սկսելէ առաջ՝ պէտք է գծական մի քանի նախապատրաստութիւններ կատարէ, ինչպէս որ՝ ընթերցանութեան դեռ չսկսած, կատարեց նախապատրաստութիւններ բերանացի կերպով, ու այս երկուքը կատարուելու են զուգընթացաբար, առաջին երկու ամիսներուն մէջ:

Աշակերտը ամենէն առաջ կը սորվի կէտ մը դնել, ուրիշ մըն ալ անոր վրան, տակը, ձախ կողմը, աջ կողմը:

Երբ երկու կէտեր դրած է իրարու տակ, եւ ուղիղ գծով մը կը միացնէ զանոնք՝ առաջ կուգայ ուղղաձիգ գիծ մը: Հորիզոնական կ'ըլլայ գիծը, եթէ՛ կէտերը դրուած ըլլան դէմ առ դէմ: Եւ եթէ՛ քառակուսաձեւ շարուած չորս կէտերէն երկուքը անկիւնագիծով մը միացնէ իրարու, շեղ գիծ մը կը կազմուի: Ուղիղ գիծը՝ իր երեք զիրքերուն մէջ՝ զուգորդուելով առաջ կը բերէ այլազան պզտիկ ձեւեր որոնք հետզհետէ գրի տարրերուն պիտի առաջնորդեն մանուկը:

Այս նախնական վարժութեանց համար, կրնան օգտիւ գործածուիլ քառանկիւնագիծ քարետախտակներ որոց վրայ քառակուսիները ունենան 5 միլիմ. կողմ:

Ընթերցանութեան մէջ հրահանգելու համար աշակերտը, նախ անոր վերլուծել տուինք խօսքերը իրենց ամենէն նախնական տարրերուն, այսինքն՝ ձայներուն ու յօդաւորութեանց: Զանի հրահանգելու համար գրելու մէջ, նախ վերլուծել պիտի տանք նոյնպէս գիրը՝ իր ձեւական տարրերուն. եւ յետոյ վերլուծու՞մը ընել պիտի տանք այն շարժումներուն զորս պէտք է կատարել գիրը առաջ բերելու համար: Այս նախապատրաստութենէն ետքը բուն գրին կրնանք անցնիլ հիմա:

Բայց եթէ՛ գիր մը, ամենէն առաջ, անջատ կերպով ներկայացուէր գրելու՝ գծաշարին վրայ միւս գրերուն հետ անոր ունեցած առնչութիւնը անտես պիտի մնար տղուն աչքին. եւ յետոյ, գործադրութեան ատեն, գծաշարին վրայ գրին պիտի տար այնպիսի դիրք մը որ իրը չէ. ուստի, առողջ բանը կը գրեմ՝ աշակերտաց աչքին դիմացը. դիտել ու գրունել տալով անոնց թէ՛ ա գիրը կը բաղկանայ երեք հատ ուղղաձիգ գծերէ եւ երեք հատ շեղ նրբագծերէ: Կամաց կամաց կը գրեմ՝ դարձեալ միայն ա գիրը՝ տղոց ուշադրութիւնը հրաւիրելով ձեռքիս շարժումներուն վրայ եւ երեք անգամ կրկնելով, դեպ ի վար, դեպ ի վեր:

Օգին մէջ իրենց ալ կրկնել կուտամ նոյն շարժումները, չափով, միասնաբար: Յետոյ առանձին առանձին, նոյնպէս

օգին մէջ: Երբ ձեռքի շարժումները կը ներշնչեն բաւական վստահութիւն, այն ատեն գրեւ կուտամ քարետախտակի կամ թղթի վրայ որոց գծաշարը ունենալու է 9-10 միլիմ. լայնութիւն:

Առու բառին վրայ զատ զատ տրովեցնելէ ու մշակելէ ետքը միւս առերտն ալ գրութիւնը, գրեւ կուտամ բառը ամբողջ:

Դպրոցական առաջին տարւոյն մէջ, գրի ուսուցման նըպատակը չի պիտի ըլլայ գեղագիրներ պատրաստել: Ուսուցիչը պիտի ձգտի որ իր սանիկը ընթեռնելի կերպով մը վերարտադրէ բառեր եւ նախագատութիւններ: Այս վերարտադրութիւնը կրնայ ըլլալ ընդօրինակութեամբ, գրուցագրութեամբ եւ կամ յիշողութեամբ:

Երբ տղան կ'սկսի խօսքեր գրել, անոր ուշադրութիւնը կը դարձուի ո՛չ միայն գրին վայելչութեանը, այլ եւ ուղղագրական մանրամասնութեանց, ինչպէս կէտագրութեանց, շեշտերու, պարօղկներու: Դիտել կը տրուի անոր թէ վերջակէտերէ ետք կամ պարբերութեանց սիլլըբը գլխազիր կը գործածուի: Եւ որովհետեւ գրի ուսուցումը ընթերցանութեան զուգընթաց ըլլալով, գլխազրերու ալ արդէն վարժուած պիտի ըլլայ աշակերտին ձեռքը, ուրեմն դժուարութիւն չի պիտի կրէ ան՝ ուղղագրական այս պահանջները լըրացնելու. պահանջներ որոց զանցառութիւնը կրնայ իր բարոյական ձախող ազդեցութիւնը ունենալ ավելի նկարագրին կազմութեանը մէջ: Քանի որ նկարագիր բուսածը առաջ կուգայ բազմաթիւ մանր սպաւորութեանց, զգացողութեանց եւ գործերու երկար հիւսքէ մը, շա՛տ կանուխէն սկսելու ենք՝ հոգատար ու խնամածու ընել աշակերտը իր գործերուն. ներելու չենք անոր ձարտակ երես մը գիր՝ անուշազիր մնալով կանոնաւորութեան էական պայմաններուն եւ գրի մաքրութեան ու պայծառութեան անհրաժեշտ պէտքին:

Ներելու չենք դարձեալ որ տղան՝ գրելու ատեն՝ ինքզինքը յարմարցնելու համար գրասեղանին՝ ամենէն հակա-

ռողջ դիրքերը տայ իր մարմնոյն զանազան մասանց եւ տետրակին: Աշակերտաց կարճատեսութիւնը, գլխու եւ ուսի խոտորմունքը, ողնաթեքութիւնը, մեծ մասամբ, վերագրելի են անյարմար դիրքերու զորս առաջ բերող պատճառք մէկէ աւելի են, զոր օրինակ՝ գրասեղանաց տճեւութիւնը եւ հակեալ դիրքը զոր կուտանք գրին:

Վիճակագրութիւնը մատնանիշ ըրած են հակեալ գրին յառաջ բերած մարմնական խաթարումները եւ ուղիղ գրին առաւելութիւնները: Հակեալ գիրը՝ ուրիշ պայմանները նոյնը մնալով՝ ամէն տեղ ալ առաջ բերած է գլխի եւ ուսերու խոտորում՝ բազմաթիւ աշակերտաց վրայ: Ի Միւնիխ 5948 աշակերտներու վրայ եղած քննութեանց արդիւնքէն հասկըցուած է թէ, գլխու եւ ուսերու ուղիղ գիրք ունեցողներ աւելի բազմաթիւ են ուղիղ գրի աշակերտաց մէջ՝ դպրոցական առաջին չորս տարիներու միջոցին ալ: Այս՝ վիճակագրութիւնը տարակոյս չեն թողած թէ՛ 1<sup>0</sup>. գլխու եւ ուսերու միասնական ուղիղ գիրքը աւելի յաճախադէպ է ուղիղ գրի աշակերտաց վրայ՝ դպրոցական ամէն տարիներուն մէջ. 2<sup>0</sup>. աչքերուն հեռաւորութիւնը տետրակէն՝ աւելի համաձայն կը մնայ ողջպահիկ կանոնաց՝ ուղիղ գրի աշակերտաց վրայ. մինչդեռ հակեալ գրի աշակերտք կ'ստիպուին աւելի մօտեցընել իրենց աչքը տետրակին. 3<sup>0</sup>. կարճատեսութիւնը՝ դպրոցական առաջին տարիին մէջ գրեթէ հաւասար թէ՛ ուղիղ եւ թէ՛ հակեալ գրի աշակերտաց վրայ՝ հետզհետէ՝ կ'աւելնայ հակեալ գրի հետեւողներուն քով, ու չորրորդ տարիին մէջ մինչդեռ հակեալ գիրը կուտայ 14 0/10 կարճատես, ուղիղ գիրը կուտայ 8,8 0/10 կարճատես:

Այս ամենէն կը հետեւի ուրեմն թէ ուղիղ գիրը՝ առողջապահական տեսակէտով՝ նախամեծարութիւն պէտք է ունենայ հակեալ գրին վրայ: Ուղիղ գիր, ուղիղ տետրակ, ուղիղ մարմին բանաձեւը ի մտի ունենալու ենք միշտ:

Բայց ուղիղ գիրը առողջապահութեան չէ՛ միայն որ կը նպաստէ. ուրիշ առաւելութիւններ ալ կ'ընծայէ. նախ աւե-

լի զիւրաւ կը կարգացուի, յետոյ աւելի համաձայն է մանկական բնագոյներուն:

Գրի եւ ընթերցանութեան ուսուցման եղանակին վրայ այս ընդհանուր տեսութիւնները ցամաք պիտի մնային, եթէ չի ըծորդուէին օրինակի մը հետ. ուստի կարեւոր կը համարիմ ներկայացնել ձեզի օրինակելի դաս մը ընթերցման եւ գրի:



### Ն Ա Խ Ա Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ա Կ Ա Ն Վ Ա Ր Ժ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

#### Վերլուծել

Նպասակ. — Մենք հիմա պիտի գրենք ու կարգանք խօսքեր ու բառեր զոր արդէն կը ձանձնաք դուք ամենքդ ալ:

1<sup>0</sup> Ի՞նչ կը ներկայացնէ այս պատկերը. — Զաղացք մը կը ներկայացնէ: — Զաղացքին վերեւէն, տեսէ՛ք, ի՞նչ կը վազէ. — Առու մը կը վազէ: — Առուն ի՞նչ օգուտ ունի Զաղացքին. — Առուն ջուրովը կը բանի Զաղացքը: — Զմեռը ինչո՞ւ չի բանիր Զաղացքը. — Առուն ջուրը ձմեռը կը սառի, անոր համար: — Ի՞նչ տնկած են առուն եզերքը. — Մառեր տնկած են: — Ինչի՞ ծառեր են անոնք. — Ուստի ծառեր են:

Այս խօսքերը միարեւրան եւ առանձին առանձին կրկնել տալէ ետք աշակերտաց, կ'աւելցնէ ուսուցիչը.

— Հիմա մէյ մըն ալ պիտի կրկնենք: Կա՛ւ:

2<sup>0</sup> Բառերը, վանկերը եւ ձայները պիտի սրտչենք հիմա եւ պիտի գրենք զանոնք:

Կը գրեմ Առու մը կը վազէ խօսքը: Տեսէ՛ք. — — — : Ո՞վ կրնայ գալ ինձի պէս գրել տախտակին վրայ: — Ե՛ս: — Գրէ՛. — — — : Շատ լաւ: Ուրիշ ո՞վ կրնայ գրել. գո՞ւն, Արչակ. եկուր գրէ՛. — — — : Լաւ:

Ըսէ՛ք առաջին բառը. Առու: Նորէն, ծանր ծանր. որոշ որոշ. ուժով, կամաց: Քանի՞ վանկ կայ առու բառին մէջ. —

Երկու: Ի՞նչպէս կը գրենք այս երկու վանկերը: Այսպէս, նայեցէ՛ք. — | : Ո՞րն է առաջին վանկը. — ա: Ո՞րն է երկրորդը. — ուր: Երկու վանկերը զատ զատ յտակ կերպով կ'արտասանեմ. ա- ուր: Ամէն մէկ վանկը ըսած ա- տեննիդ սեղանին զարկէք ձեռքով. ա- ուր: Ո՞րն է առաջին վանկը. ո՞րն է երկրորդը: Եկո՛ւր, Սիմոն, ցուցո՛ւր առաջին վանկը: Դուն, Սրբուկ, ցուցո՛ւր երկրորդ վանկը: Երբ ձեռքս վեր առնեմ, արտասանեցէ՛ք առաջին վանկը, եւ երբ ձեռքս վար առնեմ, արտասանեցէ՛ք երկրորդ վանկը: Ըսէ՛ք վերջին վանկը: Ըսէ՛ք առաջին վանկը: Ըսէ՛ք երկու վանկերը, իրարու ետեւէ:

Առաջին վանկը արտասանեցէ՛ք. ա՛: — Ո՞րն է երկրորդ վանկին մէջ ձայնաւորը. — ո՛ւ: Ո՞րն է բաղաձայնը. — ո ո՛: Անգամ մըն ալ. — ո ո՛: Արտասանեցէ՛ք երկրորդ վանկին ձայնաւորը. — ո՛ւ: Արտասանեցէ՛ք բաղաձայնը. — ո ո՛: Բաղաձայնն ու ձայնաւորը իրարու ետեւէ արտասանեցէ՛ք առանց կենալու: Ուժով մը ըսէ՛ք բաղաձայնը. ուժով, աւելի՛ ուժով, աւելի՛ կամաց: Ըսէ՛ք առաջին առաջին վանկը: Ըսէ՛ք երկրորդ վանկին ձայնաւորը, աւելի կարճ, աւելի՛ շուտ: Ըսէ՛ք բաղաձայնը, եւ անկէ ետք շուտ մը ձայնաւորը. — ո ու: Հիմա պիտի գրենք ամբողջ բառը: Տեսէ՛ք. — | . . : Ի՞նչ է այս առաջին կէտը. կարդացէ՛ք. — ա՛: Ի՞նչ է այս երկրորդը. երրորդը՞: Կարդացէ՛ք առաջին վանկը. քանի՞ ձայնաւոր կայ անոր մէջ: Կարդացէ՛ք երկրորդ վանկը. քանի՞ ձայնաւոր կայ անոր մէջ. քանի՞ բաղաձայն: Երկու վանկը մէկտեղ կարդացէ՛ք, զատեցէ՛ք, միացուցէ՛ք:

Վերոյիշեալ ներածիչ խօսակցութենէն կ'առնենք ուրիշ բառը եւ կը մշակենք զայն ( — | . . ) մի եւ նոյն կերպով:

Ո՞րն է այս բառին մէջ առաջին ձայնաւորը. մտիկ ըրէ՛ք. ո՛ւ ոի: Ո՞րն է երկրորդ ձայնաւորը. աղէկ մտիկ ըրէ՛ք. ո ո ոի: Ո՞րն է բաղաձայնը. — ո ո՛: Ըսէ՛ք առաջին ձայնաւորը. — ո՛ւ: Արտասանեցէ՛ք վերջին ձայնաւորը. — ի՛:

Արտասանեցէ՛ք բաղաձայնը. — ո ո' : Ամէնը մէկ ըսէ՛ք. — ու-ոի : Շուա շուա ըսէ՛ք. — ուոի : Մէկ անգամէն. — ուոի :

Եթէ ձևերը բառը ի նկատ առնենք, կ'ունենանք որ վանկը :

Սորված կ'ըլլանք, ուրեմն, ոռ, ոի, որ վանկերը՝ ա- ոռ, ուոի, ձևերը բառերէն որոնք մուտ գտած են խօսակ- ցութեան մէջ :

3<sup>0</sup> Ի՞նչ բառեր լուծեցինք. — Առու, ուոի, ձևերը :

Ո՞րն է առու բառին մէջ բաղաձայնը : Ուոի բառին մէջ բաղաձայնը ո՞րն է : Միասին կապեցէ՛ք, ի՞նչ կ'ըլլայ ո ո' . . ու. — ոռ : ո ո' . . . ի. — ոի : ո ո' . . . ը. — որ : ա . . . ո ո'. — առ : ու. . . ո ո'. — ուո :

4<sup>0</sup> Անգամ՝ մըն ալ ըսէ՛ք. առու եւ ուոի բառերուն բա- ղաձայնը : Ի՞նչ է առու բառին երկրորդ վանկը. — ոռ : Ուոի բառին երկրորդ վանկն ի՞նչ է. ոի : Ռու եւ ոի վան- կերուն մէջ ի՞նչ բաղաձայն կայ : Երբ կ'ըսեմ Ռուքեկ, ի՞նչ կը ըսէք առաջին վանկին մէջ : Երբ կ'ըսեմ առի, ի՞նչ կը ըսէք երկրորդ վանկին մէջ : Ծառ, թառ, սառ բառերուն մէջ՝ ի՞նչ կը ըսէք առաջին բաղաձայններէն ետքը :

5<sup>0</sup> Ի՞նչպէս կը կարդացուին       ,       ,        :

Ըսէ՛ք բառեր որոնք սկսին ոռ վանկով. — Ռուքեկ, Ռուս : Գտէ՛ք բառեր որոնք վերջաւորին ոի վանկով. — կը վառի, կը սառի, եւ սառի . . :

Գտէ՛ք բառ մը որ ուռ վանկով սկսուած ըլլայ. — ուռ- կան : Փռռ, գռռ, դռռ, բառերը ինչպէ՞ս վերջացած են :

Արդիւնք. — Աշակերտք բառերը կ'որոշեն. կրնան գա- նոնք վանկերու բաժնեկ. վանկերը կը լուծեն բաղաձայններու եւ ձայնաւորներու : Կը ձանչնան նոյն ձայնաւորը եւ նոյն բաղաձայնը տարբեր բառերու մէջ :

Կարգալ ու գրել սառ բառը.

Նպասակ. — Գիրերու միջոցաւ բառեր պիտի գրենք ու կարդանք, ինչպէս որ տետրակներու եւ գիրքերու մէջ կը կարդան ու կը գրեն :

Ի՞նչպէս կը արուի աշակերտաց թէ        նշանը անբա- ւական է ներկայացնելու սառ բառը :

Ձմեռը ի՞նչ կ'ըլլայ մեր սոռուն, Արշակ. — Ձմեռը մեր սոռուն սառ կը կապէ :

Կը գրենք ուրեմն.



Ո՞րն է մեր բառը : Ո՞րն է սառ բառը : Այս երկու բա- ռերը կը նմանին՝ն ձեւով այս գրուածքին մէջ. — Այո՛. եր- կուքն ալ երեքական կէտ ունին : — Նոյն կերպով կ'ար- տասանուին. — Ո՛չ : — Ինչո՞ւ սխալեցաւ Յովսէփի եւ սառ բառին սեղ մերը ցուցուց. — Երկուքին ալ գրուածքին ձեւը նման է, անո՛ր համար :

Եթէ դրատախտակին վրայ գրուին ուրիշ նման նշաններ որոնք տարբեր ձայներ ներկայացնեն, աշակերտները պիտի հասկնան անմիջապէս անոնց ձայնական տարբերութիւնը՝ երբ առաջարկուի իրենց կարգալ զանոնք. իւրաքանչիւրը նոյն նշանը տարբեր կերպով պիտի կարդայ :

Հետեւանք. — Ուրեմն, բառ մը պէտք է այնպէս մը գրել որ ամէն մարդ ալ նոյն կերպով կարդայ զայն :

\* \*

Ա. Կարգալ

Նպասակ. — Պիտի կարդանք սառ բառը :

1<sup>0</sup> Սառ բառը կը կապակցենք ջաղացքին վրայ եղած խօ- սակցութեան հետ : — Ձմեռ ժամանակ ջաղացքը ինչո՞ւ չի բանիր. — սառ կը կապէ. — կը գրեմ՝ սառ բառը, այս- պէս. սառ :

20 Պիտի կարգանք սառ բառը: Որոշ կերպով արտասանեցէք: Դուռն, Ազնիւ, ըսէ առաջ. դուռն ըսէ հիմա, Պետրոս: Ամէն մէկ մասը երկար արտասանեցէ՛ք. քանի՞ մաս ունի: Աղէկ մտիկ ըրէ՛ք առաջին բաղաձայնը, ձայնաւորը, վերջին բաղաձայնը:

Արդիւնք. — Այս բառը ունի բաղաձայն մը, ձայնաւոր մը եւ դարձեալ բաղաձայն մը: Առաջին բաղաձայնն է *u* ու՛. ձայնաւորն է *ա*. վերջին բաղաձայնն է *ն* ո՛:

Ամենէն առաջ պիտի գրենք ինչպէս որ սորված ենք. . . . եւ ասոնց տակ կը գնենք գիրերը  $\frac{u}{u} \frac{a}{a} \frac{n}{n}$ :

30 Հիմա գրատախտակին վրայ, զատ տեղ մը, կը գրեմ սառ. չարժական գրերով ալ կը կազմեմ սառ: Ամենէն առաջ երեք կէտով գրեցինք. սրովհետեւ բառը երեք մաս ունի: Տեսէ՛ք այս տախտակները կը զատեմ. երեք հատ են անոնք ալ:

Քանի՞ բաղաձայն կայ այս բառին մէջ. — Արտասանեցէ՛ք առաջինը . . . : Արտասանեցէ՛ք վերջինը . . . : Ձայնաւորը արտասանեցէ՛ք . . . : Առաջին բաղաձայնը արտասանեցէ՛ք երկարելով. չարունակեցէ՛ք ձայնաւորով . . . աւարտեցէ՛ք վերջին բաղաձայնով: Յուցուցէ՛ք *u* ու՛, *a* յուցուցէ՛ք *ա*. *u* յոյց տուէ՛ք *ն* ո՛:

Ուսուցիչը կրնայ յաջողապէս գործածել չարժուն գիրերը, որոնք ձեռագիր պիտի ըլլան, աւելի լաւ ձանջնելու համար տղոց՝ բառին գիրերը: Սառ բառին չարժուն տառերը կը բաժնէ տղոց եւ կը հարցնէ. ո՞վ ունի *u* ու՛. ո՞վ ունի *ա*: Ծարժուն գիրերը իրար կը խառնէ եւ կ'առաջարկէ գտնել *ա* եր, *ո* եր եւ *ս* եր:

Բառը կարգաւ կուտայ: Գիրերը իշարմէ կը բաժնէ. զատ զատ կը կարգացնէ զանոնք. նախ՝ կամաց կամաց. ետքը աւելի շուտ. մէ՛կ արտասանութեամբ. *u* . . . *ա* . . . *ն*, *սառ*. *u* . . . *ա*, *սա*. *u* . . . *ա*, *սա*. *u* . . . *ա*, *սա*. *u* . . . *ա*, *սա*. *u* . . . *ա*, *սա*. *u* . . . *ա*, *սա*.

Սառ բառին մէջէն կը վերցնեմ *ն*. ի՞նչ կը մնայ. — *սա*: կը վերցնեմ գիր մըն ալ. *ա*. ի՞նչ կը մնայ. *ս*:  
40 Գրատախտակին վրայ կատարելի վարժութիւնք.

Ա Ա Ռ

Ա, ԱԱ, ԱԱԱ, ԱԱԱԱ.

Ռ, Ա, ԱԱ, ԱԱԱ.

Կարգացէ՛ք կարգաւ. *ցուցուցէ՛ք u, a, n, an, ua, au, սառ*:

50 Դասադրքին մէջ կատարելի վարժութիւնք: Կարգացէ՛ք վերի բառը պատկերին տակ (*սիպար բառը*). Կարգացէ՛ք նոյն երեսի միւս բառերը:

Արդիւնք. — Տղաքը կը ձանջնան ձայնական երեք նշանները. *u, a, n*. եւ անոնցմով կրնան կարգաւ *սա, սա, սառ, առ* բառերը:

Բ. Գրել.

Նպասակ. — Պիտի սորվինք գրել սառ բառը:

10 Մինչեւ հիմա զիծերով, կէտերով գրեցինք: Բայց մեծ մարդիկը այսպէս չեն գրեր: Անոնք կը գործածեն չարժուն գիրերուն ու սեւ տախտակի գրերուն պէս գիրեր:

Սառ պիտի գրեմ տախտակին վրայ, նայեցէ՛ք:

20 Ահաւասիկ բառը. սառ: Քանի՞ գիր ունի: Ի՞նչ է առաջին գրին ձայնը. երկրորդինը՞, եւ այլն: Ամէն մէկ գիրը զատ զատ պիտի գրեմ: Կարգացէ՛ք այս առաջին գիրը. — *u* ու՛: Երկրորդը՞. — *ա*: Երրորդը՞. — *ն*:

Հիմա դուք ալ պիտի սորվիք գրել այս բառը. անոր մէջ ո՞րն է ամենէն դիւրին գիրը. — *u*: Այո՛, ամենէն դիւրին գիրը ան է: Դուք արդէն անոր մասերը գծել սորված էք: Տեսէ՛ք ի՛նչպէս կը գրեմ. վերեւ վար, վարեւ վեր. նորէն՝ վերեւ վար, վարեւ վեր: Անգամ մըն ալ կը գրեմ. մեկ, երկու, երեք, չորս:

Դուք ալ ինձի հետ գրեցէ՛ք հիմա: Առէ՛ք ձեր մատիտները: Վերցուցէ՛ք ձեռքերնիդ: Օղին մէջ գրեցէ՛ք: Ահկ, երկու, երեք, չորս: Ինձի հետ ըսէ՛ք եւ գրեցէ՛ք տետրակի վրայ. մէկ, երկու, երեք, չորս: Քանի՞ անգամ շարժեցիք մատիտը: Առջի երկու անգամուն ի՞նչ գրուեցաւ. մեկ ըսած ատեննիդ հաստ թէ՛ բարակ գրեցիք. երկու ըսած ատեննիդ ի՞նչ գրեցիք: Երեք չորս չափերով ի՞նչ գրեցիք:

Կ'աւրեմ՝ ս գիրը: Հիմա դուք մտքով պիտի գրէք: Առաջ օղին մէջ գրեցէ՛ք՝ չափերը ըսելով. մէկ, երկու, երեք, չորս: Դուն, Գէորգ, մինակդ ըսէ ու գրէ: Դուն ալ, Բարսեղ: Հիմա ամենդ մէկ գրեցէ՛ք տետրակի մէջ. ուշադրութի՛ւն:

Տետրակները առէ՛ք.

Գրի նախապատրաստական վարժութեանց — գծագրական դասերուն — մէջ պէտք է սորված ըլլան աշակերտք թէ ի՛նչպէս բռնելու են տետրակը եւ մատիտը: Նոյնպէս, պէտք է սորված ըլլան թէ ի՛նչպէս բռնելու են իրենց մարմինը ու թեւերը՝ գծելու ատեն: Բայց գրաՎարժութեան ատեն եւս աւելորդ չըլլար յիշեցնել աշակերտաց այս կէտերը:

Մատիտները առէ՛ք: Մատիտին ծայրը գրէ՛ք տողաւորին ( ===== ) երկրորդ գծին վրայ՝ տողին սկիզբը: Գրեցէ՛ք, իմ սալիք չափերուն հետեւելով. մեկ, երկու: Եղա՞ւ ստիկա: Ուրեմն պիտի ամբողջացնենք: Հիմա, մատիտին ծայրը գրէք տողաւորի երկրորդ գծին վրայ ձեր գրածէն քիչ մը հեռու. երեք, չորս: Ի՞նչ գրեցիք: Լաւ: Տետրակները նայինք: սխալները պիտի ուղղենք գրատախտակին վրայ:

Յետամնաց տղաքը մասնաւոր խնամքի առարկայ պէտք է ըլլան:

Ձեւերը գննել տալէ ետք, չափով գրել կը տրուի նաեւ ա եւ ո գիրերը:

Յ՞Ո Սա, աւ, առ, առ. զուգորդութիւնները գրատախտակին վրայ կը գրէ ուսուցիչը եւ կարգացնել կուտայ աշա-

կերտաց: Յետոյ գրել կուտայ աշակերտաց եւ նորէն կը կարգացնէ իրենց գրածը:

4<sup>0</sup> Քանի՞ գիր կրնաք գրել: Քանի՞ հատ հաստ գլիծ կայ ս ին մէջ. քանի՞ հատ բարակ գլիծ կայ: ա ին մէջ: ո ին մէջ:

5<sup>0</sup> Գրքին բառերը կը կարդան աշակերտք: Կ'ընդօրինակեն զանոնք որոնք ձեռագիր պէտք է ըլլան: Զրուցագրութեամբ կը գրեն բառերը: Յիշողութեամբ կը գրեն:

Արդիւնի. — Աշակերտք սորված են ընդօրինակութեամբ, զրուցագրութեամբ եւ յիշողութեամբ գրել տիպար բառ մը. սառ: Կրնան գրել ս, ա, ո գիրերը:

\* \* \*

Ինը ամիսէն, կամ՝ դպրոցական տարիէ մը գրեթէ, մանուկը՝ Ծաղկոցին մէջ կ'աւարտէ ընթերցանութեան առաջին գիրքը. եւ բաւական պաշարով մը կը մտնէ Տարրական Դասընթացքը: Այնտեղ եւ յաջորդ դասընթացքներուն մէջ, մինչեւ Բարձրագոյնը, պիտի ունենայ աշակերտը ընթերցանութեան գրքեր:

Պէտք է քննենք հիմա թէ ի՛նչ պիտի ըլլան այդ տարիներուն մէջ ալ ընթերցարաններուն նիւթերը եւ ի՛նչպէս պիտի մշակուին:

\* \* \*

Բ.

Ա. Իրագնեսական եկարագրական նիւթեր

Ցոյց տուինք արդէն թէ զննական ուսուցման նպատակն է. — Ա. Արտաքին աշխարհի իրերը ճիշդ ըմբռնելու կարող ընել տղան, այնպէս որ կահաւորի միտքը բազմաթիւ մտապատկերներով եւ խորհուրդներով որոնք ըլլան յստակ, որոշ: — Բ. Ի վիճակի գնել տղաքը ուղիղ կերպով բացատրելու՝ բերանացի կամ գրաւոր՝ սոյն մտապատկերներն ու խորհուրդները:

Այս կրկին նպատակին հասնելու համար, պէտք է տը-

դուն ներկայացնել առարկաներ — ճարտարութեան ու ար-  
ուեստի արտայայտութիւններ — , եւ իրողութիւններ — բը-  
նական եւ ընկերական երեւոյթներ: Եւ Ընթերցարանն ալ  
այս ծրագրով պատրաստուած ըլլալու է:

Սոյն ծրագրին նիւթերը կը բաժնուին երկու կարգի.  
միջոցի վերաբերող եւ տեղողութեան վերաբերող նիւթեր:  
Առաջինները կը ճանչնանք նկարագրութեամբ. երկրորդները՝  
գլխադրութեամբ (narration): Ընթերցարանը պիտի պարու-  
նակէ ուրեմն նկարագրական նիւթեր եւ դիպագրական նիւ-  
թեր: Երկուքն ալ կարեւոր են: Նկարագրականները կը մը-  
շակեն դատողութիւնը. գլխադրականները՝ երեւակայու-  
թիւնը եւ սիրաբ: Երկուքն ալ կը վարժեցնեն բացատրու-  
թեան, ինչ որ լեզուին բուն նպատակն է:

Ընթերցարանին ծրագիրը՝ երեք դասընթացներուն մէջ՝  
պէտք է բաժնել այնպէս որ ծանօթութեանց շրջանակը՝ մի  
եւ նոյն նիւթերուն վրայ՝ հետզհետէ աւելի ընդլայնուի:

1. Տարրական Դասընթացի նիւթ

ա. ԴՊՐՈՅ. իրեր եւ մարդեր:

բ. ՏՈՒՆ. իրեր, մարդեր եւ կենդանիներ:

գ. ԵԿԵՂԵՑԻ. իրեր, մարդեր:

դ. ՇՐՋԱԿԱՅԻ. իրեր, բոյսեր, կենդանիներ եւ մարդեր:

Այս նիւթերու մշակութեան համար հարկ է կատարել  
չորս կարգի հրահանգ որոյմէ առաջին երկուքը վերլուծա-  
կան, իսկ վերջի երկուքը համագրական են:

1<sup>0</sup> Առարկան ֆնկեղ սաչ ու նկարագրեղ. — Ուսուցիչը  
ըստ արժանւոյն կատարելու համար այս նկարագրութիւնը,  
բուն առարկան կը դնէ աշակերտաց արամագրութեանը տակ.  
Եթէ անհնար է այս բանը, անոր տեղ մեծագիր աղւոր  
պատկեր մը ցոյց կուտայ: Պայծառ ու որոշ հարցումներով  
տղոց ուշադրութիւնը կը դարձնէ այն ամէն մասանց վրայ  
զորս կ'ուզէ ծանօթացնել անոնց: Որոշ հարցումներ կ'ուզէ  
աշակերտաց, որպէս զի գիտողութեան վարժեցնէ զանոնք  
եւ անոնց ըմբռնումի կարողութիւնը սրէ: Կը պահանջէ ա-

շակերտներէն որ առանց սխալի բացատրեն ամբողջ խօսքե-  
րով՝ ինչ որ ըմբռնած են:

2<sup>0</sup> Նախորդ հրահանգը բերանացի կրկնել սաչ. — Որ-  
պէս զի աշակերտները կարող ըլլան դիւրութեամբ գործա-  
ծել այն մտապատկերները որոնք կը կազմուին իրենց մտքին  
մէջ, պէտք է՝ դիտուած իրը կամ պատկերը պահելէ յետոյ՝  
կրկնել տալ անոնց այն նկարագրութիւնը որ եղած է առա-  
ջին հրահանգին մէջ: Եթէ մոռցած են այս կամ այն յատ-  
կութիւնը, այս կամ այն մանրամասնութիւնը, զայն յիշեցը-  
նելու համար, բաւական է վայրկինապէս անոնց աչքին ե-  
րեցնել առարկան զոր կը նկարագրեն: Ուսուցիչը այս հը-  
րահանգն ալ, առաջնոյն պէս, կը կատարէ հարցումներու  
միջոցաւ:

3<sup>0</sup> Փնտել սաչ նկարագրուած առարկայի նման առար-  
կաներ. — Այս հետազոտութեան մէջ, ուսուցիչը իբր չու-  
կէս կ'ունենայ այս կամ այն յատկութիւնը առարկային որ  
նկարագրուեցաւ դասին սկիզբը. աշակերտաց գտնել կուտայ  
կարգ մը առարկաներ որոնք այն յատկութիւնը կրեն. այդ  
առարկաները անուանել կուտայ անոնց, եւ կազմել կուտայ  
պզտիկ նախադասութիւններ որոնք, ամէնն ալ, պիտի ու-  
նենան մի եւ նոյն բայը, մի եւ նոյն ստորոգելին, մի եւ նոյն  
խնդիրները: Այս կերպով, տղաք ի հանդէս կը բերեն իրենց  
ծանօթութեանց ամբողջ պաշարը, իրենց իմացականութիւնը՝  
զրգուելով՝ կը զարգանայ եւ աւելի վառ կ'ըլլայ. տակաւ  
առ տակաւ կը սորվին տիրաբար գործածել այն պատկերնե-  
րը որոնք կը ծնին իրենց մտքին մէջ: Այս հրահանգով, ու-  
սուցիչը առիթ կ'ունենայ ստուգելու թէ՛ աշակերտք ճիշդ  
կերպով ըմբռնած են զանազան յատկութիւնները. անոնց  
ուշադրութիւնը կը դրուէ այս կամ այն կարեւոր մանրա-  
մասնութեան վրայ. կազմել կուտայ նախադասութիւններ  
այս կամ այն բառին կամ ստացուածքին վրայ զոր՝ արտա-  
սանութեան կամ ուղղագրութեան տեսակէտով՝ կրնայ կրկն-  
նել տալ շատ կամ քիչ անգամ:

4<sup>0</sup> Յիշողութեամբ, ինչպէս նաեւ գրով ու ընթերցմամբ, վերաբարեւել սաշ երրորդ հրահանգին բառերն ու նախադասութիւնները. — Փնտռելով առաջին հրահանգին մէջ ուսումնասիրուած առարկային նման առարկաներ, մասնաւորապէս նոյն տեսակէ առարկաներ, երբեմն ալ այնպիսի առարկաներ որ անոր հետ հասարակաց հանգամանք մը ունենան, կը բերուինք այդ առաջին առարկային շուրջը խմբել ուրիշ կարգ մը բառեր (ակոռն, ամսական, քայ): Բառերու այս խումբերը պէտք է ուսուցուն, կրկնուն մինչեւ որ աշակերտները հիմնապէս իւրացնեն զանոնք: Այս բառերով աշակերտները կը կազմեն նախադասութիւններ որոնք քերականապէս նոյն կազմութիւնը կ'ունենան (ունենալով նոյն բայը, նոյն խոնդիրները) եւ զորս պէտք է կրկնեն: Տարրական դասընթացքին մէջ, այս նախադասութիւնները պարզ պիտի ըլլան՝ եզակի եւ յոգնակի ձեւերով:

2. Միջին դասընթացքի նիւթ

Միջին դասընթացքի մէջ ալ Տարրական Դասընթացքի նիւթերը պիտի տանք, բայց՝ ինչպէս ըսինք՝ աւելի ընդլայնուած: Այս նիւթոց մշակութեան համար ալ ի զործ կը դըրուին նախորդ չորս կարգի հրահանգները՝ քիչ բարեփոխութեամբ.

1<sup>0</sup> Աւելի մանրամասն քննել տալ ու նկարագրել առարկան զննական մեթոտով:

2<sup>0</sup> Բերանացի կրկնել տալ, առանց զննական միջոցներու, եղած նկարագրութիւնները:

3<sup>0</sup> Նմանօրինակ բազմաթիւ առարկաներ փնտռել տալ եւ գործածել քերականական դէմքեր, ժամանակներ, կրաւորական ձեւեր, սեռի եւ բնութեան խնդիրներ, պարագայական խնդիրներ:

4<sup>0</sup> Նախ բերանացի, յետոյ գրով եւ ընթերցմամբ վերաբարեւել տալ յողուածոյ նախադասութեան այլ եւ այլ ձեւերը:

3. Բարձրագոյն դասընթացքի նիւթ

ա. ԳԱՐՈՒՆ. դպրոց, եկեղեցի, բոյսեր, կենդանիներ, մարդեր, պարտէզ, ընդհանուր երեւոյթ գարնան:

բ. ԱՄԱՌ. հայրենի տուն, եկեղեցի, բոյսեր, կենդանիներ, մարդեր, ընտանիք, մարդագետին, ընդհանուր երեւոյթ ամրան:

գ. ԱՇՈՒՆ. հայրենի տուն, եկեղեցի, բոյսեր, կենդանիներ, մարդեր, մշակի զբաղմունք, անտառ, ընդհանուր երեւոյթ աշնան:

դ. ՁՄԵՌ. անական իրեր, բոյսեր, կենդանիներ, մարդեր, արհեստաւորի զբաղմունք, դետ, ընդհանուր երեւոյթ ձմրան:

Այս դասընթացքի նիւթերու մշակութեան համար պիտի կատարուին հետեւեալ հրահանգները.

1<sup>0</sup> Իրերը մանրամասն կերպով քննել տալ ու նկարագրել զննական մեթոտով:

2<sup>0</sup> Նախորդ հրահանգը բերանացի կրկնել տալ առանց զննական միջոցներու.

3<sup>0</sup> Ընթերցման հրահանգներ եւ գրաւոր հրահանգներ. — Ա. Բերանացի եղած նկարագրութիւնները կարգաւ գրքին մէջէն. — Բ. Ամենէ պարզ նկարագրութիւնները ընդօրինակել՝ ուշադիր ըլլալով ուղղագրութեան եւ կէտադրութեան:

4<sup>0</sup> Ընթերցման հրահանգներ, գրքին մէջէն տիպար պարբերութեանց ընթերցում (խնձորեկին ծառ մըն է որ խնձոր կուտայ. — Սալորեկին ծառ մըն է որ սալոր կուտայ. — Որքանուկը քուշի մըն է որ խաղոյ կուտայ, եւայլն):

5<sup>0</sup> Բերանացի հրահանգներ, այս պարբերութեանց վերաբերեալ բացատրութիւնք:

6<sup>0</sup> Գրաւոր հրահանգներ, ընդօրինակութիւն տիպար պարբերութեանց եւ կազմութիւն նմանօրինակ պարբերութեանց:

Պարագայից համեմատ, զննական կերպով պէտք է համառօտիւ ուսումնասիրել այլազան ձեւերն երկու նախադասութիւններէ բաղկացեալ պարբերութեանց: Բայց առանց անազարեւու, բազմաթիւ հրահանգներ ընել տալու է աշակերտաց՝ իւրաքանչիւր ձեւի վրայ, մինչեւ որ կատարելապէս իւրացնեն զայն:



Սոյն տիպար պարբերութեանց մէջ գործածուած բայի ժամանակաց ուսումնասիրութիւնն ալ ընելու է՝ նոյնպէս զննական կերպով, եւ հրահանգներ տալու է անոնց վրայ:

\* \* \*

Բ. Դիպագրական զննական ուսուցումն

Ինչ առնչութիւն պիտի ունենան նկարագրական այս նիւթերը այն դիպագրական (narratif) նիւթերուն հետ որոնք վազընթացաբար մուտ պիտի գտնեն ընթերցանութեան դասադրքին մէջ:

Այս հարցումին երեք կերպով կարելի է պատասխանել. ա. — Նկարագրական ու դիպագրական նիւթերը իրարմէ անկախ ըլլալու են բոլորովին. բ. — Դիպագրական նիւթերը ստորակարգուելու են նկարագրականներուն. գ. — Նկարագրական նիւթերը ստորակարգուելու են դիպագրականներուն:

Մինչեւ վերջին ժամանակներս, այս երկու ճիւղերը իրարմէ բոլորովին անկախ նկատուած են. ուստի եւ դիպագրական ուսուցման մէջ գործածուած նիւթերը բնաւ կապ ունեցած չեն՝ նկարագրական ուսուցման մէջ գործածուած նիւթոց հետ: Հրահանգման այս եղանակը որդեգրած են այն մանկավարժները որոց գլխաւոր կամ միակ ջանքը եղած է զարգացնել մանուկին բարոյականը եւ կրօնական զգացումը: Բայց հետզհետէ քանի՛ հասկցուեցաւ թէ անհրաժեշտ է՝ զննական ուսուցման միջոցաւ՝ զարգացնել միանգամայն դատողութիւնը, երեւակայութիւնը եւ սիրտը, այնքան ալ աւելի սովորական դարձաւ օգուտ քաղել նկարագրական ուսուցման նիւթերէն՝ երեւակայութիւնը զարգացնելու եւ սիրտը կազմելու նպատակաւ:

Արձակ կամ ստանաւոր դիպագրական նիւթերը (narration) պէտք է ուղղակի առնչութիւն ունենան իրաց նկարագրութեանը հետ: Սակայն, մէն մի տարւոյ համար, դիպագրական նիւթերը եւ բանաստեղծութիւնները պէտք է այնպէս մը բնատրուին որ պատշաճեցուցուած ըլլան նպատակին որուն

կուզենք հասնիլ, ինչպէս նաեւ զարգացման աստիճանին այն աշակերտաց որոց կ'ուղղուին:

Դիպագրական նիւթերու ընտրութեան մէջ սրոյ սկզբունքներ առաջնորդ ըլլալու են ընթերցանութեան գրքի հեղինակին:

1. Դիպագրութիւնները պէտք է պարունակեն՝ տղուն կեանքէն փոխ առնուած իրողութիւններ կամ այնպիսի գործողութիւններ զորս երեւակայել դիւրին է տղուն. նոյն իսկ իրենց այս հանգամանքով անոնք կրնան մեծապէս ազդել տղոց վարքին վրայ եւ նպաստել մտքերու, ազնուացնելու զայն:

Այս կարգի զրոյցները երկու տեսակէտով օգտակար են. նախ՝ անոնց հիմնական կէտերը տղոց կեանքէն առնել կարելի ըլլալով, շատ դիւրին կ'ըլլայ՝ ըստ կամս, ի վեր հանել այս կամ այն հանգամանքը, այս կամ այն առաքինութիւնը զոր կ'ուզենք ստանալ տալ տղոց. կրնանք, այս կերպով, մաս առ մաս քննել իրենց պարտականութիւնները հանդէպ բնութեան, մարդոց եւ Աստուծոյ: Երկրորդ՝ որովհետեւ այս զրոյցները չի պիտի անպատճառ սահմանափակուին մանկական աշխարհի իրականութեանց մէջ, որովհետեւ կրնան ներկայացնել կեանքը այնպէս ինչպէս որ կրնար կամ պէտք էր ըլլալ, ազատ՝ բարքերու ամէն աղտոտութիւններէ, սուրբ, քնքուշ եւ վեհ, զերծ թեթեւութենէ ու սեթեւեթէ, անոնց միջոցաւ կրնանք տղաքը հաղորդ ընել քաղցր հեշտագին հրապոյրներուն իտէալ կեանքի մը ուր կը տիրէ առաքինութիւն, կատարելութիւն: Կատարելութեան այս պատկերը, մանուկներու մտքին առջեւ ցուցադրուած՝ կը լեցնէ անոնց հոգին անուշ գոհունակութեամբ եւ իրական ուրախութեամբ. ո՛չ միայն անոնց երեւակայութեանը կը մատակարարէ առողջ եւ կազդուրիչ սնունդ մը, այլ նաեւ կ'ազդէ սրտին վրայ՝ սրբելով զայն. կ'ազդէ բոլոր կեանքին վրայ՝ ցոյց տալով տղուն թէ պարտաւոր է ձգտիլ ազնիւ նպատակի մը, բարւոյն իրացմանը: Բարոյական զրոյցները, ուրեմն, օգտակար են՝ երբ երեւակայութեան կը մատակարարեն սնունդը

որով պէտք է սնանի անիկա, իմացականութեան կը հայթայթեն լուրջ զբաղում, սրտին կ'ընծայեն ջերմութիւն եւ կեանք:

2. Բայց տղուն երեւակայութիւնը սովորականէն, կարգաւորէն ու բանաւորէն դուրս ելնելով, երբեմն կը փնտռէ անկարելին, հրաշալին ու ցնորականն ալ դըր ճարակ կը գտնէ իր ճաշակներուն: Այս ճարակը պէ՛տք է տալ տղուն երեւակայութեան, վէպերով, աւանդավէպերով առընթեր բարոյական զրոյցներուն: Երեւակայութիւնը կարեւոր կարողութիւն մըն է զոր մշակելու է, սակայն, խնամով, զգուշաւորութեամբ, առանց տարապայման կերպով զրգուելու. վասն զի ո՛րչափ օգտակար է գեղարուեստական ու հնարողական ճարտարութեանց մէջ ու կեանքի բազմազան ձախող պարագայից մէջ, նոյնչափ ալ աղետաբեր կրնայ ըլլալ, երբ ի վնաս դատողութեան՝ հասնի ծայրագոյն աստիճանին, առաջնորդելով մարդը մինչեւ զառանցանքի, ե՛ւ յիմարութեան, ե՛ւ ոճիրներու:

3. Տղան կ'անձնաւորէ անշունչ էակները. իր գաւազանը ձի կ'ընէ ու վրան կը հեծնէ՝ խօսքեր ուղղելով անոր: Երեւակայութեամբն է որ կ'առաջնորդուի այն բանը ընելու: Պէտք է սանձենք, կարգապահութեան առաջնորդենք զայն, երեւակայութիւնը: Ու այս նպատակին կրնանք հասնիլ՝ կեանք տալով զննական դասերու առարկաներէն ստոր կամ անոր, զործել կամ խօսիլ տալով անոնց, ձեւափոխելով դանոնք, վերջապէս, այնպէս մը որ տղուն բանաստեղծական երեւակայութեան ճարակ տայ՝ օրինաւոր սահմանի մէջ: Ասկէ կը ծնի կարեւորութիւնը փոքր բանաստեղծութեանց՝ տղոց գործածութեան համար մասնաւորապէս: Մեր նպատակը չի պիտի ըլլայ՝ ոտանաւորին ու արձակին տարբերութիւնը փոքր մանուկին հասկցնել. բաւական պիտի համարինք արձակի վերածել տալ զայն եւ ի բերան ուսուցանել:

Պէտք է անաչառապէս ըսենք անցողակի թէ մեր մէջ այս սկզբունքներու լիովին զոհացում տուող ընթերցանութեան դասագրքեր հաղուագիւտ են, զանազանք կը փորձեն ամբողջացնել զիրար:

\* \* \*

Դիպագրական ուսուցման նիւթը ի՛նչ պիտի ըլլայ, տեսանք. հիմա տեսնենք թէ ի՛նչպէս պէտք է մշակել այդ նիւթը:

Ի սկզբան, աշակերտները չեն գիտեր ո՛չ կարգալ եւ ո՛չ զրել. պէտք է հասկնալի կերպով մը բերանացի ցուցադրել պատմութիւնները զորս կ'ընտրենք անոնց համար: Մանրավէպ մը փոքր մանուկներու պատմելը դիւրին գործ չէ: Ուսուցիչը խղճամիտ կերպով պատրաստուելու է՝ պայծառութիւն եւ լոյս սիրուելու իրողութեանց յաջորդութեանը մէջ, կենդանի եւ իրական շունչ մը տալու՝ գործողութեանց եւ դերակատար անձնաւորութեանց, կենսաւորելու այս ամէնն ամբողջ, եւ մի եւ նոյն ժամանակ արծարծելու իր ունկնդիրներուն իմացականութիւնը:

Նոյնպէս դիւրին չէ մանրավէպ մը հասկնալի ընել մանուկներու որոնք թէեւ գիտնան կարգալ:

Անմիջապէս որ զայն կարգալու առաջարկ ընենք աշակերտաց, անոնց ուշադրութիւնը կը փոխէ իր ուղղութիւնը. անոնցմէ կը պահանջենք որ կարգալով հանդերձ ըմբռնեն բաւերուն եւ խօսքերուն իմաստը. բայց անոնք իրապէս ուրիշ բանով չեն զբաղիր բայց եթէ յաղթել այն բազմազան դժուարութեանց զորս կը ներկայացնէ ընթերցուած հատուածը. բաւերը կը կարգան միայն. իրենց միտքը՝ բոլորովին զրուուած այդ աշխատութեամբ՝ չի կրնար ուրիշ բանով զբաղիլ: Որպէս զի տղաքը հասկնան զայն, պէտք է՝ ընթերցման վարժութենէն առաջ, պատմել իրենց կամ գունէ կարգալ մանրագէպը զոր պիտի սորվին. այնուհետեւ, երբ ըստ բաւականին հասկցած են, կրնայ ուսուցիչը կարգացնել հատուածը: Այս կերպով իրենց ուշադրութիւնը կ'արթնցնենք եւ իրենց հետաքրքրութիւնը կը զրգուենք: Միւս կողմանէ ընթերցանութեան արուեստին մէջ կը հրահանգենք զիրենք, վասն զի կը կարգան զա՛յն միայն զոր կը հասկնան մասամբ կամ ամբողջակի:

Ուրեմն ուսուցիչը, ընթերցարանին մէջէն կամ ուրիշ

գրքերէ, պիտի ընտրէ այնպիսի դիպագրութիւններ եւ բա- նաստեղծութիւններ զորս յարմար ըլլայ զիւրութեամբ կցել դասուցը այն առարկաներուն որոց վրայ խօսուած պիտի ըլլայ նկարագրական զննական ուսուցման մէջ:

Նիւթը որոշելէ ետքը, առաջին շրջանին մէջ ուսուցիչը կը մշակէ զայն հետեւեալ հրահանգներուն կիրարկութեամբ: 1. Դիպագրութիւնը մաս առ մաս կը բացատրէ. — 2. Կըրկ- նել կուտայ բացատրուածը՝ հարց ու պատասխանի միջոցաւ մի եւ նոյն ժամանակ ըմբռնել կուտայ բառերուն եւ խօսքե- րուն իմաստը. — 3. Յետոյ, դիպախօսութեան զանազան մասերը՝ կարգաւ, քանի՛ լուսաբանուին, պատմել կուտայ աշակերտաց. — 4. Հարցումներ կ'ուղղէ աշակերտաց դի- պախօսութեան ընդհանուր իմաստին վրայ. — 5. Դիպախօ- սութիւնը ի հանդէս կը բերէ, կը պարզէ ամբողջովին. — 6. Պատմել կուտայ դիպախօսութիւնը ամբողջովին:

Երկրորդ շրջանին մէջ՝ երբ տղաքը ըստ բաւականին սոր- ված են գրել ու կարդալ, ուսուցիչը պէտք է օգուտ քաղէ անոնց այս զարգացումէն զննական դիպագրական ուսուցման մէջ, եւ իւրաքանչիւր դիպագրութեան համար պէտք է գոր- ծադրէ վերոգրեալ հրահանգները՝ փոքր ինչ փոփոխու- թեամբ եւ յաւելմամբ, այսինքն.

1. Դիպագրութիւնը մաս առ մաս կը բացատրէ. — 2. Հարց ու պատասխանի միջոցաւ վերարտադրել կուտայ իւրաքան- չիւր մասը, այնպէս որ աշակերտները հասկնան հատուածին մանրամասնութիւնները, բառերուն եւ խօսքերուն իմաստը. — 3. Վերարտադրել կուտայ բացատրուած մասերը. — 4. Հատ- ուածը նախ կը կարդայ ինքը, յետոյ կարդալ կուտայ աշա- կերտաց. — 5. Հարց ու պատասխանի միջոցաւ կը բացատրէ հատուածին ընդհանուր իմաստը եւ անձանօթ բառերը ո- րոնք նախապէս չեն բացատրուած. — 6. Դիպագրութիւնը կրկին եւ կրկին կարդալ կուտայ. — 7. Ամբողջ դիպագրու- թեան յայտագիրը (compte-rendu) ընել կուտայ. — 8. Հա- տընտիր հատուածներ սերտել կուտայ. այս հատուածները վերարտադրել կուտայ յիշողութեամբ, գրաւոր կերպով:

Երրորդ շրջանին մէջ՝ ուսուցիչը իր բոլոր խղճմտութիւնը ի հանդէս պիտի բերէ որպէս զի կարողանայ ըստ կարելոյն գրգռել աղոց մտաւոր բոլոր ուժերը, կարողանայ ճոխացր- նել անոնց իմացականութիւնը եւ սորվեցնել լաւ ընթերցա- նութիւն: Հետեւաբար, պիտի բացատրէ, պիտի հասկցնէ, կարդացնէ եւ վերարտադրել տայ աւելի շատ հատուածներ, այնպիսի հատուածներ որոնք աւելի դժուար ըլլան քան նա- խորդ տարիներունը:

Ընդհանրապէս, նոյն հրահանգները պիտի գործադրէ նիւթին մշակութեան համար: Բայց աւելի շատ հատուածներ գրել ու կարդալ պիտի տայ, պիտի աւելի ծանրանայ այն մանրամասնութեանց վրայ որոնք կ'առաջնորդեն աշակերտը լեզուին ծանօթութեան. պիտի ջանայ զուգորդել լեզուի հը- րահանգները այնպէս մը որ զննական նկարագրական ուսու- ցումը եւ զննական դիպագրական ուսուցումը բաւական ըլ- լան՝ կարելի եղածին չափ կատարեալ կերպով՝ աշակերտաց աւանդելու տարրական ուսումը իրենց մայրենի լեզուին:

Ահաւասիկ կարգն այն հրահանգներուն զորս կարելու է գործադրել երրորդ շրջանին մէջ:

1. Ուսուցիչը լաւ կերպով կը բացատրէ, յետոյ կը կար- դայ հատուածը մաս առ մաս. — 2. Հատուածին այլ եւ այլ մասերը կը կարդացնէ աշակերտաց. — 3. Հարց ու պատաս- խանի միջոցաւ հատուածը հասկնալի կ'ընէ. — 4. Իւրաքան- չիւր մասը բերանացի վերարտադրել կուտայ. — 5. Հարց ու պատասխանի միջոցաւ հատուածին ընդհանուր իմաստը կը հասկցնէ. — 6. Հատուածը բազմիցս կարդալ կուտայ, եւ կը պահանջէ որ աշակերտը հասկացողութեամբ կարդայ. — 7. Ամբողջ հատուածը բերանացի վերարտադրել կուտայ. — 8. Ընտիր հատուածներ գոց ընել կուտայ եւ զանոնք վերարտադրել կուտայ յիշողութեամբ, գրաւորապէս:

Ընթերցարանի նիւթոց մշակութեան համար սարգուած այս տեսութիւններն եւ ի մէջ բերուած կանոնները աւելի բացայայտ ընելու համար կ'ընտրեմ, առաջին շրջանէն՝ մէկ

նիւթ նկարագրական եւ մէկ նիւթ դիպագրական, եւ երկու օրինակէլի դասերու մէջ կը ներկայացնեմ զանոնք:

Պրիւնտի ընթերցանութեան Առաջին գրքէն կ'ընեմ ընա-  
րութիւնս:

Հեղինակը յաջորդական երկու հատուածներէ միոյն մէջ  
կը նկարագրէ ձին եւ մուսին մէջ կը դիպագրէ քաջութիւնը  
ազու մը որ իր քոյրը կ'ազատէ փախած ձիու մը առջեւէն:

Ա. Զննական նկարագրական նիւթ

ԿԵՆԴԱՆԻ. — Զի

Ա. ՀՐԱՀԱՆԳ. — Բննեղ եւ նկարագրեղ կենդանին: Ու-  
սուցիչը պիտի հետեւի պարզ եւ բացօրոյ յատակագծի մը:  
Ուստի կազմէնք այդ յատակագիծը:

1. Ձին ի՞նչ է. — Տեսակ:
  2. Որո՞նք են ձիուն մարմնոյն մասերը. — Մասեր:
  3. Ինչպէ՞ս են այս մասերը. — Հանգամանք եւ յսկոյնքիւն:
  4. Ո՞ւր կ'ապրի ձին. — Բնակարան:
  5. Ի՞նչ կուտէ. — Սնունդ:
  6. Ի՞նչ ծառայութիւն կ'ընէ եւ ի՞նչ վնաս կը հասցունէ.
- Օգտակարութիւն եւ վնաս:

Այս առաջին հրահանգին արդիւնքը ձեռք պիտի բերենք  
երկրորդ հրահանգով:

Բ. ՀՐԱՀԱՆԳ. — Բերանացի վերահարուճ ստաջիկ նը-  
րանակցիկ.

Ձին ընտանի կենդանի մըն է:  
Իր մարմինը ունի այլ եւ այլ մասեր, զլուխ, վիզ, բաշ,  
իւրան, պոչ, չորս սրունք եւ չորս սմբակ:

Դուրսը խոշոր եւ երկարածեւ է: Վիզը աղեղնածեւ է:  
Բ սըը երկար է: Իրանը կլոր եւ բարեձեւ է: Պոչը կազմուած  
է ձարէ: Սրունքները բարձր են: Սմբակները մէյմէկ կտոր են:

Ձին կ'ապրի ախտոյն մէջ եւ արօտավայրերուն վրայ:  
Բաց օդին մէջ կ'ախտափ:

Խոտով, չոր խոտով եւ վարսակով կը սնանի: Շատ ան-  
գամ հաց ալ կուտան անոր:

Ձին շատ օգտակար է: Կառք ու սայլակ կը քաշէ: Բեռ  
կը կրէ: Մարդիկ վրան կը հեծնեն:

Գ. ՀՐԱՀԱՆԳ. — Նոյնատեսակ կենդանիներու հետազոտ-  
րիւն.

ա) Կարգ մը թեւադրիչ հարցումներու միջոցաւ սղաք կը  
յիշեն կովը, եզը, էջը, քուռակը, այծը, սջխարը:

բ) Համառօտիւ նկարագրել կը արուի այս կենդանիները  
եւ այս կերպով ազոց գտնել կը արուի հետեւեալ որպիսու-  
թիւնները եւ գործողութիւնները.

Որպիսոյնքիւնք. — Ծեր, մատաղ, մեծ, սղաթիկ, գէր,  
նիհար, ուժով, տկար, քաջ, վախկոտ, եւայլն: Այս բառե-  
րը պիտի կազմեն տարերքը նախադասութեանց, ինչպէս են  
զոր օրինակ՝ հետեւեալը.

Մեր ձին ծեր է: Բուռակը մատաղ է: Եզը մեծ եւ ու-  
ժով է: Պղտիկ կատուն տկար է: Այծը նիհար է: Ոչխարը  
վախկոտ է:

Գործողութիւնք. — Բառաշեւ, բշեւ, խխնջեւ, զուլ,  
մայեւ, երթալ, վազել, ցատկել, մազցիլ, կրել, քաշել:

Այս բայերուն միջոցաւ աշակերտք կը կազմեն հետեւ-  
եալ նախադասութիւնները.

Կովը կը բառաշէ: Եզը կը բշէ: Ձին կը խխնջէ: Ոչխարը  
կը մայէ: Էջը կը զուլ: Եզը գոմ կ'երթայ: Ձին արօտա-  
վայրին մէջ կը վազէ: Այծը ժայռերէն վեր կը մազցի: Ձիե-  
րը կառք կը քաշեն: Եզները սայլ կը քաշեն: Էջը սայլակ կը  
քաշէ: Ձին իր ատրը կը կրէ: Էջը բեռ կը կրէ:

Գ. ՀՐԱՀԱՆԳ. — Երրորդ նրանակցիկ բառերուն ու խօս-  
փերան բերանացի վերահարուճը:

Որովհետեւ ազաք դեռ սորված չեն կարգալ ու զրեւ,  
պիտի պարտաւորին միայն իւրացնել վերագրեալ անունները,  
զանոնք պիտի արտասանեն եզակի եւ յոգնակի եւ անոնց  
ցանկը պիտի սորվին:

Ասկէ զատ, աշակերտաց վերարտադրել պիտի արուի՝ եւ

զանկի եւ յողնակի ձեւերով՝ երրորդ հրահանգին ամէն նախադասութիւնները :

Վերջապէս, աշակերտները պիտի հրահանգուն փոխադարձաբար հարցումներ ուղղել իրարու :

Բ. Զննական նկարագրական նիւթ

Փախած ձին

Դասին նիւթն է փախած ձին զոր նախ պէտք է ներկայացնեմ ձեզի, որպէս զի անոր մշակութեան հրահանգները լաւ հասկցուն :

« Կիրակի օր մըն էր, եւ Պօղոս իր պղտիկ քոյրը եկեղեցիէն տուն կը բերէր :

Փողոցին մէջ տեսան որ փախած ձի մը իրենց կողմը կուգար. մարդիկ պոռալով կանչելով անոր ետեւէն կը վազէին :

Պօղոս կը վախնայ. բայց կը նայի որ պղտիկ քոյրն իրմէ աւելի կը վախնար եւ սկսած էր լալ :

— Մի՛ վախնար, կ'ըսէ Պօղոս, ես քեզ կը պաշտպանեմ :

Դուռի մը անկիւնը կը կեցուեն քոյրը, եւ, ինքզինքը մոռնալով, անոր առջեւ կը կենայ որ զանի պաշտպանէ :

Կը նայի որ ձին ուղղակի իրենց կողմը կուգայ. ուստի ետ դարձնելու համար զանի իր ճամբէն, երեքցնելով՝ անոր կ'երկնցնէ թաշկինակը :

Ձին կը վախնայ, ճամբան կը փոխէ, անոնց վնաս չըներ եւ կը հեռանայ :

Պղտիկ աղջիկը ուրախութենէն կը պոռայ, եղբայրը կը գրկէ զանի. երջանիկ է » :

Մ Շ Ա. Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ր Ա. Հ Ա Ն Գ Ն Ե Ր

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դուք ձին կը ճանչնաք. մտիկ ըրէք հիմա. պղտիկ պատմութիւն մը պիտի պատմեմ ձեզի ձիու վրայ :

Ա. Բ. Գ. ՀՐԱ.ՀԱՆԳՆԵՐ. — Բացարձակապէս այլ եւ այլ մասանց. — Ուսուցիչը մի առ մի կը պարզէ գիպագրութեան մասերը որոց պէտք է առաջուց բաժնած ըլլայ իր այս նիւթը.

1. Պօղոս տուն կ'երթար պզտիկ քոյրը հետ : Որո՞ւ վրայ կը խօսի այս պատմութիւնը. — Ուրկէ՞ կուգար Պօղոս. — Ո՞ւր կ'երթար. — Ձեր մէջէն ո՞վ ունի քոյր. — Ի՞նչ է քոյրը անունը. — Բու քոյրը անունն ի՞նչ է. — Պօղոս մեծ էր թէ՛ իր քոյրը. — Ինչո՞ւ դացեր էին եկեղեցի. — Ուրիշ ո՞վ կ'երթայ :

Հիմա կրկնեցէք ինչ որ կ'ընէին Պօղոս եւ քոյրը. — Պատմութիւն . . .

2. Պօղոս փախած ձի մը կը տեսնէ. . .

3. Քոյրը կը վախնայ. Պօղոս սիրտ կուտայ քոյրը եւ զանի կը պաշտպանէ. . .

4. Ձին ճամբան կը փոխէ. . .

5. Պօղոսին քոյրը կ'ուրախանայ . . . :

Այս մասերն ալ, Զրդ, Յրդ, Կրդ եւ Ծրդ, պիտի մշակունին առաջին մասին պէս հարցապատասխանելով, եւ պիտի կրկնունին :

Գ. ՀՐԱ.ՀԱՆԳ. — Հարցումներ որոց նպատակն է ի վեր հանել հասնածին ընդհանուր իմաստը. — Որո՞ւ վրայ կը խօսուի այս պղտիկ պատմութեան մէջ. — Պօղոս ի՞նչ ըրաւ իր պղտիկ քոյրը համար. — Ուրիշ չար եղբայր մը, անոր տեղ, ի՞նչ ըրած պիտի ըլլար. — Պօղոս՝ այդպէս ընելով՝ վնաս չէ՞ր բերեր իրեն. — Ուրեմն Պօղոս ինքզինքը՞ թէ՛ իր քոյրը աւելի կը սիրէր նոյն վայրկեանին. — Վնաս մը կրե՞ց Պօղոս. — Ի՞նչ կերպով ազատեցաւ վտանգէն. — Ինչո՞ւ կրցաւ այդ բանը մտածել. — Ուրեմն վտանգի ատեն վախնալը է. շատ վախօցողը ի՞նչ կ'ըլլայ (շխորի) :

Ե. ՀՐԱ.ՀԱՆԳ. — Ուսուցչին կողմանէ ցուցարարութիւն անբողջ հասնածին :

Զ. ՀՐԱ.ՀԱՆԳ. — Աշակերտաց կողմանէ վերաբարձութիւն հասնածին :

\* \* \*

Պրինսօ, իր Մանուկին գիրքը եւ Պասակեկին գիրքը անուն ընթերցարաններուն մէջ, առանց նիւթերը մշակելու, սերտ կապակցութեամբ մը իրարու ետեւէ կը շարայարէ զննական նկարագրական եւ զննական դիւպագրական նիւթեր, խմսափն յատուկ պատկերներով գեղազարդուած, յարմար տառերով տպագրուած, եւ՝ որ աւելին է, Քրանսացի աշակերտաց պէտքերուն ու անոնց կեանքի պայմաններուն պատշաճեցուցուած:

Իսկ պատանիներու ընթերցութեան համար գրած ունի Ֆրանսիկե, Ֆրանսայի շրջակը եւ Մարսելի զգա՛ր, ամէնն ալ իրարմէ աւելի գերազանց:

Հեղինակը զանոնք, երեքն ալ, ճարտարապետ յորինած է վէպի ձեւով՝ տղուն ներկայացնելով ընկերական կեանքի եւ բնութեան երեւոյթներու բազմադիմի երեսները, իրենց ամենէն յանկուցիչ, ամենէն շինիչ աղնուացուցիչ ու ներընչող ձեւերուն տակ, պարզ ու յստակ լեզուով մը, առանց երկարածիք նախադասութեանց կամ կնճռոտ պարբերութեանց: Մարդասիրական լայն հոգի մը կը թրթռայ իր մէն մի տողին մէջ, որոնք կը յուզեն կը յափշտակեն ընթերցողը:

Ֆրանսիկե ինը տարեկան տղայ մըն է, հօրէ որը, որ աշակերտութեան կը մտնէ ուսուցչանի գործատան մը մէջ ուր լեզակի սղօրին դարձնելու գործը կը յանձնուի իրեն. իրենց բնակարանը հանդիպակաց է գործատանը. զիչեր մը կը կասկածի հրդեհի սկզբնաւորութենէ մը գործատան մէջ. կ'եղն անկողնէն, կ'երթայ կ'իմացնէ գործատիրոջ: Գործատէրը, ի վարձատրութիւն անոր՝ կ'որոշէ որ Ֆրանսիկէ, իր աշխատութիւնը կատարելով հանդերձ, օրը քանի մը ժամ դաս առնէ նաեւ իր թոռին ու թոռնուհիին հետ՝ պատուական դաստիարակէ մը: Զարգացած փորձառու անձ մըն է դաստիարակը, Պրն. Էամոն, որ իր բեզուն դասերով ընկերային բարոյականի, բնական ու բնապատմական գիտութեանց տարերքը կ'աւանդէ իր երեք սանիկներուն՝ յանկուցիչ սճով, ջանադիր պատրաստելու զանոնք բարի անդամներ բնտանիքին, պարտաճանաչ քաղաքացիներ երկրին եւ երկիւղած սպասարկուներ Աստուծոյ կամքին:

Ֆրանսայի շրջակին մէջ հեղինակին դիւպագներն են երկու աղաք, որք մօրէ ու հօրէ՝ իրարու եղբայր՝ մէկը 9, միւսը 12 տարեկան: Ասոնք, 1871 ին, հաւատարիմ՝ իրենց հօրը պատուէրին զոր ընդունած են անկէ՝ իր վերջին շունչը տուած միջոցին, ճամբայ կ'եղնն աշնան ցրտագին օր մը, Լօրէնի Ֆալզուերի քաղաքէն՝ մտնելու համար Ֆրանսա: Կ'իջնեն դէպ ի հարաւ՝ գտնելու իրենց հօրեղբայրը ի Մարսիլա: Հոն չի գտնելով զանի, կը պարտաւորին ճամբորդել դէպ ի Պորտօ, եւ անկէ վերջապէս կ'ընեն Ֆրանսայի շրջանը մինչեւ Օրլէան:

Երկու եղբայր առանձին կը ճամբորդեն, կրելով ձախողուածներ, ենթարկուելով վտանգներու. փոքրը ընդունելով պաշտպանութիւնը մեծին, եւ մեծը՝ ըստ կարի՝ սաւաճուողութիւնը իր մտքին նախակրթական ծանօթութիւններէն ու սրտին բարի թեւադրումներէն: Ամէն տեղ բուսական հնարամիտ կ'ըլլան դժուարին կացութիւններէ ազատելու՝ համբերութեամբ, ինքնօգնութեամբ եւ քաջութեամբ: Ամէն տեղ կը գտնեն բարեկամներ իրենց արթնամտութեամբ եւ իրենց համակրելի անուշ բնասորութեամբ: Հեղինակը, այս ուղեւորութիւնը կատարել տալով իր երկու սանիկներուն, անոնց առջեւ կը պարզէ մէն մի դաւառի տեղագրութիւնը՝ իրենց ճարտարագործական բազմադիմի աշխատութիւններով, իրենց հաստատութիւններով եւ իրենց պատմական մարդերով: Ներկան ու անցեալը ցոյց կուտայ ո՛չ միայն յստակ ու խանդալից դիւպագրութիւնով մը, այլ եւ յատուկ պատկերներով ու յատուկ քարանդակներով: Ամբողջ գործին մէջ, ծայրէ ծայր, կը սփռէ բարոյականի ողջ սկզբունքներ, քաղաքացիական կըրթութեան, կիրառիկ օրէնքի եւ քաղաքական տնտեսութեան վրայ տարրական ծանօթութիւններ, բնական ու բնապատմական գիտութիւններէն ալ երեւոյթներ ու կիրառութիւններ՝ երկրագործութեան ու բուսատառութեան մէջ, ամէնքը կապակցուած իր ճարտարամիտ հիւսուածքով եւ բացատրուած պարզ գրական նրբին ճաշակաւ ու հետաքրքրալից ոճով:

Պրինսո շատ ճարտար է նիւթերու ընտրութեան ու անոնց յարգարման մէջ . բայց լեզուի մշակութեան մեթոտիկ կիրարկու մը չէ , համաձայն այն տեսութեանց զոր պարզեցինք քիչ մը առաջ :

Նկարագրական ու դիպագրական նիւթոց ընտրութեան ու լեզուի մշակման միանգամայն մասնաւոր ուշադրութիւն դարձուած է՝ վերջնա Չուիցերի տպուած Ֆրանսերէն ընթերցարանի մը մէջ զոր պատրաստած է Կոպա :

Կը ցաւիմ բաւու թէ մեր մէջ Տէր Ղեւոնդեանցի Մայրենի լեզուն է միայն որ նիւթերու ընտրութեան մէջ յաջողած է բաւական . բայց ո՛չ լեզուի մշակութեան համար մեթոտիկ հրահանգներ կը սրբաւանակէ եւ ո՛չ ալ խնամեալ ո՞՞մ մը ունի . մանաւանդ Գ . եւ Դ . հատորներու լեզուն բոլորովին անխնամ է :

Ընթերցանութեան ըստ գասագրերու շարք մը պատրաստել շատ դժուար գործ է ըստ իս , եւ կը պահանջէ բազմակողմանի հմտութիւն եւ յատուկ ուսումնասիրութիւն միջափայրի : Ծառ բանաւոր է որ առ մեզ Ծաղկոցի եւ Տարբական Դասընթացքի յատուկ ընթերցարանը նոյն ծրագիրն ունենայ ամէն տեղ . իսկ Միջին եւ Բարձրագոյն Դասընթացներու յատկացեալ Ընթերցարանները՝ նոյն մնալով իրենց ընդհանուր գծերուն մէջ , մանրամասնութեանց կողմանէ տարբերին իրարմէ ըստ տեղական հանգամանաց . սոյն հանգամանաց այլազանութիւնը սեղմելով հայտնակ գաւառները բաժնելու է երեք սրտ միջավայրերու , եւ՝ այդ միջավայրերուն համեմատ՝ պատշաճ փոփոխութիւններ մտցնելու է Միջին եւ Բարձրագոյն դասընթացքի յատուկ ընթերցարաններու ընդհանուր ծրագրին մէջ :

Չուիցերիոյ մէջ ինչ որ է ընթերցանութեան գասագրերը այսինչ ֆակտներն մէջ , նոյնը չէ որ ինչի մը մէջ :

Ընթերցարանը Նախակրթութեան հիմնաքարն է : Չանանք որ այդ հիմը չի գրուի ո՛չ շահագէտներու քակին եւ ո՛չ ալ անյաջող փորձերու վրայ : Մաղթե՛ք որ անշահախնդիր փարպեաներ զան մեզի ընծայել իրենց սրտին ու մտքին նուէրները որոց համար յաւելա երախտապարտ պիտի մնայ իրենց՝ հայ մանուկին հետ եւ հայ ուսուցիչը :

Գ . Ա . ՄԱԼԱԹԵԱՆ

## ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՕՐԱՅԵԱՆ



Նիկողայոս Զօրայեան , որդի սոկերիչ մահաէտի Զօրայ աղայի , ծնած լինել կը թուի 1821 ին՝ Գումգաբուի Պատրիարքարանին մօտ՝ Նշանճը ըսուած փողոցը՝ Զրաճեան հանգուցեալ Սարգիս աղայի տան դիմացը գտնուած մեծ առնեբէն մէկուն մէջ (1) :

Զօրայ աղայ ունէր մի քանի կալուածներ և բարեկեցիկ վիճակ , և կիւրակէ և տօն օրերը դպրութիւն կ'ընէր Մայր Եկեղեցւոյ մէջ : Ըստ ոմանց , Զօրայ աղա ինքն եւրոպա զրկած է զնիկողայոս , որպէս զի ուսում առնէ , և ըստ այլոց՝ նիկողայոս ինքն զնայած է՝ առեւտուրով կամ թարգմանի պաշտօնով : Նիկողայոս՝ թարգմանի , գանձապահ , առմարակալի պաշտօնները փոխն ի փոխ վարած է կարեւոր մարդոց քով : Հաշուակալի պաշտօնը կը վարէր նաև մաքսատան մէջ :

Զօրայեան՝ ըստ նկարագրին՝ թխաղէմ , երկայնահասակ , սև մօրուօք , գանգուր մազերով մարդ մ'էր : Ամուսնացած էր Խասդիւղի Ս . Ստեփաննոս Եկեղեցւոյ քահանայներէն Մեծ Տէր Գրիգորի թոռան , Մարիամի սղլկան , հետ : Թաւրիչ օձիքով սաֆօ կը հագնէր :



(1) Հաւանականաբար այն տունն ուր 1879 ին փոխադրուեցաւ Սուրէնեան Աւետիս էֆէնտիի հիմնած ու վարած մասնաւոր վարժարանն , մին՝ ժամանակին ամենէն բարեկարգ եւ արդիւնաշատ կրթական երեք անհատական հաստատութիւններէն , որոնք զրեթէ միաժամանակ կը հիմնուէին Ռ . Պէրպէրեան , Յ . Գուրգէն եւ Ա . Սուրէնեան էֆէնտիներու կողմանէ , առաջինը Իւսկիւտարի բարձանց վրայ , երկրորդը յՕրթագիւղ եւ երրորդը ի Կէտիկ-փաշա :

Զօրայեանի գրական և կրթական դործունէութիւնն է որ կը շահագրգռէ զմեզ :

Արդարև , Զօրայեան ամենաօգտակար հրատարակագիր մը և դպրոցի մը հիմնադիր եղած է : 1834 թուին , իր յօրինած « Վարժութիւն Ընթերցանութեան ի պէսս դպրոցաց » տիտղոս կրօղ 248 էջերէ բաղկացեալ գասագիրքն ազատած է մատղաշ մանկութիւնն՝ ընթերցանութիւն սովորելու համար Սաղմնս , Գործոց , Նարեկ գործածելու գժուար հարկէն : Գրքին ըստ բաւականին երկար յառաջաբանը գրագիտաց այդ կարծիքը կը հաստատէ : Գալով բուն գրքին , յորմէ ընթերցանութիւն կը սովորէինք այն ատեն , եթէ արգի սերունդին համար պատրաստուած ընթերցանութեան գասագրքերուն հետ համեմատենք , չեմ կարծեր որ Զօրայեանինն այլ ևս անպէտ սեպուի , քանի որ տղան աչքին առջև գտնուող առարկայներու ծանօթութենէն սկսելով , աստիճան առ աստիճան դէպ հեռուն , դէպ անծանօթն արշաւել տալու գրութեամբ պատրաստուած է գոնէ :

Զօրայեան 1849 ին « Վարք Յիսուսի » տիտղոսով 69 էջերու մէջ ամփոփուած գրքոյի մ'եւս Փրանսերէնէ հայերէնի թարգմանած է : Սոյն գրքոյի Յիսուսի վարուց համառօտ պատմութիւնը կ'ընէ՝ հանդերձ պիտանի յաւելուածովք : 8 , 9 , 10 տարու տղայք , 13 գլուխներու մէջ , առանց միտք , ուղեղ յոգնեցընելու , դիտակցութեամբ , չը մտնալու պայմանաւ , Ս. Աւետարանի ամփոփ ու ամբողջ պատմութիւնը կը կը սովորին : Եւ սակայն ժամանակին աստուածաբաններէն գլխաւորը , վարժ բառն իբրև Յիսուսի յատկացեալ դնել անճահ համարելով , յաջողեցաւ պաշտօնական շրջանակներու մէջ գայթակղութիւն յառաջ բերել խեղճ Զօրայեանի դէմ :

Յամին 1849 , « Նկարագիր Ազգ. գաստիարակու-

թեան » տիտղոսով 83 երեսներու մէջ ամփոփուած գրքոյի մը հրատարակած է՝ Ազգ. գաստիարակութեան քանի մը թերութիւնները շտկելու մասք : Գիտելի է զի այն թերութիւնք , զորս Զօրայեան , 49 թուականին , ծնողաց , հոգաբարձութեանց և վարժապետաց մատնացոյց ըրած էր , այսօր՝ 1900 թուականին՝ մեծ մասամբ արդի դաստիարակութենէն ևս տարամերժուած չեն :

Զօրայեան 1849 թուին , 332 էջերու մէջ ամփոփած « Տնտեսական տեղեկութիւնք » անունով գիրք մ'ալ հրատարակած է : Հեղինակը նոյն աշխատասիրութեամբ հարստութեան ազբիւրներուն և անոր գործածութեան վրայ պիտանի տեղեկութիւններ կուտայ , որք հիմա ալ օգտակարապէս կրնան կարգացուիլ :

1850 ին՝ Շմիտի գործերէն « Ռօպէնսօն Գերմանացի կամ փոքրիկ ճգնաւորը » Ֆրանսերէնէ հայերէնի թարգմանած , հրատարակած է , իբրև գիւրին գիրք Ֆրանսերէնէ նոր թարգմանել սկսողներու բաղդատութեան համար :

1841 ին Իտալերէնէ հայերէնի թարգմանած է « Նամականի ընտանեկան » տիտղոսով գիրք մը , հանդերձ՝ գրելու համար օգտակար կանոններով : Նաև Անգլիերէնէ ի հայ վերածած է « Հարստութեան ճամբայ » անունը կրող գրքոյի մը , որ աշխատութեան և խնայողութեան վրայ օգտակար խրատներ կուտայ :

Զօրայեան 1832 թուին , 401 էջերու մէջ ամփոփած « Ընթերցասիրութիւն » անունով գիրք մ'եւս հրատարակած է , որ կարգալու միջոցաւ մտաւորական մշակութեան հասնելու համար օգտակար խրատներ կուտայ : Երբ խրատներ կ'ըսենք , վարդապետական թմբեցուցիչ քարոզներ չը հասկցուին . անանց մէջ գործնական օրինակներ մեծ գեր խաղացած են : Եւ



օրինակներէն՝ անկարելի է որ իր շուրջը դռնուած առարկայներու, անցած դարձած իրերու վրայ ուղիղ և որոշ դազափար ունենալ փափաքող մտադիր ընթերցող մը իր ցանկութեան չը հասնի :

Զօրայեան մաքուր աշխարհաբարով խօսելու գրեւ լու կողմնակից էր և այնպէս շարագրած է իր գրքերըն, միշտ ի նկատ առնելով ժողովրդին հասկացողութեան աստիճանը: Բայց գրաբարի մասին կը յայտնէ հետեւեալ կարծիքը՝ որ, 43 տարիներէ ետք, լեզուի վրայ լրջաբար խորհողներուն կարծիքէն շատ չը տարբերիր կարծեմ, և որուն համար բաւական դատափետուած է իր ժամանակի գրաբարեաններէն, (տես Լենթերցասիրութեան 252-255 էջերը) :

«Ազգին հասարակութեանը մէջ ընտիր աշխարհաբար մը տարածելու ջանք ըրած ժամանակնիս, կարծեմ անտեղի չէ սա ալ գուրդելը, որ մեր գրաբար լեզուն ա՛լ իբր մեր աշխարհաբար լեզուին արմատը, իբր մեր ուսումնական լեզուին նշանը՝ ջանալու է որ բոլորովին չի մուցուի. ուստի ազգին ս՛ր կարգ մարդու որ կը վայելէ նէ գրաբար գիտնալ ու գրել, անոնցմէ ալ հարկաւ պահանջելու է անոր գիտութիւնը, վասն զի անիկայ է մեր վնասուած ընտիր աշխարհաբարին աղբիւրը: Թէ որ ազգին մէջ գրաբար գիտցող չըլլայ, ս՛ր կից ունենալու է ընտիր ոճով գրուած աշխարհաբար գիրքերը՝ որ հասարակութեան նմանելու օրինակ ընենք: Անանկ որ, եթէ ազգային դպրոցներու մէջ գրաբար սորվեցնելու համար աւելի բանաւոր եղանակ մը բռնուած ըլլար, այսինքն թէ որ մեր ուսումնասէրներն ու անօրէնները համազուած ըլլային թէ եկեղեցականին, վարժապետին, ազգապետին, սեղանաւորին, վաճառականին, ու գերձակին, դարբինին ու սպերչին պէտք ըլլայիք գրաբարը մէկ չափ չէ, ու

հետեւաբար ալ թէ որ գրաբարի ուսմանքնիս այլ և այլ աստիճանի բաժնած ըլլային, այլ և այլ եղանակներ որոշէին սորվեցունելու, այլ և այլ գիրքեր կարդալու, այլ և այլ վարժութիւններ ընելու; այն ժամանակը ընտիր աշխարհաբար մը քիչ ժամանակին մէջ ազգին մէջ տարածելու միակ հնարքը՝ անշուշտ դպրոցներու մէջ գրաբարի ուսումը առ հասարակ ամէն աղու հարկ դնելը կը քարոզէի . . . » :

Զօրայեան, վերոյիշեալ հրատարակութիւններէն զատ, ունի այլ և այլ գործեր ալ որ մեր ձեռքը չեն հասած: Բազմալեզուի և Մասիսի մէջ ալ գրած ունի ժողովրդեան հասկանալի և լուսաւոր դազափարներով շատ յօդուածներ :

Զօրայեան, որպէս կը գրէ հանգուցեալ բարեյիշատակ Շահնազարեան Կ. վարդապետ, Գաշնաց թըղթոյ Հերքման մէջ, մին եղած է «այն պատուելի ուսումնականներէն, որ Պատրիարքարանի մէջ անվհեր համարձակութեամբ Շահնազարեանի կարծիքը պաշտպանեցին, հակառակ կամաց Պալեան կարապետ Ամիրայի » :

Զօրայեանի անհատական կեանքը քիչ մը ստգտանելի կը գտնեն ոմանք, առարկելով թէ՛ տանը մէջ հարսանիք, խնջոյք, տօնախմբութիւն եղած ատեն իսկ, սա իւր աշխատութեան սենեակը փակուած կը մնար, միշտ գրելով կարգալով կ'ըբաղէր :

1859 թուին Զօրայեան կը խեղագարի, կ'ըսուի թէ իր ազգականաց երեսէն բաւական կարեւոր գումար մը կորսնցնելուն համար: Հիւանդութեան սկիզբները, արդի Յակոբեան խանի հին շէնքին մէջ, քանիցս տեսնուելով Վարազայ վանուց Գեր. Վանահօր հետ, փափաք յայտնած է անոր հետ Վարագ երթալու: Գեր. Վանահայրը զնա իր հետ տանելու հաճեր է, բայց բարեկամաց գիտողութեան վրայ թէ,

եթէ հիւանդութիւնն աւելի սաստկանալու ըլլայ, հոն ո՞ւր դանելու է ճարտար բժիշկ, և այլն, իր գիտաւորութենէն ետ կեցեր է :

Նոյն տարին, Հոկտեմբերի ակիդները, Զօրայեանի հիւանդութիւնը հետզհետէ կը յառաջագիժէ, և խեղճը վերմակին բուրդերն ուսել կ'սկսի . իր մահէն քանի մ'օր առաջ, իր ընտանեաց կողմէն Ս. Փրկչեան Հիւանդանոցը կը դրուի, ուր կը մեռնի յամին 1839 Նոյեմբեր 30 ի առաւօտուն :

Ս. յն ատենի Ս. Փրկչեան վարժարանի Տեսուչ և Հայ լեզուի դասատուն էր 22-23 տարու երիտասարդ մը, Ստեփան էֆ. Փափաղեան : Հիւանդանոցի վարժապետք ու աշակերտք վայելուչ շքով յուղարկաւորութեան հանդէս կը կատարեն : Ստեփան էֆ. Փափաղեան՝ դամբանական, աշակերտներէն ոմանք ալ եղբւրերգներ կ'արտասանեն դագաղին վրայ : Ապա հանդուցելոյն մարմինը խասգիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցին կը փոխադրուի, ուր ի ներկայութեան 13-20 յուղարկաւորաց և գիւղին Ս. Ներսիսեան վարժարանի աշակերտաց, Գէորգ Պատրիարքին (ապա Գէորգ Գ. Կաթուղիկոս) կողմէն յատկապէս զրկուած երեք վարդապետք, Մայր եկեղեցւոյ և խասգիւղի քահանայք եկեղեցւոյ կարգը կատարելէ ետք, մարմինը դիւղին դերեղմանատան մէջ կ'ամփոփեն :

Յարութիւն Սվաճեանի խմբագրութեամբ հրատարակուած «Մեղու» տասնօրեայ հանդիսի 34 թիւ և Դեկտեմբեր 10 ամսաթիւ թերթը Զօրայեանի մահադոյժը Ազգին ծանուցանելու առթիւ՝ հետեւեալ տողերը կը գրէ, որոնք 38 տարիներէ ետք, սակաւին զգայուն ընթերցողներու սիրտերն առ հանդուցեալ ժողովրդային գրագէտն յերախտագիտութիւն հրախրելու ընտրութիւն մ'ունին :

« Փոխումն յաստեաց

Նիկողայոսի Մ. Զօրայեան

« Մարգիկ կան որ կը ծնանին, կ'ապրին ու կը մեռնին՝ իրենց յիշատակը միայն մէկ քանի անձանց մտքին մէջ թողնելով քիչ մ'ատենի համար, և էն շատը իրենց որդիքն իրենց երախտադարա թողնելով : Մարգիկ ալ կան որ կը ծնանին, կ'ապրին՝ շատերու ծառայութիւն ընելու համար, և կը մեռնին՝ իրենց յիշատակը ապրեցնելու համար երկար ատեն ու բազմութիւն մը կամ լման ազգ մը իրենց երախտապարա ընելով :

« Այսպէ՛ս է ահա՛ հանդուցելոյն կեանքն ալ, մահն ալ : Իր կեանքը գրաւոր աշխատութեամբ մաշեցուց, իր Ազգին կրթութեանն ու անոր օրդուցն դաստիարակութեան յարմար գրքեր ու գրուածներ և յօդուածներ տալով, ու հազիւ 38 տարու եղած կնքեց զանի :

« Տակաւին ո՛չ ծերունի անձերուն մահը կ'ոյբան առհասարակ՝ անոր մնացած օրերը հաշուելով, այլ Ազգին համար աշխատող անձի մը արագ կորուստը ընդհանուր ցաւ կը պատճառէ . ցաւ մը զոր երախտիք ճանչցող ազգերը չը պիտի կրնան ի մտապում մատնել : Մեծարգոյ Զօրայեանին մահն ալ ահա՛ այն մահերէն է, զոր չը պիտի կրնանք շուտ մը մոռնալ :

« Իր աղայ հասակէն սկսաւ և մինչև վերջին տարիները ուսմանց պարապեցաւ գրեթէ առանց ուսուցչի . վասն զի սկիզբէն թէպէտև Պէդճեան հանդուցեալ Յարութիւն Ամիրային հաստատած Ուսումնարանին մէջ Փէշարմալճեան Գրիգոր պատուելիէն հայերէնը ու Պարտիզպանեան Տ. Խաչատուրէն յտալերէն սկսաւ, սակայն անոր արագ կործանումը թնքը անառաջնորդ թողնելով, սկսաւ ինքն իրեն

անոր անոր օգնութեամբն ուսնիր. անկէ ետքը ուսաւ Պռանսերէն, Անգլիերէն, և վերջին տարիներուն մէջ քիչ մ'ալ տաճկերէն ձեռք բերաւ :

« Եւրոպայի մէջ երբեմն առուտուրով, երբեմն ալ թարգմանի պաշտօնով պարտած ասան, առանց յատուկ դպրոց մը մտնելու՝ վաճառականութեան արհեստին ու անտեսական գիտութեան վրայ բաւական ընդարձակ համութիւն ստացաւ, ու բերաւ զանոնք իր Ազգին հազորդեց :

« Իր Ազգին աղայոց նախնական կրթութեան մասին գտնուած պակասութիւններն գիտեց ու զանոնք լեցրնելու աշխատեցաւ . Ազգին աղայքը կրթելու աշխատեցաւ, այլ աւա՞ղ, որ իր ութամեայ միակ աղջիկը կատարելապէս չը կրթած՝ մեռաւ . . . :

« Ազգայնոց դանդաղութիւնը տեսնելով ընթերցման մասին, այս ծուլութիւնը փարատելու գիտաւորութեամբ ընթերցասիրութեան վրայ ընտիր և բազմաշխատ ճառեր գրեց . բայց ամսո՞ո որ Ազգին մէջ ընթերցասիրութեան բաւական տարածուիլը չը տեսած՝ կանչուեցաւ . . . :

« Ազգին մէջ շուայութեան ու պչրանաց չափազանցութիւնը տեսնելով, որով և ապագայ աղքատութիւնը գուշակելով, այս չարամտութեան ու անոր հետեւանքն եղած թշուառութեանց առաջքն առնելու համար, Տնտեսական գիտութեանց վրայ համառօտ գիրք մը շինեց, և գուցէ իր աշխատութեան հակառակ՝ այն մտլութեան զարգանալը տեսնելով զգացած յաւէն էր որ իր վերջին տարուան մէջ անտանելի ախտի մը տիրացաւ . . . :

« Իր ընտանիքը մահուանէն քանի մը օր առաջ գինք Ս. փրկչեան Հիւանդանոցը դրած ըլլալով՝ քրքրիստոնէական վերջին պարտքերն ալ կատարելն ետեւ, նոյեմբեր 30 ի առտուն գնաց խառնուեցաւ

յաւիտենականութեան մէջ՝ իր արդար հատուցումն առնելու :

« Մարմինը այն տեղի վարժարանին վարժապետացն ու աշակերտաց կատարած վայելուչ հանդէսով ըն Հիւանդանոցին դուռը հասնելէն ետեւ՝ կառքով Խասքէօյ տարուեցաւ ու հոն թաղուեցաւ . . . :

« Հոս, ցաւօք սրտի և ակամայ կը դրուցենք թէ այս անձին ճշմարիտ յարգն Ազգին մէջ ճանչցող հազիւ 15-20 հոգի կայ եղեր, որովհետեւ այսչափ յուզարկաւոր ունեցաւ, և թէ այսպիսի անձի ինքզինքնին պարտաւոր զգացող մի միայն Ս. Պատրիարք Հայրը կայ եղեր, որ անոր յուզարկաւորութեան հանդէսը աւելի շքաւորելու համար իր կողմէն արժանաւոր եկեղեցականներ զրկած էր . . . :

\* \* \*

Զօրայեանի թաղումէն քանի մ'օր ետք, Մասիսի մէջ քանիցս կարգացի թէ, չեմ յիշեր ո՞ր իւանին ո՞ր գրասենեակը շարթուան այս ինչ կամ այն ինչ օրերը իր գիրքերը (Զօրայեանին) կը վաճառուին: Ալ անկէ ետք, խիստ քիչ անգամ լրագրաց մէջ անցողակի մը հանդիպած եմ իր անուան յիշատակութեան :

1889 ին Իւսկիւսար՝ Մեղպուրեան վարժարանի, եթէ չեմ սխալիր, Դ. կարգի ամսվերջի հարցաքննութեան ներկայ էի. քննութեան միջոցին՝ Մեղպուրեան կամացուկ մը խօսքը ծանօթ վարժապետի մը ուղղելով ըսաւ. « Ուշագրութիւն բրէ սա աշակերտութիւն տուած պատասխաններուն, եւեջերիդ թուան է » :

— Ո՞րին, հարցուց վարժապետը :

— Խասքիւզցի Նիկողայոս Զօրայեանի, պատասխանեց Մեղպուրեան :

Մէկէն՝ վարժապետին գէմքին վրայ տրտմութեան և ուրախութեան անմիջական զգացումներ ար-

տախայլեցան : Եւ յա'ւերջուց . « Աստուծոյ ըրածը նայէ , Մեղուն կ'ափսոսար որ՝ Զօրայեան իր ութամեայ աղջիկ զաւակը կատարելագէտ չը կրթած մեռաւ . բայց Մեղպուրեանի քով այսօր անոր թուը կը դաստիարակուի » :

Այս գոյզն տեղեկութիւնները , զորս ունէի Զօրայեանի մասին , հրատարակելու և անոր յիշատակն այսպէս մշտնջենաւորելու պարտք համարեցի :

Ռ. ԹԱԴԵՈՍԵԱՆ



### ԻՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՏԻՊԱՐ ԴԱՍ ՄԸ

Կրթիչ ուսուցութեան սկզբանց հանձնայն պատասխանած Միջին դասընթացի հանաք

### Հ Ա Ի Կ Ի Թ

Ներածութիւն և նպատակ

Ի՞նչ ասն կատարեցինք քանի մ'որ առաջ (1) : — Ի՞նչ բանի յիշատակ է այս ասուր : — Մեր քաղաքին (գիւղին) մէջ ապրող բոլոր մարդիկ մեզ հետ կատարեցին նոյն ասուր : — Ընտանիքներու մէջ բան մը պատարաստեցին մայրիկները՝ ի յիշատակ այս ասուին : — Ահա՛ , տղաքս , կարմիր հաւկիթ մը զոր հետս բերած եմ (այս միջոցին միայն՝ դաստիարակը կը ցուցնէ հաւկիթը) , որովհետեւ մեր այսօրուան դասին նիւթը պիտի ըլլայ այդ սիրուն հաւկիթը՝ որ ոչ միայն պատուական

(1) Հարցումները պէտք է ուղղուին նախ ամբողջ դասարանին . յետոյ ընտրել այն աշակերտը՝ որ պիտի պատասխանէ : — Պատասխանները ամբողջ նախադասութիւններէ կազմուած պիտի ըլլան :

անունդ մըն է , ոչ միայն ձեզ համար Զատիկ խաղալիկ ալ է , այլ նաեւ շատ հետաքրքրաշարժ նիւթ մը :

Յայտյանդիման խմացողութիւն

1. Խեճեպ . — Ըսէք ինձ ականեմ՝ ս'՞՞՞՞՞ կուտայ հաւկիթ : հա՞ւր թէ՛՛՛՛՛ աքաղաղը : — Ինչպէ՞ս կը կոչէք հաւկիթին սաարտաքին , կարմիր մասը : — Հաւկիթին խեճեպը բնականէն կարմիր կ'ըլլայ : — Ինչո՞ւ կարմիր է արեմն այս : — Ինչո՞վ ներկուած է : — Դիտեցի՞ք թէ՛ մայրիկը ինչպէս ներկեց հաւկիթները : — Ի՞նչէ կազմուած է խեճեպը : — Կր յիշէ՞ք թէ ինչ միջոցաւ կրնայինք որչեւ կրաքարերը միւս քարերէն : Ուրիշ ի՞նչ կրաքարեր կը ձանձնաք : — Բայց հար մտքանոյն մէջ քա՞ր սենի որ հաւկիթին խեճեպը շինէ : — Հաւան կլլած քարերը ուրիշ բանի ալ կը ծառայե՞ն , քանի որ հաւերը սկուայ չունին : — Թուեցէք ինձ խեճեպին յատկութիւնները . (Հարցումներու միջոցաւ գտնել տալ ողորկ , դիրւարեկ բառերը) :

2. Թաղանթ . — Հաւկիթը դիրւարեկ է : Կոտրենք զայն : Ի՞նչ կը գտնենք խեճեպին տակը : — Այդ թաղանթը ի՞նչ բան կը պատէ : — Նոր ածուած հաւկիթին խեճեպը ամբողջովին լեցուած է հաւկիթով . բայց ետքը հաւկիթին մէկ ծայրը կը դատարկանայ . գիտէք ինչո՞ւ : Որովհետեւ հաւկիթին մէջ ջուր կայ , և այդ ջուրին մէկ մասը շոգիանալով դուրս կ'ելնէ : — Ո՞ւրիշ դուրս կ'ելնէ : — Մեր մարմնէն ալ ջուր դուրս կ'ելնէ՞ : — Հաւկիթին դատարկ մասը կը մեծնայ թէ՛ կը պզտիկնայ՝ քանի հաւկիթը մնայ : — Հաւկիթին ծանրութիւնը ի՞նչ կ'ըլլայ : — Ուրեմն ի՞նչպէս կարելի է որոշել հինցած հաւկիթը թարմ հաւկիթէն :

3. Սպիտակուց . — Ի՞նչպէս կը կոչէք թաղանթին տակ գտնուող մասը : — Այս կարմիր հաւկիթին և հում հաւկիթին սպիտակուցին մէջ ի՞նչ տարբերութիւն կը գիտէք : — Ուրեմն ի՞նչ բան կը թանձրացնէ սպիտակուցը :

4. Դեղնուց . — Միայն սպիտակուցն է որ կը թանձրանայ տաքութեամբ : — Ո՞ւր է դեղնուցը : — Հում հաւ-

կիթին եւ եփած հաւկիթին դեղնուցին գոյնը բոլորովին նըման է. (ի հարկին դաստիարակը կը կտորէ սկաւառակի մը մէջ հում հաւկիթ՝ դըր պէտք է իր տրամադրութեան տակ ունենայ): — Դիտած էք թէ եփած հաւկիթին դեղնուցին մէջ տեղը, չեփած հաւկիթին դեղնուցին վրայի կողմը ձերմրկեկ բիծ մը կայ. (դիտել կուտայ): Այս բիծը պղտիկ վառեակին (ճեռ) ընծիւղն է: — Ուրեմն ինչով կը սնանի ճետը, երբ տակաւին հաւկիթին մէջ է: — Բայց այդ ճետը պէտք ունի նաեւ օդ չնջելու: Այդ օդը ո՞րքէ ներս պիտի մտնէ հաւկիթին մէջ:

5. Հաւկիթին օգուտները. — Ի՞նչ բանի կը ծառայեն հաւկիթները: — Ի՞նչ կերպ կերակուրներ կը պատրաստեն հաւկիթով: — Կը սիրէ՞ք հաւկիթ: — Պէ՞տք է սիրէք: — Ուրիշ կատարեալ սնունդ կը ճանչնա՞ք, սնունդ մը որով միայն սնած էք ձեր երախայ հասակին մէջ: — Հաւկիթով պատրաստուած դեղ կը ճանչնա՞ք: — Գիտէ՞ք թէ ծաղաբարները, կաշեգործներն ալ հաւկիթ կը գործածեն: — Զատկին ի՞նչ կերպը հաւկիթով շինուած:

6. Հաւկիթներու պահպանութիւն. — Ձեր մայրիկը հաւկիթ գնելու ատեն ի՞նչ բանի ուշադիր կ'ըլլայ: — Ի՞նչ միջոցի կը դիմէ հասկնալու համար թէ հաւկիթը հտտած չէ: — Ի՞նչ բան կը հտտեցնէ հաւկիթը: — Ուրեմն ի՞նչ միջոցի դիմելու է, եթէ ուզենք հաւկիթը երկար ատեն պահել: — Գիտէ՞ք թէ ի՞նչ միջոցի կը դիմեն ծաղաբարները. (կրաջուր):

Բաղդատութիւն եւ ընդհանրացում

Միայն հաւե՞րը կ'ածեն հաւկիթ: — Բոլոր այդ կենդանիներուն հաւկիթները իրարու կը նմանին: — Գիտէ՞ք թոչուն մը որոյ հաւկիթը շատ մեծ է, գրեթէ 12 հաւու հաւկիթի հաւասար. (ցուցնել ջայլեամի պատկերը): Գիտէ՞ք թոչուն մը որոյ հաւկիթը շատ պղտիկ է, հաւու հաւկիթէն գրեթէ 3/40 անգամ ասելի պղտիկ (ցուցնել թոչնածանձի պատկերը): — Յիշեցէք ձուածին անասուններ:

Կիրառութիւն

1. Շարադրութիւն. Դասը խմբագրել տալ:
2. Ընթերցում, Ուղղագրութիւն, Արժանատիութիւն. Ընթերցանութեան գրքին մէջ ընտրել հաւկիթի (օրինակի համար, Քոլոնկոսի հաւկիթը) կամ հաւու (օրինակի համար, առակ) վերաբերեալ հատուած մը: Նոյնը մասամբ կամ ամբողջովին զրուցագրել յետոյ: — Եթէ յարմար է արտասանութեան, գոյ ընել տալ նաեւ:
3. Լեզուի վարժք. Ի՞նչպէս կը կոչուի հաւկիթին արտաքին մասը: Խեցեղէն պատեան (խեցի) ունեցող անասուններ յիշեցէք: Փռնոկ ունեցող պտուղներ յիշեցէք: — Ի՞նչպէս կը կոչուի դեղնուցին մէջ գտնուող սպիտակ բիծը (ընծիւղ, ապրի): — Ի՞նչ բան պատած է սպիտակուցը: Ի՞նչպէս կը կոչուին այն թոչուններն որոց թաթերը թաղանթով պատած են: Յիշեցէք այդ տեսակ թոչուններ: — Ի՞նչ կը նըշանակեն ձկնկիթ (այս բառին առթիւ աշխարհագրական տեղեկութիւն), քիսել, ակիծ (այս վերջին բառին առթիւ մաքրութեան խրատ) բառերը: — Զուր բառով կազմուած բարդ բառեր յիշեցէք: — Ածել բային կասարեալովը խօսք մը շինեցէք եւ ցոյց տուէք այդ խօսքին մէջ գտնուող մէն մի բառի պաշտօնը: — Յոգնակիի, ներկայի, ապառնիի, թէ՛սականի, եւ այլն, վերածեցէք նոյն խօսքը:
4. Գծագրութիւն. Հաւկիթ, ձուածեւ գծել:
5. Թուրքաւնութիւն. Հաւկիթի վրայ գործնական խընդիրներ. (օրինակ. Զատկին գնեցինք 50 հաւկիթ, ամէն մէկ հատը 8 փարայէն. քանի՞ զրշ. տուինք):
6. Հանելուկ. Տուն մը ունիմ. դուրսն սրծաթ է, մէջն սակի:
7. Երգ. Նոյն նիւթին վրայ:

Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

### ԳԵՐՄԱՆ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐՆ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



Կ'ենթադրեմ թէ մեր ուսուցիչք եւ կրթատէրք անտարբեր չեն տեղեկութիւններ ունենալու գերմանական վարժարանաց մասին, սրոց վրայ այնքան խօսուեցաւ 1870 ի պատերազմէն ի վեր: Ֆրանսայի Օրլյեանք քաղաքի վարժապետանոցին ուսուցիչներէն մէկը, Պ. Լ. Ք. Պօն, երկու տարի անցուցած ըլլալով յԱւստրիա եւ ի Գերմանիա, առիթ ունեցած է ի մօտոյ զիտելու գերման դպրոցական աշխարհը: Չէ թերացած մուտ գտնելու ամենուրեք ուր փափաքելի եղած է իւր ներկայութիւնը, ամենուրեք՝ ուր դուռ մը բացուած է իրեն, — երբեմն սիրալիր կերպով, ինչպէս կը խոստովանի: Մերթ ընդ մերթ նշաւակ ալ եղած է չարածճի կատակներու եւ մերժում կրած, բայց փոյթ չէ ըրած, նկատելով թէ հետաքրքրութիւնը կը տուժէ միշտ, ուստի եւ չէ ցաւած: Փափաքած է տեսնել ու տեսած է:

Այս ուսուցիչ իւր մէկ ընդարձակ յօդուածին մէջ կը նկարագրէ գերման ուսուցչին այլ եւ այլ տիպերը, Բրուսիացի վարժապետը, դպրոցական յաճախումը՝ Գերմանիոյ մէջ, գերման դասարանի մ'ընդհանուր տեսարանը, դպրոցական կարգապահութիւնը, տարեկան քննութիւններն՝ ի ներկայութեան ծնողաց, եւ իւր յօդուածը կը վերջացնէ՝ ամիտօք զայն ու ինչ ինչ եղբակացութիւններ հանելով: Ծահեկան համարեցանք մենք ալ հայացնել նկարագրութիւնն այդ ուղեւորական տպաւորութեանց, մեզ վերապահելով մեր անձնական կարծիքներն ինչ ինչ կ'իտերու մասին:



Հինաւուրց վարժապետին տիպը կ'երեւի թէ բաւականաթիւ ներկայացուցիչներ ունի Գերմանիոյ մէջ: Եթէ ո՛ր եւ է հեռւոր զիւզ մը երթանք լեռնուս գաւառի մէջ, ապահովապէս պիտի հանդիպիք անոր: Երեսը համակ ածիլուած, խոշոր մազերն՝ իւր մաշած աւանդական յրճեկկօրին

կռնակն ի վար կախուած, գիւղի հինաւուրց շուրճայարուր (վարժապետ) կը ճանչցուի առաջին հայեցուածով: Ոսկի շքեղանակով խոշոր ակնոցներ իւր դէմքին անհրաժեշտ քրտուցիչն են: Իւր շարժումները պերճախօս ու հոգեշահ են, խկերը խօսած միջոցին վեր կը վերցնէ ձեռքը, կը թուի թէ կ'օրհնէ ունկնդիրներն ու թողութիւն կուտայ անոնց: Իւր խօսքը, որ ծանր ու լարջ է, պատուելիական բազդատուութիւններով պնտուած եւ մերթ անախորժ ու գեւհիկ զիտուղութիւններով համեմուած, շեշտի ու դարձուածքի կողմէ կը յիշեցնէ քարոզիչներէ ամանց քարոզը: Նա ինքզինք միշտ դասարանին մէջ կը կարծէ ու չի վատուիր երբեք հանդիսաւոր բրտութենէ մ'ու վարդապետական կերպարանէ մը՝ որ բաւական տաղտկալի է: Գալով իւր զիտութեան, չափազանց պահանջկոտ մի՛ լինիք. Սուրբ Գրոց վրայ բաւական ընդարձակ ծանօթութիւն մը, թուագիտութեան ու քերականութեան վրայ պատշաճ գաղափարներ, ահա՛ իւր զիտութեան ամենէն հաստատուն մասը. ասկէ դուրս եղած ամէն բան իրեն համար պերճանք մ'է՛ իրմէ զատ օւրիշներու վերապահուած: Բայց նա կարդացած ու նորէն կարդացած է մանկավարժական քանի մը ձեռնարկներ կամ պատմութիւններ. կը ճանչէ Պետտարոցցին մինչեւ վերջին ստորակէտը, մինչեւ խկ կ'ուսումնասիրէ Հերբարտի քիչ մ'անհարթ դրութիւնը: Ուրեմն կատարեալ մանկավարժ մ'է, ու կը ձգնի իւր դասին մէջ գործադրել մեծ վարպետներուն խորհուրդներն ու կանոնները, որով կը յաջողի մի միայն աւելի սովետական ու աւելի ապարդիւն ընել իւր դասաւանդութիւնը:

Հինաւուրց վարժապետին հետ համեմատենք նորահաս զիտունը, որ Սեւիկնառէն (վարժապետանոց) ելնելով բախտ ունեցած է ի պաշտօն կոչուելու համալսարան ունեցող կարեւոր քաղաքի մը մէջ եւ արձանագրուած է՝ այն ներկուս հաստատութեան դասընթացքին հետեւելու համար: Երեսունամեայ հասակին մէջ, եթէ լու աշխատած է, կը լինի Տօֆ-

բոր Ֆիլոսոփիայութեան վարժապետ, եթէ կը հաճիք: Այլ եւս հմտութեան հոր մ'է նա. հիմնովին գիտէ՝ եթէ իւր ճիշդն է, ամէն ինչ զոր մարդ մը կրնայ գիտնալ մանկավարժութեան վրայով. ամէն ինչ, գրքի մը հրատարակման թուականէն սկսեալ՝ մինչեւ այս ինչ կամ այն ինչ ճառին գլուխներուն թիւը: Սակայն եթէ հարկ է ճշմարիտը խօսիլ, քանի մը յարգելի բացառութիւններով, այսպիսին խիստ շատ անգամ կը զգուշանայ իւր կարծիքը յայտնելէ՝ յուզուած խնդիրներուն վրայ, այլ ինքզինք կը գոհացնէ՝ կարենալով թուարկել մի եւ նոյն նիւթին վրայ այլոց կողմանէ յայտնուած տարբեր կարծիքները, եւ իւր յիշողութեան մէջ բարեպաշտօրէն կը խօսակցի անոնց հետ՝ առանց որոշ եզրակացութեան մը յանգելու կամ անոնցմէ մէկուն յարելու: Այս երիտասարդ տարիներէն ունայնք երբ կը կոչուին փողովըդաշին դպրոցներու կամ կարեւոր բարձրագոյն նախակրթարաններու տնօրինութեան, բաւական հրճուանօք իրենց հետ կը տանին իրենց ծանրակիր գիտութիւնն եւ գիտեն՝ ի պահանջել հարկին՝ ակուսի մարդ ըլլալ: Դասական թիկնոցըն ի հարկէ ուղեկից է միշտ իրենց, բայց ոսկի շրջանակով ակնոցները տեղի կուտան վայելուչ քթակնոցին, եւ մօրուքին կ'ընծայուի սրածայր ձեւ մը, ըստ Փրանսականին: Ասոնք են ուսուցչական արհեստագետութեան արհեստագետները:

Սոյն կրկին ծայրերուն միջեւ, այն է՝ հէք Տօնֆշուրի-նըրի (գիւղի վարժապետ) ու հեռ Շուրշիտեքօրի (քաղաքացի մէջ դպրոցի Պ. Տնօրէն) միջեւ, կայ ուսուցչներու գլխաւոր խումբը, որ նոյնպէս կը տարբերի իր մէջ: Այս խումբին մէջ կարելի է գտնել յաճախ՝ ուսուցչին այն համետ ու անձնուէր տիպարը՝ որ ընդհանուր կանոն է Փրանսացիներուն մէջ: Ընտանիքի բարի հայր, ըստ բաւականին ուսեալ, իր պարտաւորութիւնները կատարելու մասին եռանդուն, քիչ ազմուկ հանող ու շատ աշխատող, ջանալով աւանդել իր աշակերտաց այնպիսի ուսումներ որոց պէտք պիտի ունենան գործնական կեանքի մէջ, եւայլն:

Բայց չյատկանիչեցինք դեռ ճշմարիտ տիպարը, պաշտօնական տիպարը, զայն՝ որ այժմ ամենէն լաւ կը պատկերացնէ ուսուցչին մաստիպարը, դէթ այնպէս՝ ինչպէս մտովի կը պատկերացնեն վարչական ու դպրոցական իշխանութիւնք: Ահաւասիկ:



Գերմանացիք ի զուր կը ջատագովեն իրենք զիրենք, ի զուր կը փափաքին խաբել իրենք զիրենք, անուրանալի իրողութիւն մ'է թէ իրենց կայսրութիւնը ի վեր քան զամենայն զինուորական պետութիւն մ'է: Այս այսպէս է նոյն իսկ իրաց բնական բերումովը, ըստ որում պատերազմէ մը սերած, իր կացութիւնն իսկ՝ արեւելքէն ու արեւմուտքէն լայնապէս բացուած դաշտագետներով երկրի մը մէջ, զինուորական կազմակերպութեան մը կը հարկադրէ զայն՝ բոլոր կանխահոգ միջոցներն ի գործ դնելու՝ ամէն պատահականութեան դէմ: Նոյն իսկ արդի կայսրը կը հաստատէր թէ պաշտօնակալներն այս մասին առաջնակարգ զիրք կը գրաւեն ու կը կատարեն զլիաւոր դերը: Դպրոցական ընդհանուր կարգապահութիւնը, — սովորական վարչութեան կամ ոստիկանութեան տեսակէտով —, կը յիշեցնէ բանակին կարգապահութիւնը: Դաստիարակութիւնը, վերջապէս, սանդուխին բոլոր աստիճաններուն մէջ, էպպէս զինուորական է:

Գերման ուսուցիչը, ինքն եւս, խառնուած է պաշտօնէից ստուար բանակին մէջ յիմնապետի մը պէս՝ որուն յանձնուած է փոքրաթիւ զօրախումբ մը, իր դաստարանը, ուր կարգապահութիւնը խստիւ կը պահանջուի: Եւ նա յօժարակամ կը համակերպի այս դերին:

Իրուսիացի ուսուցիչն ունի հրամանատարի ընթացք, չարժում եւ մինչեւ իսկ շեշտ: Մարմինն՝ անպէն զինուորի զիրքին մէջ, նա կ'երթեւեկէ դաստարանին մէջ՝ իր դասակը զննող յիմնապետի մը պէս: Իր սրտոնդոստ ձայնը տեղի չի տար ո՛ր եւ է գիտողութեան եւ կ'սպասուի միշտ որ՝ եթէ

աշակերտներէն մէկը յանցանք մը գործէ կամ անխորհրդաբար վարուի՝ հնչեցնէ զօրանոցի այն յանկերգը, « Երկու օր ոստիկանութեան սրահը » : Պատճառըն այն է որ կ'ուզէ շնայսիդ (կտորուկ) ըլլալ՝ ձագկանքի դատապարտելով բոլոր իր աշակերտները մի առ մի : Անշուշտ շատ պիտի զարմացնէին զինքն երբ ըսէին իրեն թէ ուսուցիչը պարտի քաղցրութեամբ վարուիլ իր աշակերտաց հետ : Բրուսիացի ուսուցիչը կանոնադրութիւնը միայն կը ձանչէ եւ արագաքայլ կը դործադրէ մանկավարժութեան մեթոտները :

Ամենէն առաջ՝ կրթական պաշտօնեայ ըլլալով հանգերձ, բրուսիացի ուսուցիչը մասամբ իւրք երէցի հանգամանք եւս ունի, ըստ որում ընթերցողը զիտեն անտարակոյս թէ գերմանական վարժարանաց յայտագրին մէջ չի կայ բարոյական ու քաղաքացիական կրթութեան ուսումը, ինչպէս է Ֆրանսայի մէջ . այլ կրօնի ուսումը կը բռնէ անոր տեղն եւ կը նկատուի՝ ըստ պաշտօնական կանոնադրութեանց՝ ամենակարեւոր տարրն այն ամէն ուսմանց որք կ'աւանդուին նախակրթարանին մէջ : Ուսուցիչն ամենամեծ եռանդով կ'աւանդէ կրօնի ուսումը : Մի եւ նոյն կտրուկ չեշտով, որ թէեւ ձայնի հոգեյոյզ երանգով մը բարեխառնուած է, իր աշակերտաց կարգալ կուտայ Սուրբ Գիրքն ու անոնց կը բացատրէ կրօնի պատմութեան իրադարձութիւնները (փերիփիսի) : Եւ, ստուգիւ, ուշադրու եւ շահեկան է զիտել ուսուցիչն այն պահուն՝ ուր կը մեկնէ Տովրիթի կամ Երբայեցուց պատմութեան հատուած մը : Յայնժամ արդարեւ կ'իրագործէ գերմանական նկարագրին հիմը կազմող էական տարրերը :

Միայն բրուսիոյ մէջ չի՛ գտնուիր ուսուցչի այս տիպաբը զոր ուրուագծեցինք վերեւ, այլ եւ գերմանական, մինչեւ իսկ աւստրիական դաւառաց մէջ : Կարելի է անոր հանդիպիլ Թիւրէնի, Սաքսոնիոյ, Սառլին Աւստրիոյ մէջ . . . ամենուրեք, եւ ի հեճուկս իրենց դաւառացի պաշտօնակիցներուն, իրենք կ'ստանան յաճախ ամենէն կարեւոր պաշտօնները : Ամենքը մի եւ նոյն դպրոցին մէջ ձեւակերպուած

ըլլալով, ժրջանորէն եւ կատարելապէս կը ծաւալեն մի եւ նոյն ոգին որով տոգորուած են :

Մեծ է անոնց ազդեցութիւնը ժողովրդեան վրայ : Ըսուեցաւ թէ ուսուցիչը յիսնապետ մ'է գրեթէ, ուստի ամբոխը կը յարգէ զայն, որ թէեւ ստորագաս պաշտօնեայ մը, բայց Պետութեան ըստ օրինի իշխանութիւն ստացած է : Կառավարութեան յարգը շատ բարձր է Գերմանիոյ մէջ : Այսպէս է նաեւ ուսուցչին նկատմամբ : Ընտանիքներն՝ առանց բացառութեան՝ կ'ընդունին անոր հեղինակութիւնն ու կը խոնարհին այս հեղինակութեան առջեւ : Սրբէն կը յանձնարարուի ուսուցչին որ մօտաւոր յարաբերութիւններ ունենայ ընտանիքներու հետ . ուսուցիչն ալ կը համակերպի այս յանձնարարութեան՝ թէեւ երբեմն անհարթ ձեւերով : Երբեմն ընկերութիւն մը կը կազմակերպէ ազգականներու միջեւ, եւ ինքն է այդ ընկերակցութեան գլուխն ու բազուկը : Օրուան լեզուով խօսելու համար, կոչում կ'ընէ անհատական նախաձեռնութեան, նպատակ ունենալով զօրավիզն ըլլալ դպրոցին, երկարաձգել ապահովել իր յաջող գործունէութիւնը տղայոց վրայ եւ տուներուն մէջ :

Միջակ կարեւորութիւն ունեցող գիւղախումբերուն մէջ, առ առաւելն մէկ անձ միայն կայ՝ զոր ուսուցիչն իրմէ վերագաս կը ձանչէ (ի բաց առեալ անշուշտ վարչական անձնաւորութիւնները) դատարարակութեան վերաբերեալ ամէն բանի մէջ, այն է՝ երէցը կամ հովիւը : Այս վերջինը միայն գերագաս հեղինակութիւն մ'ունի, եւ ուսուցիչը՝ որ լուզիտէ զայս (ըստ որում յաճախ կրկնուած է իրեն), հնազանդելու միայն պարտաւոր է : Նախօրէն Ա. բարոյականի պաշտօնակալ կ'անուանէր երէցները : Սրդ, գիւղի վարժապետը, ինքն ալ, եթասպայ մ'ըլլալով՝ այս վերջիններուն կը պարտի տալ կանոնական ողջոյն եւ յայտնել կատարեալ հնազանդութիւն : Թո՛ղ զայս, դպրոցական կանոնադրութեանց ոյժով, կ'ըբը բարոյական հսկողութեան դեր մ'ունի ժողովրդային դպրոցներուն վրայ թէ՛ ի մասին ընդհանուր



կրթութեան եւ թէ՛ մասնաւորապէս կրօնի ուսման: Ահա՛ իրողութիւն մ'եւս որ կ'ապացուցանէ գերմանական եւ մասնաւոր բրուսիական դաստիարակութեան սոյն կրկին հանգամանքը: Ուսուցիչն ու երէցն են ժողովրդեան երկու մեծ դաստիարակներն, որք կը լծորդեն շարունակ իրենց Զանգերը, առաջինը ստորագասուելով երկր՝ բղին (1):

\* \* \*

Այժմ որ կը ճանչենք այս ենթասոյց ուսուցիչը, տեսնենք՝ եթէ կը հաճիք՝ թէ ի՞նչպէս մարդէլ կուտայ իր աշակերտները:

Սակայն մի՞ գուցէ կարծուի թէ քմահաճոյքով է որ մինչեւ ծայրը կը հասցնենք բազրատութիւնը: Արդարեւ պէտք չէ չափազանցել, բայց իրօք այս մտահար հանգիստութիւնն է որ ամենէն խոր տպուար լթիւնը կ'ընէ օտարականի մը վրայ եւ աւելի լաւ կը պարզէ գերման դաստիարակութեան ընդհանուր ոգին: Շարունակենք ուրեմն:

Ուսումը պարտաւորիչ է Գերմանիոյ մէջ, ինչպէս Ֆրանսայի մէջ, եւ վարչութիւնը կը հսկէ որ օրէնքը ճշդիւ յարգուի: Բաւական է որ տղայ մը բացակայ գտնուի դպրոցէն, իր ծնողք պատասխանատու կը ճանչցուն՝ եթէ բացակայութեան համար կը պակտի օրինապէս ընդունելի պատճառ. առաջին անգամ, կը պատժուին տուգանքով մը, որ թէեւ բաւական թեթեւ՝ բայց անխուսափելի է. իսկ եթէ բացակայութիւնը կրկնուի, գիտէ՞ք թէ ո՛ր կրնան ուղարկել

(1) Սակայն, քանի մը տարիէ հետէ, գերման ուսուցիչներուն կողմէ երկչոտ ընդդիմութիւն մը ցոյց կը արուի երէցին լուծը կրելու: Ոմանք կը տրանջան կրօնական պարտաւորիչ ուսման դէմ, եւ կ'ուզեն հետեւիլ Ֆրանսայի օրինակին՝ պահանջելով, ի միջի այլոց, բարոյականի ուսման ներմուծումը դպրոցին մէջ: Բայց այս փորձերն այնչափ երկչոտ են՝ որ բնաւ ի նկատ չեն առնուիր վարչութեան կողմէ, ուստի եւ ապարդիւն կը մնան:

տղան . . . : Պարզապէս բանտը, պիտի ըսէի՝ ոստիկանատունը: Ճշմարիտ է թէ դպրոցային իշխանութիւնք յաճախ առիթ չեն ունենար գործադրելու այս պատիժները, ըստ որում աշակերտք իրազեկ ըլլալով ստոյն՝ կը դգուշանան բացակայութենէ, որով կարգապահութիւնը կը տիրէ դասարաններուն մէջ: Բայց ամէն անգամ երբ հարկը պահանջէ, դպրոցային պատժական օրէնքն անվրէպ կը գործադրուի բոլոր հնարաւոր խտուրթեամբն: Գերմանիոյ մէջ, անգործարեկի չեն դպրոցային յաճախումն ապահովելու միջոցները, ինչպէս են այլուր:

Պարտաւորիչ ըլլալու սկզբունքն աւելի ընդարձակ կիրառութիւն ունի քան Ֆրանսայի մէջ: «Կատարելագործութեան դպրոցներ» կոչուած հաստատութիւններ կան՝ նախակրթարաններէ ելած 14-17 տարեկան պատանիներուն յատուկ, գործաւոր թէ՛ արհեստի աշակերտ: Այս հաստատութեանց յաճախումն եւս, Կայսրութեան այլ եւ այլ տեղերը, նոյնչափ պարտաւորիչ է, զոր օրինակ Սաքսոնիոյ մէջ, ուր ստուգիւ յատկանշական միջոց մ'ի գործ կը դրուի կրթական փարսիւր բերելու համար այն աշակերտներն որք ուզեն ըստ հաճոյս բացակայ գտնուիլ: Ուսուցիչները կը ծանուցանեն դպրոցին բարոյականին եւ՝ ի հարկին՝ ոստիկանութեան գործակալի մը, որ դպրոց բերեն կանոնազանցները: Շատ տարակուսելի է որ այս հնարքը Ֆրանսայի մէջ ժողովրդական լինի, եթէ երբեք մէկուն միտքը գոյ ներմուծել զայն: Բայց ի՞նչ ընենք: Գերմանիոյ մէջ դպրոցէն բացակայ գտնուող աշակերտին հետ ճիշդ այնպէս կը վարուին ինչպէս՝ դասալիք եղող զինուորին հետ, որ ընդ հսկողութեամբ կը տարուի զօրանոց:

Նաեւ, 14-17 տարեկան բոլոր պատանիներուն՝ մի եւ նոյն կատարելագործութեան դպրոցները յաճախումն ապահովելու մտօք է որ ոստիկանութիւնը, Լայպցիկի մէջ, զոր օրինակ, տնափոխութիւններու պարտաւորիչ յայտարարութեանց շնորհիւ, ամէն ամիս կրնայ դպրոցին տնօրէններուն

տալ ցուցակն այն պատանիներուն որք նորեկ են թաղին մէջ եւ դպրոց յաճախելու պարտական :

Եթէ, այսպիսի կանոնադրութիւններ ի դօրութեան կենալով հանդերձ, գերմանացի տղան չի վարժուի կարգապահութեան եւ օրինապահութեան, պէտք է խոստովանիլ թէ արդարեւ խեռ եւ ըմբոսս է, բայց ընդհուպ կը թեքի այս ազգու հրահանգումով, եւ անգամ մ'երբ վարժուի, այս վարժութիւնը կը յեւէ ցորչափ կեանք ունենայ :

\* \* \*

Եթէ կը հաճիք, այժմ՝ այցելենք գերմանական դպրոց մը՝ սակաւ ինչ տեսնելու համար թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ հոն :

Գերման ուսանողն, երբ ճամբոյ կ'ելնէ դպրոց երթալու համար, ինքն ալ իր մասնաւոր դիմագիծն ունի. բաւական հանդարտիկ կը քալէ, կրելով յաճախ հանրածանօթ բուրակ կաշեզլխարկը (ֆեյկի), զանազան գոյներով, ըստ այն դասարանին կամ դպրոցին՝ որուն կը վերաբերի. կապոյտ, կանաչ, նարնջագոյն, եւայլն. . . : Սա համազգեստի սկզբունաւորութիւն մ'է : Իր թիկունքին վրայ, աշակերտական պայուսակը կը պարունակէ պիտանի առարկայները. տետրակներ, դասագրքեր, գրիչներ, եւայլն. . . : Փոքր սպունգ մը, որ առասանով մը կապուած է անհրաժեշտ քարէ տախտակին, պայուսակէն դուրս կը կախուի եւ կը տատանի չափով. պահ մը յառաջ, դասարան մտած պահուն, եթէ աշակերտը հոգ տարած չէ իր սպունգը թրջելու տան մէջ՝ դպրոց մեկնելէ յառաջ, պիտի պատժուի :

Դասարան մտնելու ժամը կը հնչէ. իսկոյն բոլոր աշակերտները կը շարունին երկու կարգի վրայ եւ « հապ օ՛ն, յառա՛ջ » . այնուհետեւ վաշտը զենքի տակ է դասի բոլոր տեւողութեան միջոցին : Ստորին դասարաններու աշակերտք կ'երգեն դպրոցական որ եւ է քայլերգ մը՝ դրոշմելով իրենց քայլերը : Իրօք, Գերմանք շատ երգասէր են եւ կ'երգեն

ընտանիքներու եւ դպրոցի մէջ. Գերմանիա է երգի համբաւաւոր երկիրը, որուն ժողովուրդը կը նկատէ երգն իբր իր ազգային կամ հայրենի ժառանգութեան ամենէն պատուական տարրերէն մէկը, ըսելով թէ Պեօգե մեկընըն հապըն ֆայնէ շիսըն (Չար մարդիկ երգ չունին) :

Իւրաքանչիւր աշակերտները իր տեղն երթայ, կանգ կ'առնու յանկարծ ու կը սպասէ բարձրագլուխ. ուսուցչին մէկ նշանին վրայ, աղօթքը կ'սկսի միաբերան : Այս բարեպաշտիկ արաստանութեան աւարտումէն յետոյ, բոլոր աշակերտք կը նստին ուսուցչին ճպտոյ մէկ հարուածով, ու այնուհետեւ անշարժ կը մնան իրենց դախտերուն վրայ : Հրահանգը կ'սկսի :

Երբ ուսուցչին իրատեսական մ'ունի ընելու, աշակերտք պարտաւոր են բացարձակապէս անշարժ մնալ. վա՛յ անոր որուն սրունքը կամ բազուկը զծէն դուրս է : Իսկոյն իր վերայ կը հրաւիրէ շանթահարիչ սաստ մը : Մարմնոյ դիւրքը պարտի անստգիւտ ըլլալ. լաւ նստած, մարմինն ուղղորդ, ձեռքերը սեղանին վրայ խաշածեւ դրուած, կանակը յենարանին կրթնցուած : Իրիքի մասին որ եւ է անհոգութիւն ներելի չէ. դուրսը պէտք չէ որ ծոխ, արմուկի վրայ կրթնելով պէտք չէ որ ձեռքը ծնօտին տարուի : Տեսնուեցաւ սակայն թէ ստորին դասարաններու աշակերտներ մեծ դժուարութիւն կը կրէին համակերպելու դիւրքի այսպիսի անշարժութեան, եւ դարձեալ բնագոյով կը դրդուէին կարգապահութեան հակառակ շարժումներ ընելու :

Երբ հարկ լինի գործածել դասադիրք, տետրակ, գրիչ, ուսուցչին մասնաւոր մէկ պատուէրը՝ աշակերտներն ի միասին շարժման մէջ կը դնէ. « Փէտըս ին հանտ » (գրիչ ի ձեռին). մէկ, երկու, . . . եւ իւրաքանչիւր օք կազմ եւ պատրաստ դիրք մը կը ստանայ գրելու : Եւ կամ դարձեալ. « պիւլըս հէռա՛ուս » (հանեցէք դասագրքերը). — « Շլաւ կըթ աուֆ, գայթէ . . . » (բացէք, էջ . . .). — եւ դիտելի միասնութեամբ մը դասագրքերը դուրս կը հանուին

ստուգարատուիերէ (քարթօն) ու պահանջուած էջը կը բացուի: Բայց սա ոչինչ է դեռ բազմատմամբ զրավարժութեան այն դասերուն՝ որոց բազմիցս ներկայ գտնուեցայ կարեւոր դպրոցի մը մէջ, վարժապետանոցի մը յարակից: Ուսուցիչը գիր գրել կուտար իր 6-8 տարեկան աշակերտաց, չափով (բառին բուն եւ ճիշդ նշանակութեամբը): ձեռքը բռնած էր փոքր ճպոտ մը, որով փոքր չոր հարուածներ կուտար սեղանի մը վրայ, եւ, իւրօքանչիւր հարուածի, դասարանին բոլոր տղայք հաստ կամ բարակ զիծ մը կը գծէին. զոր օրինակ ա գիրը կը կազմուէր երեք անգամով ու վեց շարժումով: Գերմանական սրածայր ու սղոցածե գրերը շատ լաւ կը նպաստեն սոյն տարբազարութեան: Եւ օտարականի մը համար շատ զուարճալի է անշուշտ տեսնել թէ բոլոր գրիչները մի եւ նոյն կերպիւ կը շարժին մի եւ նոյն վայրկենի մէջ:

\*  
\* \* \*

Դպրոցական կարգապահութեան վրայ խօսելով, Գերմանացի աշակերտք շատ հլու են, եւ անոնց այս հրովիւնը բնածին է՝ ամէն բանէ յառաջ: Ֆրանսայի մէջ, կը նշաւակուի թէ գերմանական խառնուածը դանդաղ է. մեր կարծիքով՝ այս նշաւակումը տարապայման է: Պէտք է գէթ դանազանել Հարաւային Գերմանացին Հիւսիսայինէն, Հռենոսի ափունքի Գերմանացին՝ Փոմերանիացիէն: Այսու ամենայնիւ, գերմանական դանդաղութիւնը վառվռուն հակապատկեր մը կը կազմէ կեղտական ուժգնութեան հետ, եւ նորատի Ֆրանսացիները գերմանացի դպրոցականներէն տարբեր կերպով դժուարագուստ են: Առաջիններն անհանդարտ են՝ ազատ ձգուած փոքրիկ ստատաններու պէս, իսկ վերջինները՝ հրեշտակներու պէս հանդարտ, իբր թէ Պետրոս առաքեալ հսկէր անոնց վրայ:

Եւ սակայն, որչափ եւ հլու են գերմանացի դպրոցականները, շատ խիստ ու ճիշդ կարգապահութիւն մ'ի գործ կը գրուի իրենց նկատմամբ: Սահմանուած պատիժները փա-

փուկ չեն ու կը հասցունին մինչեւ հարուածներու, — ի միասին հաշուելով: Ինչ որ Ֆրանսացուց կարծիքով բարբարիկ է, ինչ որ ծանրապէս նախատական կը համարուի թէ՛ ուսուցչին եւ թէ՛ աշակերտին արժանապատուութեան տեսակէտով, Գերմանիոյ մէջ չեն վախնար օրինաւոր եւ մինչեւ իսկ անհրաժեշտ հաջակել զայն: Բրուսիոյ դպրոցային կանոնադրութիւնները բացայայտ կերպիւ իրաւունք կուտան ուսուցիչներուն, որ մարմնական պատիժներ տան իրենց ըմբոստ ու կանոնազանց աշակերտներուն: Եթէ երբեք հարուածները հեռք թողուն, այդ հարուածներն արժանապէս կրողին համար աւելի՛ գէշ: Ահաւասիկ վաւարական իրողութիւն մը, որ անցեալ ամրան մէջ տեղի ունեցաւ Շիթթիթին (Փոմերանիա) քաղաքի դպրոցներէն մէկուն մէջ:

Աշակերտ մը, որուն ընդհանուր վարքը յոյժ գոհացուցիչ էր, օր մը դասի ժամանակ զուարճութիւն կը գգայ գորիչներ նետել տախտակամածին վրայ: Իսկոյն, ուսուցիչը կը հրամայէ անոր՝ ժողվել զայնս: Տղան տեղէն բնաւ չի շարժիր: Ուսուցիչը նորէն կը հրամայէ, եւ այս հրամանին արդիւնքը կը լինի կանոնազանց աշակերտին զուարթութիւնը շարժել: Ուսուցիչն երրորդ անգամ կ'ազդարարէ, աշակերտը դարձեալ լրբօրէն անշարժ կը մնայ: Յայնժամ Շիթթիթինցի ուսուցիչը կը բռնէ չարածճի աշակերտին օձիքէն եւ զաւազանի քանի մ'ուժգին հարուածներ կուտայ անոր ծանօթ մէկ տեղւոյն: Բայց ահա՛ հարուածները հետքեր կը թողուն. բժշկական վկայագիր մը կը հաստատէ զայս. ընդհանուր դատախազին կը հասցնեն գործը, եւ ահա՛ մեր ուսուցիչը հրաւէր կ'ընդունի դատարան ներկայանալու: Յանցաւոր կը ճանչցուի եւ կը դատապարտուի մեծագումար տուգանք մը հատուցանելու: Բայց խնդիրը փակուած չէր: Դպրոցի վարչութիւնը, — այո՛, վարչութիւնը —, իմացաւ իրողութիւնը, եւ ճշգրիտ տեղեկութիւններ ստանալով պատահած միջադէպերուն վրայ, բոլորք բարձաւ դատարանին վճռոյն դէմ, պաշտպան կանգնելով ուսուցչին: Իրօք, դա-

տաւորները հաստատեցին թէ մարմնական պատիժն անհրա-  
 ժեշտ եղած էր տղուն անպատշաճ վարմունքովը, թէ այս  
 պատժոյն նպատակակէտն էր Կարգապահութիւնը, թէ այս  
 պատիժը՝ որչափ որ հետքեր թողած էր՝ վնասած չէր բնաւ  
 տղուն առողջութեան, թէ անոր արդիւնքն եղած էր բար-  
 ւոքել զինքը բարոյական տեսակէտով, եւ հետեւաբար թէ  
 ուսուցիչն անպարտ է . . . :

Կատարելագործութեան դպրոցներուն մէջ, զորս յիշե-  
 ցինք վերեւ, կայ մութ խորշ մը՝ որ իբր զնդան կը ծառայէ :  
 Եթէ աշակերտ մը կանոնազանցութիւն մը գործէ, կամ ե-  
 թէ դպրոցէն բացակայ գտնուի առանց ո եւ է ընդունելի  
 պատճառի, ուսուցիչը կրնայ զայն բանտարկել մէկ ժամ,  
 երկու ժամ, մինչեւ անգամ ամբողջ մէկ օր (կիրակին նա-  
 խագասուելով) այս ամիսոյն բանտին մէջ :

Երբեմն ալ կը պատահի որ ուսուցիչը պատիժ մը անօ-  
 րինէ աշակերտի մը՝ այն յանցանքին համար զոր սա գոր-  
 ծած ըլլայ փողոցին մէջ, դասաժամերէն դուրս, կանոնադ-  
 րական հսկողութենէն դուրս : Մաքստնիոյ մէջ, վերջերս հայր  
 մը դատ բացած ըլլալով այս պայմաններուն մէջ իր զաւա-  
 կին տրուած պատժոյ մը համար, դատարանը մերժեց եղած  
 պահանջումը, հաստատելով թէ ուսուցիչը պարտաւոր էր  
 կատարել իր դատտիրարակի պաշտօնը, ուստի եւ գործօն ու  
 ազդու հսկողութիւն մ'ի գործ դնել իր աշակերտաց վրայ,  
 ո՛չ միայն դատարանին մէջ, այլ եւ ամէն տեղ ու ամէն ժա-  
 մանակ : — Ահա՛ ուսուցչական պաշտօնի անսխալ ըմբռնում  
 մ'այնպիսի ազգի մը մէջ՝ որ ունի իր բնորոշ նկարագիրը,  
 բայց, ըստ ումանց, աւելորդ են գանձակոծութիւնն ու բան-  
 տարկութիւնը :

\* \* \*

Գերմանիոյ մէջ, եթէ պատիժներն այնչափ զարգացում  
 գտած են, յոյժ ցանցաւ են աշակերտաց բախտած պար-  
 գեւները : Նա որ կը հնազանդի իր մեծին հրամաններուն  
 եւ կանոնադրութեան պատուէրներուն՝ ճիշդ ու ճիշդ կատա-

րած կը լինի միայն իր պարտականութիւնը . այս պարտա-  
 կանութիւնը կատարելու մէջ թերացող աշակերտը կը պատ-  
 ժուի, բայց երբեք չի վարձատրուիր կարգերուն մէջ կանո-  
 նապահ եղած եւ փողոցին մէջ իր մեծին հետ յարգանք  
 վարուած ըլլալուն համար : Գերմանացի դպրոցականը իր  
 արձակուրդի զբօսանքներուն պարամպած միջոցին, հաճոյք  
 չզգար տեսնելով թէ ոսկեգօծ եւ պատկերազարդ զեղեցիկ  
 գրքեր վիճակած են իրեն՝ զծագրութեան, թուաբանու-  
 թեան ու մարմնամարզութեան մէջ ըրած յառաջգիմու-  
 թիւններուն ի վարձ :

Պարզեւարայնութեան փոխան, արիչ աւելի գործնա-  
 կան հանդէս մը տեղի կ'ունենայ : Յաւարա դպրոցական  
 տարւոյն, ծնողք կը հրաւիրուին ներկայ գտնուիլ հրապարա-  
 կային դասախօսութեան մը, ուր ուսուցիչն իր աշակերտները  
 կը հարցաքննէ՝ ինչպիս սովորական դասի մէջ, որով կարծես  
 թէ կ'ուզուի ներկայ հանդիսականներուն նմոյշ մ'ընծայել  
 առօրեայ սովորական դասաւանդութենէն : Ծնողք, դասա-  
 րանին շուրջը շարուած երկար նստարաններուն վրայ նստած,  
 իրենց տղայոց չափ անշարժ կեցած, մտիկ կ'ընեն կրօնավա-  
 յել մտանիտիումով : Ուսուցիչը իր դարեւանդակին վրայ  
 կանգուն, որոշ նիւթ մ'ընտրած ըլլալով՝ կ'ընէ իր հարցում-  
 ները . իւրաքանչիւր աշակերտ, կարգաւ, կ'ենէ մէկէն,  
 եւ հակիրճ ոճով մը կը պատասխանէ եղած հարցումներուն :  
 Ծուարում ներքի չէ . բայց երբ մէկը չկարենայ պատաս-  
 խանել, քովի ընկերը ինքնին կ'ելնէ ու կը շարայարէ արագ  
 արագ : Տարեկան այս քննութիւններն ալ կը ծառայեն կըր-  
 թելու հրահանգելու աշակերտները, ուչազիր ու սքանչացած  
 ծնողաց առջեւ :

Ուրիշ պարագայ մ'ալ, տարին քանի մ'անգամ, կը հա-  
 մախմբէ աշակերտներն ու ծնողները մեծ դասաօրահին մէջ :  
 Աֆրիւան (պաշտամունք) է այն : Ամէն կարեւոր տարեդարձի,  
 ինչպէս Կայսրութեան հաստատման, կամ Կայսեր ծննդեան  
 տարեդարձը, եւ կամ նշանաւոր թուականները (ի միասին

հաշուելով Սըտանը), ուսուցիչներէն մէկուն պաշտօն կը յանձնուի հրապարակային բանախօսութիւն մ'ընել:

\* \* \*

Կրթութիւնը գործնական է մանաւանդ: Դպրոցին մէջ կ'ուսուցանեն միայն այն բաները որք կրնան ճշդիւ օգտակար ըլլալ սպառազայ քաղաքացիին ու հըու գործաւորին: Ուսման յայտագիրները չեն այնչափ խճողուած կամ այլապան որչափ Ֆրանսականները, եւ սակայն դպրոցական ուսմանց չըջանը կ'երկարաձգի մինչեւ Վերդ տարին: Բայց պէտք չէ կարծել թէ ուսուցիչներն ու աշակերտները կը զուարճանան այս երկարատեւ չըջանի մէջ, այլ մեթոտաւոր կերպով ձեռնարկելով, քայլ առ քայլ կը յառաջադիմեն, հինգ, վեց, տասն անգամ կրկնելով ըստաձը, մինչեւ որ ամբողջ դասը տպաւորուի աշակերտաց ուղեղին մէջ: Ծանր քայլերով եւ չըջանայեցութեամբ կը յառաջանան. կը կրկնեն, կը կրկնեն ու կը կրկնեն, մինչեւ որ իւրաքանչիւր սք կարենայ դասին նիւթը պատմել գէթ մեքենայէս եւ իբր առանց գիտակցութեան: Գերման աշակերտաց միտքն աշխոյժ չէ շատ ծաւանակ կը պահանջէ նոր բաներն ըմբռնելու համար. մանաւանդ նրբախոյզ ու մանրակրկիտ է, ուստի եւ ոսն առ ոսն կը յառաջանայ: Յօդուածին հեղինակն օր մ'ըստձ է Գերմանացիի մը. « Դուք, Գերմանացիներդ, կը նմանիք այն այծերուն՝ որք կ'ուզեն հատուկտուր կրծել գիտութեան դժուարամարս խոշոր կաղամբը. չէք կրնար փափկակեր ըլլալ »: Հեղինակը կրնար աւելի վայելուչ բաղդատութիւն մ'ընարել իր խօսակցին համար, որ քիչ մը խիստ կը գտնէր գայն, բայց թերեւս այս բաղդատութեամբ միայն կարելի էր բացատրել իր միտքը:

Այս խիստ կարգապահութիւնը, այս խղճամիտ ու գործնական կրթութիւնը, որ նոյն իսկ այդ պատճառաւ հաստատուն է, կը կազմեն Գերմանիոյ զօրութիւնը, ինչպէս եւ անզօրութիւնը:

Այո՛, անտարակոյս, գերման ուսանողք կ'ըլլան ամէն կերպով կրթուած քաղաքացիներ: Ազգեցիկ դաստիարակութիւնը զոյր կը ստանան՝ մի եւ նոյն կաղապարին վրայ կը ձեւէ ու կը ձուլէ զիրենք: Ամենէն աւելի, ինքնութիւնն է որ կը պակսի իրենց, ինքնութիւնը սակայն՝ որ կը կազմէ մարդը, քաղաքացին:

Կ'երեւի թէ գերմանացի աղջիկներուն դաստիարակութիւնը մի եւ նոյն էական նկարագիրն ունի՝ ինչպէս մանչերուն դաստիարակութիւնը, որուն հիմը կը կազմէ նոյն իսկ հնազանդութիւնը: Այր մարդուն հաւատարիմ ու հըու ընկերուհին ըլլալու սահմանուած, դպրոցի մէջ ուսուցչուհիներու ու տան մէջ մայրերու ազդեցութեան ներքեւ, աղջիկները կը զարգացնեն իրենց բոլոր այն զգացումները որք կարող կ'ընեն զիրենք՝ սիրելու ամուսնոյ, մօր ու տանտիկնոջ ապագայ դերը: Ընտանեկան յարկն է գերմանացի աղջկան հորիզոնը, Քանանու երկիրը: Իր կրթութիւնը բաւական կը համարուի՝ երբ կարենայ յանձանձել իր առանին ելեւմուտքն ու սկզբական ուսումներուն մէջ վարժեցնել իր զաւակը: Իրմէ պահանջուած դաստիարակութիւնն այն է որ ըլլայ մանաւանդ հեղաբարոյ, բարեպաշտ, կրօնասէր եւ սիրաբնոյթ:

Իխտելի է թէ Գերմանիոյ մէջ աղջկանց դաստիարակութիւնը դուն ուրեք կ'աւանդուի կիներու միջոցաւ, — հակառակ Ամերիկայի, ուր ուսուցչուհիք՝ ժողովրդային կըրթութեան մէջ թուով կը գերազանցեն ուսուցիչները: Գերմանիոյ մէջ, աղջկանց բոլոր դպրոցները կը կառավարուին այր մարդոց միջոցաւ, եւ ասոնց մէջ պաշտօն վարող վարժուհիներուն թիւը փոքրամասնութիւն կը կազմէ վարժապետաց թուոյն համեմատութեամբ: Այսու հանգերձ, Կանտոնագրութիւնը կը պահանջէ որ ամէն վարժուհի՝ երբ կ'ամուսնանայ՝ պարտաւոր է հրաժարական տալ, — մինչեւ իսկ եթէ վարժապետի մը հետ ամուսնանայ:

Ոչ նուազ շահեկան է նաեւ գիտնալ թէ Գերմանացիք ի՛նչ կարծիք ունին Ֆրանսական վարժարաններուն վրայ:

Յօզուածին հեղինակին առիթ ունեցած է այս մասին խօսակցելու գերմանացի եւ աւստրիացի բազմաթիւ ուսուցիչներու հետ՝ որք այցելած են Ֆրանսացւոց նախակրթարանները: Այս ուսուցիչք իրենց հիացումը յայանած են Ֆրանսացւոց ժողովրդային դաստիարակութեան աստիճանին վրայ: Ասոնցմէ մէկն իսկ, գալրոցական հանդէսի մը մէջ, խոստովանած է որ եթէ Սատովայի վարժապետը կրցած է երբեմն յաղթել շնորհիւ իր անվիճելի առաւելութեան, օտար երկիրներու մէջ այսօր ունի այնպիսի պաշտօնակիցներ՝ որք կրնան հաւասարիլ իրեն. յետոյ, մասնաւորապէս Ֆրանսայի վրայ խօսելով, անկեղծօրէն հաստատած է թէ Գերմանիա բնու յառաջացում չունի Ֆրանսացիներուն վրայ, իրր օրինակ յիշելով ի միջի այլոց՝ Ֆրանսացւոց ժողովրդային կրթութեան կարեւոր գարգացումը:

Ի դէպ է առ այս կցել ամերիկացի մանկավարժի մը հետազայ խօսքը, զոր խօսած է Չիքակոյի մէջ Ֆրանսական ցուցադրութեան առթիւ եւ որուն բառական ճշգոթիւն կ'ընծայուի:

«Մեզ՝ Ամերիկացիներու համար, լաւագոյն է այսուհետեւ մեր ակնարկներն ուղղել դէպ ի Ֆրանսա՝ քան թէ ի Գերմանիա, ինչպէս կ'ընէինք մինչեւ ցարգ: Ֆրանսայի մէջ պիտի կարենանք գտնել մեր լաւագոյն կաղապարներն ու քաղել մեր աղնուագոյն ներնչումները »:

Թարգմ. Ա. Ն. Թ.

## ՁԵՌԱԳՈՐԾԻ ԴԱՍԸ

Տարրական դասընթացքի մէջ

### 1. Նախապատրաստութիւն

Առջեւի գրասեղաններուն վրայ պէտք է նստեցընել փոքր աղջիկները, որպէս զի ամենքը կարենան կարելի եղածին չափ լաւ տեսնել վարժուհին: Յետոյ պէտք է ստուգել թէ ամենուն ձեռքն ալ մաքուր է: Այնուհետեւ վարժուհին կ'սկսի հարցումներ ուղղել անոնց, օրինակի համար, թէ իրենց մայրերը և մեծ քոյրերը տան մէջ ի՞նչով կ'զբաղին, եւ այլն, մինչև որ աշակերտուհիք յիշեն նաև թէ անոնք դուրս պայտեր կամ ուրիշ առարկայներ հիւսելու ալ կ'զբաղին: Կը հարցնէ նաև թէ ի՞նչ տեսակ առարկայներ կրնան հիւսելով շինուիլ, անշուշտ բաւականանալով տուններու մէջ շինուածներով զորս միայն կրնան տեսած ըլլալ տղայք: Այն ատեն վարժուհին կրնայ հարցնել նաև թէ հիւսելու համար ի՞նչ բանի պէտք կայ, և տղայոց կը ցուցընէ պողպատէ, փայտէ և ուսկորէ շինուած՝ հիւսուածքի ասեղներ, ինչպէս նաև զանազան գոյներով դերձան, այս առարկայներն անուանել տալով անոնց: Ասոր պիտի յաջորդէ ալ ձեռքը ձախէն, ինչպէս և մատներն իրարմէ որոշել տալու վարժութիւն մը: Կարգը կուգայ բուն սկզբնական վարժութեանց. այս նպատակաւ՝ վարժուհին իւրաքանչիւր տղու առջև կը դնէ հիւսուածքի երկու ասեղ՝ իբր Չ մէթը երկայնութեամբ բամպակով. ասեղներէն մին ալ ձեռքին համար, միւսը՝ ձախին համար: Վարժուհին իրեն համար ունի փայտէ երկու խոշոր ասեղներ, ինչպէս և կարմիր հաստ բամպակ: Այն ատեն տղայոց կը բացատրէ թէ ալ ձեռքին մէջ ի՞նչպէս բռնելու է ասեղը. կը կրկնէ բացատրութիւն

նը, մինչև որ աշակերտուհիք կարող ըլլան իրենք ալ նոյնը բացատրել և բռնել ասեղը՝ պէտք եղած կերպով: Նոյնպէս կը սորվեցնէ թէ ձախ ձեռքին մէջ ինչպէս բռնելու է միւս ասեղը: Ի վերջոյ, աշակերտուհին պիտի սովորի դերձանը փաթթել ձախ ձեռքին ցուցամասին շուրջ:

Նախնական ուսուցման սկզբունքին համաձայն, ամէն գործ միանգամայն ընելու չէ, այլ մէն մի շարժումի համար առանձինն հրահանգելու և նախապէս եղած շարժումին հետ կրկնել տալու է, մինչև որ բոլոր աշակերտուհիք կատարելապէս յաջողին:

Առաջին վարժութիւն. — Բամպակը բռնել աջ ձեռքին բխամասով և ցուցամասով անոր ծայրը պահելով ձեռքին մէջ:

Երկրորդ վարժութիւն. — Չախ ձեռքը բարձրացնել այնպէս որ ձեռքին հակառակ կողմը տղայոց դարձած և ճկոյթը վեր բռնուած ըլլայ:

Երրորդ վարժութիւն. — Բամպակը ետեւի կողմէն առջեւի կողմը անցունել վերցուած ձեռքին ճկոյթին և մատնամատին միջև, քիչ մը քաշելով զայն:

Չորրորդ վարժութիւն. — Բամպակը երկու անգամ փաթթել ցուցամասին շուրջ (A):

Նախնական վարժութեանց երկրորդ մասը պիտի կազմէ օղակի շինութիւնը: Այս նպատակաւ, մէն մի աշակերտի առջև պէտք է դնել սխուռած գործ մը՝ որ կրնայ ըլլալ փորձի համար անոնց հիւսելիք երէզը, և որուն իբր երեք ու կէս ասեղը շինուած ըլլա-

(1) Պէտք է որ վարժուհին ամէն նոր բան բացատրէ ու կրկնէ՝ մինչև որ տղայք զայն շատ լաւ հասկցած ըլլան. անոնք այն ատեն լաւ հասկցած են, երբ կրնան լաւ բացատրել. ասոր համար է որ պէտք է հարցումներ ուղղել անոնց: Մի անգամ ընդ միշտ ի միտ առնելու է այս կանոնը:

լու է. ամենէն առաջ ցոյց կը տրուի թէ իւրաքանչիւր ձեռքի մէջ ո՛ր ասեղն առնելու է: Յետոյ պէտք է բացատրել և հրահանգել՝ ինչպէս վերն ըսինք:

Առաջին շարժումն. անցուցէ՛ք օղակին մէջ:

Երկրորդ " դերձանը ասեղին վրայ առէ՛ք:

Երրորդ " օղակին մէջ քաշեցէ՛ք զայն:

Չորրորդ " թողուցէ՛ք որ օղակը իյնայ:

Հրահանգել մէն մի շարժումն առանձինն, յետոյ ամէնն ի միասին, մինչև որ աշակերտուհիք կատարելապէս յաջողին:

« Նիւթիւն » Ա.Ռ.ԱԾՆԵՐԸ

1. Բարի ունակութիւններ ստացէք, որովհետեւ այն որ բարի ունակութիւններ կ'ստանայ՝ դիւրաւ բարիք կը գործէ: (Բիէն Լալուա):

2. Աղէկ վիճակի մէջ գանուող մարմինը միայն կրնայ աղէկ սպասարկել հոգւոյն: (Շառլ Տիւրբիւր):

3. Պարզ եղէք ոչ միայն ձեր արդուզարդին, այլ նաեւ ձեր կենցաղին մէջ: (Շալամէ):

4. Հողն ամուլ է առանց վարուցանի: Միտքն ամուլ է առանց խորհրդածութեան և ուշադրութեան: (Շ. Տիւրբիւր):

5. Փորձաքարով կը փորձեն ոսկին և արծաթը. սակով և արծաթով կը փորձեն մարդուն սիրտը: (Կիւլեօ):

6. Պէտք չէ ատենք զանոնք որոց հաւատալիք տարբեր են մերիններէն: (Շ. Տիւրբիւր):

7. Ստախօսութիւնը կը ջնջէ վստահութիւնը՝ որ կապն է աշխարհային յարաբերութեանց: (Շ. Տիւրբիւր):

8. Կոկիկութիւն և աշխատութիւն մեզ կուտան դիւրակենցութիւն և գոհունակութիւն: (Կիւլեօ):

### ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ԴԱՍԸ

(ՄԱՅՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԾԱՂԿՈՑ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ)

#### ԸՆՏԱՆԻ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԵՆՔ ՀԱՅՐԸ. — «Ո՞վ ունի մեծ հայր մը . . .  
 — Ո՞վ ունի երկու մեծ հայր . . . : — Խաչի՛կ, քու  
 մեծ հայրդ՝ Սարգիս՝ շատ ծեր է. Բ՛նչ տարիք ու-  
 նի . . . Բ՛նչու այլ եւս չաշխատիր . . . Բ՛նչու հա-  
 մար գաւազանով մը կը քայլ . . . Բ՛նչու համար աղ-  
 նոց կը դնէ . . . : — Զապէլ, մեծ հայրիկիդ Բ՛նչ  
 կ'ըսես՝ անոր հաճոյք պատճառելու համար . . . Բ՛նչ  
 պզտիկ ծառայութիւններ կը մատուցանես անոր ա-  
 ռաւօտուն . . . ճաշի ժամն՝ . . . դիշերը պառ-  
 կելէ առաջ . . . : — Արսէն, ես տեսայ զքեզ՝ երբ  
 մեծ հօրդ ձեռքէն բռնած կ'երթայիր . . . ո՞ւր կ'եր-  
 թայիր միտսին : — Վարդուհի, դուն երէկ մեծ  
 հօրդ ծունկերուն վրայ նստած էիր, և ծիծաղելով  
 մտիկ կ'ընէիր անոր խօսքերը . Բ՛նչ կը պատմէր  
 քեզի . . . » :

«Տղաքս, սիրեցէ՛ք ձեր մեծ հայրերը, առա-  
 ւօտ երեկոյ համբուրեցէ՛ք անոնց ձեռքերը, և բա-  
 րութեամբ վարուեցէ՛ք անոնց հետ » :

#### ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՓՈՒՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ. — ԿԱՏՈՒՆԵՐԸ. — Այն ար-  
 դայք, որոնք իրենց տան մէջ կատու մ'ունին, կար-  
 դաւ պիտի ըսեն .

Կասուիս ակունք Միեկ է, — կասուիս ակունք Փիչուն  
 է, — կասուիս ակունք Միկուն է . . . : — Կասուիս մա-  
 գերը դեղին է, — կասուիս մագերը ճերմակ է, — կասուիս  
 մագերը սեւ է . . . : — Կասուս միս կ'ուտէ, — կասուս  
 պակիր կ'ուտէ, — կասուս կարկանդակ մը կ'ուտէ :

Տղայք՝ միտքերան՝ պիտի լրացնեն, յետոյ պիտի  
 կրկնեն պարբերութիւնը .

Միեկին շեզուն . . . վարդագոյն է, — Միեկին աջերը  
 . . . կանաչ է, — Միեկին պէխերը . . . երկայն է,  
 — Միեկին սկուակերը . . . սուր է, եւայն . . .  
 Քիչուն կը ցասկէ . . . արքայի մը վրայ, — Քիչուն կը  
 ֆեսուայ . . . կրակարանին քով, — Քիչուն կ'եղնէ . . .  
 սակիթին վրայ, եւայն . . .

ՄԵՆՔՐՈՒՆ ՀԱՄԱՐ. — Ո՞ՐԿԵ ԿՈՒԳԱՆ. — Երեկ  
 հարցուններ :

10 Կը տեսնեմ փոքր տղանք որովհետեւ կարմիր գոգնոցներ  
 հագած են, իրենց ձեռքին մէջ զիրք ունին, և սուն կը  
 դառնան. ո՞ւրիկ կուզան. — Այն փոքր տղայք որոնք  
 կարմիր գոգնոցներ հագած են, իրենց ձեռքին մէջ  
 դիրք ունին և տուն կը դառնան, դպրոցէն կուգան :

20 Տեսայ մարդիկ յոգնած և փոշիով  
 կուզային. — Տեսած մարդիկս՝ որոնք յոգնած և փո-  
 շիով ծածկուած էին՝ մշակներ են և դաշտէն կուգային :

20 Տեսայ խեղճ կին մը որ չոր փայտեր խորձ մը  
 շաշիած էր. ո՞ւրիկ կուզար. — Խեղճ կինը որ չոր փայ-  
 տերու խորձ մը շաշիած էր և ես տեսայ, անտառէն  
 կուգար :

ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ. — 10. ՊԱՏԿԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ  
 (Տես էջ 48) :

20. ԱՌԱՐԿԱՅԻ ՎՐԱՑ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Զանգակը :  
 — Վարժուհին զանգակն առնելով բաներ մը կ'ընէ,  
 և տղայք կը խօսին .

Օրիորդ, զանգակը առի՛ք. — Օրիորդ, զանգակը ձեռ  
 ետէք պահեցի՛ք, — զանգակը դարակին մէջ դրի՛ք, — սե-  
 դակին վրայ գրտեցի՛ք զայն . . . — Օրիորդ, զանգակը  
 զարկի՛ք մէկ անգամ, երկու անգամ . . . —  
 Օրիորդ, կանաչ կը զարնէ՛ք, — ուժով կը զարնէ՛ք, — շա՛ս  
 կը զարնէ՛ք . . . եւայն . . .



Վարժուհին կը ցուցընէ և տղայք կը խօսին .

Վրայի մասը՝ զանգակիև բռնատեղը կամ կոթևե . — վարը՝ եզերին ե . — մեջը՝ զանգակիև շնորև ե . — շնորև կախեշու համար՝ գործածուած ե փոքրիկ շիրայ մը . — շրդ-բակ բռնուած ե փոքրիկ ճանկով մը :

Վարժուհին կը խօսի և տղայք կը կրկնեն .

Զանգակը կ'իմացնէ թե պէտք ե մեկ կարգի վրայ շար-ուիդ , — թե պէտք ե շուր , — թե պէտք ե անյիդ , — թե պէտք ե մտիկ ընել . . . :

30. ԽԱՂ . — Նապաստակիև վախը :

« Վախկոտ նապաստա'կ , ի՞նչու ախանջներդ կը տնկես » : — Աղմուկ շեցի , — բոչուրի մը անցնելը տեսայ , — ծառեև ճիւղ մը ինկար , — ցորենիև հասկերը կ'երերայիև , — անպ մը կը ծածկեր արեւը . . . :

« Վախկո'տ նապաստա'կ , այսչափ շուտ ի՞նչու կը վազես » : — Ծուրը ետեւեւ կը հաջե , — որսորդը կ'ուզեր սպաննել զիս , — աղուեւը ետեւեւ կը վազեր , — որջս շատ հեռու ե . . . :

« Վախկո'տ նապաստակ , ո՞ւր պիտի պահուիս » :

— Անտառիև մեջ պիտի պահուիմ , — մացառի մը սակ պիտի պահուիմ . . . եւայն :

### ԸՆԹԵՐՅՈՒՄՆ — ԳԻՐ

ՄԵԾԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ . — Բանի որ ընթերցումը չը պիտի ուսուցուի անհասկնալի բառերու եւ իւրեանքանու-թեանց վրայ , այդ գործածական բառերու եւ պարզ պարբե-րու ինքնուրու վրայ (տես էջ 30) , արամաբանական չէ մի և նոյն կարգին մէջ գնել թէ՛ սովորաբար գործ-ածուած գիրերը , ինչպէս՝ ա , ե , է , ի , ռ , ս . . . , և թէ՛ հազուադէպ կերպով գործածուած գիրերը , ինչպէս՝ փ , ֆ , ց . . . :

Աւրեմն խորհուրդ կուտանք՝ ի սկզբան ուսուցա-նել միայն ամենէն աւելի գործածուած գիրերը , և

կարելի եղածին չափ արագ կարգացնել շատ պարզ փոքր բառեր , և նոյն իսկ փոքր պարբերութիւններ :

Վարժուհիին մեծապէս պիտի օգնեն շարժական տառերը և սև տախտակը :

### ՀԱՇԻԻ

ՄԵԿ ԹԻՒՆ . Գրաւոր վարժութիւն . — Կը ներկայացը-նենք մեկ թիւը իբրև ուղիղ կամ հակած գաւազա-նիկ մը , սովորաբար փոքր կեռասեղով մը . (1, 1, 1, 1) ստիկայ մեկ թուանշանն է :

Մատով 1 եր շինել միջոցին մէջ , — սեղանին վը-րայ , — ձախ ձեռքին ափին մէջ , — քովդ նստողին կ'ունակին վրայ . . . :

1 եր վնասուել շարժուն թուանշաններուն մէջ , — պատի օրացուցին թերթիկներուն մէջ , — գրքի մը էջերուն թիւերուն մէջ . . . :

1 եր գծել սև տախտակին վրայ , — գրաքարին վրայ . . . : Գծել շատ մեծ 1 եր , — շատ փոքր 1 եր , — զանազան մեծութեամբ 1 եր , — 1 եր՝ մէկ գծի վրայ շարուած , — 1 եր՝ տակէ տակ շարուած , — 1 եր՝ զոյգ զոյգ խմբուած , և այլն :

### ԳԻՏՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐՅՈՒԹԻՒՆԵ ԵՒ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻԲ .

— Ականջները . — Բռնեցէ՛ք ձեր ախանջը . ի՞նչ կ'ըզ-գաք . — Ականջը զիսեև զանուած ե , — կսկուող ե , — փոքեր ունի : — Դիտեցէ՛ք ուրիշ աղու մը ախանջը . ի՞նչ կը տեսնէք . — Երկու ախանջները զիսուև երկու կողմերն եև , — վարդագոյն եև , — ֆրիև հետ մի եւ նոյն բարձրութեան վրայ եև . — բոլորովիև նման եև իրարու . . . : — Ձեր ախանջներուն վրայ գրէ՛ք ձեր երկու ձեռ-քերը , նախ թեթև , յետոյ սեղմելով . ի՞նչ տեղի կ'ունենայ : Եւայն :

Յիշեցէ՛ք անատուններ որոնք շատ երկայն ախանջ-ներ ունին . . . , ուղիղ կանգնած և սրածայր ախանջ-

ներ ունին . . . , լայն և վար կախուած ականջներ ունին . . . :

Յիշեցէ՛ք անասուններ որոց ականջները չեն տեսնուիր :

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ. — Փիսիկը :

Տես սա՛ փիսիկը թօմպուլ, պիսիտիկ, Գլուխը սեւուկ, կուրծքը խատուտիկ, Խոտերը զլխուն բարձ ըրած քնքուշ, Արեւուն ներքեւ կը նիրճէ մուշ մուշ :

Ե՛լ, ազուո՛ր փիսիկ,

Այսքան քուն հերի՛ք,

Քեզ իր մօտ կանջէ


Քու սիրուն մայրիկ :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ. (Սև տախտակին վրայ դժագրութեամբ կամ կանխաւ պատրաստուած պատկերով մը) : — Մեծ հայրիկին թիկնաքոռը. — Ներկայացնել ծերուկը իր թիկնաթուռին մէջ. իր ծունկերուն վրայ առած է իր թուռնիկը, իսկ իր թուռնուհին իրեն կը բերէ իր ակնոցը :

ՁԵՌՔԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԽԱՂՔ. — Կազմութիւնք. —

1. Տղայք իրենց ձեռքն վեց, ութ, տասը կաւարներ (ուղղանկիւնաձև տաշուած երկայն և հարթ տախտակիկներ) ունենալով, յաջորդաբար կը ձեւացնեն զանազան առարկայներ, ինչպէս՝ խաչ, անիւ, և այլն :


2. ՀՈՂՄԱՀԱՐԸ ԵՐԿՈՒ ԾԱԼՔ (1) և (2) ունի՛ եզերքին զուգահեռական. այս ծալքերն ունենալու համար՝ թուղթը ծալելու է՝ զայն փոթ փոթ ընելէ առաջ :



Բացուած հոլմահարին եզերքը կէս-չըջանակ մը կը կազմէ :

Խարխախին փոթերը գերձանով մը կը կապուին :

3. ՊԱՏՈՒԱՆԴԱՆԸ շինելու համար, պէտք է գործածել աւելի հաստ թուղթ, իր նեցուկին (1) պատճառաւ, որ պէտք չէ ծռի՛ ամուր բռնելու համար աստիճանները :



Թ Ռ Ո Ի Յ Ի Կ Ը

Թոռացիկ մը որ երթեմն շատ վեր  
Օղերու մէջ կը սառաններ,  
Իւր բարձրութեամբն յափշտակուած՝  
Ինկզիմ սապէս է ներքողած .

« Տէ՛ս, վարն ո՛րչափ սխալացողներ,  
Չանգակասունն աչ եւն անցեր .  
Որչա՞փ եւեջ պիտ' ապշեի  
Այդ մարդիկը թէ գիտնային,  
Ե՛ս բոռացիկըս դեռ ի՛նչ կըրնամ :

Թե ըզայի ես ինկնակամ,  
Թոռոյ կուսայի անպերեկն վեր,  
Չիս տեսնալու աչ չե՛ր գորեր .  
Բայց արդ կապուած իբրեւ գերի՝  
Չեմ սակաւի երկրէ հեռի .  
Թե առասան գիս չի պրկեր,  
Թոռիցոյս արծիւն էի գրչեր » :

Այս ըսելով՝ ֆաշեց գրեցեց,  
Եւ վերջապէս թեղը կոտրեց .  
Իսկոյն գրրկեալ իւր նեցուկեկն՝  
Չուր ձիգ ըսաւ բռակիչ բարձրեկն .  
Իր թեմն իրեկն ծակըր կուզար .  
Երթեւեկեց դեպ օղն 'ի վար,  
Եւ չուն ուղղե՛ր չի կրնալով՝  
Հով զայն տարաւ մըղեց 'ի ծով :

Յիմա՛ր բոռացիկ, դու թեւ չունիս,  
Անտառասան ի՞նչպէս բոցիս :

Առ այս իմ սիրտ պատասխանե .  
Որչա՞փ բոռացիկի ինձ նրեակն է .  
Մոռնալով, Տէ՛ր, թէ Քեզմով կամ,  
Վարոյ ձեռքիդ կըրքոսանամ .  
Ինաստութեանդ կապակն իմ վրայ  
Քանի՞ցս սնոտոք խզե՛ր կամեցայ .  
Եւ թէ չիկիսայ ցարդ չարաչար՝  
Շնորհ գրքութեանդ է ինձ համար :

John Newton

Թարգ. Յ. Ո.

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ո Ի Թ Ե Ա Ն

Ե Ի

Բ Ա Գ Դ Ա Տ Օ Կ Ա Ն Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. Դ Ա Ս

(1900 մարտ 5ին Բերայի Մանկավարժական  
Լսարանին մէջ արտասանուած)

Այն ժողովուրդն որ յաւան-  
գոյն դպրոցներն ունի՝ առաջ-  
նակարգ ժողովուրդն է . եթէ  
այսօր չէ, վաղը պիտի ըզայ :  
Ժ. ՍԻՄՕՆ

Պատմութիւն Մանկավարժութեան եւ բարոյական ման-  
կավարժութեան, այսպէս կը կոչուին այն ճիւղերն՝ որոց վրայ  
խօսելու պատիւը ինձ կը վիճակի : Կ'ըզամ անբուականու-  
թիւնս յանձնարարուած գործին կարեւորութեան եւ դժուա-  
րութեան առջեւ, ու երբեք չպիտի համարձակէի ներկայա-  
նալ այս բեմին վրայ՝ առանց այն տեսակ մը յանդգնութեան  
զոր իմ մէջս կը ծնուցանէ՝ անժխտելի աւագ կարեւորու-  
թիւն ունեցող համախօսական այս դասերու յաջողութեան  
համար աջակցութեան իմ ջնջին բաժինս բերելու տենչս : Եւ  
թէ պէտ մեր պատկառելի Ռ. սուցչապետ՝ Պերպլերեան էֆէնտի՝  
մանրամկտրի մը պէս սիրուն շարուած իր բացատրութիւն-  
ներով արտայայտեց անցեալ կիւրակէ այս բեմին վրայէն  
չնորհակալեաց եւ չնորհաւորութեան զգացումներ՝ որոնք մեր  
ամենունն ալ են, սակայն չպիտի ներէի անձիս, դասախօ-  
սութեան նիւթիս մէջ մտնել առաջ, չմտուցանել հոս,  
իրրեւ ուսուցիչ, իմ խոնարհ չնորհաւորութիւններս առ Պատ.  
Ռ. սուցչ. Խորհուրդն՝ այն օգտակար գործին համար՝ զոր

կրցաւ ի գլուխ հանել: Մաղթենք որ քիչ ստենն էրջանս  
կութիւնն ունենանք որոտածայն ծափահարութիւններով ող-  
ջուներու վարժապետանոցի բացումը:

\*  
\*

Մանկախարժարեան Պատմութեան նպատակն է, ինչպէս  
դիւրին է բնութենէ անուենն, զանազան ժամանակներու եւ  
զանազան ժողովուրդներու մէջ երեւցած մանկավարժներու  
դաւանութեանց եւ մեթոտներու պատմութիւնն եւ ուսում-  
նասիրութիւնն ընել: Իսկ Բաղդասախան Մանկախարժարեան  
նպատակն է բաղդատել զանազան երկիրներու մանկավար-  
ժական վարդապետութիւնները՝ ի վեր հանելով իւրաքանչիւ-  
րին առաւելութիւնները եւ թերութիւնները:

Այս պարզ սահմաններէն կը հետեւի թէ Մանկավար-  
ժութեան Պատմութիւնն եւ Բաղդատական Մանկավարժու-  
թիւն, որոնք կերպով մը անբաժան են իրարմէ, ընդարձակ,  
չատ ընդարձակ բովը մը կը ներկայացնեն, զոր անկարելի  
պիտի ըլլար ամբողջովին շահագործել այն հինգ նստերուն  
մէջ՝ որ յատկացուած են այս գործին: Ամէն ջանք պիտի ը-  
նենք որ այդ բովքին ամենէն թանկագին մասին շահագոր-  
ծումը զանց չընենք, եւ ի հարկէ ստիպեալ՝ պիտի զոհենք  
միայն անոր համեմատորար նուազ արժէքաւոր մասերը:  
Ուրիշ բառերով, պիտի ջանանք, Մանկավարժութեան Պատ-  
մութեան բաժնին մէջ, ընտրել այն դէպքերն որոնք ամենէն  
աւելի բանաւոր, տեսական, օպրոզ վարդապետութիւններ  
աւանդած են մարդկութեան: Պիտի ծանրանանք՝ ներուած  
սահմաններու մէջ՝ այդ վարդապետութեանց ուսումնասիրու-  
թեան վրայ, գործնական հետեւութիւններ հանելով անոնց-  
մէ եւ որոնելով թէ ինչպէս կարելի է պատշաճեցնել զա-  
նոնք մեր միջավայրին: Կենսագրական ծանօթութիւններ շատ  
չպիտի գրադեցնեն զմեզ, ամէն անգամ որ անոնք չեն ծա-  
ռայեր մասնաւոր ըյս մը սփռելու մանկավարժական դա-  
ւանութեանց վրայ, բայց, միւս կողմէն, մասնաւոր ուշա-

դրութեամբ մը պիտի ջանանք վեր հանել մարդը, տիպար  
դաստիարակը, անձնուէր դաստիարակը, որովհետեւ, ես իմ  
մասին, Մանկավարժութեան Պատմութեան ամենէն կարե-  
ւոր, շինիչ կողմը կը նկատեմ այն՝ ուր մանկավարժը երե-  
ւան կուգայ անձնուէր դաստիարակ, արի կրթիչ՝ այդ վսեմ  
անուներուն էապէս արժանի, ու կը սրտաւանդէ զմեզ մեր  
դժուարին գործին մէջ:

Դարով Բաղդատական Մանկավարժութեան բաժնին,  
բաց ի այն բաղդատութիւններէն զորս պիտի ընենք ամէն  
առթիւ զանազան մանկավարժներու այն դաւանութեանց՝  
որոնք բաղդատութեան եզրեր կրնան ընծայել, բուն բաղդ-  
դատական մանկավարժութեան համար պիտի ստիպուինք  
սահմանափակուիլ մանկավարժութեան կողմէ ամենէն աւելի  
վարկ վայելող չորս հինգ երկիրներու դպրոցական կարեւո-  
րագոյն խնդիրներու ըմբռնմանց զուգակշիռն մէջ, դպրոցա-  
կան այդ զանազան կազմակերպութիւնները, կրթական տար-  
բեր տարբեր այդ դրութիւնները մերձեցնելով միշտ մերին-  
ներուն եւ մատնանիչ ընելով մասնաւորապէս զանոնք՝ զոր  
ամենէն աւելի մեր միջավայրին յարմար եւ հետեւաբար  
յանձնարարելի պիտի նկատենք:

Բայց բուն մեր նիւթին մէջ մտնելէ առաջ, կէտ մը կայ  
որուն վրայ պէտք է համոզում գոյացնենք նախ եւ առաջ:  
Խնդիրը սա է: Դաստիարակ ըլլալու համար, դաստիարակի  
թանկագին յատկութիւններն ունենալու համար՝ Նախակըր-  
թարանի մը մշակութեանէն աւելի բարձր մշակութեան մը,  
Մանկավարժութիւն, Մանկավարժութեան Պատմութիւն,  
Հոգեբանութիւն, եւ այլն, կոչուած ուսումներուն պէտք կ'ոյ  
արդեօք իրապէս: Ո՞չ ապաքէն եղած են ու կան պատուա-  
կան դաստիարակներ որոնք մանկավարժական դասընթացը  
ներու չեն հետեւած: Այս հարցը հրապարակ նետուած է  
պարբերաբար: Քանի մը տարի առաջ Փրանսիոյ Պայքէ ֆը-  
րանսացի տիպագրականը յօդուածի մը մէջ կ'ուզէր հաստա-  
տել թէ՛ անտեղի է հաւատք ընծայել մանկավարժական

ուսմանց ազդեցութեան եւ թէ ուսուցչին արհեստը, բնական ձիւղերը եւ առաքինութիւնները միայն կարող են արդիւնք յառաջ բերել: Հարկ կա՞յ օրինակներով եւ փաստերով ապացուցանելու թէ Պուշեիէի եւ իր գաղափարակիցներուն — որոնք սակաւաթիւ են բարեբաղդարար — տրամախոսութիւնը լրի բացառութեանց վրայ հիմնուած կրնայ ըլլալ, եւ այս տեսակ հիմ մը չափազանց խախտու է, քանի որ օրէնքները, կանոնները բացառութեանց վրայ կարելի չէ հիմնել: Բացառութիւն են, այո՛, այն դաստիարակներն՝ որոց համար դաստիարակութեան գիտութիւնը բնազդական բան մըն է: Անուբանալի է թէ կան մարդիկ որ դաստիարակ կը ծնին, թէ եւ նոյն իսկ ասոնք ունին իրենց թերի կողմերը՝ զորս արուեստին տեսական եւ գործնական ուսումը միայն կարող է ընել. այդ ի ծնէ դաստիարակներն ալ պէտք ունին մանկավարժական ուսմանց՝ մէկ կողմէն բնական ձիւղերուն թերի կողմերը լեցնելու, եւ միւս կողմէն՝ իրենց բնազդական վարդաօրէտութեանց ու մեթոտներու մէջ աւելի հաստատուելու համար: Զախող փաստաբանութիւն մը պիտի ըլլար հաստատել ճշմիլ թէ՛ գիտութիւն եւ խորհրդածութիւն, որ ամէն տեսակ ուսմանց մէջ նկատուած են իրրեւ մեծագոյն տարրը յաջողութեան, անպէտ կը դառնան խոյնները խնդիրը դաստիարակութեան գիտութեան վրայ է, որովհետեւ դաստիարակութիւնը գիտութիւն մըն է որ ունի իր ակեղերական եւ ճիշդ օրէնքները, բայց գիտութիւն մը՝ որ շատ յուսախաբութեանց պիտի մատնէր դաստիարակը՝ եթէ սա ստրիօրէն հետեւէր այդ գիտութեան սկզբանց, առանց գանձը պատշաճեցնել գիտնալու միջավայրին եւ ժամանակին պահանջումներուն: Մանկավարժական բացարձակ սկզբունքներ շատ սակաւաթիւ են. այս ինչ մեթոտը կրնայ աղէկ ըլլալ այս ինչ տեղը եւ մեծ բան չարժեղ այն ինչ տեղը: Մանկավարժական գիտութեան բնութիւնը բացառելու համար կարելի է ըսել թէ արուեստ մըն է այն որ պէտք է գիտնականօրէն ուսումնասիրուի, եւ արուեստ մը որ կը պա-

հանջէ շատ մեծ ընտրողութիւն (tact) եւ արուեստագէտ ջուրթակահարին մատնափոխութիւնը (doigté): Տարակոյս չկայ թէ ինչպէս ամէն արուեստի, նոյնպէս դաստիարակի, մանաւանդ դաստիարակի արուեստին մէջ յաջողելու համար նախ կոչուեմ ունենալու է, բայց ասիկա երբէք չնշանակեր թէ մասնաւորապէս պէտք չէ ունիլ արուեստին տեսականը եւ գործնականը: Կոչուեմ ունենալը՝ անհրաժեշտ պայման է դաստիարակի սսպարէզը ընտրելու համար, բայց արուեստը ընտրելէ վերջ կարգը կուգայ դայն սորվելու: Հոգեբանութիւն, տրամաբանութիւն, բարոյագիտութիւն այն են դաստիարակին համար՝ ինչ որ է Տարրաբանութիւնը երկրագործին համար, եւ եթէ տեսական ու գործնական գիտելիք պիտանի կը համարուին երկրագործին համար, անհրաժեշտ են անոնք կրթիչին համար, որովհետեւ, ինչպէս դիտել կուտայ Սքինսէր, տղայ մեծցնելու արուեստը այն արուեստն է՝ ուր յաջողութիւնը խիստ տարակուսելի է, եթէ մարդ մասնաւոր ուսումնասիրութիւններ չէ ըրած: — Հարկ անհրաժեշտ է ուրեմն որ կրթիչը ուսումնասիրէ մանկավարժութիւնը եւ մանկավարժութեան պատմութիւնը՝ որ ներածութիւնն է մանկավարժութեան: Բայց պէտք է ուսումնասիրել եւ ոչ թէ պարզապէս սորվիլ սին հետաքրքրութիւն մը գոհացնելու կամ հմտութիւն ծախելու մտքով: Պէտք է ուսումնասիրել մանկավարժութեան պատմութիւնը ի յայտ բերելու մտքը այն տեսական ճշմարտութիւնները որ զիրար ամրողջացնելով կը կազմեն մանկավարժութեան գիտութիւնը: պէտք է իւրացնել այդ ճշմարտութիւնները՝ ենթարկելով դանոնք անձնական խորհրդածութեան եւ փորձառութեան, անապով այս մասին Մօնդանի խորհուրդներուն. « Ընթերցողին աշխատութիւնը պէտք է նմանի մեղուի աշխատութեան որ հոսկէ հոնկէ կը կապուէ ծաղիկները եւ անոնց հիւթով կը շինէ մեղր՝ որ ոչ ուրց է եւ ոչ մարեմխտ »: Ուրիշներուն սխալներն եւ ձախողանքն անգամ պէտք է ծառայեն զմեզ հրահանգելու: Ու պէտք է ուսումնասիրենք

մանկավարժութեան պատմութիւնը, հետեւինք մանկավարժական շարժման՝ դաստիարակի մեր բովանդակ կեանքին մէջ, մի՛շտ իրազեկ ուրիշներուն ըրածին, մի՛շտ քաղելով ժամանակին հետ, մի՛շտ տեսնելով կեանքի նորանոր պահանջները որ կը բազմանան կեանքի պայքարին սաստկութեան համեմատութեամբ: Մի՛շտ հետամուտ նորութեանց: Գիտցած ովք զոհանալ, ետեղակալ անշարժ մնալ՝ մեծագոյն թշնամին է գաստիարակին, եւ աններելի թերութիւն մը՝ մանաւանդ սոցն դարուն մէջ ուր կ'ապրինք:

Կարեւոր համարեցի այս մէկ երկու խորհրդածութիւնները՝ ցոյց տալու համար, դաստիարակի պաշտօնին մէջ, կարեւորութիւնն մանկավարժութեան պատմութեան, եւ այսու հրաւիրելու համար ազնիւ ունկնդիրներուս մտամբով ուսումնասիրութիւնն այն հարցերուն վրայ՝ որ նիւթ պիտի ըլլան մեր համախօսութեանց: Այս առաջին նիստը պիտի գրաւեն հին ժողովրդոց ունանց, Յունաց, Հռովմայեցւոց եւ միջին դարու մէջ տիրած կրթական դաւանութիւնները: Հարեւանցի ակնարկ մը միայն պիտի ձգենք առաջիններուն վրայ, համեմատաբար քիչ մ'աւելի կանգ պիտի առնենք վերջիններուն վրայ, խորագոյն քննելու առաջադրութեամբ՝ մեր յաջորդական նիստերուն մէջ՝ կրթական այն վարդապետութիւնները որոնք աւելի էապէս իմաստասիրական ձգտումներ ունին:

\*  
\* \* \*

Կ'սկսինք Չինաստանէն: Ուսմունք, դպրոց եւ դաստիարակ մեծ յարգ կը վայելին Լասձէներու եւ Ֆօնկցէներու երկրին մէջ, բայց աւանդամուղ ոգին՝ որ անոր մասնաւոր նկարագիրը կը կազմէ՝ չէ հիւրընկալած ցոյսօր իր դպրոցներուն մէջ քաղաքակրթեալ երկիրներու վարդացուցիչ եւ դործօն մեթոտները, փոխանակ այն քնացուցիչ եւ խամրեցրնող, գրեթէ միայն յիշողութեան ուղղուող մեթոտներուն որ կը կազմեն Չինացւոց մանկավարժական մեթոտը, ինչպէս

մինչև վերջին տակններս կազմած է նաև մեր դպրոցներուն ալ մեթոտը: Չափուած ձեւուած կրթութիւն մըն է այն որ կը տրուի չինական դպրոցներուն մէջ, զուրկ այն տաք ջունչէն որ մարդը կը կերտէ, նկարագիրը կը կազմէ: Ընթերցումէ եւ գիրէ զատ գրեթէ ոչինչ կը սորվեցնեն այդ վարժարաններուն մէջ՝ համաձայն մեթոտի մը որ շատ հեռի է անշուշտ այն բանաւոր մեթոտէն՝ որոյ վրայ պիտի խօսուի ձեզ: Իրաւ է որ իրազննական մեթոտը ի հարկէ ստիպեալ է զործ կը դրուի հսն, քանի որ Չինացիք բուն տառ ջունչէն ի հարկէ կը դրուի հսն, քանի որ Չինացիք բուն տառ ջունչէն ներկայացնել իւրաքանչիւր գաղափար ստիպուած են ներկայացնել մասնաւոր նշանով մը եւ արտայայտել բառով մը: Մեծ զիտուն մըն է այն Չինացին որ գիտէ 80,000 բառ եւ նոյնքան նշան զանոնք ներկայացնելու համար: Երգը արգիլուած է չինական նախակրթարանին մէջ, բայց ձեռական աշխատութիւնք եւ մարմնակրթանք յարգի են հ.ն., կարծես հեզնելու համար մեր վարժարաններու այս կարեւոր պահասը: Իսկ ալջկանց կրթութիւնը անխնամ ձգուած է: — Այս քսանի մը ծանօթութիւններէն կը հետեւի թէ չինական վարժարաններն իրենց կազմակերպութեամբ եւ մեթոտներով կը ծառայեն միայն մեզ յիշեցնելու մեր դպրոցներու կրաւորական հին ուսուցութեան տխւար շրջանը, թէեւ, փութանք յաւելլել, երկնային կոյսրութեան վարժարաններն՝ իրենց այս փիճակին մէջ իսկ կրնան մեզ աւանդել ինչ ինչ հետեւելի պատուէրներն՝ որոնք յաճախ անտեսուած են մեր վարժարաններուն մէջ. օրինակի համար, ողէկ կ'ըլլայ որ ականջ դնենք այն պատուէրներուն որ կը հրամայեն չինացի դպրոցականին՝ գիրքը աչքէն երեք բթամատ հեռու բռնել կարգալու ժամանակ, ուղիղ նստիլ եւ մտանքը չազատուել դժբելու ատեն: Իսկ քաղաքավարական ամենատարական սկզբբանց մասին պահանջող ըլլալու համար, կրնանք օրինակ առնել Հնդկաստանէն՝ որ աշակերտին կ'արգիլէ իր դաստիարակին դռնէն ներս մտնել անքաղաքավարութեամբ՝ առանց երեք անգամ դարնելու դրան, չթոյլատրել թքնել մաքուր

տեղ մը կամ բերանը լայն մը բանալ՝ յօրանջած ատեն: Այս խորանները շատ լաւ չե՞ն պատշաճիր մեր դպրոցականներուն:

Տասը տարի առաջ Լոնտոնի մէջ հրատարակուած անգլ-դիւարէն գիրք մը *Hife in an indian village*, որդիւնք Ռամա Քրիշնա անուն հնդկիկի մը ուսումնասիրութեան, շահեկան տեղեկութիւններ կուտայ մեզ Քէլամպուքամ անուն գիւղին վրայ. այդ գիւղի դպրոցին վարժապետը գոց գիտէ իր պուէտ նախահաւու նախահաւին քերթուածին 14000 տուները եւ հպարտութեամբ կը պահէ այն գրիչը զոր պուէտը զորժածած է գրելու համար իր նշանաւոր դիւցազներգութիւնը: — Այդ վարժապետը իր տան բակին մէջ կը կարգայնէ սըղաքը, որոնք երկու կարգի վրայ նստած են դրան ճակատին գէմ, իրենց վարժապետին մէջ տեղ: Ամէն մէկ տղու զստ զստ դաս կը հարցնէ, դրութիւն որ երեսէ ինկած է բաւական ատենէ ի վեր եւրոպական վարժարաններու մէջ: Երբ դպրոցէն ներս մտնենք, կ'ըսէ Քրիշնա, 5—7 տարեկան 3—4 աշակերտներ խումբ մը կը կազմեն. քերականի տառերը կը սորվին բարձրաձայն կրկնելով եւ զանոնք գրելով զետինը ցանուած աւազին վրայ: Երկու ուրիշ աշակերտներ կը գրեն արմաւենիի տերեւներուն վրայ. ուրիշ մը բառեր կը հեգէցած ձայնով, մինչ քովի ընկերը կարճ առածներ կը կարդայ. սա մէկը յաւելումներ կ'ընէ, նա միւսը ոտանաւոր կ'արտասանէ եղանակով. վերջապէս ուրիշ մը Մահապհարադա դիւցազներգութիւնէն հատուածներ կը կարդայ վարժապետին առջեւ որ յետոյ կը բացատրէ իմաստը: Աշակերտը ուսմունքը աւարտած կը նկատուի, երբ գիտէ ուղիղ կարդալ գրել եւ գիտէ թուարանութիւն, մասնաւորապէս պարզ եւ բազադրեալ սովորի կանոնները: Ընդհանրապէս 5 տարիէն այսչափ բան կը սորվի աշակերտը: Աշակերտները առաւօտուն ժամը 6 էն առաջ կուզան դպրոց, ժամը 9 ին կերթան նախաճաշել, 10 ին նորէն դպրոց կուզան եւ կէս օրին նորէն տուն կ'երթան ճաշելու. ժամը 3 ին նորէն դպրոց, եւ իրիկուան ուշ ատեն կը վերադառնան տուն, այնպէս որ վար-

ժապետը արչաւոյսէն մինչեւ արեւը մայրը մտած ատեն գործունի: — Ամիսը չորս օր դպրոցը գոց է, լուսնան րին եւ յաջորդ օրը, նոյնպէս երկու օր լրալուսնին առթիւ. մեծ տօներուն ալ կը փափուի դպրոցը: — Վարժապետը թոշակ մը կ'առնէ ծնողքներէն, որոնք յաճախ դրամ, բանջարեղէն, զգեստ ալ կը դրկեն իբր նուէր, երբ տղան առաջին անգամ դպրոց մտնէ կամ թէ ամուսնութեան եւ տօներու առթիւ: Ասոր փոխարէն, ծնողք կ'ուզեն որ վարժապետը զբաղի իրենց զաւակներով ոչ միայն դպրոցին մէջ, այլ եւ տան մէջ: Օրինակի համար, եթէ տղայ մը հիւանդ ըլլայ եւ դեղ սուշեւ չուրէ, վարժապետը կ'երթայ եւ դեղը տանել կուտայ: Նոյնպէս եթէ տղան այս ինչ կերակուրը չուտէ կամ թէ սենառակութիւն ընէ, վարժապետին կը դիմեն: Հնդիկները շատ կը մեծարեն վարժապետը՝ զոր կը նկատեն խորհրդաւոր եւ բարեկամ. նամակ գրել կամ կարդալ կուտան, միջնորդ եւ հաշտարար կ'ընտրեն զայն կռիւի ատեն: Հանդիսական ամեն օրերու կը հրաւիրեն զայն:

\* \* \*

Բաւ համարինք, եթէ կ'ուզէք, այս մէկ երկու խօսքերը Ասիական հին ժողովրդոց ոմանց կրթական դրութեանց մասին եւ մտնենք Յունաստան: Հոս, զետինը մէկէն ի մէկ կը փոխուի. առաջիններուն մէջ ճակատագրական ժողովուրդներ, աչքերնին միշտ յառած երկինք՝ ուրիշ կը բղխին բոլոր իրենց վարդապետութիւնները. հոս, ժողովուրդ մը՝ որ աւելի հաւատք ունի մարդկային ոյժերուն վրայ՝ որոց ծաւալման եւ զարգացման մէջ կը տեսնէ իր երջանկութիւնը:

Յունական դաստիարակութեան ոգին որակելու համար ըսենք անմիջապէս թէ Յոյներուն իտէպոն էր զեղեցիկը եւ բարին, ինչպէս Հռովմայեցոցը՝ օգսակարն էր: Կը հետեւի թէ յունական դաստիարակութեան մէջ աւագ դեր կը կատարէր երաժշտութիւնը՝ որոյ բարձրագոյն կատարն էր իմաստասիրութիւնն, ըստ Սոկրատի: Նոյնքան մեծ դեր կը

կատարէր նաեւ, յունական դաստիարակութեան մէջ, մարմնամարզը, թէեւ Պղատոն երաժշտութիւնը նախամեծար կը համարէր, որովհետեւ, ըստ Պղատոնի, հոգին է որ մարմնոյն կուտայ այն կատարելութիւնն՝ որուն սա կրնայ հասնիլ: Բայց մարմինն ալ հոգւոյն արժանի պատեանն ըլլալու համար՝ պէտք է զօրանայ եւ վայելչանայ:

Այն անձուկ սահմանը որոյ մէջ ստիպուած ենք շարժիլ թոյլ չտար մեզ մանրամասնօրէն բացատրելու թէ ինչպէս սպարդական կրթութիւնը՝ որ մտաւորական դաստիարակութիւնը կը զօհէր մարմնական դաստիարակութեան՝ կը տարբերէր ակնհայտ կրթութենէն որ սուանց անխնամ ձգելու մարմնական դաստիարակութիւնը, շատ կ'ըրաղէր մտաւորական դաստիարակութեամբ, մինչեւ ծնունդ տալ սօփիստութեան՝ որ հոմանիշ կրնայ համարուիլ ակնհայտ բարուց թուրքման: Գիտենք թէ իր վատթարացած ինկած քաղաքակիցներն ուղղութեան բերելու համար ինչ ջանքեր ըրաւ Սոկրատ, որ սփեատներուն ճամարտակութիւնները ջախջախելու համար կը դիմէր մասնաւոր ձեւով տրամախոհութեան մը, ճարտար հարցումներու միջոցաւ հարկադրելով իր հակառակորդները ընդունելու իր սկզբունքները: Տրամախոհելու եւ մի եւ նոյն ատեն սորվեցնելու այս կերպը ծանօթ է սոկրատեան մեթոս անունով, մեթոս որ մասնաւորապէս յանձնարարելի է մեր նախակրթարաններու այն ուսուցիչներուն որոնք վարդապետական եղանակով կ'աւանդեն դասերը՝ առանց մտածելու շարժման մէջ գնել աշակերտաց մտաւորական գործունէութիւնը: Այս մասնաւոր մեթոտով, ուսուցիչը անխոնջ հարցափորձիչ մըն է, որոյ հարցմանց աղբիւրն իրեն տրուած պատասխաններուն մէջ է ընդհանրապէս, եւ որ այն ատեն գոհ կ'ըլլայ՝ երբ աշակերտը այս հարցմանց չնորհիւ ինքն իսկ հանէ ընդհանուր եւ ճիշդ հետեւութիւնը: — Ճարտարօրէն ի գործ դրուելու պայմանաւ, սոկրատեան եղանակը հիմը կը կազմէ իրազիտութեան դասաւանդման եւ անհրաժեշտ օժանդակն է վերլուծման: Բայց

մեծ ճարտարութիւն պէտք է այս եղանակի գործածութեան մէջ, եւ հարցումներու միջոցաւ տղուն խորհրդածութիւնը գրգռելու եռանդը պէտք չէ մղել զմեզ տղուն ուղղելու հարցումներ այնպիսի բաներու վրայ՝ զորն բացարձակապէս չգիտէ: Պէտք է տղուն ծանօթ եւ ընտանի իրողութիւններն նիւթ ըլլան այս հարցմանց՝ գտնել տալ եւ համար՝ գաղափարներու կապակցութեամբ՝ ուրիշ իրողութիւններ՝ որոց տղերքը ուղղուած հարցումներուն հետ՝ ըմբռնելի ըլլալու է աշակերտին համար: Այս պայմաններով միայն աշակերտը կրնայ պատասխանել ուղղուած հարցումներուն եւ զիւս մ'ըրած պատասխանել ուղղուած հարցումներուն եւ զիւս մ'ըրած ըլլալու հաճոյքն ունենալ, որ այնքան մեծ խթան մըն է աշակերտին համար: Վերջապէս, զգուշանալու է նաեւ որ այս հարցումները՝ որոնք պէտք է տղուն խորհրդածութեան ուղղուելին՝ տակաւ առ տակաւ չփոխուին տաղտկալի հարցարանի մը որ յիշողութեան կ'ուղղուի եւ կը յիշեցնէ « Հաւատքով ի՛նչ ես — Քրիստոնեայ եմ » ի հարց պատասխանինքը, կատարելապէս հակասկրատեան մեթոտ մը: Իրաւ է որ այս մեթոտին կողմակից մանկավարժներ եւ իմաստասէրներ չեն պակսիր, ինչպէս են August Comte, Félix Pécaut, Haffite, Charles Daruy, բայց անունը չչփոթենք ոգւոյն հետ: Այս մանկավարժներ, հարց-պատասխանի մեթոտով, կ'ուզեն խտացնել, վարժներ, խմբել զանազան կարգի գիտելիք եւ զանոնք բառ թողվել, խմբել զանազան կարգի գիտելիք եւ զանոնք բառ առ բառ դոց ընել տալ, բայց այդ գիտելիքը նախապէս աղէկ մը խորհրդածել տալէ վերջ: յիշողութեան աւանդել զանոնք, այս՝ բայց խորհրդածութեան ենթարկելէ վերջ միայն: Կը տեսնուի թէ՛ այս մեթոտին ոգին՝ ուր կ'ուզուի յիշողութիւնը մշտել, բայց ոչ ի վնաս գատողութեան, բոլորովին տարբեր է այն մեթոտէն որուն կ'ակնարկէինք քիչ մ'առաջ: — Եթէ այսքան ծանրացանք սոկրատեան մեթոսին վրայ, պատճառն այն է թէ ուսուցչութեան մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ հարցնելու արուեստը. « հարցնել գիտնալ, սորվեցնել գիտնալ կը նշանակէ » ըսուած է: Պէտք է խստովատուի մեր նախակրթարաններէն միջնադարեան այն մե-



Թուրը՝ որ տղուն կրկնել կուտայ մեքենարար ինչ որ Թու-  
 Թակարար գոց ընել արուած է անոր, կրկնիչ մեքենայի փո-  
 խելով այն միաբը՝ ուր դաղափարները պէտք էին եռալ: Գի-  
 տակոն մանկավարժութեան համար ոճիր մ'է այդ սպաննիչ  
 մեթոտը, մանկութեան դէմ ոճիր մը: Կրթիչ ուսուցութիւն,  
 տղուն միաբը մարդոզ, անոր վէջ անհատականութիւնը եւ  
 ձեռներէց սգին մշակող, արթնամիտ եւ խորհող էականը  
 պատրաստող ուսուցութիւն պէտք է. վտարե՛նք, վտարե՛նք  
 մեր դպրոցներէն դուրս Թմրեցնող, ուղեղը ջլատող ցամ-  
 քեցնող միջնադարեան մեթոտները:

Ներքի չպիտի ըլլար յունական դաստիարակութեան վը-  
 րայս այս խիստ հարեւանցի ակնարկը վերջացնել առանց քա-  
 նի մը բառ ալ բռնել Պղատոնի եւ Արիստոտելի մասին, ու-  
 ռոց ազդեցութիւնը՝ մանաւանդ վերջինինը՝ շատ մեծ եղած է  
 իմաստասիրական եւ կրթական խնդրոց վրայ, եւ որոց վար-  
 դապետութիւններէն շատերը իրենց զօրութենէն բան մը  
 չեն կորսնցուցած 2000 է աւելի տարիներէ ի վեր: Արիստո-  
 տէլի այն խօսքը Թէ՝ « բնութիւնը կ'սկսի ամէն բան, ար-  
 ուեստ եւ դաստիարակութիւն կ'ամրողջացնեն բնութեան  
 սկսածը », ամիոփումն է այն դաստիարակութեան ոգւոյն՝  
 որ կը կազմէ Բէսպարոցցիի մանկավարժութեան հիմը: Նոյն  
 իմաստասէրին՝ « առաքինութիւնը ունակութիւն մըն է »  
 խօսքը խորունկ ճշմարտութիւն մըն է: Պղատոնն է որ սահ-  
 մանած է Թէ՝ « բարեք դաստիարակութիւնն այն է որ մարմ-  
 նոյն եւ հոգւոյն կուտայ բոլոր այն կատարելութիւնը որուն  
 ընդունակ են »: Ինքն է դարձեալ որ ըսած է՝ « գեղեցկին  
 տպաւորութիւնը մաքուր օգին պէս է որ առողջութիւն կը  
 պարգեւէ »: Բայց ի՞նչ հարկ երկարել ցամաք կերպով այս  
 առածները՝ որոնք՝ հոգեբանութեան դասերուն մէջ, հարկ  
 եղած բացատրութիւններով անշուշտ պիտի դան կարգաւ ի-  
 րենց բարոյացուցիչ եւ զարգացուցիչ հիւթը ծորեցնել աղ-  
 նիւ ունկնդիրներուս մտքերուն ու սրտերուն մէջ: Բաւակա-  
 նանանք ուրեմն գաղափար մը տալով մանկավարժական դա-

ւանութեանց վրայ Արիստոտէլի, որ զմեզ կը շահագործէ  
 Պղատոնէն աւելի, նախ անոր համար որ ինքն ալ վարժա-  
 պետ եղած է — ձեմականներու կամ պերիպատիկեաններու  
 ( peripatétien ) պետը, եւ երկրորդ որ՝ իր ընդարձակ հմտու-  
 Թեան եւ գործնական մտքին շնորհիւ մանկավարժական խըն-  
 դիրները աւելի ճարտարօրէն կրցած է ըննել: Արիստոտէլի  
 գլխաւոր առաւելութիւնն Պղատոնի վրայ սա եղած է որ  
 աշխատած է ընտանեկան կապերը ամրացնել, ընտանիքին եւ  
 անհատին իրաւունքները վեր բռնել, եւ ընտանիքի բարեք-  
 ման աշխատիլ կը նշանակէ աշխատիլ դաստիարակութեան  
 բարեքման: Արիստոտէլ երեք աստիճան, երեք շրջաններ  
 կ'որոշէ մարդուն զարգացման մէջ. նախ մարմնոյ, յետոյ  
 բնազդի, զգայնութեան, ամենէն վերջը բանականութեան  
 զարգացում: Հետեւաբար, ըստ Արիստոտէլի, մարմինը հո-  
 գիէն առաջ պէտք է առարկոյ ըլլայ առաջին խնամոց. ապա՝  
 հոգւոյն այն մասը՝ որ կայանն է փափաքներուն: Բայց,  
 ինչպէս պիտի տեսնենք իր կարգին, մինչդեռ Ռուսօ կ'ուզէ  
 հեազհետէ մշակել այս երեք կարողութիւնները, Արիստոտէլ  
 կը պահանջէ իրաւամբ որ զգացումները մշակած ատեննիս՝  
 ի մտի ունենանք իմացականութիւնը, եւ մարմինը խնամած  
 ատեննիս՝ հոգին շանտեսենք: Առաջին դաստիարակութիւնը  
 տուողը մայրը պէտք է ըլլայ: Մինչեւ հինգ տարու, բան  
 մը պէտք չէ պահանջել աղայէն, ո՛չ աշխատութիւն, ո՛չ ուս-  
 մունք: Հինգէն եօթը տարու, աղայն պէտք է սորվի դիտել  
 եւ մտիկ ընել զիտնալ: Եօթը տարեկանէն կ'սկսի մարմնա-  
 մարզ, ոչ ըմբշական մարմնակրթանք, այլ կազդուրիչ մար-  
 զանք, ճիշդ ինչպէս կը պահանջէ այսօր շուեւտական մարմնա-  
 մարզի բանաւոր մեթոտը: Առանց բարոյական ունակութեանց՝  
 մտքի մշակութիւնը կ'ապականէ մարդը: Սոկրատ ինքն ալ  
 կ'ըսէր Թէ՝ « ուսմունք եթէ չտան ողջախոս եւ առողջ միտք,  
 ա՛լ աւելի կը վատթարացնեն մարդը, չարիքը գործելու ա-  
 ւելի միջոցներ ընձեռելով անոր »: Այնքան ճշմարիտ է որ  
 չբաւեր իմացականութիւնը մշակել, պէտք է մշակել բարոյա-

կան խիղճը եւ կրթել կամքը: Որովհետեւ ուսմունք (instruction) եւ կրթութիւն տարրեր բաներ են. մին միտքը կը զարդարէ, միւսը է միտքը կը զարբնէ, ինչպէս կ'ըսէ Մօնդաները, բայց ուսմունք պատուական միջոց մըն են կամքի մշակութեան, պայմանաւ որ, ինչպէս ըսինք քիչ մ'առաջ, յարմար, ներգործական (actif) մեթոտի համաձայն աւանդուին:

Արիւղոտել ուսման առարկաներն երկու դասերու կը բաժնէ. անոնք որ կը պատրաստեն քաղաքացիի կեանքին, եւ անոնք որ կը ծառայեն մարդուն զարգացման: Գեղարուեստներուն մէջ, Արիւղոտել կը յանձնարարէ մանաւանդ երաժշտութիւնը, ոչ իբրեւ սպորուստի միջոց, այլ իբրեւ միջոց բարոյականի մշակութեան եւ անմեղ զբօսանք: Այսօրուան մանկավարժներն ալ՝ Արիւղոտելի պէս՝ կ'ընդունին երաժշտութեան դերը թէ՛ զգայարանաց եւ թէ՛ բարոյական գաստիարակութեան մէջ: Արիւղոտել կ'ըսէ նաեւ որ ուսմանց զանազան ճիւղերուն մէջ գեղեցկագիտական կողմը վեր հանուի, եւ որովհետեւ ուսողութիւնները յարմար չեն այս բանին, երկրորդական կարեւորութիւն կ'ընծայէ անոնց:

Ահա հին Յոյներու մանկավարժութիւնը՝ իր ամենէն ընդհանուր գծերուն վերածուած. ինչպէս կը տեսնուի, գեղեցիկ մանկավարժութիւն մը, որ սակայն ազնուապետական ըլլալու, սահմանափակ թուով մարդոց միայն օգտակար ըլլալու պահասութիւնն ունէր, մինչդեռ կրթութիւնը ամենէն խոնարհ խաւերուն մէջ տարածելու ձգտումը կ'ընդհանրանայ այսօր ամէն տեղ, եւ ամէն օր նորանոր միջոցներ կը խորհուին այս մասին:

\* \* \*

Յունաստանէն ի Հռովմ անցքերնիս դժուար չէ, որովհետեւ Հռովմ մինչեւ Յունաստանի աշխարհակալութեան ատեն հետեւած է սպարտական զուտ Ֆիզիքական, իսկ յետոյ աթենական կատարեալ գաստիարակութեան: Բայց ասիկա չնշանակեր թէ յունական եւ հռովմական գաստիար-

ակութիւններն իրենց բնորոշ, յատկանշական նկարագիրներն ունեցած չըլլան: Երկու բառի մէջ կարելի է ամերիկեւ որոշիչ տարբերութիւնները. Յունական գաստիարակութիւնն քաւառոյն եւ գեղեցիկն կը ձգտէր, իսկ Հռովմական գաստիարակութիւնն՝ օգտակարին: Հռովմացիք գործնական ժողովուրդ մըն էին. ամէն բանի մէջ օգտակարը կը փնտռէին. իսկային կարեւորութիւն չէին տար: Երաժշտութիւնը, որ այնքան մեծ յարգ կը վայելէր Յունաստանի մէջ, շնորհ չէր գտած ի Հռովմ: Յայտնի է թէ Հռովմ իրաւագիտութիւնը մշակած է անվիճելի գերազանցութեամբ: Նոյն այս գործնական մտքին հետեւանօք, Հռովմ շատ չէ զբաղած մանկավարժական տեսական հարցերով: Սակայն, Հռովմացի է ժիւլէնալ՝ որ կեանքին եւ գաստիարակութեան իտէալ նըպատակը սահմանած է սա հանրածանօթ բառերով՝ « առողջ միտք առողջ մարմնոյ մէջ »: Հռովմացի մըն է նաեւ կերասերն Պլինոս որ multum, non multa կուռ առածով կը հաստատէ մանկավարժութեան մէջ էական կէտ մը եւ կը յանձնարարէ մի միակ գիտութիւն մը խորունկ կերպով ուսումնասիրել, փոխանակ շատ մը ճիւղեր հարեւանցի կերպով ուսնելու: Պլինոսի « հիմնովին », եւ ո՛չ շատ բան » առածը այնքան կարեւոր է եւ այնքան այժմէութիւն ունի այսօր որքան Մօնդանեի « զարգացած գլուխը լեցուն գլուխէն լաւագոյն է » առածը, որուն կիրառութեան կը ձգտի այսօրուան մանկավարժութիւնը: Միտքը լեցնելէ աւելի զարգացրնել, ա՛յս է այսօրուան լաւագոյն, այն է ներգործական մեթոտին ընդհանուր ձգտումը, եւ Պլինոսի ալ առածին ոգին տարբեր բան մը չէ: Բայց փոխանակ իմաստասէրներուն վրայ գառ դառ խոսելու, սակի յարմար ըլլայ թերեւս ըսել թէ Հռովմի մէջ ալ, ի չոյնս Աթենքի մէջ, ոչ այնքան հետամուտ են ուսումը ծաւալելու եւ բարձր ուսումնէն աւանդելու՝ որքան մարդուն բարոյականը զարգացնելու: Վերջացնելէ առաջ այս հակիրճ ակնարկը հռովմական մանկավարժութեան վրայ, շահեկան կը յամարիմ պարզել Քրիս-

տոնէ 35-95 թուականին ասորոզ առաջնակարգ եւ համակրելի հոգեւոր-դաստիարակի մը, Քէնդիլիէնի՝ մանկավարժական ինչ ինչ դաւանանքը՝ Institutio oratoria գրքին մէջ սփռուած: Ամենէն առաջ վեր հանենք սա ճիշդ գաղափարը թէ՛ ռուսումը պէտք է հրապուրիչ ընծայել տղուն, եւ չմատուցանել անոր մտքին ո՛ր եւ է բան որմէ կը խորշի: — Ահա՛ գաղափար մը որ մեր խորին ուշադրութեան առարկայ պէտք է ըլլայ, եւ որուն վրայ պիտի խօսինք ուրիշ ատիւ: Գրեթէ եօթը տարեկանէն սկսեալ ազոց կ'ստուցուէր ընթերցանութիւն, որուն հետ զոյգ կ'ընթանար գիրը, ինչպէս նաեւ բառագիտութիւն եւ քերականութիւն: Եօթը տարեկան տըղոց քերականութիւն սորվեցնել այսօր հակամանկավարժական կը թուի մեզ, բայց Քէնդիլիէն կ'ուզէր օգուտ քաղել մանկական հասակէն, մտնաւանդ յիշողութիւն պահանջող դասերու համար: Արդէն Հոովմի մէջ ընդհանուր կերպով յիշողութեան մշակման մեծ կարեւորութիւն կը տրուէր. հոովմէացի կայսերէն մէկը իր բոլոր զինուորներուն անունները գոց գիտէր: — Գեղեցիկ գիրի մեծ կարեւորութիւն կը տրուէր: Մասնաւորապէս նշանակելի է Քէնդիլիէնի սա ճշմարիտ պահանջումը որ՝ գիրի օրինակները պէտք է պարունակեն « ոչ թէ սնտոի խօսքեր, այլ բարոյական ճշմարտութիւններ », որոնք նպաստեն բարոյական դաստիարակութեան, ինչպէս Քէնդիլիէնէ 18 դար վերջը պիտի պահանջէ հայր ժիրառ, բարոյական մեթոտի հեղինակը: — Քէնդիլիէն հակառակ էր տիրող մարմնական պատիժներուն. պէտք է, կ'ըսէր, տղան ուղղել անոր դատողութեան եւ սրտին դիմում ընկելով, ճիշդ ինչպէս պիտի պահանջէր ժամանակակից մանկավարժ մը: — Վերջապէս, բարձր գաղափար մ'ունէր դաստիարակներու պարտականութեանց մասին. « դաստիարակին առաջին պարտականութիւնը պէտք է ըլլայ հիմնովին ճանչնալ տղուն միտքը եւ նկարագիրը », պատուական գաղափար որ ո՛րքան ալ յաճախ յիշեցուցուի դաստիարակին՝ նորէն քիչ է եւ որ կը կազմէ Բեսոյալոցցիի մանկավարժութեան

հիմը: Եւ երբ այս պահանջումը կ'ըլլար հոովմէացի դաստիարակէն, այն իրաւամբ չէր որ հոովմէացի դաստիարակը աղէկ կը վարձատրուէր. ո՛չ. հոովմէացի դաստիարակն աւելի նախանձելի վիճակ մը չունէր քան հայ դաստիարակը. կարգ մը անպատեհութիւններ կան որ կարծես անբաժան են դաստիարակի պաշտօնէն եւ անձնուիրութեան բարձր զգացում մը, պաշտօնին խտէալը միայն կրնայ հանդուրժելի ընել զանոնք:

\* \* \*

Հին ժողովրդոց ոմանց, Յունաց եւ Հոովմէացոց, մանկավարժութեան վրայ այս մէկ երկու տեղեկութիւններէն վերջ կը հասնինք վերջապէս Քրիստոնէութեան առաջին դարերը, որոնք, որքան ալ ամուլ մնացած ըլլան բաւական երկար ատեն կրթական խնդրոց մասին, սա բացառիկ կարեւորութիւնն ունին սակայն որ Քրիստոնէութեան հետ կը ծնէր մարդկային անձին անշահախնդիր զարգացման գաղափարը: Քրիստոնէական դաստիարակութիւնը նշանակելի բարձր ձգտում մ'ունի, այն է բովանդակ մարդկութիւնը փոխել մի միակ ընտանիքի մը: Յետոյ, քրիստոնէական դաստիարակութիւնը խտր չղներ հարուստին եւ աղքատին, եւ ոչ ալ երկու սեռերու դաստիարակութեան մէջ: Այդ դաստիարակութիւնը կ'ընդունի լիովին՝ անհատին իրաւունքները եւ հոգ կը տանի զարգացնելու անոր բոլոր կարողութիւնները: Բայց նոր միջավայրին յարակից կրօնական եւ ընկերային խնդիրներ, որոնք արդէն գրաւած էին ի հարկէ բոլոր մտքերը, արգելքներ էին մանկավարժական խնդրոց ուսումնասիրութեան: Չարժեք որ զմեզ զբաղեցնէ նոյնպէս Միջին դարը, քանի որ «միջնադարեան» մեթոտ հոմանիչ է սին, մեքենական մեթոտի: Ահա՛ ինչու պիտի բաւականանանք խօսելով միայն Միջին դարու վերջերն ասորոզ իտալացի մանկավարժի մը վրայ՝ Victorin de Feltrè՝ որուն համար իրաւամբ ըսուած է թէ այդ դարէն աւելի փայլուն դարու

մը արժանի էր: Վիքդօրէնի մանկավարժական դաւանանքն էր՝ յուճականին պէս՝ մտքին եւ մարմնոյն ներդաշնակ զարգացումը: Մարմնակրթանաց, ինչպէս նաեւ իր աշակերտաց շարժումաձքին, նիստ ու կացին մեծ կարեւորութիւն կուտար, եւ մարմնական յոռի սովորութեանց դէմ կը մաքառէր յամառութեամբ, անոր համար մանաւանդ՝ որովհետեւ անոնք կրնային նպաստել բարոյական յոռի հակամտութեանց զարգացման: — Հետեւող Քէնդիլիէնի, Վիքդօրէն կը ջանար իր ուսումը հաճելի ընել: Ընթերցում սորվեցնելու համար, օրինակի համար, կը գործածէր Քէնդիլիէնի յանձնարարած գունաւոր շարժական տառերը՝ զորս կը ցուցնէր իր աշակերտներուն՝ ճանչնալ սորվեցնելու համար, յետոյ իր աշակերտներուն հետ կը զուարճանար բառեր կազմելով այդ տառերով: Վիքթօրէն մեծ հոգ կը տանէր ուսումնասիրելու իր աշակերտներուն նկարագիրը եւ իջնելու անոնց էութեան խորը: Եւ Վիքդօրէն դիւրաւ կը յաջողէր իր այս գործին մէջ՝ այն պարկեշտ համարձակութեամբ զոր գիտցած էր ներշնչել իր աշակերտներուն:


Իր դասախօսութեանց մէջ՝ Վիքդօրէն չէր բաւականանար որ ամէնէն կարող աշակերտները հասկնային ըսածները: պէտք էր որ ամէնքն ալ, ամէնէն տկարներն ալ աղէկ մը ըմբռնած ըլլային իր բացատրութիւնները: Եւ որովհետեւ միշտ երկչոտներ կը գտնուին աշակերտներուն մէջ, պատուական դաստիարակը կը մղէր զանոնք որ բացատրութիւններ, լուսաբանութիւններ խնդրէին իրմէ կամ յայտնէին իրենց տարակոյսները: — Խնամով կը քննէր բոլոր համարները եւ ուշի ուշով կը սրբագրէր զանոնք, ամենամեծ արդարութեամբ կը ազատելով զանոնք: — Մեծ ուշադրութիւն կը պահանջէր իր աշակերտներէն եւ, ճշմարիտ դաստիարակ, անուշադիր աշակերտը ճանչնալու համար բաւական էր որ անոր երեսը նայէր կամ նստուածքը դիտէր: Ահա յատկութիւն մը՝ որուն ներքին արժէքը մեծ է, թէեւ արտաքուստ երեւի գուցէ անարժէք: Տղան դիմա-

գծերը, աչքերը, ընդհանուր կերպարանքը՝ լաւագոյն միջոցն են յաճախ գիտնալու ինչ որ կ'անցնի կը դառնայ անոր ներսիդին: Եւ սակայն, որքան ընտրողութիւն պէտք է չիտարուելու համար, Հակառակ իր այս պահանջկոտութեան՝ ուշադրութեան մասին, դասը բացատրելէն վերջ կրկնել ու ամփոփել կուտար, անձանօթը, վերացեալը կցելով միշտ ծանօթին, թանձրացեալին: — Երբ շարադրութիւն մը կուտար գրելու, կը պատուիրէր իր աշակերտներուն որ նոյն նիւթին կամ անոր մօտ նիւթերու վրայ հատընտիր հատուածներ կարդան: — Քնարերգութենէն շատ չէր փսոթեր, վախնալով որ մի գուցէ իր աշակերտները մեղկանան եւ երազատեսներ դառնան:

Ահա՛ Վիքդօրէն տը ֆէլդուը: Թերեւս քիչ մը չափազանց զբաղեցանք իրմով: Պատճառն ակներեւ է: Վիքդօրէն՝ ճշմարիտ դաստիարակի այն տիպարներէն է որոնք խորունկ, անջնջելի տպաւորութիւն մը պէտք է թողուն մեր վրայ, հրապուրեն զմեզ իրենց օրինակովը եւ ցուցնեն մեզ մեր բարձր ու փափուկ կոչումը: Անդրադառնանք, անդրադառնանք յաճախ, սիրելի ունկնդիրներ, այդ պատուական դաստիարակին վրայ՝ որուն սիրտը զեղուն էր իր պաշտօնին սիրովը, առաջին եւ անհրաժեշտ յատկութիւն ճշմարիտ դաստիարակին: այդ սէրն է որ՝ հակառակ բազմապիսի դժուարութեանց, հակառակ կրկնակի անյաջողութեանց անշուշտ՝ կը մղէր զինքը միշտ ուսումնասիրելու իր սիրելի աշակերտներուն նկարագիրը. անոնց ներկայ եւ ապագայ օգուտը՝ որով զեղուն էր իր էութիւնն համակ՝ անհրաժեշտ կը գործէր այս ուսումնասիրութիւնը: Հիանանք այդ համբերող, անձուէր, պարտաճանաչ տիպար դաստիարակին վրայ՝ որ իր անձին օրինակովը կը կրթէր մանաւանդ քան իր քարոզներովը, եւ դաստիարակին անձին օրինակը միշտ աւելի կ'արժէ քան իր քարոզները:

Վիքդօրէն տը ֆէլդուով, այդ չքնաղ դաստիարակով կ'աւարտենք մեր առաջին նիստը:

### ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Հիները շատ մեծ նշանակութիւն կուտային այս բառին. քերականութիւն գիտցողը «մատով կը ցուցնէին» . նորերը շատ պզտիկ նշանակութիւն մը կուտան անոր: Հիները տասն եւ հինգ տարեկանէն վար տղոց ձեռքը քերականութիւն չէին տար. նորերը հինգ տարեկանէն վեր տղայոց քերականութիւն կը դասախօսեն. ապա ուրեմն հիները նորերէն աւելի մանկավարժ էին: Ինչո՞ւ համար . . . Ահա այդ «ինչո՞ւ»ն պիտի ջանանք բացատրել այս սիւնակներուն մէջ:

Նախ ընդունինք թէ քերականութիւնը գիտութիւն (science) մըն է, ճիշդ ինչպէս թուաբանութիւնը, աշխարհագրութիւնը, եւայլն: Եւ գիտութիւններուն ամենէն դժուարըմբռնելին եւ մանաւանդ դժուարաբացատրելին է քերականութիւնը. գրաբար է եղեր կամ աշխարհաբար՝ ատիկա դժուարութիւնը ո՛չ կ'աւելցնէ, ո՛չ կը պակսեցնէ. զի քերականութեան մասնաւորութիւնները համաձայնութեան բաժնէն կը սկսին մեծաւ մասամբ, եթէ ոչ՝ ամէն լեզուի մէջ նոյնն է քերականութիւնը, ինչպէս նոյնն է թուաբանութիւնը, աշխարհագրութիւնը, եւայլն: Գուցէ մէկէն ի մէկ աչքի չզարնեն քերականութեան անհուն դժուարութիւնները. բայց առաջին քայլէն իսկ խոչնդոտները կ'երեւան, առաջին հոշովէն իսկ . . . «Հոլով» ըսինք, հիմա իմ չափահաս ընթերցողներէս քանի՞ները կրնան գոհացուցիչ կերպով բացատրել թէ ի՞նչ է հոլովը, թէպէտ տարիներով քերականութեան դասագիրք մաշեցուցած ըլլան. եւ յետոյ, «ուղղական», «սեռական», «տրական», եւայլն, հոլովներուն ի՞նչ է նշանակութիւնը եւ ինչո՞ւ համար անոնք այդպէս կը յորջորջուին: Բայց ասոնք շատ դժուար հարցումներ են, քիչ մ'աւելի դիւրիններուն մօտենանք. ի՞նչ է մակ-

բայը, չաղկապը կամ աւելի դիւրինը՝ «Յորժամ» մակբայ է թէ չաղկապ . . . կը յիշե՛ս, սիրելի ընթերցող, թէ ասկէ քանի մը տարի առաջ, ի՞նչ մեծ վիճարանութիւն ծագեցաւ յիշեալ բառի որոշիչ դերին նկատմամբ: Եւ ինչո՞ւ այս բոլորը չենք գիտեր մենք. — որովհետեւ պզտիկէն մինչեւ մեծը ամենքս ալ թուովորէն քերականութիւն կը սովորինք: Թուովորէն չի սորվելու համար ալ երկու գլխաւոր բան հարկաւոր է. — մէկ մը հմուտ դասատու, մէկ մըն ալ մանկավարժ դասատու: Դասատուն հմուտ ըլլալու է, որպէս զի նախ ինքը քերականութեան հոգիին թափանցած ըլլայ եւ կարող միանգամայն՝ դիւրուսոյց եղանակով անոր դժուարին սահմանները (définitions) աշակերտին բացատրելու: Այսչափը բաւական չէ, ուսուցիչը բաւական հոգեբան ըլլալու է՝ ըմբռնելու համար թէ աշակերտը քանի՞ տարեկանէն սկսելով քերականութիւն կրնայ սորվիլ: Եւ կամ, քերականութեան ո՞ր մասերը պզտիկ տարիքին մէջ եւ ո՞ր մասերը միայն չափահաս եղած ատեն կրնայ հասկնալ: Ասոնք ա՛յնպիսի հոգեբանական կամ մանկավարժական նրբութիւններ են որոցմէ եւեթ կախում ունին ուսուցչին յաջողութեան պայմանները եւ որոնք դժբաղդարար բոլորովին բարձի թողի եղած են մեր վարժարանաց մէջ: Հիմա ձախող եւ յիմար կարգադրութեամբ, 8-10-12 տարեկան տղոց ձեռքը աշխարհաբար քերականութիւն կուտանք, առանց զանոնք կանխաւ քերականութեան պատրաստած ըլլալու, որմէ ապահովապէս քան մը չեն հասկնար, ու չհասկնալուն համար ալ յանցաւոր չեն երբեք: Չեմ ըսեր թէ յիշեալ տարիքը ունեցող տղայք քերականութեան ինչ ինչ մասերը չեն կրնար ըմբռնել. կարող են, բայց ո՛չ թէ իրենց առաջնորդ ունենալով քերականութեան դասագիրք: զի մեր քերականութեան դասագիրքերը՝ շիտակը ըսելով՝ աշակերտին միտքը չփոթելէ զատ ուրիշ բանի չեն ծառայեր: Դասագիրքի հեղինակը կարծես կը մոռնայ թէ մանուկներու համար կը պատրաստէ իր երկասիրու-

թիւնը եւ հոն կը զետեղէ այնպիսի վերացական «սահման»-ներ որոնք զարգացելոց միայն մարտելի են, եւ այն ալ դժուարաւ : Օրինակի համար, վերջերս, աշխարհաբար քերականութիւն մը ձեռքս անցաւ, վերջին տիպ, «ի պէտս Տարրական նախակրթարանաց» եւ «վաւերացեալ Ուսումն. Խորհրդէն» : Յայտնի է թէ Տարրական նախակրթարանի մը մէջ ամենէն չափահաս տղան 14 տարեկանէն աւելի չըլլար, եւ որովհետեւ բարձրագոյն երկու կարգերը ընդհանրապէս դաւաճարով կը սնանին՝ յայտնի է թէ հեղինակը այս գիրքը պատրաստած պահուն աչքին առջեւ ունէր թէ 9 էն 11 տարեկան մանուկներու պիտի յատկանայ, Բացէք, ըստ բաղքին, «գոյական» գլուխը եւ կարգացէք. — «Գոյականները երկու մասի կը բաժնուին — վերացական եւ քանձարացեալ» . — հիմա կ'աղաչեմ, սիրելի՛ ընթերցող, 10 տարեկան տղան ի՞նչ կը հասկնայ վերացական անուանէն (abstrait) : Ի՞նչ հարկ կայ այսպէս քերականութեան մանրամասնութիւններուն մէջ մտնելու առաջին անգամէն, առաջին քայլէն : Ուսուցիչը որքան հմուտ եւ յաջողակ կ'ուզէ թո՛ղ ըլլայ, անկարելի է որ այդ տարիքը տղոց կարենայ այդպիսի դժուարին սահմաններ հասկննել, որովհետեւ անոնց ուղեղը տակաւին այդ աստիճան մշակուած չէ : Եթէ երբեք կ'ուզենք որ քերականութեան օգտակար դասագրքեր պատրաստենք, պէտք է ունենանք որոշ դասընթացք մը (cours), ուր առաջին գիրքը ամբողջութիւն մը կազմելով հանդերձ՝ ամենէն պարզ, ամենէն գլխաւոր կէտերուն թեթեւ մը դպելով անցնի, երկրորդը՝ քիչ մը աւելի կանգ առնելով, բայց միշտ նոյն ամբողջութեանը մէջ շարժելով, երրորդը՝ նոյն սահմանին մէջ աւելի՛ մանրամասն, չորրորդը ա՛լ աւելի մանրամասն : Գասագիրք ըսածը այսպէս կը պատրաստուի, թո՛ղ լինի այն թուարանութիւն կամ աշխարհագրութիւն, քերականութիւն թէ՛ գրագիտութիւն : Բայց տղան չոր ու ցամաք քերականութիւն սորվելով հայերէն սորված չըլլար. տեսէ՛ք, ամէն գիտութիւն իր կիրառութիւնն (application) ու-

նի . նոյնպէս, թուարանութեան կանոն մը սորվելէ յետոյ, այդ կանոնին վրայ ինդիւրներ կը լուծենք. աշխարհագրութիւնը քարտէսի վրայ դաս կ'առնենք կամ քարտէսներ կը գծենք. քանգիտութեան կամ քնալուծութեան գործնական փորձեր կը կատարենք : Արդ, քերականութիւնն եւս գիտութիւն մը նկատելով, պէտք է անոր կիրառութիւնն ալ ունենանք, եւ որովհետեւ, ինչպէս ըսինք, քերականութիւնը շատ դժուարին գիտութիւն մըն է, աշակերտին աւելի դիւրին է, ըստ իս, նախ փորձը կատարել, նախ ուրոյն ուրոյն «մասունք բանիներ» տեսնել ու սորվիլ եւ յետոյ անոնց անուաններուն, սահմաններուն ու կանոններուն տեղեկանալ. եթէ օրինակ մը ներելի է, պիտի ըսեմ որ, փոխանակ աշակերտին սորվեցնելու թէ վարդը կարմիր, հոտաւէտ եւ թերթաւոր ծաղիկ մըն է, եւ յետոյ իրեն առաջարկելու որ վարդ մը քաղէ ու բերէ, աւելի լաւ է կարծեմ՝ աշակերտին հետ պարտէզ իջնել, զանազան վարդատունկերէ վարդեր քաղել եւ իրեն հարցնել թէ ի՞նչ գոյն, ի՞նչ ձեւ եւ ի՞նչ հոտ ունին անոնք, եւ պատասխանները իրմէ առնելէն յետոյ ըսել իրեն. «Ահաւասիկ այս խանները իրմէ առնելէն յետոյ ըսել իրեն. «Ահաւասիկ այս ձեւով, այս գոյնով եւ այս հոտով ծաղիկին՝ վարդ կ'ըսեն» : Ուրեմն աւելի յարմար եւ մանկավարժական է որ տղան գէթ մինչեւ 11 տարեկան եղած ատենը ամենեւին քերականութեան դասագիրք չառնէ ձեռքը. այլ քերականութեան ամենէն դիւրահասկանալի մասերը զիտէ, տեսնէ ու սորվի ընթերցանութեան դասագրքին մէջ : Ընթերցանութեան դասագիրք . . . ահա՛ մտատանջութեան երկրորդ, կամ եթէ կ'ուզէք, առաջին խնդիր մը եւս, զի կ'աղաչեմ, հաւատացէ՛ք, ընթերցանութեան դասագիրք չունինք տակաւին . . . : Երբ մէջ ժամանակաւ քերականէն յետոյ Հեգարան կուտային տղուն ձեռքը, որ սա՛ պէս կը սկսէր. «Երանեալ է այդ որ ոչ գնաց . . . եւ այլն», եւ անկէ յետոյ՝ գրաբար Աւետարան. անկէ ետքն ալ Գարագաշեան գրաբար քերականութիւնը. ես այս կերպով սորվեցայ իմ ընթերցանութիւնս եւ քերականութիւնս, կամ աւելի ճիշդը՝ այս կերպով չսոր-

վեցայ . . . . Հիմայ , ըստ երեւութին , բարեփոխում մը կայ . . . իբր թէ : Հեգարանը եւ առաջին ընթերցանութեան գիրքը աշխարհաբար են եւ անոնցմէ անմիջապէս յետոյ կուգայ կը տնկուի աշխարհաբար քերականութիւնը . ըսել է որ ընթերցանութեան գիրքը ըլլալով հիմա ունինք քերական եւ ընթերցանութեան Ա. ու առ առաւելն Բ. տարիներն , թէպէտ ասոնք իսկ կիսատկար . իսկ ասոնցմէ յետոյ . . . ասոնցմէ յետոյ ուրիշ բան չունինք . բայց ինչպէս չունինք , «վերացեալ եւ թանձրացեալ գոյականով աշխարհաբար քերականութիւն» ունինք . . . . Տղան 7—9 տարեկան եղածին պէս քերականութեան կը սկսի , եւ ալ անկէ ետքը ընթերցանութեան դասագրքի երես գրեթէ չտեսներ : Մինչդեռ պարտաւոր էինք ունենալ ընթերցանութեան երկարածիգ եւ կանոնաւոր դասընթացք մը , ինչպէս ունին Անգլիացիներն ու Ֆրանսացիները , որու գիտական եւ ընկերային , առողջապահական , եւ այլն , պարզ եւ հետզհետէ աստիճանաբար ձոխացեալ պարունակութենէն աշակերտին միտքը ո՛չ թէ միայն հրահանգուէր ու մարզուէր , այլ նաեւ նոյն այն ընթերցանութեան դասագրքերէն սորվէր իր լեզուին ուղիղ ընթերցմունքը , բայց comme il faut ընթերցմունք մը , ու շաբրութիւն ընելով կէտադրութեանց նրբութիւններուն , բառերու բնական շեշտերուն , եւ այլն , սորվէր հարց պատասխանիի դրութեամբ քերականութեան մասունք բանիներու է՛ն պարզերը , է՛ն դիւրմտունելիները , նախադասութեանց է՛ն պարզ կապակցութիւնները : Այս ամէնքէն յետոյ երբ տղուն ձեռքը քերականութիւն տրուի՝ իրեն բոլորովին օտար առարկայ մը չէ անիկա այլ եւս . մեծ մասամբ ընտելացած է անոր նախագիտելիքներուն . այն պարագային մէջ տղան թէ՛ դիւրաւ եւ թէ՛ հիմնապէս կ'ըմբռնէ պարզ քերականութիւնը . իսկ քերականութեան դժուարին ու խրթին սահմանները ժամանակի խնդիր են պարզապէս . մինչեւ որ տղան տասն եւ հինգ տարեկան չըլլայ՝ չէ կարող ըմբռնել զանոնք :

Եւ հիմայ ես մատով կը ցուցնեմ քերականութիւնը հիմնապէս գիտցողները . . . .

Ինչ կ'ուզեն թո՛ղ ըսեն , արդի մանկութիւնն ալ շատ բարեբաղդ չէ , քանի որ դասագիրք չունի :

Մ.

**ՅՈՐԴՈՐԱԿ ՄԸ**



**ՔԱՌԵԱԿ ՊԱՏԿԵՐՔ**

**Ա. ԱՆԱԿԱՆ**

(Մի ձայն) Երբ շուրջ ջրաբքի մարգերու վերայ  
Ոսկի հառազայք սրփռեն ծաղիկներ ,  
Գեցակ մի ման գայ , մի ծովակ ծրփայ ,  
Անդեայք արածին , երգեն քոչնիկներ ,  
(Խմբերգ.) Ի՛ անուշիկ հովիկ  
Տասանէ մեղմիկ  
Ծառոց կասարներ ,  
(Մի ձայն) Ի՛նչ շքեղ լինի , ո՛րչափ զմայլական  
(Խմբերգ. Կրկին) Լեռանց ու դաշտաց  
Հրաձայի պատկեր :

**Բ. ԳՈՐԳԱԿԱՆ**

Երբ յարճոռայս անդ գեփիւռից շրջով  
Կուսի վարսից պէս վէս վէս գան հուճներ ,  
Ծանրացեալ պքսլովք եւ ողկոյզներով՝  
Աստ՝ մրգասաններ , անդ՝ այգեսաններ .  
Գալար դեղնորակ  
Սրեւին հախակ  
Ձուրք բրլուրներ ,  
Ի՛նչ զուարթ լինի , ո՛րչափ շայտկան  
ձոխ անդասանաց  
Հրճուայից պատկեր :

**Գ. ԸՆՏԱՆԵՆԱՆ**

Մեր հայրն ալեւոր օրհնէ զիր որդեակ ,  
 եւ սա խրնդամիս երթայ աւխասիլ .  
 Մինչ մայր կաթոգին խնամէ իւր զաւակ ,  
 եւ համբուրելով՝ մուկջին սայ խօսիլ ,  
 Կոչել զիր հայրիկ ,  
 Կոչել զիր մայրիկ ,  
 Եղբարք ու եղբեր ,  
 Ի՛նչ գողտրիկ լինի , որչա՛փ հրճուական  
 Ժիր հողագործաց  
 Առսրնին պատկեր :

**Դ. ԿՐԹԱՆԱՆ**

Երբ յուրջ պատանեակք դիմեն վարժարան՝  
 Մըսակել մրտերն յառաջ քան զերկիր .  
 Ուստեք եւ դատեք գան միմեանց յօճան ,  
 Զարգուն , պատուասէր , ձեռօք մրտօք ժիր .  
 եւ մեծն ու փոքրիկ  
 Յիր բնասանեաց գիրկ  
 ձանչնայ իւր պարտեք ,  
 Ի՛նչ բնսիր լինի , որչա՛փ խոհական  
 Ծեր սանուսերանց  
 Տոհմային պատկեր :

**Յ. ՈՍԿԱՆ**

**ԾԱՆՕԹ.** — Սոյն «Քառեակ պատկերք» կրնան նիւթ ընծայել ազգային նկարիչներու եւ երգահաններու :

Անօթութիւն եւ չքաւորութիւն երբեմն կը նային աշխատասէր մարդուն դռնէն ներս , բայց չեն համարձակիր ներս մտնել : **Տրանգիրն**

**ՀՈՈՎՄ ՔԱՂԱՔԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ**

Իտալիա երկար եւ նեղ թերակղզի մ'է . իր հիւսիսային սահմաններուն վրայ կը բարձրանան Ալպեան լեռները : Երկիրը կը բաժնուի երկու մասերու . հիւսիսային մասը Բօյի հովիտն է . հարաւային մասին մէջ Ապենինեան լեռնաշղթայն կը տարածուի հիւսիսէն դէպ ի հարաւ :

Իտալիոյ հիւսիսային կողմը կը բնակէին Գալլիացիք , որոնք ցեղակից էին յայնկոյս ալպեան Գալլիացուոց : Ետուրացիք կը գրաւէին Ետրուրիան (այժմ Դոսքանա) : Ասոնց ծագումը մութ է , բայց միւս բնակիչներէն աւելի ծաղկեալ իրենց արուեստով եւ կրօնքով մեծ ազդեցութիւն ունեցան հռովմէական ազգին վրայ : Թերակղզւոյն հարաւային մասը՝ Յոյն գաղթականներով լեցուած՝ Մեծ Յունաստան կը կոչուէր : Իտալական ցեղը , որուն ճիւղերն էին Լասինք , Օւպրիացիք , Սարինացիք , Սաւնիացիք , Եւալյն , կը գրաւէր գրեթէ ամբողջ կեդրոնական Իտալիան . ասոնց մէջ ամէնէն նշանաւորն եղան Լասինք որոնք բնդարձակ պետութեան մը հիմը դրին :

Կ'աւանդուի թէ՛ Տրոյիոյ կործանումէն վերջ Տրոյիացին Ենէաս ի Լատիոն կը հաստատուի իր որդւոյն հետ որ Ալբա-Լոնկա քաղաքը կը շինէ եւ կ'ըլլայ 12 թագաւորներու ցեղին հիմնադիրը , թէ՛ վերջին թագաւորին որդին՝ Ամուլիոս՝ թագաւորական գահը կը բարձրանայ իր եղբոր տեղ եւ իր իշխանութիւնը տեւական ընելու նպատակով իր եղբոր Ռէա Սիլվիա դուստրն ալ վեստեան կոյսերուն քով կը դնէ : Ռէա Սիլվիա՝ հակառակ վեստեան կոյսերուն ամուրի մնալու ուխտին՝ Արէսէն կը ծնի Հռոմուլոս եւ Հռեմոս անուն երկուորեակները , որոնք յայտնուելով՝ Տրեբր գետը կը նետուին , բայց ջուրերուն յորդմամբ կ'ազատին ու կը սնանին էգ գայլէ մը եւ ապա Փաւստուլոս հովիւին խնամքին տակ



կը մեծնան, Լսելով իրենց տոհմիկ ծագումը եւ ծննդեան պարագաները, կը յաջողին Ամուլիոսին տեղ իշխանութեան գահուն վրայ հաստատել իրենց պապը, Նումիտոր: Պալա-տին լեռան վրայ քաղաք մը կը շինեն որ՝ Հռոմուլոսի անուամբ կը կոչուի Հռոմ (724 Ն. Ք.): Իսկ Հռեմոս կը մեռնի՝ քաղաքին շրջապատէն ստամամբ անցնելուն հետեւանքով:

Հռոմ՝ ըստ աւանդութեան՝ երկուք ու կէս դարու չափ կը կառավարուի թագաւորներէ: Հռոմուլոսին կը յաջորդէ Նումա Պոմպիլիոս Սաբինացին որ, եգերիա դիցուհւոյն խորհրդով կրօնքը կը կազմաւորէ եւ կը կանգնէ Յանոսի մեհեանը: Երրորդ թագաւորին՝ Տուլլոս Ոստիլիոսի օրով՝ Որատեան երեք եղբայրներուն մեծամարտի մէջ կուրատեան եղբայրներուն վրայ տարած յաղթութեամբ, կը գրաւուի Ալբա եւ քիչ ժամանակ վերջ կը կործանուի: Անկոս Մարտիոս, Նումայի թոռը, Տիբերի վրայ փայտէ կամուրջ մը կը շինէ եւ կը հիմնէ Ոստիա, Հռոմի նաւահանգիստը:

Վերջին երեք թագաւորները Ետրուրացի էին: Տարկէն երէց տէրութիւնը կ'ընդարձակէ, քաղաքը կը զարգարէ, շինել տալով Մեծ կրկեսը, Ֆորումը, Կապիտոլի վրայ Արամազդի շքեղ մեհեանը, եւայլն, եւ կը ներմուծէ Էտրուրական կրօնի արարողութիւնները: Սերվիոս Տուլլիոս կը կազմաւորէ բանակը, որուն մէջ կը մտցնէ՝ առանց ցեղային խտրութեան՝ բոլոր քաղաքացիները, զորս իրենց հարըստութեան համեմատ կը բաժնէ հարիւրեակներու: Կը հաստատէ նաեւ Հարիւրեակներու ժողովը, ուր թէեւ հարուստները եւ հին ընտանիքներն ամենէն աւելի ձայն ունէին, բայց Պատրիկներուն հետ Պրեքեաններն ալ քուէ կուտային: Վերջին թագաւորը՝ Տարկէն Գոռոզ՝ իր ժողովրդասէր նախորդէն բոլորովին տարբեր ընթացք մ'ունենալով, կ'ըստիպուի մեկնիլ քաղաքէն (510 Ն. Ք.), ուր կը հաստատուի այն ատեն Հիւպսոսուրիւնը:

Հռոմէական հին բարքերը խիստ, անտաշ եւ պարզ էին. տանտէրը իր սպասաւորներուն հետ հողը կը մշակէր,

տանտիկինը իր սպասուհիներուն հետ կը մանէր: Հայր մը իր տան մէջ բացարձակ տէր էր, միանգամայն ընտանիքին իռւմը մինչեւ ցմահ:

Երեք մարմիններ ֆաղափին գործերը կը վարէին. թագաւորը՝ որ ֆրմապէսի, գերագոյն դասաւորի եւ սպարապէսի պաշտօններն ունէր, Ծերակոյտը՝ որ ազնուական գլխաւոր ընտանիքներէն կազմուած՝ կը խորհրդակցէր տէրութեան գործոց վրայ, եւ ժողովուրդը որուն հաւանութեան կենթարկուէին Ծերակոյտին որոշումները:

Քաղաքացւոց գլխաւոր երկու դասերն էին Պատրիկի եւ Պրեքեանի. վերջինները վարչական գործոց մէջ մաս չունէին, ուստի իրենց եւ Պատրիկներու միջեւ գժտութիւնն անպակաս էր:

Հռոմի ծագման, ինչպէս եւ թագաւորական շրջանին վրայ պատմուածները, ընդհանրապէս պատմական դէպքեր չեն կրնար նկատուիլ: Հաւանական է որ Լատիոնի Լատինք 30 քաղաքաց դաշնակցութիւն մը կազմած ըլլան, որուն կեդրոնն էր Ալբա-Լոնկա: Հռոմ որ այժմ չոր կամ եզր կը մեկնուի, Ալբա-Լոնկայէն հաստատուած գաղթականութիւն մ'էր՝ Լատիոնի սահմանագլուխը Տիբեր գետին վրայ, արգիլելու համար Սաբինացւոց եւ Ետրուրացւոց յառաջխաղացութիւնը: Ի սկզբան փոքրիկ գիւղ մ'էր, բայց յետոյ կարեւորութիւն ստացաւ իր նպաստաւոր դիրքին շնորհիւ, եւ ժամանակ անցնելէ յետոյ մեծցաւ, միանալով Կելիոս լեռան վրայ բնակող էտրուրական, եւ Կիրինալի վրայ հաստատուած Սաբինական գաղթականներուն հետ:

\* \* \*

Նորահաստատ կառավարութիւնը (Հիւպատոսութիւնը) լաւագոյն վիճակ մը չունեցաւ: Հռոմ ստիպուեցաւ քանիցս մաքառիլ արտաքին ցեղերու դէմ ոչոնք գրգռուած էին Տարկէն Գոռոզէն: Այս առաջին շրջանին մէջ սկսան նաեւ Հռոմի գլխաւոր երկու դասերուն (Պատրիկք եւ Պրեքեանք) սոսկալի վէճերը:

Առաջին երկու Հիւպատոսներն եղան Բրուսոս եւ Կոչ-  
 շասինոս . Բրուսոս անյաջողութեան մատնեց Տարկէնի՝ Հռոմ  
 դառնալու եւ կրկին հոն հաստատուելու ձեռնարկը : Սպան-  
 նել տուաւ իր երկու որդիները որոնք գաղտնարար մասնակ-  
 ցած էին Տարկէնի ձեռնարկին : Տարկէն Գոռոզ այս անյաջո-  
 ղութենէն չի յուսահատելով՝ մօտակայ ժողովուրդներուն  
 օգնութեան դիմեց , Վեյացւոց օգնութեամբ կռուեցաւ ,  
 բայց յաղթուելով եւ վիրաւորուելով՝ մեռաւ :

Կլուսիոնի Պորսենա թագաւորը՝ Տարկէնի գրգռմամբ՝ ար-  
 շաւեց Հռոմի վրայ , պաշարեց զայն , դրաւեց Յանիկուշոն  
 բլուրը եւ պիտի տիրէր քաղաքին , եթէ Որոտիոս Կոկլէս  
 չպաշտպանէր Տիրերի կամուրջը թշնամի բանակին դէմ :  
 Այս կռուոյն մէջ նշանաւոր եղաւ Մուկիոս որ Պորսենան  
 սպաննելու համար թշնամոյն բանակը մտաւ գաղանի , հա-  
 սաւ մինչեւ անոր վրանը , բայց սխալմամբ ուրիշ մը սպան-  
 նելուն համար՝ ինքզինքը պատժեց , այրելով իր ձեռքը , եւ  
 այս պատճառաւ կոչուեցաւ ձախչիկ : Պորսենա պարտաւո-  
 րեցաւ հաշտութիւն կնքել :

Տարկէն Գոռոզ վերջին անգամ գրգռած էր Լատիններն  
 որոնք Ռեկել լճին մօտ պարտուեցան , եւ Տարկէններն ալ  
 բնաջինջ եղան ( 495 Ն . Բ . ) :

Պատրիկները՝ Ռեկելի յաղթութեամբ քաղաքին ան-  
 հատ թշնամիէն ազատուած՝ սկսան հպարտանալ եւ խստա-  
 նալ Պլէբէեաններուն դէմ . այս պատճառաւ մեծ խռովու-  
 թիւններ ծագեցան երկու դասերուն մէջ : Պայքարը տեւեց  
 դրեթէ ամբողջ դար մը ( 493—300 ) :

Վոլսկեանք ալ Հռոմի վրայ քալեցին հետեւեալ պատ-  
 ճառաւ : Մարկիոս՝ քաջ այլ հպարտ Պատրիկ մ'էր . Հռոմի  
 մատուցած ծառայութեանց համար Հիւպատոսութեան  
 պաշտօնը խնդրեց , բայց չի յաջողեցաւ ընտրուիլ , որովհե-  
 տեւ Պլէբէեանք կ'ատէին զինքը , եւ սովի մը ժամանակ ա-  
 սոնց դէմ ցոյց տուած անմարդասէր եւ արհամարհոտ ըն-  
 թացքին համար աքսորի դատապարտուեցաւ : Մուկիոս ,

Կորիոշան անուանեալ , Վոլսկեանց քով ապաստանեցաւ եւ  
 յետոյ մեծ բանակով մը եկաւ Հռոմը պաշարելու : Քաղաքը  
 մեծ վտանգի մէջ էր . Ծերակոյտը հաշտութիւն խնդրեց ,  
 Կորիոլան անողոքելի մնաց մինչեւ որ Հռոմէացի տիկիւններ  
 անոր մօր , կնոջ եւ երկու զաւակներուն հետ Վոլսկեանց բա-  
 նակը երթալով՝ աղաչեցին որ քաղաքին խնայէ . «Մայր , ը-  
 սաւ Կորիոլան , Հռոմը ազատեցիր , բայց որդիդ կորսնցու-  
 ցիր» : Ապա բանակն առնելով՝ հեռացաւ քաղաքէն :

Եկուացիք ալ Հռոմի երկպուռակ վիճակէն օգուտ քա-  
 ղելով , սկսան արշաւել քաղաքին վրայ : Այն ատեն Իշխա-  
 նապետ ընտրուեցաւ Կինկիննատոս անուն պարզ եւ անիա-  
 աասէր մարդ մը , որ իր արտը կը հերկէր այն պահուն , երբ  
 դեսպանները Ծերակոյտին որոշումը իրեն հաղորդելու ե-  
 կան , Կինկիննատոս թշնամին վանեց , եւ 16 օր միայն Իշ-  
 խանապետ ըլլալէ վերջ , իր դաշտը դարձաւ :

Ծերակոյտը ուզեց նուաճել Վէյա քաղաքը որ Ետրու-  
 ըրոյ քաղաքներուն մէջ ամէնէն զօրաւորն էր : Կամիլլոս՝  
 Իշխանապետ կարգուած՝ տասնամեայ պաշարումէ վերջ գը-  
 րաւեց քաղաքը : Կամիլլոս յետոյ ամբաստանուելով դա-  
 տաստանի կոչուեցաւ , բայց ինքը դատաստանի չսպասած  
 աքսոր գնաց :

Հռոմ նոր եւ աւելի ահարկու թշնամի մ'ունեցաւ , Գալ-  
 լիացիք երկու դարէ ի վեր Բոյի դաշտը կը բնակէին : Կլու-  
 սիոն որուն վրայ արշաւած էին Գալլիացիք , օգնութիւն  
 ուզեց Հռոմէն : Իբրեւ հաշտութեան միջնորդ ղրկուած Հռո-  
 մայեցի դեսպանները Կլուսիոնի հետ միացան եւ Գալլիացի  
 պետ մը սպաննեցին : Գալլիացիք գոհացում պահանջեցին ,  
 եւ երբ իրենց պահանջածը մերժուեցաւ , Հռոմի վրայ ար-  
 շաւեցին : Իրենց պետը՝ Բրեննոս՝ Ալլիոյ մօտ Հռոմէական  
 բանակը ցրուելէ վերջ՝ մտաւ Հռոմ որ գրեթէ թափուր էր :  
 Քանից փորձեց Կապիտոլն ալ գրաւել , բայց չի յաջողեցաւ .  
 գիշերային վերջին փորձն ալ ի դերեւ ելաւ՝ շնորհիւ Ման-  
 կիոսի որ այս պատճառաւ Կապիտոլեան կոչուեցաւ :

Տարագիր կամիլլոս՝ Հռոմի երբեմն թշնամի ժողովրդոց  
 գինուորներով բնաջինջ կ'ընէ Գալլիական հրոսակախուժ  
 մը. ապա Մերակոյտին հրամանով՝ որ ջնջելով աքսորին վճի-  
 ուր՝ կը վերահաստատէր անոր քաղաքացիութեան իրաւունք-  
 ները, Իշխանապետ կարգուած, Հռոմ կը մտնէ, կը մերժէ  
 Գալլիացւոց հետ կնքուած դաշինքը, քաղաքէն կը վանէ  
 թշնամին որ կը քաշուի երկրին Հիւսիսային կողմերը: Կա-  
 միլլոս կը կոչուի Հռոմի Երկրորդ հիմնադիրը՝ մատուցած  
 ծառայութեանցը համար:

Մ. ՄԱԼԵԱՆ

### ՇՈՒՆՆ ՈՒ ՇՈՒՒՔԸ

Աւելարհի վրայ  
 Զի խաբւող չի կայ.  
 Շուքի ետեւէն  
 Միտս, միտ կը վագեն  
 Այնչափ յիմարներ,  
 Որոնց անուններ  
 Ըստ մեծի մասին  
 Ես ալ չեմ գիտեր:  
 Պէտ է անոնք դրկուից  
 Եզարոսի այն Շունին,  
 Որ իւր հարակն ի զրբի  
 Տեսաւ իբր ի հայելի,  
 Եւ բերնինը ձրգեց վար  
 Ըստուերին համար:  
 Գետը իսկոյն յուզեցաւ.  
 Հագիւ նա եզերք հասաւ  
 Եւ մարմին կամ տուք,  
 Ոչինչ ունեցաւ:

Թարգմ. Պ. Ս.

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԴԱՍԸ

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ՄԷՋ

Մ Ա Ր Դ Ը

ՄԱՐՄՆՈՅՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱԶՄԸ

Գ Լ ՈՒ Ե

1. Մարդկային մարմինը կը բաղկանայ երեք մասերէ. գլուխը, իրանը եւ անդամները:




2. Գլուխը կը բաղկանայ երկու մասերէ. գանկը որ ծածկուած է մազերով, եւ դէմքը:

3. Գանկը ուժ ոսկորներէ բաղկացեալ տուփ մ'է եւ կը պարունակէ խիստ կարեւոր գործարան մը որ կը կոչուի ուղեղ: Ուղեղին միջոցաւ է որ կ'զգանք եւ կը կառնենաւք:

4. Դէմքին վրայ կը տեսնենք զանազան կարեւոր գործարաններ:

Մէն մի կողմը, գանկին մօտ, կը տեսնենք ականջները: Առջեւի կողմը, ճակատին վարի դին, կան երկու այտերը, որոց վրայ կան յօնքերը եւ որք պաշտպանուած են կոպերով եւ արտաշնչանքներով: Աջաց վարի կողմն են, երկու այտերուն միջեւ, քիթը եւ քերանը:

Քիթը մեզ կը ծառայէ շնչելու արտաքին օդը եւ զգալու հոտերը: Քթին ստորին կողմը կան երկու բացուածքներ որոնք կը կոչուին ռնգոսնի:



Բերանն ունի շրթուսի. կը պարունակէ ակռայներ, որոնք տնկուած են ծամելիքներուն կամ ծնօտներուն ոսկորներուն մէջ: Բերանը կը պարունակէ նաեւ շեղուն, որ մեզ կը ծառայէ ոչ միայն խօսելու, այլ եւ ճաշակելու մեր սնունդները:

Եւ մեր ըմպելիները:

Դէմքը բերնին տակ կը վերջանայ կզակով կամ դունչով:


ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Մարդկային մարմինը քանի՞ մասէ կը բաղկանայ. ի՞նչ են այդ մասերը: — Գլուխը ի՞նչ մասերէ կը բաղկանայ. — Ի՞նչ է գանկը եւ ի՞նչ կը պարունակէ: Ի՞նչ է ուղեղին պաշտօնը. — Ի՞նչ գործարաններ կան դէմքին վրայ. ի՞նչ մասերէ կը բաղկանայ բերանը:

Ի Ր Ա Ն

5. Գլուխը իրանին կը միանայ վիզով:

Իրանը առջեւի կողմէն կը ներկայացնէ երկու որոշ մասեր. կուրծիք եւ որովայնը: Ետեւի կողմը, քիկուսնի կամ կռնակը կը համապատասխանէ կուրծիքին. քանակը եւ արքանը (կամ անոց սեղի) կը համապատասխանեն որովայնին:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Գլուխը եւ իրանը ինչո՞վ կը միանան իրարու. — Իրանը առջեւի կողմէն քանի՞ որոշ մասեր կը ներկայացնէ. Ետեւի կողմէն:



Մարդկային իրան մը

Թ Ե Ի Ե Ր


6. Իրանին կցուած են մեր յորս անդամները, որոնք երկու առ երկու իրարու կը նմանին, այնպէս որ կը կազմեն երկու զոյգ:

Վերին երկու անդամները կը կոչուին թեւ. ստորին երկու անդամները կը կոչուին արունքի:

7. Թեւերը կուրծքին երկու կողմերուն կցուած են ուսերով:

Ուսին շարունակութիւնը կը կազմէ քաշուկը, որ կը վերջանայ արմուկով. յետոյ կուգան ծղիլիք եւ ձեռիք, որոնք իրարու կը միանան դասակով:

Ուսին հակառակ կողմն է անուրբը (aisselle) :  
Չեռքը կը բաղկանայ ասիէ մը եւ մասնէրէ :



Իւրաքանչիւր մատ ունի իր մասնաւոր անունը :  
Մին, որ միայն երկու մասէ կամ կոճէ (phalange)  
կը բաղկանայ, միւսներէն գատուած է եւ կը կոչուի քթա-  
մաս : Միւս չորս մատներէն իւրաքանչիւրը կը բաղկանայ  
երեք կոճերէ : Բժամատին քով գտնուող մատը կը կոչուի  
ցոցամաս, երրորդը՝ միջնամաս, չորրորդը՝ մասնա-  
մաս, հինգերորդը՝ ձկոյթ :


Իւրաքանչիւր մատ կը վերջանայ եղունգով մը :

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Որո՞նք են մարմնոյն չորս անդամները  
եւ ի՞նչ բանի կցուած են : — Թեւերը ի՞նչով կցուած են  
կուրծքին երկու կողմերուն : — Ի՞նչ է ուսին շարունակու-  
թիւնը : — Ինչով կը վերջանայ բազուկը : — Արմուկը թե-  
ւին ո՞ր երկու մասերն իրարու կը միացնէ : — Ծղիթը եւ  
ձեռքն ինչով կը միանան իրարու : — Ուսին հակառակ կող-

մըն ի՞նչ կը կոչուի : — Չեռքն ի՞նչէ կը բաղկանայ : — Իւ-  
րաքանչիւր մատ քանի՞ մասէ կամ կոճէ կը բաղկանայ : —  
Ըսէ՛ք մատներուն անունները :

ՄՐՈՒՆՔՆԵՐ

8. Ստորին անդամները կամ սրունքները կցուած են  
որովայնին : Ստորին անդամնոց զանազան մասերը կը նը-  
մանին վերին անդամնոց զանազան մասերուն : Նախ  
ագորն է որ կը համապա-  
տասխանէ ուսին : Ագորին  
հակառակ կողմը կը կոչուի  
աճուկ (aine), որ կը հա-  
մապատասխանէ անու-  
րին : Չիւսը կրնայ բաղ-  
դատուիլ բազուկին հետ :  
Մրունքը կը համապատաս-  
խանէ ծղիթին : Չիւտին եւ  
սրունքին միջեւ կայ յօ-  
ղակապ մը որ կը կոչուի  
ծունկ եւ որ կը համա-  
պատասխանէ արմուկին :  
Ծունկին հակառակ կողմը  
կը կոչուի կարթ (jarret) :  
Կոճի (cou-de-pied) կո-  
չուած ուրիշ յօղակապ մը  
ոտքը կը միացնէ սրուն-  
քին : Իսկ ոտքը կը բաղ-  
կանայ ներքան կոչուած մասէն եւ հինգ մասներէ, ո-  
րոնք նման են ձեռքի մատներուն, բայց անոնցմէ աւելի  
կարճ են :



**ՀԱՐՑՄՈՒՆՔ.** — Ստորին անդամները մարմնոյն ո՞ր մասին կցուած են: — Ստորին անդամոց զանազան մասերը կը նմանին՞ն վերին անդամոց զանազան մասերուն: — Աղբբը որո՞ւ կը համապատասխանէ: — Աղբբին հակառակ կողմը ի՞նչ կը կոչուի եւ որո՞ւ կը համապատասխանէ: — Ստորին անդամները ի՞նչ մասերէ կը բաղկանան: — Ո՞րն է գիստը. սրունքը՞. ոտքը՞. մատները՞. ներբանը՞: — Զիստը եւ սրունքը միացնող յօդակապը ի՞նչ կը կոչուի: — Սրունքը եւ ոտքը միացնող յօդակապն ի՞նչ կը կոչուի:

**Կ Մ Ա Խ Գ**

**9.** Մարմինը հաստատուն բռնուած է ոսկորներով որոց ամբողջութիւնը կը կազմէ մարդկային կմախիքը (squelette):




Կմախքը կ'որոշէ մեր մարմնոյն արտաքին ձեւերը, այնպէս որ եթէ զատուի զինքը շրջապատող թոյլ մասերէն կամ միսերէն, տակաւին կը ներկայացնէ մարդկային մարմինը, նման շուքի մը զոր կը ձգէ կենդանի մարդ մը: Միսերն են որ մեր տեսութենէն կը ծածկեն մարմնոյն ներքին գործարանները:

Մարդկային մարմնոյն մէջ կայ ընդամենը 208 ոսկոր, ակռաներէն զատ:

**ՀԱՐՑՄՈՒՆՔ.** — Մարմինը ինչո՞վ հաստատուն բռնուած է: — Ոսկորներուն ամբողջութիւնը ի՞նչ կը կոչուի: — Մեր մարմնոյն արտաքին ձեւը կմախքին ձեւէն կախումն ունի՞: — Մարդկային մարմնոյն մէջ ընդամենը քանի՞ ոսկոր կայ:

**ՈՂՆԱՅԱՐԻ ՍԻՆՆ. — ՈՒՍԻՆ ՈՍԿՈՐՆԵՐԸ**

**10.** Ողնայարի սինն. — Վ.գին, կռնակին եւ քաղնածուծ մակին մէջտեղ կը տեսնենք վերէն ի վար մինչեւ սրբանը իջած եւ մորթով ծածկուած ոսկորներու շարք մը որ կը կոչուի ողնայարի սինն (colonne vertebrale), եւ որ կազմուած է ողն (vertebre) կոչուած 33 փոքր ոսկորներէ: Այս պատկեր ցոյց կուտայ թէ ողներն իրարու վրայ ինչպէս դրուած են՝ կազմելու համար ողնայարի սիննը, եւ այս սիննին մէջ ալ վերէն ի վար խողովակ



մը՝ որ կը պարունակէ ողնածուծը (moelle épinière).

Ողնածուծը ուղեղին շարունակութիւնն է։ Ասոնց մէջ է որ կը բնակին զգացումը, իմացականութիւնը եւ կամքը։ Անոնք են որ կ'ուղղեն, կը վարեն եւ կը թելադրեն մեր կենաց բոլոր գործողութիւնները։

11. Ուսին ոսկորները. — Ուսը կազմուած է երկու ոսկորներէ։ Ետեւի կողմը՝ ուսոսկրը կամ *սալիոսկրը* (omoplate) որ եռանկիւնի ձեւով տափակ ոսկոր մ'է։ Կապուած է կողմը՝ *անրակը* (clavicule)։

ՀԱՐՑՄԱՐԻՆԻՔ. — Ի՞նչ է ողնայարի սիւնը. քանի՞ ողներ է կազմուած է. — Ո՞րն է տափոսկրը կամ ուսոսկրը, եւ ո՞րն է անրակը. — Ողնայարի սիւնին մէջ խողովակ մը կազմուած է, եւ ի՞նչ կը պարունակէ այս խողովակ. — Ի՞նչ բանի կը ծառայեն ուղեղը եւ ողնածուծը։

ԿՈՒՐԾՔԻՆ ՎԱՆԴԱԿԸ

12. Կունակին կողմը, ողնայարի սիւնը կազմող ողերէն իւրաքանչիւրին (մինչեւ 12րդը) կցուած են զոյգ մը կողեր (côtes), որոնք նոյնպէս ոսկորներ են եւ վանդակ մը ձեւացնելով՝ կը պատսպարեն կուրծքին ներքին գործարանները։ Այս կոր ոսկորները կուրծքին առջեւի կողմը կը կցուին՝ վզէն դէպ ի որովայնը երկարած տափակ ոսկորի մը, որ կը կոչուի շանջոսկր կամ կրծոսկր (sternum)։

Այն ողերն որոց կցուած են կողերը, կը կոչուին թիկնային ողեր։

12 զոյգ կողերէն 7 զոյգը ուղղակի կը միանայ լանջոսկրին՝ առաձգական մասով մը որ կը կոչուի *աճառ*։ Միւս 5 զոյգը իրարու կը կցուին, ստորին կողը միանալով վերինին։

Առաջին 7 զոյգերը կը կոչուին *ճշմարիտ կողեր* կամ *կրծոսկրային կողեր* (côtes sternales)։ Միւս 5 զոյգերը կը կոչուին *կեղծ կողեր* կամ *անկրծոսկրային կողեր* (côtes asternales)։

Կողերուն միջոցները լեցուած են *ղնդերներով* կամ միւսերով որոնք կը կոչուին *միջնակողեան ղնդեր* (muscles intercostaux)։

ՀԱՐՑՄԱՐԻՆԻՔ. — Ի՞նչպէս կազմուած է կուրծքին վանդակը. — Ի՞նչ է լանջոսկրը կամ կրծոսկրը, որո՞նք են թիկնային ողերը. — Որո՞նք են ճշմարիտ կողերը կամ կրծոսկրային կողերը, եւ որո՞նք են կեղծ կողերը կամ արկրծոսկրային կողերը։

ՈՍԿՈՐՆԵՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՄԷՋ


13. Թելեուուն մէջ. — Բազուկը կը պարունակէ *բազկոսկր* (humérus) կոչուած միակ ոսկոր մը։ Ծղիքին մէջ բովէ բով կան երկու ոսկորներ. *ծղոսկր* (capitus) եւ *ճաճանկոսկր* ((radius)։ Դաստակը կը պարունակէ ութ փոքրիկ ոսկորներ։ Ափը կը պարունակէ հինգ ոսկոր, որոց իւրաքանչիւրին կցուած է մատ մը։ Մատներուն իւրաքանչիւր մասը կամ կոճը կը պարունակէ ոսկոր մը։

Մուկներուն մէջ. — Ազգրը կամ կոնքը կազմուած է երկու *ազգրոսկորներէ* (os de la hanche)։ Զիստը (cuisse) կը պարունակէ *զստոսկր* (fémur) կոչուած միակ ոսկոր մը, որ մարմնոյն բոլոր ոսկորներուն մէջ ամենէն մեծն է։ Սրունքը կը պարունակէ երկու երկայն ոսկորներ, որք են *խոշակը* (tibia) եւ *ոչոֆը* (péroné)։ Ծունկը կը պարունակէ փոքրիկ կլոր ոսկոր մ'որ կը կոչուի *կողոպիոց* կամ *ծնկոսկր* (rotule)։

ՀԱՐՑՄԱՐԻՆԻՔ. — Բազուկը քանի՞ ոսկոր կը պարունակէ. ի՞նչ կը կոչուի. — Ծղիքին մէջ քանի՞ ոսկոր կայ. ի՞նչ կը կոչուին. — Դաստակը քանի՞ ոսկոր կը պարունակէ. ափը՞. — Մատներուն իւրաքանչիւր մասն ի՞նչ կը պարունակէ. — Ազգրը կամ կոնքը կազմող երկու ոսկորներն ի՞նչ կը կոչուին. — Զիստը ի՞նչ կը պարունակէ. սրունքը՞. ծունկը՞։

### ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

14. Կուրծի եւ որովայն. — Իրանը ներքնապէս կը բաղկանայ երկու մեծ խոռոչներէ որոնք կը պարունակեն շնչերէր (viscères) կամ կեանքի համար ամենակարեւոր



ներքին գործարանները: Այս խոռոչներն են կուրծի եւ որովայնը: Երկու խոռոչները ներքնապէս իրարմէ բաժնուած են պարարտ թաղանթով մը որ կը կոչուի ստոծանի (diaphragme):

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Իրանը ներքնապէս քանի՞ խոռոչներէ կը բաղկանայ. որո՞նք են եւ ի՞նչ կը պարունակեն. — Երկու խոռոչներն ինչո՞վ զատուած են իրարմէ:

### ԿՈՒՐԾՔ

15. Ի՞նչ կայ կուրծին մէջ. — Կուրծքին մէջ կան շնչառութեան եւ արեան շրջանի գործարանները:

Շնչառութեան գործարաններն են երկու թոխերը (poumons): Արեան շրջանի գործարանն է սիրտը (coeur):

Սիրտը կուրծքին մէջտեղն է. անոր երկու կողմերն են թոխերը որոնք կուրծքին երկու կէտերը լիովին բռնած են:

Մասնաւոր խողովակ մը, որ կը կոչուի օդային անցի (canal aérien), կ'սկսի կոկորդէն, կ'անցնի վզէն եւ երկու ծորերուն մէջ կը բերէ այն օդը որ ներս մտած է ռնգունքներէն եւ բերնէն: Միեւնոյն ճամբով դուրս կ'ելնէ ծորերուն մէջ մնացած եւ ապականուած օդը:

Դարձեալ կուրծքին մէջ, սրտին ետեւի կողմը, կայ՝ ողնայարի սեան ուղղութեամբ՝ ուրիշ խողովակ մը, որուն միջոցաւ ստամոքսը կ'իջնեն թերանը մտցուած սնունդները:

16. Կուրծքին արտաքին եւ ներքին ձեւերն. — Կուրծքին արտաքին ձեւը հակառակն է ներքինին: Դուրսէն քննելով, կը տեսնենք որ ամենէն լայն մասն է ուսը, եւ վերէն ի վար վայելուչ կերպով կը նրբանայ դէպ ի մէջը: Բայց երբ կուրծքին ներքին վանդակը քննենք, պիտի տեսնենք որ ստորին մասն է ամենէն լայն մասը, եւ հետըզհետէ կը նեղնայ՝ քանի վզին մօտենայ: Ուսին ոսկորները եւ միսերն են որ կուրծքին վերի մասը լայնացուցած եւ յառաջ բերած են կուրծքին արտաքին եւ ներքին ձեւերուն այս երեւութական տարբերութիւնը:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ գործարաններ կան կուրծքին մէջ. սահմանեցէ՛ք իւրաքանչիւրին պաշտօնը: — Կուրծքին արտաքին եւ ներքին ձեւերը նման են իրարու. ի՞նչ բանէ յառաջ եկած է այս երեւութական տարբերութիւն:



Ո Ր Ո Վ Ա Յ Ն

17. Ի՞նչ կայ որովայնին մէջ. — Որովայնին մէջ են մարսողութեան գլխաւոր գործարանները, որք են. *ստամոքսը* (estomac)՝ ձախ կողմը. *շեարդը* (foie)՝ աջ կողմը. ասոնց ներքեւ կը գտնուի մարսողական խողովակին այն մասն որ բազմաթիւ ծայքերէ կը բաղկանայ եւ կը կոչուի *աղիք* (intestin). որովայնին ստորին մասին մէջ է *միջային փառնիուշքը* (vessie urinaire), այսինքն այն թաղանթային կամ մաշկային պարկը, ուր՝ դուրս արտաբուելէ առաջ՝ կը հաւաքուի *երիկառնակը* (rein. պէտպրէք) մէջ պատրաստուած մէզը:

18. Որովայնին ստաղձը. — Որովայնը ներսի կողմէն պաշտպանուած չէ ոսկորներով, ինչպէս է կուրծքը. Որովայնին միակ ատաղձը կը կազմէ *ողնայարի սիւնին* ստորին մասը. Կը բաղկանայ երեք մասերէ. *միջային մասն* (région lombaire) որ կը բաղկանայ հինգ մեծ ողներէ եւ կը համապատասխանէ *ֆառնակ* (lombes կամ reins) ըստուած արտաքին մասին. *սրբանային մասն* (région sacrée) որ կը բաղկանայ հինգ ողներէ այնպէս իրարու անցուած որ *սրբանուկը* (sacrum) կոչուած միակ ոսկոր մը կը կազմեն. *սեւային մասն* (région coccygienne) որ կը բաղկանայ չորս անկատար փոքրիկ ողներէ:

Որովայնը ստորին կողմէն եւս պաշտպանուած է ոսկորային հաստատուն նեցուկով մ'որ կը կոչուի *կոնկ* (basin). Կոնքը ամբողջ իրանին խարխիւն է միանգամայն, եւ անոր կը կցէ *ստորին անդամները*, ինչպէս *վերին անդամներն* ալ անոր կը կցուին ուսերուն միջոցաւ. Կոնքը վարի կողմէն կը վերջացնէ որովայնը, ինչպէս ստոծանին կը վերջացնէ կուրծքը:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ո՛ւր կը գտնուին մարսողութեան գլխաւոր գործարանները. որո՞նք են. — Որովայնը ի՞նչ ոսկորներով պաշտպանուած է. — Քանի՞ մասէ կը բաղկանայ ող-

նայարի սիւնին այն մասը որ որովայնին ատաղձը կը կազմէ. ի՞նչ կ'ըսուին այս մասեր. — Կոնկն ի՞նչ է եւ ի՞նչ բանի կը ծառայէ:

Վ Ի Զ

19. Վիզը մարմնոյն այն նեղ մասն է որ կը միացնէ իրանը գլուխին. Գլխաւորաբար կազմուած է ողնայարի սեան առաջին մասէն որ կը կոչուի *ծործորակային կամ պարանոցային մասն* (région cervicale): Ասիկայ կը բաղկանայ 7 ողներէ, որոց առջեւի կողմը կը գտնուին երկու մսեղ խողովակներ. մին կը ծառայէ մեր կլնած սնունդներն դէպ ի ստամոքս իջեցնելու, միւսը կը ծառայէ դէպ ի կուրծքն առաջնորդելու մեր շնչած օդը:

Թէ պարանոցային ողները եւ Թէ սննդառութեան եւ շնչառութեան խողովակները շրջապատուած են միսերով որոց միջոցաւ կը կատարենք վզին եւ գլխուն այնչափ այլազան շարժումները:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ է վիզը. քանի՞ ողն կը պարունակէ եւ ի՞նչ կ'ըսուին անոնք. — Ի՞նչ խողովակներ կը պարունակէ. — Սոյն ողներ եւ խողովակներ ինչո՞վ շրջապատուած են:

ԿԵՆԱՅ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՇՏՕՆՆԵՐԸ

20. Սնանիլ. — Երբ մանուկը կը ծնի, շատ փոքր է բաղդատմամբ իր ծնողաց. Պէտք է որ մեծնայ, պէտք է որ իր մարմնոյն ծանրութիւնը զգալապէս աւելնայ, որպէս զի ըլլայ *երիթասարդ*, յետոյ *չափահասակ*, Ուստի չի դադրիր ուտելէ, որպէս զի սնանի. Երբ մեծնայ, պիտի շարունակէ ուտել, որպէս զի իր մարմինը չի մաշի, չապառի. Պէտք է որ այսպէս ինքզինքը պահպանէ իր ամբողջ

կենաց մէջ։ Մասնիրն առաջին պայմաններէն մին է կենդանի էական գոյութեան։

**21. Զգալ, գիտնալ եւ կամենալ.** — Մարդիկ միայն հաց ուտելով եւ ապրելով չեն բաւականանար, այլ պէտք կ'զգան նաեւ ճանչնալու զիրենք շրջապատող բաները։ Իրենց աչերը հաճութեամբ կը դիտեն գիւղական տեսարանաց գեղեցկութիւնը, բնութեան շքեղութիւնը, այն զանազան տեսարանները զոր աշխարհ իրենց կը ներկայացընէ։ Իրենց ականջները հաճութեամբ կը լսեն թռչնոց գեղգեղանքը եւ մարդկային ձայնը։ Մաղկանց անուշահոտութենէն ոչ նուազ ախորժ կ'զգան որչափ պտղոց քաղցր համէն։ Մէկ խօսքով, մարդ օժտուած է զգայարաններով որոց միջոցաւ կը ճանչնայ իր շուրջ գոյութիւն ունեցող էակներն եւ իրերը։ Այս կերպով կը կազմէ գաղափարներ բնութեան վրայ եւ ինքն իր վրայ։ Կը խորհրդածէ. կը պատճառաբանէ եւ կը յաջողի հասկնալ թէ իրեն ինչ ծառայութիւններ կրնան մատուցանել կենդանիները, տոնկերը, քարերը կամ հողին պարունակած մետաղները։ Նոյնպէս կրնայ գիտնալ թէ ինչ բան իրեն կրնայ վնասել։ Այս գաղափարաց շնորհիւ կը գործադրէ իր որոշումը՝ հոգալու համար իր մարմնաւոր պէտքերը, գործունէութեան մէջ կը դնէ իր իմացականութիւնը՝ որպէս զի ամէն բանի պատճառը հասկնայ եւ կրթուի։

Այսպէս, մեր կենաց համար ունինք երկու կարգ կարողութիւններ. մէկ բանին կը ծառայեն մեր մարմինը պահպանելու, զայն անուցանելու. ուրիշներ կը անուցանեն մեր միտքը եւ են ազնուագոյնները մեր կարողութեանց մէջ։

**22. Մարդու անուցման ծառայող մեծ պաշտօններն են մարսողութիւնը, շնչառութիւնը, արեան շրջանը եւ հիւթարտարութիւնը։**

**ՀԱՐՑՄՈՒՆՔ.** — Մարդ ի՞նչ ընելու է ապրելու համար։ — Մարդիկ ապրելու համար՝ ուտելէ զատ՝ ուրիշ ի՞նչ բանի պէտք կ'զգան, եւ իրենք զիրենք ի՞նչպէս կը կրթեն եւ

ի՞նչպէս կը հոգան իրենց մարմնաւոր պէտքերը։ — Մարդու անուցման ծառայող մեծ պաշտօնները որո՞նք են։

**Մ Ա Ր Մ Ո Ղ ՈՒ Թ Ի Ի Ն**

**23. Ի՞նչ է մարսողութիւնը.** — Մասնելու համար պէտք է ուտել։ Իւրաքանչիւր ճաշէ վերջ՝ մեր մէջ կը կատարուի ներքին աշխատութիւն մ'որ կը կոչուի *մարսողութիւն*։ Կը *մարսելիք* ինչ որ կերանք։ Մարսողութեան հետեւանքով է որ կերակուրներուն պարունակած անուցիչ մասերը կը մտնեն ամէն օր մեր արեան մէջ եւ զայն քիչ առ քիչ կը նորոգեն։ Արիւնն է որ կը պահպանէ, կը օրացնէ եւ կը շեռուցանէ բոլոր մարմինը։ հետեւաբար այս թանկագին հեղուկին պահպանումը կենաց էական պայմանն է։

**24. Մարսողութեան գործարանները.** — Մարսողութիւնը կը կատարուի գլխաւորաբար *քերնիք*, *ստամոքսին* եւ *աղիքներուն* միջոցաւ, որոնք՝ այս պատճառաւ՝ կը կոչուին *մարսողութեան գործարաններ*։

*Ստամոքսը* (estomac) թաղանթային պարկ մ'է, որովայնին վերի կողմը՝ դէպի ձախ՝ գետեղուած։ Անոր շարունակութիւնը կը կազմեն *աղիքներն* (intestins), որոնք մարմնոյն 6—7 երկայնութեամբ երկայն խողովակներ են եւ լեցուցած են որովայնին մեծ մասը։

Աղիքներուն առաջին մասը կը կոչուի *առաջնաղիք* (duodenum) եւ է նուազ լայն բան վերջինը, որ կը կոչուի *ստորաղիք* (gros intestin)։ Միջին մասը, որ *նրբաղիք* (intestins grêles) կը կոչուի, ամենէն երկայն մասն է եւ որովայնի խոռոչին մէջ իրարու վրայ պըրուած ու ծալուած խողովակներու ճնարիտ ծրար մը կը ներկայացնէ։ Ստուարաղիկն կը վերջանայ *սրբալիքով* (anus)։



Բերանը եւ *usarlnfup* իրարու հետ կը հաղորդակցին որկոր (oesophage) կոչուած թաղանթային պարզ խողովակով մը :

Ստամոքսն ունի՝ վերէն եւ վարէն՝ երկու բացուածք կամ բերան . վերինը կը հաղորդակցի որկորին հետ եւ կ'ընդունի անկէ եկած սնունդը . այս բացուածք կը կոչուի *որկորաբերան* (cardia) : Ստորին բացուածքը կը հաղորդակցի աղիքներուն հետ եւ կը կոչուի *սոր* (pylore) :

**25.** Մարսողական գործողութիւններ . — Առաջին մարսողութիւնը կը կատարուի բերնին մէջ : Ասաւները կը մանրեն բերան մտնող սնունդները, մինչդեռ *յորձունֆր* (salive) կը թրջէ զանոնք :

*Լորձունֆր* հեղուկ մ'է . կ'արտադրուի բերնին թոյլ մատերուն մէջ գտնուող մասնաւոր գործարաններու մէջ որոնք կը կոչուին *յորձնայիւն գեղձեր* (glandes salivaires) : Լորձունքն է որ, իր մէջ գտնուող *յորձնիս* (ptyaline) կոչուած նիւթին շնորհիւ, հեղուկ վիճակի կը վերածէ այն ալիւրներն ու փէկուղները որ արդէն պատրաստուած են եփուելով կամ երկայն ժամուելով :

**26.** Մարսողութեան երկրորդ մասը կը կատարուի *usarlnfup*ին մէջ : Որկորին միջոցաւ՝ բերնէն դէպ ի ստամոքսը կ'իջեցնենք այն աննդական պատառները որոնք լորձունքին ներգործութիւնը կրեցին :

Ստամոքսին ներքին երեսներուն վրայ գտնուող գեղձերէն կ'արտադրուի *usarlnfupայիւն հիւք* (suc gastrique) կոչուած հեղուկը, որ կը պարունակէ մարսողական յատկութիւններ ունեցող եւ *խախացիս* (pepsine) կոչուող նիւթը :

*Խախացիսը* ստամոքսային հիւթին մէջ այն է, ինչ որ է *յորձնիսը* լորձունքին մէջ : Միայն թէ, մինչդեռ լորձնիտը կը ներգործէ ալիւրներուն եւ փէկուղներուն (fécule) վրայ, խախացիտը կը ներգործէ մասնաւորապէս՝ *Աորոգիչ* ըսուած նիւթերուն վրայ, ինչպէս են ամէն տեսակ մի-

սեր, հացին սոսինձը եւ այն նիւթերը որոնք մեր կերած տունկերուն գործարանները կը կազմեն : Մէկ խօսքով, ստամոքսային հիւթը, իր խախացիտին օգնութեամբ, կը կազմալուծէ եւ անճանաչելի կ'ընէ մեր կլնած կենդանական կամ բուսական պատառները : Բոլոր ստոնք կը լուծուին ստամոքսային հիւթին մէջ եւ կը վերածուին թթու, գորշագոյն եւ գրեթէ հեղուկ հայտի մը որ կը կոչուի *խախաց* (chyme) :

Այս գործողութեան միջոցին ստամոքսը գոց կը մնայ, քանի որ որկորաբերան եւ սոր հաւասարապէս փակուած են : Բայց երբ խախացը կազմուած վերջացած է, իր լոյծ վիճակին պատճառաւ այլ եւս չի կրնար մնալ հոն, քիչ քիչ կը հոսի սորէն եւ կը մտնէ աղիքներուն մէջ :

Այսպէս ստամոքսը քիչ քիչ կը պարպուի, եւ երբ այլ եւս բան մը չի պարունակեր, կ'սկսինք վերստին խնանալ այն զգացումը զոր *աւտօթիսիւն* անուամբ կը ճանչնանք :

Մարսողութեան տեսողութիւնը կը փոխուի աննոց տեսակին համեմատ : Միսերը ամենէն շուտ կը մարսուին . բայց, ընդհանրապէս ստամոքսային մարսողութիւնը կը տեւէ մէկ ու կէս ժամէն մինչեւ երեք ժամ, եթէ ճաշը կատարեալ եւ չափաւոր է :

**27.** Մարսողութեան երրորդ եւ վերջին մասը կը կատարուի աղիքներուն մէջ :

Ստամոքսէն աղիքներուն մէջ անցնող խախացը բազմախառն նիւթ մ'է : Կը պարունակէ, մէկ կողմէն՝ լորձունքին եւ ստամոքսային հիւթին շնորհիւ արդէն մարսուած նիւթերը, միւս կողմէն՝ ճարպային նիւթերը եւ տունկերուն մէջ պարունակուած փէկուղներն որոց վրայ լորձունքը չէ կրցած ներգործել . կը պարունակէ նաեւ մեր աննոց անպէտ մասերը որոնք սահմանուած են մեր մարմինէն դուրս արտաքսուելու : Ճարպային նիւթերը եւ փէկուղներն իրենց կարգին կը մարսուին երրորդ գործողութեամբ մ'որ տեղի կ'ունենայ *առաջնաղիքին* մէջ : Հոս խա-

խացին վրայ կուգան ներգործել երկու նոր հեղուկներ՝ մաղձը (bile) որ կուգայ շեարդէն (foie), եւ մանային հոյզը (suc pancréatique) զոր կ'արտադրէ լորձնային գեղձերուն խիստ նման եւ մաան (pancréas) կոչուած գեղձ մը։ Այս երկու հեղուկներ, խախացին խառնուելով, կը փոխակերպեն զայն՝ կաթնաման հեղուկի մը որ կը կոչուի մաւնաց (chyle)։ Սննդական նիւթերուն աւելորդ մասը, որ պիտի արտաբուսի, քիչ քիչ մուծ դեղին գոյն մը կ'առնէ մաղձին ներգործութեամբ։

**28.** Մամացը, որ մեր առած սնունդին բուն սնուցիչ մասն է, կը ծծուի նրբաղիներուն ներքին երեսներուն վրայ զանուած խողովակներէ՝ որոնք զայն կ'առաջնորդեն երակներուն (veines) մէջ, ուր կը խառնուի արեան։

**ՀԱՐՑՄՈՒՆՔ.** — Ի՞նչ է մարսողութիւնը. — Արիւնը ի՞նչ գէր կը խաղայ մարմնոյն մէջ. — Մարսողութեան գլխաւոր գործարանները որո՞նք են. — Մարդ ի՞նչ միջոցաւ կը ճանչնայ իր շուրջ գոյութիւն ունեցող էակները. — Մարդ կրնայ գիտնալ թէ ի՞նչ բան օգտակար է եւ ի՞նչ բան կրնայ վնասել իրեն. ի՞նչ կերպով կրնայ գիտնալ. — Ուրեմն քանի՞ կարգ կարողութիւններ կան մեր մէջ. — Նկարագրեցէ՛ք մարսողական գործողութիւնները. — Ո՞ւր կը կատարուի առաջին մարսողութիւնը. ի՞նչ է յորձանքը. ի՞նչ է յորձանիքը. ի՞նչ են յորձանային գեղձերը. — Ո՞ւր կը կատարուի մարսողութեան երկրորդ մասը. ի՞նչ է սսամոխը. որկորը՝ սսամոխային հիւթը՝ խախացիք՝ խախացը՞. — Ե՞րբ կ'ըզգանք անօթութիւն. — Ստամոքսային մարսողութիւնը ո՞րչափ ատեն կը տեւէ ընդհանրապէս. — Ո՞ւր կը կատարուի մարսողութեան երրորդ եւ վերջին մասը. — Ի՞նչ է շեարդը. մաղձը՞. մանային հոյզը՞. մաանը՞. մամացը՞. — Մամացը ի՞նչպէս երակներուն մէջ անցնելով՝ արեան հետ կը խառնուի։

# Տ Ի Ե Ջ Ե Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

## Դ Ա Ս Ը

### Բ Ա Ր Ջ Ր Ա Գ Ո Յ Ն Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք Ի Մ Է Ջ

#### Տ Ի Ե Ջ Ե Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ռ Ա Ր Կ Ա Յ Ն

Աստեղագիտութիւնը *Տիեզերքի գիտութիւնն է*.  
 Ի՞նչ է տիեզերքը. — *Տիեզերքը* գոյութիւն ունեցող ամէն բաներու, Երկրի եւ Երկնքի, ամբողջութիւնն է. Աստղերը, — Արեւը, մեր բնակած Երկիրը, Լուսինը եւ երկնային միւս մարմինները —, *Տիեզերքի մասը* կը կազմեն։

Ե՞րբ սկսաւ Աստեղագիտութիւնը. — Աստեղագիտութիւնը շատ հին գիտութիւն մ'է. Երկնային մարմիններն առաջին անգամ դիտողները եղան, հազարաւոր տարիներ առաջ, Հնդիկները, որոնք հովիւ էին, միանգամայն երկրագործ, բուրմ եւ բանաստեղծ. Յետոյ, Եգիպտացիք, Չինացիք, Պարսիկք, Քաղդէացիք, Փիւնիկեցիք, Յոյնք, վերջապէս բոլոր քաղաքակրթուած ազգերն ունեցան աւստեղագէտներ, այսինքն մարդիկ որոնք աստղերը կը դիտեն եւ անոնց շարժումները կը հաշուեն։ Բայց երկայն դարեր պէտք եղան, որպէս զի դիտելով, խորհրդածելով, հաշուելով, վերջապէս հասնին մարդիկ ճիշդ գաղափարի մը՝ տիեզերքին կազմութեանը եւ կարգաւորութեանը մասին։

Ի՞նչպէս կասարելագործուեցաւ այս գիտութիւն. — Հին աստեղագէտք, Հնդիկք, Քաղդէացիք եւ Եգիպտացիք, խնամօք նշանակած եւ պահպանած էին իրենց դիտողութիւնները, իրենց հաշիւները. յետոյ եկողները օգուտ քաղեցին անոնցմէ, իրենց դիտողութիւններն ու հա-

շինները աւելցուցին անոնց վրայ եւ սխալներն ուղղեցին։ Մեզ աւելի մօտ ժամանակի մը մէջ, Աղեփաւնդրիոյ դպրոց ըսուած գիտուններու հոշակաւոր ընկերութիւն մը, Եգիպտոսի մէջ հաւաքեց ինչ որ կրցաւ գտնել հիներուն աշխատութիւններէն։ Այս դպրոց իր մէջ ունէր երկու հոշակաւոր աստեղագէտ. Իպպարֆոս եւ Պսղոմէոս, առաջինը՝ Յոյն, երկրորդը՝ Եգիպտացի։ Ասոնցմէ յետոյ միեւնոյն աշխատութիւնները շարունակեցին արաբ աստեղագէտք։ Վերջապէս, իբր երեք դար առաջ, Եւրոպացի մեծ գիտուններ ամփոփեցին բոլոր այս գիւտերը, նոր եւ այ աւելի սքանչելի գիւտեր ըրին, և իրենց դիտողութիւններով ու հաշիւներով յաջողեցան ճանչնալ մեր աշխարհի եւ ամբողջ տիեզերքին ճշմարիտ կազմակերպութիւնը։ Պէտք է յարգանքով յիշել այս մեծ հանճարներուն անունները. Կոպեռնիկոս, Բեքլէր եւ Կալիլէոս. Կոպեռնիկոս Բոլոնիացի էր, Բեքլէր՝ Գերմանացի, Կալիլէոս՝ Իտալացի։

Հեռադիտակի մասուցած ծառայութիւնը. — Ճիշդ այն ժամանակ տեղի ունեցաւ հեռադիտակին գիւտը, որուն շնորհիւ շահագրգիռ գնութիւններ եւ կարեւոր գիւտեր եղան։ Անկից ի վեր հետզհետէ շինուեցան աւելի կատարեալ, աւելի զօրաւոր եւ ճշգրիտ գործիներ, եւ կառուցուեցան բազմաթիւ Աստղաբաշխական դիտարաններ։ Արդիւնքն հրաշալի եղաւ։

Որո՞նք կազմակերպեցին այս գիտութիւնը. — Հեռադիտակը հնարուելէն ի վեր, ամենէն նշանաւոր աստեղագէտներն եղան Նեւտոն, Հերշել եւ Լաքաւա։ Առաջինը Անգլիացի էր, երկրորդը Հանսփրի մէջ ծնած էր, երրորդը Ֆրանսացի էր։ Այսօր իսկ մեծ գիտուններ, ճարտար խուզարկուներ կան ամէն ազգերու մէջ։ Ռւբեմն բոլոր քաղաքակիրթ ազգերը միասին աշխատած են՝ այս գեղեցիկ եւ օգտակար գիտութիւնը կազմելու համար։

Տիեզերագութիւնը մէկ մասն է Աստղագիտութեան, որ շատ ընդարձակ եւ դժուարին գիտութիւն մ'է եւ յատուկ է դաս մը գիտնոց միայն։ Տիեզերագութիւնը կ'ուսուցանէ Երկրի դիրքը եւ երկնային մարմնոց հետ ունեցած յարաբերութիւնը, մանաւանդ արեգական եւ լուսնոյ հետ։

Ե Ր Կ Ի Ն Ք

Ընդհանուր տեսիլ երկնքի. — Ենթադրենք թէ դիտող մը, Արեւուն մոտքէն քանի մը վայրկեան յետոյ, բաց եւ բարձր տեղ մը կեցած ըլլայ. իր աչաց առջեւ պիտի պարզուի վեհաշուք տեսարան մը։ Յաջորդաբար պիտի երեւին աւսդէր, որոնք ցերեկն անտեսանելի մնացած էին, վասն զի իրենց լոյսը կ'աներեւուածանար Արեւին լուսին առջեւ (1)։ Իրենց թիւը շուտով պիտի աւելնայ, միանգամայն իրենց փայլն այլ, եւ վերջապէս պիտի լուսավարեն ամբողջ երկինքը։

Գաւազագութիւն երկնային մարմնոց. — Երկնային մարմինները, իրենցմէ մեզ եկած լոյսին նայելով, կըրնան երկու կարգի բաժնուիլ. անոնք որ իրենք իրենցմէ լոյս ունին եւ անոնք որ դիմադարձ (opaque) են։ Առաջինները կը փայլին իրենց յատուկ լոյսով մը, ինչպէս են Արեւը, աստղերը. դիմադարձ ըսուածները, ինչ-

(1) Արեւուն սփռուած լոյսը ցանցենիին վրայ շատ աւելի ուժգնութեամբ կը ներգործէ քան թէ աստղերուն լոյսը. այս պատճառաւ չիմացուիր ասոնց ներկայութիւնը հորիզոնին վրայ։ Բայց եթէ, որ եւ է միջոցով մը, կարենանք գերծ մնալ սփռուած լոյսին մէկ կարեւոր մասէն, եթէ՝ օրինակի համար՝ դիտակ մը գործածենք կամ թէ հորի մը խորը իջնենք, աստղերուն լոյսը պիտի ըլլայ հզօրագոյն, եւ պիտի տեսնուին այնպիսի աստղեր որոնք առաջ անտեսանելի էին։

պէս են մոլորակները, գիսաւորները, իրենց յատուկ լոյս չունին, եւ կը փայլին՝ անոր համար որ Արեւը զիրենք կը լուսաւորէ, եւ իրենց լոյսը կ'անդրադարձնեն, ինչպէս կ'ընէ Լուսինը, ինչպէս կ'ընէ Երկիրն ալ:

Երկնային մարմինները կը բաժնուին նաեւ *սեռանէլի* մարմիններու եւ *հեռադիտական* մարմիններու:

Երկնային *սեռանէլի* մարմիններն են անոնք որոնք պարզ աչքով կը տեսնուին. *հեռադիտական* կ'ըսուին անոնք որոնք հեռադիտական գործիներու միջոցաւ միայն կրնան տեսնուիլ: Տեսանելի երկնային մարմնոց թիւը 6,000ը չանցնիր. հեռադիտական մարմիններու թիւն է իբր 80 միլիոն:

**Երկնային գուն.** — Աստեղագիտութեան մէջ *երկնային գուն* կը կոչուի այն անհուն կամարը կամ մտացածին գունտը որուն ներքին մակերեւութին կարծես կըրցուած են բոլոր երկնային մարմինները, եւ որուն կարծես թէ կեդրոնը բռնած է Երկիրը:

Կրնանք Քասկալի<sup>(1)</sup> հետ ըսել թէ, երկնային գունտը անսահման շառաւիղով գունաւ մ'է որուն կեդրոնը ամէն տեղ է եւ շրջապատը եւ ոչ մէկ տեղ:

**Երկնային մարմնոց շարժումը.** — Երկնային մարմինները հաստատուն չեն երկնային գունտին վրայ, այլ ամէնքը կը շարժին՝ հետեւելով երկրաչափական կոր գիծերու, ինչպէս են *ճուածիրը* (ellipse), *գոլգորդը* (parabole)<sup>(2)</sup>: Իր ընթացքին մէջ, երկնային մարմնոյ մը կեդրոնէն գծուած շաւիղը կամ անցքը կը կոչուի *ծիր* կամ *ոյորս* (orbite), ինչ որ ալ ըլլայ իր ձեւը:

(1) 17րդ դարու մեծ հանճարներէն մին է որ կարեւոր գիւտեր ըրաւ մաթեմատիքի եւ բնագիտութեան մէջ:

(2) Չուածիրը գոցուած կոր գիծ մ'է, զոր կրնանք ունենալ շեղակի կտրելով ուղիղ կոնոն մը: — Զուգորդը կոր գիծ մ'է, զոր կրնանք ունենալ երբ կտրենք կոնոն մը՝ իր կողմերէն մէկուն զուգահեռական մակարդակով մը:

Երկնային մարմնոց շարժման մէջ, պէտք է որոշել իրական շարժումները եւ երեւոյթական շարժումները:

Իրական շարժումները յառաջ կուգան այն տիեզերական զօրութիւններէն որոնք երկնային մարմինները կը վարեն. *երեւոյթական* շարժումները արդիւնք են Երկրի իրական շարժումներուն՝ միւս երկնային մարմնոց իրական շարժումներուն հետ զուգորդութեան:

Վերջապէս, Արեւուն եւ աստղերուն իրական շարժումներն ալ կը տարբերին մոլորակներուն եւ գիսաւորներուն իրական շարժումներէն: Արդարեւ պիտի տեսնենք որ Արեւը եւ աստղերը ձգողութեան (attraction) զօրաւոր կեդրոններ են որոց կը միտին՝ իրենց շրջանին մէջ՝ մոլորակները եւ գիսաւորները, եւ որոնք անհուն միջոցին մէջ իրենց հետ կը քաշեն կը տանին զանոնք՝ ամէն ուղղութեամբ:

Նիւ եւ մուսի աստեղաց. — Արեւուն մուտքէն յետոյ երկինքը դիտելով, պիտի տեսնենք որ երկնային մարմինները, իրենց յարաբերական դիրքը պահելով հանդերձ, հաստատուն չեն երկինքին մէջ, եւ թէ իրենց շարժումներ յար եւ նման են Արեւուն շարժումներուն: Արեւելքէն՝ ամէն վայրկեան՝ հորիզոնէն վեր կ'եղնեն կամ կը ծագին նոր աստղեր, որոնք երկինքի վրայ կը բարձրանան՝ յառաջանալով դէպ ի հարաւ, եւ կուգայ կէտ մը ուր կը դադարին բարձրանալէ, կ'իջնեն դէպ ի ձախ, եւ վերջապէս մարդ կը մտնեն, այսինքն կ'իջնեն հորիզոնէն վար:

Քեւեռային աստղ. — Բոլոր աստղերը ելլ մը եւ մուսի մը չունին. կան աստղեր որոնք հորիզոնէն վեր կը մնան միշտ: Ասոնց մէջ, ոմանք կը թուին գծել շրջանակ մը որ Երկրի գրեթէ ամբողջ մակերեւոյթը կը քերէ. այլք կը թուին շարժիլ հեազհետէ աւելի փոքր շրջանակներու վրայ, մտնենալով՝ գրեթէ անշարժ վերջին աստղի մը, զոր կոչած են *Քեւեռային աստղ*:

Յաջորդարար պիտի ուսանինք Արեւը, մոլորակները, գիսաւորները եւ աստղերը: Բայց նախ մի քանի բացատրութիւններ պիտի տանք ի մասին երկրագունտին գիծերուն եւ շրջանակներուն:

# ՄԻՋՈՑԻ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹԻՒՆ

ԿԱՍ

## ՃԱՍՏԱՏԱԶԱՓՈՒԹԻՒՆ

ՈՒՂԻՂ ԳԾԻՆ ԵՒ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ԲԱՂԱԿՑՈՒԹԻՒՆՔ

### 1. ՄԱՀԱՐԳԱԿ ԵՒ ՍԿՋՔՈՒՆՔ

1. ՄԱԿԱՐԳԱԿ մը մակերեւոյթ մ'է որուն վրայ ամէն ուղղութեամբ կրնանք դնել ուղիղ քանակ մը, որ պարտի ամէն մասամբ շօշափել մակարդակը: Օրինակ՝ գրատախտակին մակերեւոյթը, պատի մը մակերեւոյթը, տախտակամածի մը մակերեւոյթը:



Ձեւ 1

Գործաւորները, ապահով ըլլալու համար թէ մակերեւոյթ մը մակարդակ է, ուղիղ քանակ մը կը դնեն անոր վրայ՝ զանազան ուղղութեամբ:


2. Մակարդակ մը անեզր է: Սովորաբար կը ներկայացուի զուգահեռազնով մը (Ձեւ 1):

Երկրաչափութեան այս մասին մէջ, մակարդակը պիտի նկատենք յաճախ՝ իբրև անջատ որ եւ է մարմինէ. բայց պիտի ներկայացնենք զայն՝ գծերով եզերուած, թէեւ իրականապէս պէտք է միշտ նկատել զայն՝ իբրև անսահման տարածութիւն մը ունեցող:

3. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԳԱԿ. — Հորիզոնական մակարդակ մը մակերեւոյթ մ'է որուն վրայ գծուած բոլոր ուղիղ գիծերը հորիզոնականներ են:

ՕՐԻՆԱԿՆԵՐ. — Հանդարտ ջրոյ փոքր տարածութեան մը մակերեւոյթը, սենեկի մը տախտակամածը, սանդուղիի մը աստիճանները, եւ այլն:

Մակարդակի մը հորիզոնական ըլլալը ճշդելու համար, մակարդակին վրայ կը դնենք հարթաչափի (Ձեւ 2) մը՝ զանազան ուղղութեամբ. օդոյ պղպջակը պէտք է միշտ գտնուի ապակիէ խողովակին մէջտեղը. այն ատեն մակարդակը հորիզոնական է:




Ձեւ 2

4. ՈՒՂԱԶԻԿ ՄԱԿԱՐԳԱԿ. — Մակարդակ մը ուղղաձիգ է, երբ ուղղաձիգ գիծ մը կը պարունակէ:

Տրամալարով մը կարելի է դիւրաւ հաստատել թէ, դասարանին որ եւ է մէկ պատին մակերեսը կը պարունակէ այն ուղղաձիգ գիծը որ կ'անցնի անոր մէջ մի կէտէն: Կ'ըսենք այն ատեն թէ այս պատին մակերեսը ուղղաձիգ մակարդակ մ'է:

5. ՍԿՋՔՈՒՆՔ Ա. — Երկու մակարդակներ զիրար կտրելով, ուղիղ գիծ մը յառաջ կը բերեն (Ձեւ 3):


ՕՐԻՆԱԿՆԵՐ. — Սենեկի մը առաստաղը պատերուն կը հանդակի՝ ուղիղ գծեր կազմելով: Երբ թերթ մը թուղթ ծալենք, թերթին մէջ մի մասը մակարդակ մ'է, եւ ծալքը, այսինքն երկու մակարդակներուն զիրար կտրած տեղը, ուղիղ գիծ մ'է:



Ձեւ 3

6. ՍԿՋՔՈՒՆՔ Բ. — Տրուած ուղիղ գիծ մը կարելի է անցումել անհուն բուով մակարդակներ:

ՕՐԻՆԱԿՆԵՐ. — Տանիքի մը վրայ տընկուած հողմացոյց մը կրնայ առնել ամէն կարելի դիրք՝ անցնելով այն ուղղաձիգ ուղիղ գիծէն կամ հաստատուն նեցուկէն որ իրեն իբրև առանցք կը ծառայէ: — Շարժելով դուռ մը ՊՔ ուղիղ գիծին շուրջը որ կ'անցնի երկու ծղիւնիներէն, կ'ունենանք այնչափ ուղղաձիգ մակարդակներ՝ որչափ որ դիրք տանք դրան (Ձեւ 4):



Ձեւ 4


3. ՄԿՋՔՈՒՆԻՔ Գ. — Ուղիղ գծի մը վրայ չի գտնուող երեք կէտերէ կրնանք մակարդակ մ' անցունել, եւ միայն մէկ մակարդակ կրնանք անցունել:

Այսպէս, իր Ա եւ Բ ծղիւնիներուն վրայ դարձող զուռ մը (Ձեւ 4) որոշ գիւղք մը կ'առնէ, երբ հասնի Գ երրորդ կէտին:

2. ՈՒՂԻՂ ԳԾԵՐ ԵՒ ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ ՄԱԿԱՐԳԱԿՆԵՐ

8. ՄԱԿԱՐԳԱԿԻ ՄԸ ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ. — Մակարդակի մը ուղղահայեաց եղով գիծ մը, մակարդակին մէջ իր ոտէն սկըսելով գծուած բոլոր ուղիղ գծերուն հետ կը կազմէ ուղիղ անկիւններ:

Տրամալարն ուղղահայեաց է ամէն հորիզոնականի, հետեւաբար հորիզոնական մակարդակի մը մէջ գծուած բոլոր ուղիղ գծերուն: — Նաև մը կայմերը ուղղահայեաց են տախտակամածին. երբ տախտակամածը հորիզոնական է, կայմերն ուղղաձիգ են:



Ձեւ 5

9. ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Եթէ Մ մա-

կարդակէ մը դուրս գտնուող Ա կէտէ մը՝ այս մակարդակին վրայ իջեցնենք ԱՈ ուղղահայեաց մը եւ ԱԲ, ԱԳ... զանազան շեղ գծեր (Ձեւ 6),


1. Ուղղահայեացն աւելի կարճ է քան որ եւ է շեղ գիծ:

2. Ուղղահայեացին ոտէն հաւասարապէս հեռացող երկու շեղ գծեր իրարու հաւասար են:


ԱՊԱՑՈՅՑ Ա. — 1<sup>0</sup> ԱՈ ուղղահայեացն աւելի կարճ է քան որ եւ է ԱԲ շեղ գիծ. վասն զի, ըստ սահմանի, ԱՈ ուղիղ գիծն ուղղահայեաց է՝ մակարդակին մէջ իր ոտքէն գծուած ՈՒԻՆ. այն ատեն ԱՈՒ անկիւնները ուղղանկիւնն է, եւ ԱՈ կողմը աւելի փոքր է քան ԱԲ հակուղիղը:

2<sup>0</sup> ԱԲ եւ ԱԳ երկու շեղ գծեր, որ ուղղահայեացին ոտ-

քէն հաւասարապէս կը հեռանան, հաւասար են, եւ փոխադարձաբար:



Ձեւ 6



Ձեւ 7

Եթէ դարձնենք ԱՈՒ անկիւնը ԱՈԻՆ շուրջը, ԱՈՒ ուղիղ անկիւնը կը պատշաճի ԱՈԳ ուղիղ անկեան հետ, եւ ՈՒ հաւասար ըլլալով ՈԳԻՆ ըստ ենթադրութեան, Բ կէտը պիտի իյնայ Գ կէտին վրայ, եւ ԱԲ պիտի պատշաճի ԱԳԻՆ հետ:

10. ՄԱՀՄԱՆ. — Կէտի մը եւ մակարդակի մը մէջ եղած հեռաւորութիւնն է՝ այս կէտէն մակարդակին վրայ իջեցուցուած ուղղահայեացը:


11. Մ մակարդակի մը Ո կէտի մը վրայ ճնկել ձող մը որ ուղղահայեաց ըլլայ այս մակարդակին վրայ (Ձեւ 7).

Մակարդակին մէջ Ո կէտէն գծեցէ՛ք ԲԳ եւ ԴԵ երկու որ եւ է ուղիղ գծեր. յետոյ ուղղաչափի մը միջոցաւ ստուգեցէ՛ք թէ ԱՈԳ եւ ԱՈԴ անկիւններն ուղիղ են. Այն ատեն ԱՈ ձողը, մակարդակին ԲԳ եւ ԲԳ երկու ուղիղ գծերուն վրայ ուղղահայեաց ըլլալով, նմանապէս ուղղահայեաց պիտի ըլլայ մակարդակին:

3. ԶՈՒԳԱՀՆՈՒՍԱԿՍԵ ՈՒՂԻՂ ԳԾԵՐ ԵՒ ՄԱԿԱՐԳԱԿՆԵՐ

12. ՄԱՀՄԱՆ. — ԱԲ ուղիղ գիծ մը եւ ՄՆ մակարդակ մը զուգահեռական են, երբ. անսահման կերպով երկարաձուլելով, չեն կրնար իրարու հանդիպիլ:

ՕՐԻՆԱԿ. — Սեղանի մը եզերքը զուգահեռական է տախտակամածին:



Ձեւ 8



**13.** Երկու մակարդակներ զուգահեռական են՝ երբ, անսահման կերպով երկարաձուլելով, չեն կրնար իրարու հանդիպիլ:

**ՕՐԻՆԱԿ.** — Սենեկին առաստաղը եւ տախտակամածը երկու զուգահեռական մակարդակներ են: — Երբ ամանի մը մէջ զննեք երկու տարբեր հեղուկներ որոնք իրարու չեն խառնուիր, ինչպէս ջուր եւ իւղ, երկու հեղուկներն իրարմէ բաժնող մակերեւոյթը, եւ վրայի հեղուկին՝ օդին հետ շօշափման մէջ գտնուող մակերեւոյթն երկու զուգահեռական մակարդակներ են:

**14.** Երբ երկու զուգահեռական մակարդակներէ երոտը մը անցած է, հասման երկու գիծերը զուգահեռական են:


**ՕՐԻՆԱԿ.** — Սենեկի մը մէկ պատը առաստաղէն եւ տախտակամածէն կ'անցնի, կամ թէ ըսենք՝ կը կտրէ զանոնք, յօրինելով երկու զուգահեռականներ:

**15.** Երբ երկու մակարդակներ զուգահեռական են, այս մակարդակներէն մէկուն մէջ գծուած որ եւ է ուղիղ գիծ զուգահեռական է միւս մակարդակին:


**ՕՐԻՆԱԿ.** — Տախտակամածին վրայ գծուած որ եւ է ուղիղ գիծ զուգահեռական է առաստաղին:

**4. ԵՐԿԱՆԻՍՏ ԱՆԿԻՆՆԵՐ**

**16.** Երկանիստ անկիւն կը կոչուի՝ զիրար կտրող երկու մակարդակներու աւելի կամ նուազ բացուածքը (Ձեւ 9):



Ձեւ 9




Ձեւ 10

**ՕՐԻՆԱԿ.** — Բացուելու վիճակի մէջ գտնուող գիրք մը՝ Երկանիստին երեսներն են՝ զայն կազմող երկու մակարդակները: անոնց հատման ԱԲ գիծը՝ երկանիստին անկիւնագիծն է:


**17.** ԱԲ երկանիստի մը (Ձեւ 10) մակարդակ անկիւնը կը կոչուի ԳՕԳ անկիւնը, կազմուած՝ անկիւնագծին ուղղահայեաց եղող ՕԳ եւ ՕԳ երկու ուղիղ գծերէն, որոնք նոյն անկիւնագծին Օ կէտէն գծուած են՝ երկանիստին երեսներէն իւրաքանչիւրին մէջ:

**18.** Երկանիստ անկիւն մը ուղիղ, սուր կամ շուր է, երբ իր մակարդակ անկիւնը ուղիղ, սուր կամ բութ է:

**19.** ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Եթէ ԱԲ ուղիղ գիծ մը ուղղահայեաց է ՄՆ մակարդակի մը, այս ուղիղ գիծէն անցնող որ եւ է ԽՍ մակարդակ՝ ուղղահայեաց է տրուած մակարդակին (Ձեւ 11):



Ձեւ 11




Ձեւ 12


**ԱՊԱՅՈՅՑ.** — Արդարեւ, եթէ ՄՆ մակարդակին մէջ՝ Բ կէտէն ԳՆ ին ուղղահայեաց ԲԳ ուղիղ գիծ մը գծենք, ԱԲԳ անկիւնն ուղիղ է: Արդ, ասիկայ երկանիստին մակարդակ անկիւնն է: Ուրեմն, այս երկանիստ ուղիղ ըլլալով, Սն մակարդակը ուղղահայեաց է ՄՆ մակարդակին:

**20.** Պատ մը ուղղաձիգ կերպով բարձրացնելու համար, տրամադարը կը գործածուի (Ձեւ 12): Ուղղաձիգն ուղղահայեաց ըլլալով հորիզոնական մակարդակին, ուղղաձիգին ուղղութեան հետեւող պատին մակարդակը պիտի ըլլայ ինքն ալ ուղղաձիգ:

**21. ՏԵՍՈՒԹԻՒՆ.** — Երբ Ա եւ Բ երկու մակարդակներ ուղղահայեաց են ՄՆ երրորդ մակարդակի մը, իրենց ԳԻ հասման գիծը ուղղահայեաց է նոյն երրորդ մակարդակին:



Ձեւ 13



Ձեւ 14

**ԱՊԱՑՈՅՑ.** — Ենթադրենք թէ ՄՆ մակարդակը հորիզոնական ըլլայ (Ձեւ 13):

Ա եւ Բ երկու մակարդակները պիտի ըլլան ուղղաձիգ մակարդակներ: Այն ատեն, եթէ Գ կէտէն տրամալար մը կախնք, այս կերպով որոշուած ուղղաձիգն ուղղահայեաց է ՄՆ մակարդակին, եւ պիտի գտնուի բոլորովին՝ ուղղաձիգ Ա մակարդակին մէջ: Ինչպէս եւ բոլորովին՝ ուղղաձիգ Բ մակարդակին մէջ: Երկու մակարդակին մէջ ալ գտնուելով, կը կազմէ անոնց հասման գիծը: Ուրեմն ԳԻ հասման գիծն ուղղահայեաց է ՄՆ մակարդակին:


**22.** Ուղղաձիգ կերպով բարձրացնել երկու պատերու անկիւնագիծը:

Երկու ուղղաձիգ պատերու անկիւնագիծն ուղղաձիգ է: Պէտք է որ անկիւնագիծն այս ուղղութիւնն առնէ: Ահա՛ ասոր համար է որ որմնագիրներն տրամալարը կը գործածեն (Ձեւ 14):


**23.** Միջոցին Ա կէտէ մը ՄՆ մակարդակի մը վրայ ընկեցուցնել նոյն կէտէն մակարդակին վրայ իջուցուած ուղղահայեացին Ա ոտքն է (Ձեւ 15):

**24.** Միջոցին մէկ ԱԲ ուղիղ գծին ընկեցուցնել ՄՆ մակարդակի մը վրայ՝ նոյն գծին զանազան կէտերէն մակարդա-

կին վրայ իջուցուած ուղղահայեացներու ոտքերուն ամբողջութենէն կազմուած աք ուղիղ գիծ մ'է (Ձեւ 16):




Ձեւ 15



Ձեւ 16

**25.** Միջոցին ԱԲ մեկ ուղիղ գծին՝ իրեն պատահած ՄՆ մակարդակին հետ կազմած Գ անկիւնը, այն անկիւնն է զոր նոյն ուղիղ գիծը կը կազմէ մակարդակին վրայ իր ԳԻ ընկեցումին հետ:



Ձեւ 17

**26.** Մակարդակի մը վերաբերմամբ՝ կէտի մը նշանագիրը կը կոչուի, այս կէտին՝ մակարդակէն ունեցած հեռաւորութիւնը, թուով ներկայացուած:

**ՕՐԻՆԱԿ.** — Ձեւ 15 ին մէջ, Ա կէտին Օմ,016 նշանագիրն ցոյց կուտայ նոյն Ա կէտին հեռաւորութիւնն ՄՆ մակարդակէն:

**23.** Ուղիղ գծի մը հակուսը կը կոչուի այն քանորդը զոր կ'ստանանք՝ բաժնելով իր երկու ծայրերուն նշանագրերուն տարբերութիւնը մակարդակին վրայ նոյն ուղիղ գծին ընկեցումով:

**ՕՐԻՆԱԿ.** —  $\frac{ԲԳ}{աք}$  քանորդը հակումն է ԱԲ ուղիղ գծին (Ձեւ 16):

Եթէ, օրինակի համար,  $ԲԳ=0մ,05$ , եւ  $աք=25$  մէթր, ԱԲ ուղիղ գծին հակումը պիտի ըլլայ  $\frac{0մ,05}{25մ}=0,002$ :

5. ՀԱՍՏԱՏՈՒՆ ԱՆԿԻՆՆԵՐ

28. Հաստատուն անկիւն կը կոչուի այն ձեւը որ կը կազմուի միեւնոյն զագաթն ունեցող քանի մը մակարդակ անկիւններէ, եւ որուն իւրաքանչիւր կողմը երկանխատի մը իբրեւ անկիւնագիծը կը ծառայէ:

Մակարդակ անկիւններուն հասարակ եզող զագաթը՝ հաստատուն անկեան զագաթն է. մակարդակ անկիւններն ալ անոր երեսներն են:

ՕՐԻՆԱԿ. — Չանգակատան մը սլաքը հաստատուն անկիւն մ'է:

29. Եռանիստ մը՝ երեք երես ունեցող հաստատուն անկիւն մ'է:



Ձեւ 17

ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄ ԵՒ ԲՈՒՐԳ

30. ԾԱԻԱԼ. — Մարմնոյ մը ծաւալը կը կոչուի՝ միջոցին մէջ անո՞ւ բռնած մասը:

Ծաւալի մը մէջ երեք տարածութիւն կայ. երկայնութիւն, լայնութիւն եւ բարձրութիւն:

Ծաւալ մը հաշուել կամ գնահատել՝ կը նշանակէ զայն բաղդատել միութեան հետ, որ է ընդհանրապէս խորանարդ մէթըրը:

31. ԲԱԶՄԱՆԻՍ կը կոչուի հաստատուն մարմին մը որուն մակերեւոյթը կը բաղկանայ մակարդակ երեսներէ:

Բազմանիստին անկիւնագծերն՝ իրեն երեսներուն հատման գիծերն են. Գլխաւոր բազմանիստերն են հաստաձակողմը եւ բուրգը:

1. ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄ

32. ՍԱՀՄԱՆՆԵՐ. — Հաստաձակողմ մը բազմանիստ մ'է որուն երկու կողմերը կան երկու հաւասար եւ զուգահեռական բազմանկիւններ, եւ որուն կողմնակի երեսները զուգահեռագծեր են:

Երկու հաւասար եւ զուգահեռական բազմանկիւնները՝ հատուածակողմին խարխիւններն են:

Հատուածակողմի մը կողմնակի մակերեւոյթը՝ ամբողջութիւնն է իր երեսները կազմող զուգահեռագծերուն:


Հատուածակողմ մը ուղիղ է կամ շեղ, եթէ կողմնակի անկիւնագծերն խարխիւններուն ուղղահայեաց են կամ շեղ:

Երբ հատուածակողմ մը ուղիղ է, կողմնակի երեսները ուղղանկիւններ են (Ձեւ 20); Երբ շեղ է, կողմնակի երեսները զուգահեռագծեր են (Ձեւ 19):

Հատուածակողմի մը բոլոր կողմնակի անկիւնագծերը հաւասար են:




Ձեւ 18



Ձեւ 19

Ձեւ 20



Ձեւ 21

Հատուածակողմի մը բարձրութիւնը՝ վերին խարխիւնն մէկ կէտէն ստորին խարխիւնն վրայ իջուցուած ուղղահայեացն է:

Ուղիղ հատուածակողմի մը մէջ, իւրաքանչիւր կողմնակի անկիւնագիծ հաւասար է բարձրութեան:

Կանոնաւոր հատուածակողմ մը ուղիղ հատուածակողմ մ'է որուն խարխուխը կանոնաւոր բազմանկիւն մ'է:

Հատուածակողմ մը եռանկիւնի, քառանկիւնի, հինգանկիւնի, եւայլն, է, երբ խարխուխը եռանկիւն մ'է, քառանկիւն մ'է, հնգանկիւն մ'է, եւայլն:

**33.** Չուզահեռոսն կը կոչուի հատուածակողմ մը որուն խարխուխները զուգահեռագծեր են (Ձեւ 21):

Ուղղանկիւն զուզահեռոսն մը՝ ուղիղ հատուածակողմ մ'է որուն խարխուխները ուղղանկիւններ են: Օրինակ՝ դպրոցականի քանակ մը, կաւիճի տուփ մը:


Հատուածակողմի ձեւը կը ներկայանայ բազմաթիւ գործածական առարկայներու մէջ, ինչպէս՝ գրասեղանի մը վրայի տախտակը, ոտքերը, դարանը, գիրք մը, կարկիւնի տուփ մը, պատ մը, եւայլն:

**34.** ՈՒՂԻՂ ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԻ ՄԸ ԿՈՂՄԵԱԿԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ հաւասար է՝ կողմնակի անկիւնագծին եւ խարխուխի օրջաչափին արձագրեալին:

ԱՊԱՑՈՅՑ. — Եթէ կողմնակի մակերեւոյթը պարզենք (Ձեւ 22), պիտի կազմէ ուղղանկիւն մը որուն խարխուխը հատուածակողմին խարխուխն չըջաչափն է, եւ բարձրութիւնն է հատուածակողմին անկիւնագիծը:

Ուրեմն հատուածակողմին կողմնակի մակերեւոյթը հաւասար է՝ անկիւնագծին եւ խարխուխն չըջաչափին արտադրեալին:

ՕՐԻՆԱԿ. — Ենթադրենք հատուածակողմ մ'որ ունենայ Օմ,8 բարձրութիւն, եւ խարխուխն չըջաչափն ըլլայ 1մ,20:




Ձեւ 22

Կողմնակի մակերեւոյթն է  $0,8 \times 1,20 = 0,96$ , 96:

**35.** ՇԵՂ ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԻ ՄԸ (Ձեւ 23) ԿՈՂՄԵԱԿԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ հաւասար է՝ անկիւնագծերուն ուղղանայեաց կերպով կազմուած հասուածի մը օրջաչափին եւ անկիւնագծերէն մէկուն արձագրեալին:

ԱՊԱՑՈՅՑ. — Կողմնակի երեսները զուգահեռագծեր են՝ հաւասար խարխուխներով, որոնք հատուածակողմին անկիւնագծերն են:




Ձեւ 23

Հատուածին ԱԲ, ԲԳ, ԳԱ զանազան գծերն ուղղանայեաց են անկիւնագծերուն, եւ զուգահեռագծերուն ալ բարձրութիւններն են: Հետեւաբար, բոլոր այս զուգահեռագծերուն մակերեւոյթը հաւասար է անկիւնագծի մը եւ բարձրութեանց գումարին արտադրեալին, գումար որ չըջաչափն է անկիւնագծերուն ուղղանայեաց կերպով կազմուած հատուածին:

ՕՐԻՆԱԿ — Ենթադրենք թէ ունինք շեղ հատուածակողմ մը որուն ՄՆ անկիւնագիծն է Օմ,9, եւ ԱԲԳ ուղղանայեաց հատուածին չըջաչափն է 1մ,80: Կողմնակի մակերեւոյթը պիտի ըլլայ  $0,9 \times 1,8 = 1,62$ :

**36.** ՈՒՂՂԱՆԿԻՆ ՉՈՒԳԱՀԵՌՈՏԵՒ ՄԸ ԾԱՒԱԼԸ հաւասար է իր երեք սարածութիւններուն արձագրեալին:

ԱՊԱՑՈՅՑ. — Անենք ուղղանկիւն զուգահեռոսն մը (Ձեւ 24) որուն տարածութիւններն ըլլան 7մ, 4մ. եւ 3 մէթր:




Ձեւ 24

Կարելի է այս հաստատուն մարմինը բաժնել 7 մէթր երկայնութեամբ, 4 մէթր լայնութեամբ եւ 1 մէթր բարձրութեամբ 3 զուգահեռոսներու: Իւրաքանչիւր մասնակի զուգահեռոսն կրնայ բաժնուիլ ուրիշ 4 զուգահեռոսներու որոնք ունենան 7 մէթր երկայնութիւն, 1 մէթր լայնութիւն եւ 1 մէթր բարձրութիւն:


Այս վերջին զուգահեռոտներէն մին կրնայ բաժնուիլ 7 հաւասար մասերու, որոց իւրաքանչիւրն ըլլայ մէկ խորանարդ մէքր: Ուրեմն խորանարդ մէթրերու ամբողջական զուամարդ պիտի ըլլայ  $7 \times 4 \times 3$  արտադրեալը, կամ 84:

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ. —  $7 \times 4$  արտադրեալը կը ներկայացնէ խարիսխն մակերեւոյթը: Ուրեմն կրնանք ըսել. ուղղանկիւն զուգահեռոտնի մը ծաւալը հաւասար է՝ խարիսխին բարձրութեամբ արտադրեալին:

**37.** ՈՐ ԵՒ Է ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԻ ՄԸ ԾԱԻԱԼԸ հաւասար է՝ խարիսխին եւ իր բարձրութեան արտադրեալին:



Ձեւ 25



Ձեւ 26

ԱԳԳԻԿ ԵՌԱՆԿԻՆԻ հատուածակողմը յայտնապէս կէսն է ԱԳԲՆԴԿԻՄ զուգահեռոտնին (Ձեւ 25): Արդ, զուգահեռոտնին ծաւալն է իր ԱԳԲՆ խարիսխը՝ իր ԽԲ բարձրութեամբ բազմապատկուած: Ուրեմն, եռանկիւնի հատուածակողմը,


որ զուգահեռոտնին կէսն է, ունի իրրեւ ծաւալ ԱԳԲՆ խարիսխին կէսը՝ միեւնոյն ԽԲ բարձրութեամբ բազմապատկուած:

Որ եւ է ուղիղ հատուածակողմ մը կրնայ բաժնուիլ եռանկիւնի հատուածակողմերու՝ ամէնն ալ միեւնոյն բարձրութեամբ, եւ որոց խարիսխները եթէ միացնենք, կ'ունենանք ամբողջական հատուածակողմին խարիսխը (Ձեւ 26):

Ուրեմն, ամբողջական ծաւալը հաւասար է՝ խարիսխներու զուամարին, այսինքն տրուած հատուածակողմին խարիսխին եւ հասարակ բարձրութեան արտադրեալին:

**38.** ԽՈՐԱՆԱՐԴԸ (Ձեւ 27) քառանկիւնի հատուածակողմ մ'է որուն չորս երեսները եւ երկու խարիսխները վեց հաւա-

սար քառակուսիներ են: Կամ թէ ըսենք, խորանարդը հաստատուն մարմին մ'է որ ունի վեց հաւասար քառակուսի երեսներ: Օրինակ՝ տապեղուունքը (թափշուռի զար):



Ձեւ 27

Ձեւ 28

**39.** ԽՈՐԱՆԱՐԴԻ ՄԸ ՄԱԿԵՐԵՆՈՅԸ կը գտնենք, ճով բազմապատկելով իր անկիւնագծին կամ կողման քառակուսին:

Սորանարդին մակերեւոյթը կրնայ պարզուիլ մակարդակի մը վրայ եւ ներկայացնել վեց հաւասար քառակուսիներ, ինչպէս ցոյց կուտայ Ձեւ 28ը:

**40.** ԽՈՐԱՆԱՐԴԻ ՄԸ ԾԱԻԱԼԸ կը գտնենք, իր անկիւնագիծը երոտդ կարողութեան բարձրացնելով:

Արդարեւ, խորանարդ մը զուգահեռոտն մ'է որուն տարածութիւնները հաւասար են. անոնց արտադրեալը ուրիշ բան չէ բայց եթէ մէկ տարածութեան երրորդ կարողութիւնը:

ՕՐԻՆԱԿ. — Առնենք խորանարդ մը որուն կողմը կամ անկիւնագիծն ըլլայ 0,50:

Իւրաքանչիւր քառակուսի հաւասար է  $0,50 \times 0,50 = 0,25$ , 25ի:

Սորանարդին մակերեւոյթը ուրեմն  $= 0,25 \times 6 = 1,50$ :

» ծաւալն է  $0,5 \times 0,5 \times 0,5 = 0,125$ :

Յ. Գ. Փ.

### ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ԴԱՍԸ

(ՄԱՅՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԾԱՂԿՈՑ, ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋ)

#### ԸՆՏԱՆԻ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ

ՊԵՊԵՔԻՆ ԱՌԱՋԻՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — «Սահա՛կ, օրօրոցին մէջ պզտիկ եղբայր մ'ունիս. կը բանա՞յ աչքերը: — Երբ սկսաւ տեսնել, ի՞նչ կ'ընէր... ամենէն աւելի ի՞նչ բանի կը նայէր: — Ի՞նչէն կը հասկցուէր թէ ուրախ էր...»

«Նուա՛րդ, պզտիկ քոյրդ ի՞նչպէս սովորեցաւ քայլել: — Երբ իր առաջին քայլերն ըրաւ, գոհ է՞ր... ի՞նչ կերպով կը հասկցնէր գոհ ըլլալը...»

«Երբ Պէպէքը հայրիկ, մայրիկ կարենայ ըսել, ի՞նչ կերպով կը յայտնէ իր ուրախութիւնը. կը ծիծաղի, — անգաղար կը կրկնէ այս առաջին բառերը, — աչքերը ուրախութենէն կը փայլին...»

«Յիշեցէ՛ք պզտիկ տղուն ուրիշ ուրախութիւնները: — Կը տեսնէ ջուրին հոսիչը, — կը շահ գանգակին ձայնը, — կը զգուէ Փիսիկը, — կրնայ շարժել ոտն ու ձեռքը, եւայլն...»

#### ՄԱՅՐՅՆԻ ԼԵՋՈՒ

ՓՈՔՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ. — Բերանը:

Բերնին առջեւի կողմը ի՞նչ կայ. — Բերնին առջեւի կողմը կան շրթունքներ. — Ի՞նչ կայ շրթներուն ետեւ. — Երկներուն ետեւը կան ակռայները: — Բերնին վերի կողմը կայ իմկը... բերնին ներսի կողմը կայ կոկորդը... բերնին մեջ կայ լեզուն...:

Ըրէ՛ք, եւ ըսէ՛ք ինչ որ կ'ընէք.

Բերանս բացի... , բերանս գոցեցի... , ակռայներս ցուցուցի, եւայլն:

Ըսէ՛ք, եւ ըրէ՛ք ինչ որ ըսիք.

Բերանս պիտի բանամ... , բերանս պիտի գոցեմ... ,

լեզուս դուրս պիտի հանեմ... , լեզուս ներս պիտի փաշեմ, եւայլն:

ՄԵԾԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ. — Առուն:

Աշունը պարտիզին մէջ. — Պտուղներ կը փայտեն... , ընդեղենները կը հնձեն... , պարտիզպանը ծաղիկները ներս կ'առնէ... , Սարգիս իր ածուխն եզերը բախով կը քրէ, եւայլն:

Աշունը դաշտին մէջ. — Գետնախնձորները հողէն կը հանեն... , մշակը ցորեն կը ցանէ... , արտոյ մը կ'անցնի իր շան հետ, եւայլն:

Աշունը անտառին մէջ. — Ծառերը կը դեղնին եւ կը կարմրին... , կաղիկները կը քափին կաղնիներէն... գետնը կը ծածկուի չորցած տերեւներով, եւայլն:

ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ. — 1. Պատկերի ընթերցումն. — Երկրագործը:

Խաչիկ. «Կը տեսնեմ մարդ մը որ կտաւէ շապիկ հագած է. — մեծ կօշիկներ անցուցած է ոտքը. — մազերը մինչեւ ականջներուն վրայ իջած են. — շուտ չի քայլեր, բայց մեծ քայլեր կ'առնէ. — ցորենի հատիկները կը սփռէ իր աջ ձեռքով:»

Առուսեակ. «Գետինը խոտ չկայ, վասն զի հողը նոր հերկուած է. — երկինքը խոշոր ամպեր կան. կարելի է որ պիտի անձրեւէ. — մարդուն ետեւ՝ թռչունները կը թռչըտին. կ'ուզեն ցորենի հատիկներէն ուտել... , եւայլն:»

(Պէտք է մանկական գիտողութիւններ թելադրելու հոգ ունենալ, խիստ ընտրողութեամբ սակայն.)

2. Առարկայի վրայ խօսակցութիւն. — Բանալի մը. (Տես էջ 155):

#### ԸՆԹԵՐՑՈՒՄՆ. — ԳԻՐ

ՄԵԾԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ. — Ի սկզբան, նախամեծար պէտք է համարիլ ներկայացնելու գրերուն ձեռագիր ձեւը միայն. ասիկայ կարեւոր է, եթէ կ'ուզենք որ գրի ուսուցումը օժանդակէ ընթերցման ուսուցումին:

(Ուսումնասիրել Մալաթեան էֆէնտիի «Գրի եւ Ընթերցանութեան Ուսուցմունքը», Նիւթի 60—120 էջերուն մէջ։)

**Հ Ա Շ Ի Ի**

Երկու թիւը. — Բերանացի եւ իրատեսական վարժութիւնք: — Յոյց տալ եւ ըսել. մէկ մատ եւ մէկ մատ, երկու մատ. — մէկ ձեռք եւ մէկ ձեռք, երկու ձեռք. — աջ աչքս եւ ձախ աչքս, երկու աչք. — իմ գլուխս եւ քու գլուխդ, երկու գլուխ. — Յակոբ եւ Օննիկ, երկու տղայ...:

(Այս վարժութիւնը պէտք է շարունակել, եւ թողու որ տղայք իրենք ալ օրինակներ գտնեն.)

Մէկ կամ միւս ձեռքով առնել երկու քանակ, երկու մատիտ, երկու կաղամար... եւ այլն:

Երկու անգամ կրկնել միեւնոյն շարժումը, — երկու անգամ՝ միեւնոյն խօսքը, — երկու անգամ՝ միեւնոյն արտասանութիւնը... եւ այլն:

Անուանել երկու պզտիկ մանչեր, — երկու պզտիկ աղջիկներ, — երկու մեծ կենդանիներ, — երկու թռչուններ, — երկու ծաղիկներ, — երկու պտուղներ, — երկու ծառեր... եւ այլն:

Քարետախտակին վրայ երկու անգամ գծել միեւնոյն նշանը. երկու կէտեր, — երկու ուղղաձիգ գիծեր, — երկու հորիզոնական գծեր, — երկու խաչ, — երկու բլրորակ, եւ այլն:

(Վարժուհին կրնայ չանուանել ուղղաձիգ եւ հորիզոնական բառերը, այլ բաւականանալ այդպիսի գծեր երկերկու հատ գծելով:)

**ԳԻՏՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐՃՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ**

ՄԱԶԵՐԸ. — Տղայոց ուղադրութիւնը պիտի դարձնենք մազերու գոյնին վրայ. խարտեաչ, սեւ, չէկ. — Մագթաղինէին մազերը աւելի խարտեաչ են քան թէ Նուարդին

մազերը, — Մինասին մազերը աւելի սեւ են քան թէ Պողոսին մազերը, — Տիկին Զարուհիին գորշ մազերը, — ծերերուն ձերմկած մազերը:

Յետոյ մազերը պիտի բաղդատենք՝ իրենց երեւութին, երկայնութեան, նրբութեան եւ այլ տեսակէտներով. (ուղիղ մազեր, գանգուր մազեր, երկաթով խոպոպուած մազեր, գուռզ մազեր... կարճ մազեր, գերծուած մազեր, երկայն մազեր... կարծր, փափուկ, աղօտ, փայլուն մազեր... եւ այլն.)

Պէտք է ըսել տալ տղայոց թէ ինչո՞ւ համար պէտք է ամէն առաւօտ սանտրուիլ, — ինչո՞ւ համար պէտք է մազերը մաքրել:

Պէտք է դիտել տալ թէ մազերը կը բուսնին եղունգներուն պէս, — թէ եղունգներուն պէս անզգայ են, — թէ մազ մը դերձանէ մը աւելի բարակ է, — թէ՛ հակառակ իր բարակութեան՝ կրնայ բաւական ծանր առարկայի մը ծանրութեան տոկալ... եւ այլն:

**ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐՃՈՒԹԻՒՆ**

**ՄԻՇՆՈՆԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԵԿՆԵՆ**

Երբ ցուրտ հովը սասիկ փրչէ  
Ու ծառերը հանուեցնէ,  
Ծիծեռնակներն ամէն  
Տանիքներուն վրայէն  
Կը նրուուղեն ու կ'ըսեն.  
Երբա՛նք, երբա՛նք այս սեղէն,  
Փայտչի՛նք ձիւնէն ու փուէն:

**ՆՈՐՀՐԳԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԱՐՃՈՒԹԻՒՆՔ**

(Սեւ տախտակին վրայ գծագրութեամբ կամ կանխաւ պատրաստուած պատկերով մը). — Պեպիքը կը ֆայտ. —

ներկայացնել մանկիկ մը որ իր առաջին քայլերը կ'ընէ: Մայրը ծռած է եւ անոր կ'երկնցնէ իր թեւերը. հայրը կը ծափահարէ:

Գծագրութիւնը մարդկութեան առաջին շնորհ եղած է. ինչո՞ւ համար տղայոց առաջին գիրը չի պիտի ըլլայ:

**ՋԵՌԱԳՈՐԾԻ ԵՒ ԽԱՂՔ**


1. Միացուցել. — Գտնել եւ իրարու քով բերել միեւնոյն տեսակ թղթէ երկու երիզներ, — միեւնոյն գոյնով, բայց ո՛չ միեւնոյն երանգով երկու երիզներ, — կարմիր երիզ մը եւ կանաչ երիզ մը, եւայլն:

Ըստ կամս ընտրել երկու երիզներ եւ զանոնք դնել խաչաձեւ, կամ սրածայր, կամ ուղղակիւնաձեւ, եւայլն:

2. Վանդակափեղկը, որ արեւուն դէմ պահպանակ մը է, կը շինուի լայն երիզով մը, որուն մէկ մասն անեղծ է եւ մնացեալը ծալուած. ծալուած երկու անկիւններն հողմահարի ձեւով միացած են:

Միեւնոյն աշխատութիւնն է, ինչ որ էր պատուանդանին շինութեան համար:

Զի ծալուած մասը կը ներկայացնէ պատուհանը. լուցկիի փայտիկ մը պատուհանէն հեռու կը բռնէ վանդակափեղկը:




3. Ծաղկանց քաղաքը բուդրով ծածկելու համար, թուղթը պիտի ծալենք այնպէս ինչպէս ըրինք հողմահարը շինելու համար. յետոյ զուգահեռական երկու եզերքները պիտի միացնենք՝ թուղթին տալով թաղարի ձեւ:

Յաճախ, թուղթին ծալքերը վերէն եւ վարէն կը բռնեն, ծալքերուն մէջէն անցունելով բուրդ կամ մետաքս, եւ երկու կողմերը կը զարդարեն ծոպով մը:

Թուղթէ ծոպերը կը շինուին՝ կտրուած եւ պըլորուած երիզներով, որոց խարխալը դերձանով մը կ'ամրապնդուի:

Այս խաղալիքներ աւելի սիրուն կ'ըլլան, եթէ գունաւոր թուղթերով շինուին:



**Ջ Ե Ռ Ա Գ Ո Ր Ծ Ի Դ Ա Ս Ը**

**ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔԻ ՄԷՋ**

**ԳՈՒՂՊՍ. ՀԻՒՍԵՂՈՒ ՆՍԵՆՍԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ**

Երբ աշակերտք օղակ շինելու վարժուած են արդէն, պէտք է չափը երկարել մինչեւ 32 օղ եւ ինչպէս ըսինք 152 էջին մէջ, մինչեւ որ աղէկ մը սովորին, հիւսուածքը շարունակելու են վարժուհիին հոկողութեան ներքեւ, որպէս զի ձեռքը լաւ բռնելու եւ կանոնաւոր շարժումներ ընելու վարժուին:

Վարժուհին, որ պարտի քանի մը կարգերու միանգամայն սովորեցնել, լաւ պիտի ընէ, եթէ այնպէս յարմարցնէ



գործը որ կարենայ աւելի ժամանակ դնել նոր սկսողներուն համար, մանաւանդ սկիզբները: Այս պարագային մէջ՝ լաւ կ'ըլլայ նաեւ, եթէ կարենայ փոքրիկներն ուրիշ բանի գրադեցնել, օրինակի համար՝ գունաւոր ուլունքներ (պունճուրգ) դերձանի անցունել տալու:

Գալով փորձի երիզին վրայ ըլլալիք վարժութեանց, պէտք է նախ հիւսել 30 երեսի օղ եւ յետոյ 30 հակառակ կողմի օղ: (Կարելի է հակառակ կողմի օղի շինութեան վարժեցնել այն մեթոտով որով վարժեցուցինք երեսի օղին շինութեան):

Յետոյ պէտք է հիւսել տալ մէկ ասեղ երեսի կողմէն, եւ մէկ ասեղ հակառակ կողմէն փոխադարձաբար, ընդամենը 30 ասեղ: յետոյ երկու երեսի եւ երկու հակառակ կողմի օղակներու կարգ մը եւս:

Ասկէ յետոյ կուգայ սրունքը նուազեցնելու վարժութիւնը. սկիզբէն քանի մը օղակ շինելէ վերջ՝ մէկ մէկ օղակ միջոց տալով հինգ ասեղ պակսեցնել իւրաքանչիւր կողմը, յետոյ հինգ կարգ հիւսել տալ առանց պակսեցնելու, եւ վերսկսիլ նուազումը եւ այսպէս շարունակել վարժուհիին հարկ տեսած չափով, կրունկը սկսելու համար: Այս երիզով գուլպայ կարելու չենք գրադիր տակաւին. բայց որպէս զի կարն ալ ներկայացուած ըլլայ, պէտք է երկու ծայրերը կցել եւ կրունկը սկսիլ որ ուրիշ բան չէ այլ կրկնութիւն մը երրորդ վարժութեան, որուն կը յաջորդէ կրունկը ձեւացնելու շղթայիկը:

Ամէն անգամ որ նոր բան մը կ'սկսի ուսուցուիլ, կարեւոր է իր ճշմարիտ անունով ներկայացնել զայն տղայոց. օրինակի համար՝ հիւսել երեսի օղը, — հակառակ կողմի օղը, — միաձեւ կամ երեսի հիւսուածք, — հակառակ կողմի հիւսուածք, — եզերքը, եւ այլն:

\* \* \*

ՏՂՈՒ ԶՈՅԳ ՄԸ ԳՈՒԼՊՍԵ

Գուլպայ մը ցոյց կը տրուի իբրեւ օրինակ, եւ տղայք պարտին այս գուլպային վրայ գտնել եւ ցոյց տալ ինչ նման բան որ շինուեցաւ ցրիցին վրայ: Յետոյ հարցումներ պէտք է ուղղել անոնց, օրինակի համար. Ամառը ի՞նչ գուլպայ կը հագնինք (նիւթին տեսակէտով). Ի՞նչով շինուած են. Զըմեռը՝. Բուրդն ի՞նչպէս կ'ըլլայ՝ գոյնին տեսակէտով (նոյշներ ցոյց տալ). Նոյն հարցումը բամբակին համար. Ո՞ւրկէ կ'արտադրուի բուրդը. Ի՞նչպէս են ոչխարները (միշտ գոյնի տեսակէտով). Ի՞նչպէս կ'ըլլայ որ կարմիր, կապոյտ, եւ այլն, բուրդ կ'ունենանք. Ո՞ւրկէ կ'արտադրուի բամպակը: — Նման հարցումներ իրենց կարգին պիտի ուղղուին նաեւ յաջորդ դասերուն մէջ:

Գուլպան պէտք է սկսուած ըլլայ՝ աշակերտաց ձեռք տրուելէ առաջ, եւ վարժուհին լաւ պիտի ընէ՝ հիւսելով լարուածքէն վեր երեք շրջան, որպէս զի աշակերտք չկարենան այլ եւս ասեղները ձուել: Կատարուելիք առաջին գործը պէտք է ըլլայ՝ աշակերտաց ցոյց տալ եւ բացատրել թէ ի՞նչպէս պէտք է հիւսել կլոր, բայց կարեւոր է նախապէս միայն մէկ ասեղ տալ. յետոյ քննել ամենուն շինածները, եւ ապահով ըլլալէ յետոյ միայն թէ մէն մի աշակերտ յաջողած է, թողուլ որ շինեն երկու, յետոյ երեք ասեղ, բայց երբեք չորս ասեղէ աւելի՝ շինուածները վերստին քննելէ առաջ. այս կերպով միայն վարժուհին կրնայ ազատ մնալ՝ գայթած օղակներն ուղղելու աշխատութենէն: Եւ յարմար ժամանակն է տղայոց խստիւ պատուիրելու որ զգուշանան օղերը գայթեցնելէ, եւ կամ եթէ այսպիսի բան մը պատահի, ուշադրութիւն ընեն եւ անմիջապէս իմաց տան՝ ձեռք վերցնելով:

Վ. Գ. Փ.



### Կ Ա Ր Ծ Ի Ք Ն Ե Ր

#### ԱՂՋԿԱՆՑ ԴՍՍԻՍԻՍԱԲԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Իրարու բացարձակապէս հակառակ երկու կարծիքներ, որոնք այսօր իսկ ունին իրենց բազմաթիւ կուսակիցները, կրնան սա կերպով ներկայացուիլ.

10 Աղջկանց դաստիարակութիւնը պէտք է ըլլայ խիստ սահմանափակ, կը բաւէ որ գիտնան իրենց տունը կառավարել, քանի որ սահմանուած են համեստ շրջանակի մը մէջ ապրիլ, ընտանեաց մեծին իշխանութեան ներքեւ: Ընտրելիք ասպարէզ մը չունին անոնք. գիտութեան պէտք չունին: Կինը այր մարդուն հաւասարը չըլլալով, գիտութիւնը իրեն համար անօգուտ եւ վտանգաւոր պիտի ըլլար:

20 Աղջկանց կրթութիւնը կրնայ եւ պարտի ըլլալ կարելի եղածին չափ կատարեալ: Կինը այր մարդուն հաւասարն է: Նախապաշարուած միայն անոր առջեւ կը փակէ ասպարէզներ որոց մէջ նա կարող է յաջողիլ: Միջին դասակարգի երիտասարդուհիներ կան որոնք բժշկութեան վկայական կ'ստանան, հեղինակ կիներ որոնք կը փայլին գիտական եւ գրական պատկերազարդ հրատարակութիւններու մէջ: Առաջին կարծիքը, այսինքն այն որ աղջկանց կրթութիւնը պարզ անարարութեան մէջ կը սահմանափակէ (1), հետզհետէ կը կորսնցնէ իր կարեւորութիւնը: Այս ծայրածոյն ստորնութիւնը, այս ծառայական դերը զոր կնոջ առկուցեն, կ'անհետին մեր բարքերէն, եւ հիմա յետամնաց միտքերն են միայն, տակաւին բազմաթիւ բայց անկարող, որ կ'ուզեն մարդկային սեռին կէսը դատապարտել տեսակ մ'անգիտակից ծառայութեան:

Երկրորդ կարծիքին կուսակիցներն իրենք զիրենք չարաչար կը խաբեն: Իբրեւ կանոն կ'առնեն ինչ որ բացառութիւն միայն պիտի կրնայ ըլլալ... Աղջիկը պէտք է կրթուի, բայց պէտք չէ որ ըլլայ գիտուն:

(1869) THÉRY

(1) Կամ պարզ լուացարարութեան մէջ, ինչպէս կ'ընէ Պասքիւզի Գալֆանեան Ուրբանոցը՝ գրեթէ բոլորովին անտես առնելով որբուհիներուն մտաւորական կրթութիւնը:



### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՔԷՆՏԻ ԷՍԱԵԱՆ

Ազգը ցաւալի կորուստ մ'ունեցաւ յանձին այս բարեգործ անձնաւորութեան, որ վախճանեցաւ 1900 Յուլիսի 26 ին (8 Օգոստոս) ի Պուլսներ Սիւռ Մէն (Ֆրանսա), եւ մարմինը փոխադրուելով ի Կ. Պոլիս՝ Օգոստ. 18 Ուրբաթ օր անկողնուեցաւ Շիշլիի Ազգ. Գերեզմանատան մէջ: Ծնած էր ի Կեսարիա եւ 14 տարեկան հասակին մէջ մտնելով առեւտրական ասպարէզը, իր հօրը քով, իր բնական ուշիմութեամբ եւ անխոնջ աշխատութեամբ յաջողած էր առաջնակարգ վաճառական-սեղանաւորի աստիճանին բարձրանալ, իր հարազատին՝ Մկրտիչ Էֆէնտի Էսաեանի հետ, միանգամայն հանդիսանալով տիպար հայր եւ իր մէջ զարգացնելով կրօնի եւ բարեգործութեան սէրը եւ ցմահ բարերարելով, իր եւ հարազատին ամենէն աւելի յիշատակելի գործերը եղած են Կեսարիոյ Ս. Կարապետ վանքին վերաշինութիւնը, Բերայի Ս. Յարութիւն եկեղեցոյն վերաշինութիւնը, ինչպէս եւ յարակից Էսաեան երկսեռ վարժարանին շինութիւնը որ արդարեւ Բերայի Թաղին մէկ մեծ պէտքը կը լրացնէ այսօր եւ Ազգին պատիւ բերող հաստատութիւն մ'է՝ իր մեծվայելչութեամբ եւ ընդարձակութեամբ:

Նիւթ ազգային կրթութեան նուիրեալ հրատարակութիւն մ'ըլլալով, չէ կարող անզգամ մնալ Յովհ. Էֆ. Էսաեանի զգալի կորստեան հանդէպ, եւ պարտք կը համարի պատմութեան համար արձանագրել իր անունը՝ իբրեւ ժա-

մանակիս ազգային ՄԵԾ ԲԱՐԵԳՈՐԾԸ ԵՒ ՄԵԾ ԿՐԹԱՍԵՐԸ  
Թրքահայոց:

«ՆԻԻԹ»-ը իր կենդանագիրով զարդարելով հանդերձ,  
արժան կը համարինք աստ յիշատակել նաեւ արձանագրու-  
թիւններն որք քանդակուած կան Ս. Յարութիւն եկեղեցոյ  
ճակատն իւ հասեան Վարժարանի մուտքին աջակողմը զե-  
տեղուած մարմարիոնին վրայ:

Եկեղեցիս սեռնագրեալ յանուն եւ ի փառս  
Արքայ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,  
Ողորմութեամբն Աստուծոյ յայս նուագ ի հիմանց  
ժինեցաւ բովանդակ արդեամբք եւ ծախիւք

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՄԿՐՏԻԶ Գ. ԷՍԱԵԱՆ**

Երկուց հարազատաց

Յամի Տեառն 1895 եւ տմարական բուականին ազգիս  
ՌՅԽԳ—ՌՅԽԳ

Ազգային

Վարժարան Երկսեռ

ի հիմանց կառուցեալ ի վերայ սեպհական գետնոյ  
ազգին, ժինեցաւ բովանդակ արդեամբք եւ ծախիւք

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՄԿՐՏԻԶ Գ. ԷՍԱԵԱՆ**

Երկուց հարազատաց եւ անուանեցաւ

**ԷՍԱԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ**

Յամի Տեառն 1895



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՅԷՆՏԻ ԷՍԱԵԱՆ

# ՓՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

## Ջ Ո Ւ Ր Ը (1)

Ջուրը իր զանազան ձեւերուն տակ՝ իր բազմապիսի օգուտներէն զատ՝ ունի նաեւ իր այլազան գեղեցկութիւնները:

\* \* \*

Ջուրը իր հեղուկ վիճակին մէջ նախ մարդկային կենաց անհրաժեշտ մէկ սնունդն է: Երբ զով զով աղբււրներ կը բղխին մեր շուրջ եւ հրաւէր կը կարդան մեզ հրատապ ամառուան մէջ մեր պապական անցունելու, ո՛հ, թերեւս չեմք խորհիր այնչափ թէ ո՛րքան օրհնութիւն մ'է այն երկնից: Բայց երեւակայէ՛ ինքզինքդ Արարիոյ հրակէզ աւազուտներուն մէջ, ծարաւէն տանջուած որ կ'այրէ կը մրկէ զքեզ, պիտի զգաս թէ քանի թանկագին են անոր մէն մի կաթիլները: Ջուրը, ինչպէս մեր, նոյնպէս կենդանեաց եւ բուսոց անհրաժեշտ սնունդն է, ու ո՛չ միայն ինքնին իբրեւ հեղուկ կարեւոր է անոնց կեանքին, այլ նաեւ իբրեւ պարարտացնող ու կակողղ երկիրն ուր կ'ապրին բոյսք եւ անասունք: Առանց ջրոյ չպիտի հասունային բոյսք, եւ շատ կենդանիք չպիտի սնանէին առանց բուսոց, իսկ մարդն, բուսակեր ու մսակեր, անկարող պիտի ըլլար իր սնունդը գտնել երկրի վրայ: Ի՛նչ օրհնութիւն է սա նեղոսը որ կ'ոռագէ Եգիպտոսը, որ, ինչպէս կ'ըսէ Հերոդոտ, պարզեւն է այդ գետոյն, եւ որ, առանց անոր, պիտի լինէր այն անբոյս անապատներուն նման որք անոր շուրջը կը տարածուին:

Գետերը, գետակներն ու վտակները նաեւ գեղեցկութիւնն ու զարդն են բնութեան: Վսեմ է յաղթաշուր Ռոնը

(1) Ուսանողաց տրուած շարադրութեան նիւթի մ'առձիւ իբրեւ օրինակ ի զիր առնուած:

որ կը հոսի շառաչուն ու փրփրոտ . գետը որ , կամրջաց անհանդուրժ , դարիւ դարիւ հոսելու ատեն , բնութեան անզուսպ մէկ զօրութիւնն է կարծես : Նախնեաց երեւակայութիւնը ոչ ի զուր կը կենդանացնէր գետերն ու անոնց սգիներուն պաշտամունք ու աղերս կ'ընծայէր : Հանդարտահոս գետակը ինչ սիրուն է՝ երբ ոլորուն խաղերով կը սահի կ'երթայ , ժպտելով երկնից պատկերին զոր կը ցոլացնէ իւր մէջ . խոխոջ մը հանելով քաղցր , գգուելով իւր եզերքի խոտերն ու ծաղկունքը :

Բայց ջուրերու այն մեծ տարածութիւնները , որք ծով եւ ովկէան կը կոչուին , ինչ մեծ ծառայութիւններ կը մատուցանեն մարդկութեան , ու դարձեալ իրենց փոփոխ դէմք ինչ գեղեցիկ ու վսեմ տեսիլներ կը պարզէ մեր առջեւ , այլազան զգացումներ յուզելով մեր մէջ : Անոնք աշխարհաց հազարդակցութեան մեծ ճանապարհներն են . եւ իբր այն քանի՛ նպաստաւոր եղած են մարդոց : Ինչպէս մեծ գետերու , նոյնպէս ծովերու եզերքն հիմնուեցան առաջին քաղաքները , քաղաքակրթութեան առաջին որորաններ : Գանդէս , Ինդոս , Նեղոս , եւայլք , իրենց եզերաց վրայ տեսան կանգնիլն հնագոյն քաղաքաց , ու Միջերկրականի ափանց վրայ ի վաղ ժամանակաց նստան ու ծաղկեցան Փիւնիկեան , Յունիական , Յունական , Իտալական եւ Կարքեդոնական քաղաքակրթութիւնք : Զի ծովն յարաբերութիւնները կը դիւրացնէր . եւ ազգաց արուեստք եւ գիտութիւնք յիրար կը խառնուէին ու յառաջդիմութիւնը կ'երազէին :

Այդ ծովը , այդ ովկէանը ինչ վեհ հայելի , արդարեւ երկնից պէս Արարչին մեծութիւնը ցոլացնող : Ինչ ասպարէզ բնութեան վայրագ զօրութեանց պայքարին , երբ փոթորիկը բուռն ու կատաղի կը խարազանէ ու վեր կը հանէ ալիքները . սպիտակաբաշ ամեհի նժոյգներու վաշտեր կ'արշաւեն կարծես լոյծ դաշտին վրայ . խոր անդունդներ կը փեռեկին ու երկնադէզ լեռներ կը բարձրանան , եւ եզերաց ժոյղերուն շուրջը՝ անառիկ պարիսպներուն շուրջը

կատաղած բանակներու նման՝ կը մռնչեն կոհակք վարագա . գոչ փրփրակուտակ : Ու ինչ հակապատկեր , երբ հանգարտ է մակերեւոյթն ալեաց , փոքրիկ ալիքներ վէտ վէտ կը ծըփան՝ օրօրելով փայփայելով նաւակները , ու երբ կապոյտ ծոցին վրայ մեղմիկ զեփուռը կը խաղայ :

Ինչ խորհրդաւոր շրջաբերութիւն , որ անսպառ զեանքը կը սնուցանէ բնութեան : Բոլոր գետերն ի ծով կը թափին , բայց չսպառիր աղբիւրը գետերուն : Ծովը կը հատուցանէ իւր պարտքը : Տեսէք սա նուրբ գոլորչիները որք կը բարձրանան ծովերու երեսէն . ջուրն է իր կերպարանքը փոխած , բարակ նուրբ օդային անգայտ բեհեզի ձեւ մ'առած : Ու ան է որ մերթ մշուշ է ու կապոյտ թափանցիկ շղարշով մը կը պատէ հեռաւոր լեռները , ու մերթ , աւելի թանձր ու վեր , ամպ է ու երկնից մէջ , լեռներուն գլխուն վրայ , հօրիզոնին եզրը , հազարաւոր քմահաճ ձեւեր կ'առնու որք երազներ կը ներշնչեն դիտողին , ու երբ հովմավար կ'ընթանան երկնից մէջ ճերմակ կամ գորշ , դէպք անձանօթ աշխարհներ կը թռչին տանիլ մեր երեւակայութիւնը , իրենց ետեւէն : Բայց ծարաւահեծ երկիրը անոնց օգնութիւնը կը խնդրէ , այդ օդակառոյց շէնքերը կամ օդատարած կղզիները անձրեւը կ'ըլլան , ու կը տեղան երկրի վրայ սնուցանելու համար երկրի խորքերուն մէջ աղբերաց ու հեղեղատաց ակունքը :

Ինչ կերպարանափոխութիւն դարձեալ . նոյն տարրն է , բայց հիմա ո՛չ հեղուկ է ո՛չ օդածեւ մարմին . հաստատուն է ու ճերմակ ծուէններու ձեւով կը տեղայ յերկիր , փոքրիկ ճերմակ ճանճիկներ որք օդին մէջ կը պտուտքին հողմակոծ : Ձեան հատիկներ են , դարձեալ ջուրը , որք սպիտակ շլացուցիչ պատանքով մը կը ծածկեն երկիրը : Իրաւ մեռած բնութեան պատանք հարկաւոր է , ու ահա՛ պատանքը : Սակայն յաւերժական կեանքն է բնութիւնը , ու մահը անոր ձեռքին մէջ մէկ միջոցն է նոր կեանքեր ստեղծելու : Զիւնն ու սառը չորցած գօսացած հողոյն մարմինը

կը ճեղքրտեն կը պատռտեն կը կակղեն ու յարմար կը գործեն զայն սերմն ընդունելու, երբ հողագործին ձեռքը գորնան թափէ զայն իւր արգասաւոր ծոցին մէջ: Եւ սակայն ի՛նչ սիրուն է սպիտակ դաշտին տեսարանը. գիւղացւոյն մանուկները դաշտն են, ձիւնագնտակ կը խաղան, կը տապըլտկին ձեան մէջ, ու սառնապատ գետնին վրայ կը չմըշկեն:

Նոյն պահուն սուրալով փոթ որկելով կ'անցնի շոգեկառքը դաշտին մէջէն կամ հեռուն շոգենաւը կը վազէ ծովուն վրայէն: Հոս թանձրացեալ հեզիկ ձիւնն է ցրտին, անդին շոգին է կազածեւ հրային, որ, հզօր զօրութիւն մը դուրս բերած, մարդերով ու վաճառքներով լեցուն կառքերու շարքեր կայծակնաթեւ ընդ քարշ կը տանի իւր ետեւէն, կամ հսկայարեք շաւն է որուն թեթեւ թռչունի մը թեւերն է ընծայեր, եւ կամ ահեղ մեքենաներուն է լծուեր իբրեւ առասպելեալ ուժերով գինուած գերի մը որ երկանաքարերը կը դարձնէ սղու շունչանի մը պէս արագ ու անճիգ:

Ահա՛ ջուրը, Պրոտէոս մը հրաշալի, բարերար: — Հապա իւր չարի՞ք. — մրկածուփ կոհակները որք նաւերն ու կեանքերը կը կլնեն. յորդող գետերը որք հունձքերը, մարդիկն ու ընակարանները իրենց յորձանուտ ալիքներուն մէջ կը քշեն կը տանին. կարկո՛ւտը որ մէկ քանի վայրկեանի մէջ հողագործին տարեկան վաստակը կը չքացնէ. ձիւնն ու սա՛ռը որ խեղճ մերկ ազքատները կը քարացնեն անկենդան. — բայց ո՞ր բարեաց հետ խառն չէ չարի՞քը. վարդն իր փուշերն ունի, ծովը իր անդունդները: Բարեբախտաբար, մարդը դարձեալ իր հանձարն ունի, որ կը կանխատեսէ, կը հնարէ ու յաճախ կը յաջողի կանխել, բառնալ կամ նուազեցնել չարի՞քը:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Վ Ե Ր Ա Պ Ա Ր Չ (1)

Ահա՛ կրկին ես կը դառնամ քաղցր փութեք Հրոեմոսի, իմ երշանիկ բնագաւառն, ու փափկաուցն հոլմբ ընդ առաջ Կ'ելնեն ինձի, ինչպէս երբմն, ու խըռով սի՛րքս կ'ամոճեն. Մտերիմ ծառք որք գիս երբմն իրենց թեւոց մէջ օրեցիցն, Ու նուիրական կանաչութիւնն, յաւերժագեղ կենաց վրկայն, Կը քարմացնէ գիս վերքսին, մանուկ ժող գիս դարձրնէ: Օրհնեա՛լ երկիր: — Զրկա՛յ բըլուր մէջդ ուր պակսի որքա՛

սունկը,

Ու հողմածուփ խոսոց մէջ վարն հասուն միւրգեր տեղան աւանան:

Հեղեղասին մէջ հըրակէզ լեւինք լըւան իրենց ոտներ, Արեւոս իրենց նակաս ծառոց շուրմ կը զովանայ, Ու, ինչպէ՛ս իրենց պսպուն ուսոց վրայ զըւարթ մանկունք, Հիւղակք, ամրոցք մրքին լեւան կողերն ի վեր կը բարձրանան: Եղջերուն հանգարտաբալլ անսառակէն դուրս գայ առտուն, Կը սաւառնի պայծառ օդոց մար լեւուն մէջ բազէն խըռխոս: Բայց հովին մէջ, ուր աղբերակ ջամբէ ծաղկին իւր սը՛

նունդ,

Մարգէն անդին կը սարածուի խաղաղ գիւղա՛կը գոհունակ: Լըռին է հոս. հեռուէն հազի՛ւ ժիւր շաղսցքին լըսուի աղմուկ, Ու նախն շունչին օրդարայազուսպ որ լեւն ի վար գայ քա՛

ւալուն:

Քաղցրիկ հընչէ սուր գերանդոյն խօօիւնն, ու ձայնը գիւղացւոյն

Որ արտին մէջ ծանրաբալլ կ'վարէ հարկիքն արօրադիր, Քաղցրի՛կ երգը մօրկան նըսած խոտին մէջ մանկանն հետ, Զուր մայիսին արեւ գգուէ իւր բունին մէջ ժմսագին:

(1) Այն գերմանական քերթուածոց շարքէն որոց Սարգմանուծիւն Ռ. Յ. Պերպերեան էֆէնտի կողմէ ձօնեալ էր առ Մ. Մամուրեան էֆէնտի՝ իւր Յօրհեանին առթիւ:

կը ճեղքըտեն կը պատռտեն կը կակղեն ու յարմար կը գործեն զայն՝ սերմն ընդունելու, երբ հողագործին ձեռքը գարնան թափէ զայն իւր արգասաւոր ծոցին մէջ, եւ սակայն ի՛նչ սիրուն է սպիտակ դաշտին տեսարանը. գիւղացւոյն մանուկները դաշտն են, ձիւնագնտակ կը խաղան, կը տապըլուկին ձեան մէջ, ու սառնապատ գետնին վրայ կը չմըշկեն:

Նոյն պահուն սուբալով փոթորկելով կ'անցնի շոգեկառքը դաշտին մէջէն կամ հեռուն շոգենաւը կը վազէ ծովուն վրայէն: Հոս թանձրացեալ հեզիկ ձիւնն է ցրտին, անդին շոգին է կազածեւ հրային, որ, հզօր զօրութիւն մը դուրս բերած, մարդերով ու վաճառքներով լեցուն կառքերու շարքեր կայծակնաթեւ ընդ քարշ կը տանի իւր ետեւէն, կամ հսկայաբերձ նաւն է որուն թեթեւ թռչունի մը թեւերն է ընծայեր, եւ կամ ահեղ մեքենաներուն է լծուեր իբրեւ առասպելեալ ուժերով զինուած գերի մը որ երկանաքարերը կը դարձնէ տղու շունչանի մը պէս արագ ու անճիգ:

Ահա՛ ջուրը, Պրոտէոս մը հրաշալի, բարերար: — Հապա իւր չարի՞ք. — մրրկածուփ կոհակները որք նաւերն ու կեանքերը կը կլնեն. յորդող գետե՞րը որք հունձքերը, մարդիկն ու բնակարանները իրենց յորձանուտ ակիքներուն մէջ կը քշեն կը տանին. կարկո՞ւտը որ մէկ քանի վայրկենի մէջ հողագործին տարեկան վաստակը կը չքացնէ. ձիւնն ու սա՞ռը որ խեղճ մերկ աղքատները կը քարացնեն անկենդան. — բայց ո՞ր բարեաց հետ խառն չէ չարիքը. վարդն իր փուշերն ունի, ծովն իր անդունդները: Բարեխախտաբար, մարդը դարձեալ իր հանձարն ունի, որ կը կանխատեսէ, կը հնարէ ու յաճախ կը յաջողի կանխել, բառնալ կամ նուազեցնել չարիքը:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

Վ Ե Ր Ա Պ Ա Ր Ձ (1)

Ահա՛ կրկին ես կը դառնամ քաղցր փուռներ Հրոեմոսի, Իմ երջանիկ բընագաւառն, ու փափկաուունչ հողմք ընդ առաջ Կ'ելնեն ինձի, ինչպէս երբեմն, ու խըռով սի՛րքս կ'ամոռնեն. Մտերիմ ծառք որք զիս երբեմն իրենց թեւոց մէջ օրրեցին, Ու նուիրական կանաչուքիւնն, յաւերժագեղ կենաց վըկայն, Կը քարմացնէ զիս վերստին, մանուկ տիոց զիս դարձրնէ: Օրհնեա՛լ երկիր: — Զըկա՛յ բըլուր մէջդ ուր պակսի որքա-

սունկը,

Ու հողմածուփ խոսոց մէջ վարն հասուն միզգեր տեղան առնան:

Հեղեղասին մէջ հըրակէզ լեռինք լըւան իրենց ոտներ, Արեւոս իրենց հակաս ծառոց շուրթով կը զովանայ, Ու, ինչպէ՛ս իրենց պսպուն ուսոց վըրայ զըւարթ մանկունք, Հիւղակք, ամրոցք մրքին լեռան կողերն ի վեր կը բարձրանան: Եղբերուն հանգարտաբայլ անսառակէն դուրս գայ առտուն, Կը սաւառնի պայծառ օդոց մաւրեւուն մէջ բազէն խըրոխս: Բայց հովսին մէջ, ուր աղբերակ ջամբէ ծաղկին իւր սընունդ,

Մարգէն անդին կը սարածուի խաղաղ գիւղա՛կը գոհունակ: Լըռին է հոս. հեռուէն հազի՛ւ ժիւ ջաղացին լըսուի աղմուկ, Ու նոխնչ անուխն օրդրայազուսպ որ լեռն ի վար գայ քաւալուն:

Քաղցրիկ հընչէ սուր գեւանդոյն խօօիւնն, ու ձա՛յնը գիւղացւոյն

Որ արտին մէջ ծանրաբայլ կ'վարէ հարկիքն արօրաղիւր, Քաղցրի՛կ երգը մօրկան նըսած խոսին մէջ մանկանն հետ, Զուր մայիսի՛ն արեւ գգուէ իւր փունին մէջ ժմազգին:

(1) Այն գերմանական բերձուածոց շարքէն որոց Թարգմանութիւն Ռ. Յ. Պերպերեան էֆէնտի կողմէ ձեւեալ էր առ Մ. Մամուրեան էֆէնտի՝ իւր Յոթիւնանիս առթիւ:





ընութեան վրայ, առաջին օրէն զգաց մարդը ինքզինք քան զինքն անհուննապէս մեծ եւ հզօր զօրութեանց ենթարկուած, հսկայաչէն մեքենայի մը մէջ չնչին մասնիկ մ'զգաց զինքը, ովկիանոսին մէջ ալիք մը, վաղանցիկ փրփուր մը, ու ահն ու հիացումը պատեցին զինքը: Կրօնական զգացումն էր որ իր անձին, եսին ու ոչ-եսին, գիտակցութեան հետ կը զարթնուր իր մէջ: Իր տգիտութեան մէջ յաղթահասակ կաղնիները, հսկայաբերձ լեռները, բարձրագոյ մշտաթաւալ գետը, երկրի խորհրդաւոր կենդանիներն ու երկնքի խորհրդաւոր լոյսերը առարկայ ըրաւ իւր պաշտաման, իրրեւ կայաններ այն մեծ զօրութեան զօր կ'զգար իր շուրջը, եւ իրրեւ իր ճակատագրին տէրերը՝ մաղթանքներով ու զոհերով զանոնք ողորդելու պէտքը տեսաւ:

Բնապաշտական կրօնն էր այս, յորմէ կ'սկսի մարդկութիւնը կամ մարդկային քաղաքակրթութիւնը, կրօնքն իր մանկութեան մէջ: «Երկիւղ ծնաւ զգիս», կ'ըսէ Լուկրետիոս, եւ չէ անիրաւ: Վսեմին զգացման մէջ ալ երկիւղին զգացումը կայ, եւ երբ խորհինք թէ նախնական մարդկութեան մտքին վիճակը ո՞ր աստիճան կը նմանէր մանուկներու մտքին վիճակին, որք անշունչ իրերը մարդակերպ կ'անձնաւորեն ու վրիժառու ոգիով կը լեցունին քարին դէմ որուն իրենց գլուխը զարկին, կ'ըմբռնենք թէ վախի զգացումը խառն ըլլար կրօնական զգացման իր առաջին զարգացումին մէջ: Մանկան իր հօրմէն կրած առաջին տպաւորութեանց մէջ ալ երկիւղի զգացումը մեծ բաժին մը պարտի ունենալ:

Բայց միեւնոյն ատեն հիացման եւ սիրոյ զգացումն ալ անտարակոյս իւր ազդեցութիւնն ունեցաւ առաջին օրէն կրօնական ըմբռնումներու կազմութեան մէջ: Եթէ բնութեան մէջ քանդիչ աւերիչ զօրութիւններ կային, կային նաեւ շինիչ, կազմիչ ոյժեր. — մահացնող թշնամի ոյժերուն քով կենդանութիւն բոլորեցնող զօրութիւններն ալ կային: Մութը ահեղ էր, մահու եւ ոչնչացման վտանգներով յղի, երբ գիշերոյն հետ կուգար տեսութենէն ծածկել

զաշխարհ. բայց քանի՛ բարերար ու զուարթարար էր տիւր որ կը յաջողէր: Վագրին ժանիքները քստմնելի էին, բայց ոչխարը ո՞րչափ հեզ, իր կաթնարուղի ստինքներով երինջը որքա՞ն բարի, եւ թռչնոյն փետուրը քանի՛ փայփայիչ: փոթորիկն ու շանթը՝ կործանարար, վայրագ, ոխերիմ ոգի մը ի յայտ կ'ածէին, բայց քաղցրաշունչ զեփիւռը ու ամպերը ոսկեզօծող ճառագայթը քնքուշ էակի մը թեւերուն ու նայուածքին տպաւորութիւնը կ'ընէին: Աստի հիացումը գեղեցիկն ու երախտագէտ սէրը բարիին, որք կը խառնուէին կրօնական զգացումին: Ի հարկէ մանաւանդ շահախնդրական էր այդ զգացում իւր միամիտ պարզութեան շրջանին մէջ, եւ է ցայսօր ընդհանրապէս ռամկութեան մէջ: Իր ազօթքներուն մէջ հաւատացեալը իր շահը կը խորհի մանաւանդ. գերագօր ամենաճոխ զօրութիւնը կ'ուզէ բարեկամ ընել իրեն, շահիլ անոր շնորհքները, բարեհաճ տրամադրութիւնքը իրեն նկատմամբ, որպէս զի հեռանան իրմէ ցաւք եւ չարիք, եւ առողջութիւն, առատութիւն եւ ապահովութիւն իրեն եւ իրեններուն օրերը երջանկացնեն: Այս նպատակաւ կ'ուղղուն աղօթք, կը մատուցուն զոհք, կ'ընծայուն պատաշաղք եւ նուէրք: Երբեմն ալ երբ ի զո՛ւր աղաչած ու խնդրած, զոհարեր ու պատարագարեր է եղած տառապալ հաւատացեալը, գրգռմած դասալիք կ'ըլլայ խորանին՝ այլուր տանելու համար իւր խունկն ու ընծայն, յաջողագոյն արդիւնքի մը յուսով: Այսպէս երբ մանուկն իր հօրմէն կամ մօրմէն չընդունի իւր խնդրածը, քէն ըրած կ'երթայ իւր հօրեղբօր կամ մօրեղբօր պարզելու իր սրտին ցաւը:

Բայց բնազգական տղայական վիճակներէն տակաւ վեր կ'ելնէ մարդկութիւնը. իւր բանականութիւնը կը զարգանայ, իրաց ճշմարիտ պատճառներուն վրայ կը խորհի ու կ'ըմբռնէ զանոնք հետզհետէ, եւ անկախ ու անձնաւոր զօրութիւններու մտահաճութեանց եւ պայքարներուն տեղ հաստատուն օրինաց կարգ մ'ու շղթայաւորում մը կը տեսնէ

բնութեան մէջ : Միտքը կը խորհի փորձառութեան ու գիտութեան տուած ծանօթութեանց վրայ գործող տրամաբանութեան անողոք օրէնքներով, եւ սիրտը իր թրթռումներուն մէջ կը կրէ մտքին ազդեցութիւնը : Այս ազդեցութեան տակ ի՞նչ փոփոխութիւն կը կրէ կրօնական զգացումը : Կը յաղթուի՞ կը ջնջուի՞, տեղի՞ կուտայ շատ մը ուրիշ միամիտ զգացումներու հետ, որք մտաւոր ըմբռնումներու բարեփոխման հետ իրենք ալ փոփոխուած կամ անհետ եղած են՝ սկզբ մը զգուող կամ չարչրիող յուզումներու տակ մարդկային սիրտը բարախեցնելէ յետոյ :

Ո՛հ, ո՛չ, — կրօնական զգացումը չի ջնջուիր մարդկային էակին սրտէն, որքան ալ փոխուի իր աշխարհայեցութիւնը : Անոր առարկային նկատմամբ իր ըմբռնումները ու տեսութիւնք կը բարեշրջին ու կը զարգանան, բայց այդ առարկան միշտ կայ, եւ հետեւապէս իր զգացումն առ այն, այս զգացումն ալ իւր արտայայտութեան ձեւին մէջ փոխուելով ըստ ըմբռնմանց, դեռ Մովսէսի Ադոնային ազդած երկիւղին տեղ Յիսուսի ճանչցուցած Հօր Աստուծոյն սէրը կը յաջորդէ, զսէին տեղ խունկը, մանաւանդ անարատ հոգիի մ'ըզձանայ խունկը, եւ ողորմութիւնն հաճոյագոյն ընծայն ըլլալ կը համարուի առ Աստուած, ու աղօթքը՝ եսական խնդրանքէ աւելի՝ առ Աստուած սիրոյն մէջ յարատեւելու համար բարոյական ուժին ու շնորհին հայցումը կ'ըլլայ տակաւ :

Թո՛ղ մարդուն ծանօթութեանց դաշտն երթալով ընդարձակի, թող անոր մտաց տեսութեան ծիրն ընդլայնի, ի՞նչ կը լինի արդիւնքը . — անհո՛ւն զօրութեան, ստեղծագործ կարողութեան վրայ կը պահսի՞ անոր հիացումը . տիեզերք կը դադրին՝ անհուն խորհուրդ մը, հրաշից մատեան մ'ըլլալէ անոր աչքին, երբեք, ի՞նչ որ ի սկզբան նախնական պատճառ մ'ըլլալ կը թուէր իրեն՝ կը յայտնուի իբրեւ երկրորդական պատճառ եւ արդիւնք այլ պատճառաց, Բացարձակ ու անսպասանաւոր դաւանածը պայմանաւորեալ կը

տեսնէ, բայց խորհուրդը հո՛ն է միշտ, սր միշտ կը նահանջէ . սպասանաւորելոյն ետեւը կը կանգնի դարձեալ անսպասանաւոր մը, բացարձակ մը, բացատրելու համար ինչ որ երեւոյթներու կարգին մէջ կը մտնէ : Եւ քանի՞ մարդուն գիտութիւնը կ'աճի, ա՛յնքան եւս հրաշալին որ կայ ի տիեզերս՝ կը մեծնայ, կ'ընդարձակի, ա՛յնքան եւս աւելի խորհրդաւոր կ'ըլլայ խորհուրդն Արարչութեան :

Հնդկին, Պարսկին, Յոյնին, Հրէին համար երկինքը, տեսանելի երկինքը, բնակարանն էր Աստուածութեան . Ուլմպոսի գագաթը կը պարփակէր Աստուածոց հայրը . ամպոց վրայ հաստատած էր Եհովա իր գահը, եւ երկիր պատուանդան էր անոր ոտից : Քէրէրներու գիտութիւնը պատուտեց այս անձուկ տիեզերքին պատերը եւ միջոցն անհուն հրատարակեց՝ աշխարհներու անհամար թուով մը ոգեւորեալ բնակաւէտ : Մեր խեղճ հոլագունտը հիւլէ մ'եղաւ այդ անհունութեան մէջ, եւ հսկայ արեւն ալ անոր մէկ խորը միայն լուսաւորելու ծառայող զամպար մը :

Ահա՛ գիտութիւնը . անոր առջեւ անշուշտ շոգիացաւ Ողիմպոս իր մարդակերպարան աստուածներով, Ետնէի տակ շղթայակապ Տիտաններուն տեղն անցան կեդրոնական հուրն կամ հրացեալ բովք երկրի ալուց, . ու Արամազդի շանթերը վերածուեցան ելեկտրական կայծերու : Բայց Որմիզդէն ու Արամազդէն վեր յղացում մը կազմուեցաւ առաջին պատճառին վրայ, անհուն, անվայրափակ, իմացական, աննիւթ էակի, որուն ոգին անսահմանութիւնը կը բեղմնաւորէ : Եւ անհունութեան դաշտաց մէջ իբրեւ փոշի ցանած է աշխարհները . արեւները անոր թագին գոհարներն են, եւ դարերը ըսպէսներն իսկ չեն անոր գոյութեան : Այսպէս չի ջնջուիր կրօնքը, այլ կը վեհանայ . յարակայ եւ յարածուն մեծ խորհուրդը գոյութեան չի դադրիր անուցանելէ անոր զգացումը մեր մէջ, եւ բարձրացնելէ ազնուացնելէ զայն դարերու մէջէ :

Ու կրօնքներու բարեշրջումը կը շարունակէ . բնասպաշտ

վետայականութեան կը յաջորդէ ոգեպաշտ պրահմանակա-  
նութիւնը, ու ասոր ձեւապաշտական անձուկ ըմբռնումները  
ծնունդ կուտան լայնխորհուրդ պուտտայականութեան :  
Սեմական բազմաստուածութեան մէջ կը կանգնի երբայա-  
կան միաստուածութիւնը, եւ կ'արգիլէ աննիւթ Աստուածը  
կերպարանել նիւթական ձեւերու տակ : Չանդիկը որմափակ  
մեհենից մէջ չի հաճիր պաշտօն մատուցանել արաբիչ զօ-  
թեան, եւ անշամանդաղ լոյսը միայն կը հաւանի խորհրդա-  
նշանը համարիլ Անոր՝ զոր համակ ճշմարտութիւն, սրբու-  
թիւն եւ բարութիւն կը դաւանի :

Իսկ երբ կրօնքներ, իրենց յատուկ պահպանողականու-  
թեամբ, ընդ երկար ուզեն պահել կաղապար մը որ ա՛լ  
յարմար չէ զարգացեալ գաղափարին ձեւ եւ կերպարան  
տալու, ա՛հա՛ անոնց քով կը ծնի փիլիսոփայութիւնը որ  
ազատախօս՝ մտաց թեւերով՝ կը սաւառնի եւ կը թեւածէ  
անհուն խորհուրդին շուրջը եւ իր կերպովը կրօնական  
զգացման նեցուկ մը կը բերէ բանականութեան տեսու-  
թիւնները : Բազմաստուածեան կրօնը, զոր ընդ երկար պահեց  
Ելլադա, ա՛լ չէր պատասխաներ խորհող մտքերու պահան-  
ջումներուն, արդէն Յրդ դարէն Քրիստոսէ առաջ : Եւ ա-  
հա՛ ելան Յոնիական, Ելէական եւ Պիւթագորեան դպրոց-  
ները, ո՛չ թէ ըստ ինքեան կրօնական գաղափարին դէմ  
մարտնչելու, այլ ջանալու առաւել եւս բանաւոր կերպով  
մեկնելու գաղտնիքը որ կայ ամենայնի սկիզբին ու վախճա-  
նին մէջ, մեկնելու օրէնքն ու կարգը որ կայ տիեզերքին  
մէջ ու բարձրագոյնին այն անձուկը որով բովանդակ բնու-  
թիւնը կ'երեւի բռնուած, յառաջ բերած՝ ըլլալու համար,  
հանքէն ի մարդն, գոյութեան ամէն աստիճանները, եւ որ  
կը շարունակէ մղել մարդկային հոգին ալ դէպ յառաւել բար-  
ձրագոյն ինչ, ոգեւորելով զայն անդու՛ Ճշմարտին, Գեղեց-  
կին ու Բարեոյն ուղղութեանց մէջ տեսլականներու իրա-  
գործման խորհրդաւոր ազնուական տենջանքովը : Ահա՛  
Քսենոփան ու Պարմենիա զշուներ եւ զՀեսիոդ դժոխաց մէջ

պատիժներու արժանի կը համարէին, վասն զի նիւթէն ու  
մարդէն, ժամանակէն ու տեղէն վեր յաւիտենական մեծ եւ  
անյեղի էութիւնը մարդկային վաղանցիկ կերպարանաց տակ  
կոտորակած ու նկարագրած էին. — Եմպետոկէս Ագրի-  
գենտացի սիրով, եւ Անագասգոր՝ իմացականութեամբ կը  
բացատրէր կարգն ու ներդաշնակութիւնը որոց վերածուած  
կը համարէին սկզբնական խառնափնդորութիւնը, անկեր-  
պարան քառոր. — ու դեռ քուրմերը մեհենից մէջ կը շա-  
րունակէին զոհադարձու թիւնքն ի պատիւ Արամագոյ, Պո-  
սիդոնի եւ Պղուտոնի, Ապոլոնի եւ Աթենասայ եւ այլ  
երկնքի ու երկրի արու եւ էգ աստուածներու՝ երբ Սոկ-  
րատ, Պլատոն եւ Արիստոտէլ հետզհետէ կը բարձրացնէին  
իւրեանց վսեմ ձայներ, արդիւնարար եւ վախճանական  
պատճառաց տեսութեամբն, գերագոյն Բարեոյն, Գերա-  
գոյն Տեսիլին, Գերագոյն Սորհուրդին, իբրեւ ամէն էութեան  
միակ պատճառին, վեհագոյն վարդապետութիւնքը  
քարոզելու :

Այսպէս, փիլիսոփայութիւնը, իր ազատ թռիչներով,  
ո՛չ միայն յարգած է միշտ կրօնքին հիմը, որ է հաւատքն  
մի գերագոյն ամենիմաստ զօրութեան, այլ եւ կրօնական  
գաղափարն մշակած, զտած ու ազնուացուցած է, եւ նը-  
պաստած՝ կրօնքներու բարեշրջման : Գաղափարաց զարգաց-  
ման պատմութեան ամէն փոքր ի շատէ հմուտ մարդ գիտէ  
այսօր թէ Պլատոնական-Ադեքսանդրեան վարդապետու-  
թիւնը քրիստոնէական բնագանցութիւնը կազմելու եւ ճըշ-  
դելու մասին ի՛նչ նպաստ բերած են Աթանասներու, Բար-  
սեղներու, Նազիանզացիներու, Օգոստինոսներու, եւ թէ  
Միջին դարու իմաստասիրութիւնը, Եկեղեցւոյ այն ազախի-  
նը, ի՛նչ գաղափարներ առնելով Արիստոտէլէն, Ագուինացի-  
ներու աստուածաբանական գումարներուն մէջ բերաւ խառ-  
նեց : Եւ իմաստասիրութիւնը, իր ազախնութեանէն ազատա-  
գրուելէն ետքն ալ, բացարձակ ախոյեան մը չէ՛ եղած եր-  
բեք կրօնքին, այլ՝ իբրեւ բարձրագոյն մտքերու կրօնական

ձեւը՝ քալած է անոր քով, թէեւ յաճախ հալածուած ըլլայ անկէջ, ժողտանօ Պաիւնօ խարոյկի վրայ կ'այրուի Հաւատաքննութենէն, բայց տիեզերքը անհուն ամբողջ մը կը հոչակէ, ներքին անհուն իմացականութենէ մ'ոգեւորեալ ու վարեալ. — Վանինի, Թուլուզի խորհրդարանէն իբրեւ անաստուած նկատուած, կը դատապարտուի լեզուն խլուելու, այրուելու եւ մոխիրն ալ չորս հովերուն նետուելու. — անողորմ վճիռ որ կը գործադրուի կէտ առ կէտ. բայց նա, իր դատաւորներուն առջեւ կեցած, խոտի շիւղ մը կ'առնու գեանէն, ու ձեռքը բռնած կը գոչէ, « Այս խոտի շիւղն իսկ կ'ապացուցանէ թէ գոյ Աստուած » : Պագօն եւ Տէքարդ փիլիսոփայութիւնը նորոգեցին 17<sup>րդ</sup> դարու սկիզբն եւ ուսուցին այն մեթոտները որք արդի գիտութիւնը արտադրեցին. բայց Պագօն, գիտական զննական մեթոտը պարզած ատեն, գիտութիւնը պաշտպանելով ընդգէմ այն նախապայարման որով իբր յանհաւատութիւն տանող կը նկատուէր ժամանակին ռամիկ ժողովուրդէն եւ մոլեռանդ աստուածաբաններէ, կ'ըսէր. « Քիչ մը գիտութիւնը կը հեռացընէ Աստուծմէ, բայց քիչ մ'աւելին առ Այն կը վերբերէ », վասն զի լաւագոյնս ճանչցնելով Արարչին հիանալի գործը՝ բարեպաշտութեան ոգին կը զարգացնէ : Տէքարդ իւր առժամեայ մեթոտիկ տարակոյսէն դուրս կ'ելնէ ամենէն յառաջ աննիւթական հոգւոյն եւ կատարեալ էակին՝ Աստուծոյ գոյութիւնը տեսնելով իւր բանականութեան ներկայացած՝ բացայայտութեան այն պայծա՛ռ լոյսով զոր ճշմոտութեան միակ ստուգանիչ, միակ հեղինակութիւն ընդունեց, Արդի գիտուն իմաստասիրութեան Արիստոտէլը, Անգղիացին Հերպէրդ Սթենսէր, իւր Դաստիարակութեան գրքին մէջ, կը հաստատէ գիտութեան կրօնազգած հանգամանքը, եւ ինքն իսկ յառաջ կը բերէ մի անգղիացի նշանաւոր գիտնոյ, Հըքսլիի, հետեւեալ խօսքերը. « Ճշմարիտ գիտութիւնը եւ ճշմարիտ կրօնքը երկուորեակ քոյրեր են զորս չէ կարելի բաժնել առանց երկուքն ալ մեռցնելու : Գիտութիւնը կը զարգանայ այն չափով որով կրօնազգած է, կրօնքը կը ծաղկի այն չափով որով գիտասէր է, որով իր արմատները կը մխրճէ գիտութեան գետնին մէջ : Իմաստասիրաց մեծ յղացմունք եղած են պտուղ ո՛չ այնքան իրենց իմացական կարողութեան որքան բարձրագոյն աստիճանաւ կրօնական ոգւոյ մ'իրենց մտածութեան տուած ուղղութեան : Ճշմարտութիւնը յայտնուած է շատ աւելի իրենց համբերութեան, իրենց սիրոյն, իրենց սրտի պարզութեան, իրենց անձնուրացութեան քան իրենց տրամաբանութեան խորաթափանց ուժին » : Անշուշտ եղած է, եւ կայ ուրացող անաստուածեան անիտէալ իմաստասիրութիւն մը եւ գիտութիւն մը : Դեմոկրիտներու եւ Եպիկուրներու հիւլէականութենէն մինչեւ արդի գիտական նիւթապաշտութիւնը Պիւլսներներու : Բայց մէկ մ'որ բազմաթիւ իմաստասիրական դրութեանց մէջ միակ դրութիւնն է այդ ուրացող, եւ յետոյ՝ նիւթապաշտք ուրանալու համար Հոգին ու Աստուած՝ միթէ չեն աստուածացներ ու հոգիացներ զնիւթը : « Չը հաւատացողը՝ ո՛ր գիտէ թէ չեն հաւատար », կը գրէր Օտեան իւր մէկ նամակին մէջ :

նր կը զարգանայ այն չափով որով կրօնազգած է, կրօնքը կը ծաղկի այն չափով որով գիտասէր է, որով իր արմատները կը մխրճէ գիտութեան գետնին մէջ : Իմաստասիրաց մեծ յղացմունք եղած են պտուղ ո՛չ այնքան իրենց իմացական կարողութեան որքան բարձրագոյն աստիճանաւ կրօնական ոգւոյ մ'իրենց մտածութեան տուած ուղղութեան : Ճշմարտութիւնը յայտնուած է շատ աւելի իրենց համբերութեան, իրենց սիրոյն, իրենց սրտի պարզութեան, իրենց անձնուրացութեան քան իրենց տրամաբանութեան խորաթափանց ուժին » : Անշուշտ եղած է, եւ կայ ուրացող անաստուածեան անիտէալ իմաստասիրութիւն մը եւ գիտութիւն մը : Դեմոկրիտներու եւ Եպիկուրներու հիւլէականութենէն մինչեւ արդի գիտական նիւթապաշտութիւնը Պիւլսներներու : Բայց մէկ մ'որ բազմաթիւ իմաստասիրական դրութեանց մէջ միակ դրութիւնն է այդ ուրացող, եւ յետոյ՝ նիւթապաշտք ուրանալու համար Հոգին ու Աստուած՝ միթէ չեն աստուածացներ ու հոգիացներ զնիւթը : « Չը հաւատացողը՝ ո՛ր գիտէ թէ չեն հաւատար », կը գրէր Օտեան իւր մէկ նամակին մէջ :



Անկեղծութիւնը մեզ կուտայ ամէնուն վստահութիւնը (Կիւլեօ) :

— Մարդ ստիպուած չէ ըսելու բոլոր խորհածը, բայց պէտք է խորհի ամէն ըսածին վրայ :

— Երեք անգամ տուն փոխելը՝ մէկ անգամ հրդեհուելու հաւասար է :

— Կիրքեր ունենալ կամ չունենալը մեր կամքէն կախումն չունի : Բայց մեզմէ կախումն ունի անոնց վրայ իշխելը :

— Եթէ կայ արուեստ մը լաւ խօսելու, կայ նաեւ արուեստ մը լաւ լսելու (Լըկուվէ) :

### ՊԱՏՐԻԿԲ ԵՒ ՊԼԷԲԷԱՆՔ ՀՈՌՄԻ ՍԷՋ



Հին Հռոմի բնակչաց երկու դասերն էին Պատրիկք եւ Պլէբէեանք։ Առաջինները կը սերէին քաղաքին հին ընտանիքներէն, իսկ վերջինները՝ Հռոմի մէջ հաստատուած օտարականներէն։ Պլէբէեանք Պատրիկներուն նման բանակին մէջ կը ծառայէին իրենց ծախքով։ այս պատճառաւ պարտական եղան Պատրիկներուն, որոնք իրենց վաշխառութեամբ նախ կործանեցին եւ ապա՝ ըստ Հռոմէական անգութ օրինաց՝ իրենց գերի ըրին անկարող պարտապանները։ Պլէբէեանք՝ որոց թշուառութիւնը անտանելի դարձած էր, չափազանց յուզուած՝ ծերունիի մը խղճալի կերպարանքէն եւ սրտաճրմիկ պատմութենէն, Հռոմէն մեկնելով քաջուեցան Նուիրական շէռը (493)։ Մենենիոս Ագրիպպաս դեսպանին միջոցաւ իրաւախօհութիւն գոյացաւ Պատրիկներուն եւ Պլէբէեաններուն միջեւ, որոնք յանձն առին քաղաք դառնալ, պայմանաւ որ պարտքի համար բոլոր գերի եղողները արձակուին եւ անկարող պարտապանները ազատուին, ընտրեն իրենց մէջէն երկու Տրիբուններ, որպէս զի իրենց շահերը պաշտպանեն։ Կարելի է ըսել որ Տրիբունութեան հաստատութենէն յետոյ՝ երկու հակընդդէմ իշխանութիւններ կային Հռոմի մէջ. — Պատրիկներուն եւ Պլէբէեաններուն ուրոյն իշխանութիւնները։ Հիւպատոսները Ծերակոյտին հետ խորհրդակցելով օրէնքներ կը հաստատէին, հաւանութեամբ Հարիւրեակներուն ժողովին։ Տրիբուններն ալ Պլէբէեաններուն հետ խորհուրդ կ'ընէին ցեղերու ժողովներուն մէջ, եւ թէեւ չէին կրնար օրէնքներ դնել, բայց կրնային պաշտպանել օրինազանց մը։

Պլէբէեանք գոհ չեղան այսչափով։ Երեւելի Պատրիկ մը, Սպուրիոս Կասիոս առաջին Ագարակային օրէնքը առաջարկեց, այսինքն աղքատներուն բաժնել մասնաւորնե-

րու չպատկանող հողերու մէկ մասը, որուն՝ Պատրիկները նախ վարձակալ եւ ապա՝ Ծերակոյտին անտեսութեամբ՝ տէր եղած էին։ Պատրիկները՝ որոց հաճելի չէր կրնար ըլլալ այս առաջարկը, ամբաստանելով դատապարտել տուին զանիկայ։

Պլէբէեանց թշուառութեան ուրիշ պատճառ մ'ալ կար։ Հռոմէացիք գրաւոր օրէնք չունէին, կը հետեւէին նախնեաց սովորութեան։ Պլէբէեանք՝ Պատրիկներուն տուած քմածին մեկնութիւններէն ազատելու համար՝ պահանջեցին որ նոր եւ գրաւոր օրէնքներ հաստատուին։ Տասնամեայ վէճերէ յետոյ՝ որոշուեցաւ որ մասնաւորապէս կարգեալ 10 դատաւորներ օրէնքները քննելով՝ օրինագիծ մը պատրաստեն եւ միանգամայն իրենք կառավարեն քաղաքը։ Ասոնց պատրաստած օրէնքը տասներկու պղնձէ տախտակներու վրայ գրուած՝ Հռոմէական օրինաց հիմը եղաւ (450 Ն. Ք.)։

Սոյն տասն դատաւորք առաջին տարին արդարութեամբ պաշտօնավարեցին։ բայց յետոյ օրէնքի հակառակ գործել սկսելով, նոր գթութեանց պատճառ եղան։ Պլէբէեանք դարձեալ քաջուեցան Նուիրական շէռը (449), եւ պայմաններ դնելով դարձան Հռոմ։ Նաեւ վերջաւ երկու դասերուն միջեւ ամուսնութեանց արգելքը (445 Ն. Ք.), եւ՝ Պատրիկներուն առաջարկութեամբ՝ որոշուեցաւ Հիւպատոսութեան պաշտօններուն մէկ մասը յանձնել Համարակալ կոչուած երկու նոր դատաւորներու։ իսկ նոյն պաշտօնէութեան զինուորական արտօնութիւնները՝ զինուորական Տրիբուններու որոնք կրնային ընտրուիլ Պլէբէեաններէն (444 Ն. Ք.)։



Հռոմի պատերազմները, Գալլիական արշաւանքը չափազանց աղքատացուցին Պլէբէեանները որոնք այս պատճառաւ պարտական եղան Պատրիկներուն։ Պլէբէեանները անկարող լինելով վճարելու իրենց պարտքերը, դատապարտուեցան գերի ըլլալու, հակառակ հաստատուած օրէնքներուն զորս

կ'ուզէին ջնջել Պատրիկք: Կապիտուլեան Մանլիոս մեռաւ 383 ին (Ն. Ք.):

Երկու կարող եւ յանդուգն Տրիբուններու, Լիկինիոս Ստոլոնի եւ Լուկիոս Աեքոտիոսի, վերապահեալ էր իրագործել ինչ որ Պլէբէեանք կր փափաքէին ունենալ: Այս երկու ճշմարիտ բարեկարգիչներ առաջարկեցին որ Հիւպատոսութիւնը հաստատուի եւ իւրաքանչիւր տարւոյ համար ընտրուելու երկու Հիւպատոսներէն մին միշտ Պլէբէեան մ'ըլլայ: Նաեւ, աղքատ դասակարգին օգտին համար, պահանջեցին որ պարտք ունեցողները՝ արդէն վճարուած տոկոսը հանելով գլխամասէն, մնացեալը վճարեն երեք տարուան մէջ, եւայլն:

Պատրիկները սաստկապէս մերժեցին այս առաջարկութիւնները՝ որոնք յետոյ Լիկինեան oratio կոչուեցան, բայց բուռն մաքառումներէ վերջ տեղի տուին (367), եւ յաջորդ տարին Լուկիոս Աեքոտիոս Պլէբէեան առաջին Հիւպատոսը եղաւ: Միւս բոլոր պաշտօնէութիւններն ալ, Իլլսանապետութիւն (355), Համարակալութիւն (351), Իրաւագետութիւն (337), եւ ամենէն վերջ Քրմագետութիւն (302) հետզհետէ բաց սասարէզներ եղան Պլէբէեանց համար:

Պատրիկք եւ Պլէբէեանք, Հռոմի այս երկու դասերը, ի մի ձուլուելով՝ կազմեցին մէկ ժողովուրդ: Այս ձուլում, որուն ի յիշատակ տաճար մը կառուցուեցաւ, Հռոմի համար յառաջ բերաւ փառաւոր շրջան մը քաղաքային առաքինութեանց: Հռոմի ժողովուրդը սորվեցաւ ըլլալ հնազանդ, համբերատար եւ յարատեւող: Գիտցաւ երբեմն ալ իր կարգու սարգին մէջ փոփոխութիւններ մտցնել, բայց աստիճանաբար, առանց իրերու սովորական ընթացքը խանգարելու:

Հռոմ, քաղաքական իմաստութեան մէջ մարզուած, կարող եւ յարմար եղաւ երկիրը կառավարելու:

Երբ ներքին վէճերը դադրեցան, Հռոմ սկսաւ թերակղզւոյն տիրելու ձեռնարկել, սակայն մեծ դժուարութեամբ ի գլուխ հանեց այս ձեռնարկը, վասն զի ստիպուեցաւ պա-

տերազմիլ իրեն չափ զօրաւոր ժողովրդոց հետ: Ասոնց մէջ ամենէն հզօրն էին Սամիացիք, որոնք շարունակ Կամպանիա կ'արշաւէին: Այս երկրին ամենէն նշանաւոր եւ հարուստ քաղաքը, Կապուա, տեսնելով որ անկարող է ինքզինքն պաշտպանել, Հռոմի պաշտպանութիւնը խնդրեց: Այն ժամանակ կատաղի կռիւ մը՝ սկսաւ Հռոմի եւ Սամիոնի միջեւ, եւ վերջապէս Սամիացիք յաղթուելով, Հռոմի թողուցին Կամպանիան (343—341 Ն. Ք.):

Լատինացիք Պլէբէեանց օրինակէն քաջալերուած՝ պահանջեցին որ երկու Հիւպատոսներէն մին, ինչպէս նաեւ Մերակոյտին կէսը, իրենցմէ ընտրուին: Այս առաջարկութիւնը մերժուեցաւ եւ պատերազմ ծագեցաւ: Այս միջոցին Հիւպատոսներն՝ Մանլիոս եւ Դեկիոս՝ խիստ կարգապահութիւն հաստատեցին բանակին մէջ: Հռոմէացիք՝ որ պահ մը տկարացած էին, Դեկիոսի անձնուիրութեամբ քաջալերուած՝ յաղթեցին Լատինացւոց (340—338):

Սամիացիք վախնալով Հռոմի զօրութենէն որ այժմ տէր էր Լատիոնի եւ Կամպանիոյ, երկրորդ անգամ պատերազմի ելան: Անգամ մը յաջողեցան նոյն իսկ լուծէ անցունել չորս լէգէոններ որոնք կողեան երեքմանի կոչուած կիրճին մէջ բռնուած էին: Հռոմէացիք վրէժխնդրութեամբ վառուած՝ յարձակելով յաղթեցին թշնամիին, մտան Ապուլիա եւ հոն իրենք ալ թշնամին լուծէ անցուցին: Այս միջոցին Օմպրիացիք, Ետուրացիք եւ Գալլիացիք Սամիացւոց հետ միացած՝ մեծ դաշնակցութիւն մը կազմեցին: Բայց դարձեալ յաղթուեցան եւ ամէնքն ալ ընդունեցան Հռոմի գերիշխանութիւնը (290 Ն. Ք.):

Հռոմ՝ կեդրոնական Իտալիոյ տիրելէ յետոյ՝ առթի մը կը սպասէր նուաճելու նաեւ երկրին հարաւային մասը: Այս առիթը կը ներկայանայ երբ Տարենտոն, Մեծ-Յունաստանի ամենէն մեծ քաղաքը, կ'անարգէ իր դեսպանները, վատասիրտ քաղաքացիք վախնալով, իրենց օգնութեան կը կոչեն Եպիրոսի թագաւոր Պիւռոսը: Սա Իտալիա անցնելով, կը

յաղթէ Հռոմէացւոց Հերակլէայի մօտ, յաղթութիւն մը՝ զոր շատ սուղի կը գնէ եւ զոր կը պարտէր իր փիղերուն:

Պիւռոս՝ Հռոմ զրկեց իր հնարագէտ բարեկամը, Կիւնէաս, խաղաղութեան համար բանակցելու Մերակոյտին հետ: Կիւնէաս՝ հակառակ իր ճարտասանութեան եւ տարած ընծաներուն՝ մեկնիլ ստիպուեցաւ քաղաքէն որ մերժեց խաղաղութեան առաջարկը:

Պիւռոս խաղաղութեան այս անյաջող փորձէն վերջ, յանկարծ Հռոմի վրայ քալեց, բայց հակառակ իր ակնկալութեան՝ անօգնական մնալով ստիպուեցաւ նահանջել: Անցաւ Սիկիլիա՝ ուր Սիրակուսայի Յոյներէն հրաւիրուած էր, եւ քանի մը յաղթութիւններ տարաւ Կարքեդոնացւոց դէմ: Ետոյ՝ կրկին Իտալիա դարձաւ: այս անգամ Հռոմայեցիներէն չարաչար յաղթուելով Բենեվենտի մէջ, մեկնեցաւ թերակղզիէն եւ Տարենտոն անձնատուր եղաւ (275 Ն. Ք):

Հռոմ շնորհիւ իր բանակին զարմանալի կազմաւորութեան եւ կարգապահ ու պարտաճանաչ քաղաքացւոց, այսպէս նուաճեց ամբողջ Իտալական թերակղզին, որուն կառավարութիւնը կարգադրուեցաւ հետեւեալ կերպով: Հռոմ կը կառավարէր միւս բոլոր քաղաքները, Լատինք կը վայելէին Հռոմէական քաղաքացիութեան մէկ քանի իրաւունքները եւ կը յուսային տակաւ ստանալ մնացեալ իրաւունքներն ալ: Իտալացիք կը կառավարէին իրենց քաղաքները ուր կը բնակէին, բայց պարտաւոր էին հնազանդելու Հռոմի եւ ծառայելու ի հարկին անոր բանակներուն մէջ:

Մ. Մ Ա Լ Ե Ա Ն



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն  
Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Ի

Բ Ա Ղ Կ Ա Տ Ա Կ Ա Ն Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն



Բ . Դ Ա Ս

(1900 Մարտ 19 ին Բերայի Մանկավարժական  
Լսարանին մէջ արտասանուած)

ՎԵՐԱՄՈՒԹԻՒՆ (Էրազմ. — Ռապրէ. — Մօնդաներ. — Լուսեր)

Ա.

Մեր առաջին նիստին մէջ տեսանք թէ՛ հին ժամանակներու եւ միջին դարու մէջ տիրող կրթական դրութիւնները զուրկ էին այն հանգամանքներէն որոնք հիմը կը կազմեն այսօրուան գիտական մանկավարժութեան: Պատճառն այն է որ՝ Մանկավարժութիւնը՝ որ մարդկութեան պատմութեան կարեւորագոյն մէկ էջն է՝ անցած է, ինքն ալ, այն երեք շրջաններէն որոնք կը կազմեն Օկիւոդ Քօնդի «երեք վիճակներու օրէնքը»:

Առաջին վիճակին կամ շրջանին մէջ, մարդուն միտքը՝ տակաւին բաւական չզարգացած եւ աւելի երեւակայութեամբ քան բանականութեամբ գործող, բնական երեւոյթները կը բացատրէ անտեսանելի, խորհրդաւոր եւ ամենակարող էակներու կամ շաստուածներու միջոցաւ: Քօնդ անտուածաբանական (théologique) կը կոչէ այս շրջանը:

Երկրորդ շրջանին մէջ, շաստուածներու տեղը կ'անցնին, խորհրդաւոր, իրական բայց անտեսանելի էակներ կամ էակութիւններ (entité): Այս շրջանին մէջ, զոր Քօնդ քննազանցական (métaphysique) կ'անուանէ, եթէ ջուրը

ընդհանրին մէջ կը բարձրանայ , պատճառն այն է որ բնութիւնը կը սոսկայ պարապութիւն կոչուած էակութենէն :

Բայց էակութիւններն երեւակայական են եւ հետեւաբար դժուարըմբռնելի , մինչդեռ անոնց յառաջ բերած երեւոյթները տեսանելի են : Ուստի եւ միտքը տակաւ մէկդի թողուց էակութիւնները եւ ի նկատի առաւ երեւոյթները : Այդ օրէն՝ բնազանցական շրջանը տեղի տուաւ երրորդ վիճակին , այն է գիտական կամ դրական (positif) շրջանին՝ որ կ'սկսի Պէքընով , Տէքարդով , Կալիլէոսով , եւ ուր երեւոյթները գիտողութեան կ'ենթարկուին , անոնց պատճառները կ'որոնուին , երեւոյթները կը մեկնուին երեւոյթներով : Այս շրջանին մէջ ծիրանիգօտին ոչ չաստուած մըն է եւ ոչ ալ Ահիահի գայրոյթը մեղմացած ըլլալու նշանը . արեւուն լոյսին բեկբեկումէն առաջ եկած երեւոյթ մըն է պարզապէս :

Կը հետեւի թէ , երեք վիճակներու օրէնքին համեմատ , մարդկային միտքը տակաւ ազատած է գերբնականին կամ էակութեան ընծայած հաւատքէն եւ անցած է գիտութեան , իւրաքանչիւր շրջան ունենալով սակայն միշտ բան մը միւս շրջաններէն : Օրինակի համար , տեսանք , անցեալ նիստին , թէ՛ հին ժողովրդոց մանկավարժութիւնը էապէս աստուածաբանական ըլլալով հանդերձ , ունեցած է բնազանցական հանգամանքներ եւ նոյն իսկ գիտական ցանցաւ հանգամանքներ : Միջին դարու մէջ աստուածաբանութիւնը շատ զօրաւոր է տակաւին , բայց միւս կողմէն , բնազանցական բացատրութիւններ իրենց թուիչը կ'առնեն : Վերջապէս , գիտական շրջանն ալ ունի իր աստուածաբանական եւ բնազանցական բացատրութիւնները : Մեզ համար կարեւոր եղող կէտը սա է որ առաջին շրջանին մէջ տիրող դրութիւնը աստուածաբանութիւնն է , երկրորդին մէջ՝ բնազանցութիւնը , եւ երրորդին մէջ՝ գիտութիւնը :

Այս վերջին շրջանին կը վերաբերի , աւելորդ է ըսել , ժամանակակից դպրոցը՝ իր կրթիչ ուսուցութեամբ , որուն

նպատակակէտն է կամքը մշակել , որովհետեւ ուզելը խորհելէն աւելի կարեւոր է , եւ հմտութիւնը մեծ արժէք մը չպիտի ունենար՝ եթէ չազդէր մեր գործերուն վրայ : Կըրթիչ ուսուցութիւնը ուսմանց բոլոր ճիւղերն ալ , նոյն իսկ անոնք որ անյարմար կը թուին այս բանին , կը ծառայեցնէ միտքը կազմելու եւ միեւնոյն ատեն հոգին կանոնաւորելու : Այս ուսուցութիւնը կը յարգէ տղուն մէջ աստուածային այն տարրը որ բանականութիւն կը կոչուի , կը մշակէ կը զարգացնէ զայն , կը ցնցէ տղուն անհատականութիւնը , այդ թանգակին ուժը , եւ յարմար դաստիարակութեան կ'ենթարկէ զայն : Իսկ Միջին դարը ի՞նչ կ'ընէր իր սքոլաստիկ վարդապետութիւններովը : Քրիստոնէական եւ դարձեալ քրիստոնէական կը սովորեցնէր , ամուր մամուլի մը մէջ պընդելով ճգմելով այն միտքը՝ որ այնքան վսեմ թուիչներ առնելու է սահմանուած , եւ այն հոգին որ կայանն է այնքան վեհ յոյզերու : — Արդի մանկավարժութիւնը ամենամեծ հոգածութեան առարկայ ըրած է տղուն ֆիզիքական դաստիարակութիւնը՝ զոր գիտական խարխիսներու վրայ հաստատելու մարդասիրական ազնիւ եռանդը կը ծառայի օրքան զօր : — Միջին դարու դպրոցը չէր արդարացներ ոչ յունական եւ ոչ լատինական անուանակոչութիւններն որոնք երկուքն ալ կը նշանակեն գքօսակիս , խաղ : Արիստօֆան աթենացի նշանաւոր կատակերգակ բանաստեղծն աւելի յարմար անուն մը գտած էր՝ կոչելով զայն վայր սանջանաց :

Ահա ինչո՞ւ ընդհանրապէս դաստիարակութեան , եւ մասնաւորապէս նախակրթութեան պատմութեան մէջ , այն ճախող եւ տրտմառիթ շրջանէն վերջ՝ որ Միջին դար կը կոչուի՝ ցնծութեամբ կ'ողջունենք Վերածնունդի տարիները՝ որ սկզբնաւորութիւնն է նոր ժամանակներու դաստիարակութեան : Վերածնութեան հետ կ'ընդարձակի մտքերու հորիզոնը . ամէն բան , նոյն իսկ կրօնական այն դաւանանքը՝ որոց վրայ միայն կառուցուած է Միջին դարու կրթական շէնքը , գիտութեան փորձաքարին կ'ուզեն ենթարկել . նոր հոսանքը որ



կ'սկսի՝ այնքան բուռն է ամէն բան միմիայն բնութեան վրայ հիմնելու իր իմաստասիրութեան մէջ՝ որքան բուռն եւ ծայրայեղ եղած էր Միջին դարը՝ մերժելու մէջ ամէն բան՝ որ դուրս էր իր հաւատալիքներու ըմբռնումէն, վերածնութիւնն՝ որ բոլոր գիտութիւնները եւ ամէն տեսակ հարց բանականութեան մաղէն կ'ուզէր անցունել, ծնունդ տուաւ իմաստասիրական զանազան վարդապետութեանց թոհ եւ բոհի մը՝ ուրկէ դուրս պիտի գային նոր վարդապետութիւնները։ Մասնաւորելով մեր խօսքը կրթական դրութեանց վրայ, Միջին դարու անձուկ եւ խամրեցնող մանկավարժութեան տեղ՝ վերածնութեան հետ կը ծնի մարդուն արժէքը ըմբռնող եւ մարդը կազմող, տղուն մարմինը, միտքը եւ սիրտը ներգաշնակ կերպով մշակող, բառէ աւելի գաղափարներ աւանդող մանկավարժութիւն մը՝ որ բարեոքումէ բարեոքում դիմելով, պիտի ըլլայ վերջապէս այսօրուան գիտական կրթիչ՝ մանկավարժութիւնը, անշուշտ մեծագոյն փառքն ու պարծանքն ժԹ. դարու վերջին կիսուն եւ կարեւորագոյն ժառանգութիւնը քսաներորդ դարուն։

Սակայն, ինչ ինչ ծայրայեղութիւններ եւ միակողմանի ըմբռնումներ մէկ կողմ ձգելով, եթէ վերածնութիւնը կրօնացած է յղանակ պատուական եւ յուսթի վարդապետութիւններ, պէտք է ըսել թէ՛ այդ վարդապետութիւնները տեսականէն անդին չեն անցած երբեմն։ Եւ թէպէտ բողոքական նորոգիչներ, ի մէջ այլոց Լուտեր, ԺՁ. դարուն՝ կարեւոր բաժին մը ունեցած են նախակրթութեան կազմակերպութեան մէջ, բայց եւ այնպէս ԺՁ. դարու կրթական շարժումը տեսական վարդապետութեանց մէջ կը կայանայ գըլ-խաւորաբար։ Ուսումնասիրենք այս նիստին մէջ, մէկ կողմէն՝ էրազմի, Ռապըլէի, Մօնդանեի, եւ միւս կողմէն՝ Լուտերի վարդապետութիւնները, որ կը ներկայացնեն ԺՁ. դարու կրթական ըմբռնումները, եւ որոց շատ բան կը պարտի արդի մանկավարժութիւնը։

\* \* \*

Թէեւ այն հոլանտացի գիտունը՝ որ կը կոչուի ԵՐԱԶՄ՝ ուսուցչութիւն չէր բաժ եւ հետեւաբար ուղղակի կերպով չէ ազդած կրթական գործին վրայ, բայց իւր երկասիրութիւններն՝ որոց մեծագոյն մասը կրթութեան կը վերաբերին՝ ունեցած են իրենց ազդեցութիւնը դպրոցին վրայ։ Տղայոց առաջին դասխարակութեան վրայ անուն գործին մէջ էրազմ կ'ուսումնասիրէ տղուն նկարագիրը, կը քննէ սախնդիրը թէ պէ՛տք է մատաղ հասակէն ուսմունք աւանդել տղուն, ինչպէս կ'ուզէր Քէնդիլիէն՝ որուն ջերմ կուսակիցներէն է ինքը էրազմ։ Խնդիր՝ որ Էմիլի հրատարակութեանէն ի վեր մանաւանդ, վիճարանութեան նիւթ եղած է, եւ որոյ ամէնէն գործնական լուծումն է թերեւս վճռական տարիք մը չորոշելը, ինչպէս կ'ուզէր ԺԹ. դարու անգղիացի մանկավարժ մը, Ռիչարտ Միւլքէստըրը։ Կը յանձնարարէ հրապուրիչ մեթոտները, խստիւ կը դատապարտէ այն ժամանակի դպրոցներուն մէջ տիրող կարգապահական խուժուժ միջոցները։ — Վիքդուէն տը Ֆելդրի պէս, էրազմ ալ մասնաւոր կարեւորութիւն կուտայ մանկական քաղաքավարութեան, թէեւ այս մասին իր դաւանած սկզբունքներուն կամ տուած խրատներուն մէջ մերթ ծայրայեղութիւններ, մերթ պարզամտութիւններ գտնուին։

Կանգ առնենք պահ մը, եթէ կ'ուզէք, այն թելադրութեանց վրայ որ կրնան բղխիլ քաղաքավարական ամէնէն տարրական սկզբունքներու ուսուցումէն, որովհետեւ կարեւոր են եւ այժմէութիւն ունին անոնք մասնաւորապէս հայ վարժարաններուն համար՝ ուր աշակերտն ընդհանրապէս կը ներկայանայ անհրահանգ։ Եւ մենք դաստիարակներս, հազուագիւտ բացառութիւններն ընդունելով, որքա՛ն քիչ հոգ կը տանինք քաղաքավար, բարեկիրթ ընելու մեր աշակերտները, կամ թէ շատ շատ կը բաւականանանք մէկ քանի չոր ու ցամաք քարոզներ տալով այս մասին՝ փոխանակ գործնականին մէջ մտնելու։ Եւ սակայն, եթէ խնդիրը քննենք լոկ մեր դաստիարակի պարտականութեանց տեսակէտէն իսկ,

զանցառութիւն մըն է չգրապիլ մեր աշակերտներուն բարեկրթութեամբը, քանի որ սա՛ մասը կը կազմէ բարոյագիտութեան դասերուն՝ ընկերութեան հանդէպ մարդուն ունեցած պարտականութեանց բաժնին մէջ։ Պէտք է համոզուինք սա ճշմարտութեան թէ՛ դաստիարակին գործին ազնուագոյն մասը տղուն միտքը ուսմունքով լեցնելէ աւելի՝ այդ ուսմանց իսկ շնորհիւ եւ ուրիշ միջոցներով բարի ունակութիւններ իւրացնել տալուն մէջ կը կայանայ, եւ եթէ սրտի քաղաքավարութիւնը բարոյականէ աւելի մեծ արժէք ունի քան ձեւերու քաղաքավարութիւնը, սակայն այս վերջինն ալ ունի ընկերական իր մեծ արժէքը եւ կարելոր պայմաններէն մէկն է յաջողութեան՝ կեանքի մէջ, թողունք թէ նոյն իսկ ձեւերու այս քաղաքավարութիւնն ալ ունի իր բարոյական կողմը եւ ցոլացումն է ընդհանրապէս սրտի քաղաքավարութեան, ինչպէս կ'ընդունէր, տեսանք արդէն, Վիքթորէն աը Ֆէլդըրը եւ ինչպէս կ'ընդունի էրազմ՝ ինքն ալ։ Ահա՛ ինչու դաստիարակը պէտք է պահանջէ, օրինակի համար, որ աշակերտը դասարան մտած ատեն բարեւէ, ու բարեւէ քաղաքավար եւ ազնիւ կերպարանքով՝ եւ ոչ թէ տեսակ մը դժկամակութեամբ։

Դաստիարակը պէտք չէ ներէ որ աշակերտը դուռը հրէ ուժգնաբար, իր տեղը երթայ՝ դասարանը թնդացնելով իր քայլափոխներուն տակ, հրմշտկէ իր ճանքուն կամ նստարանին վրայ գտնուող ընկերները, ակռաները մաքրէ ուրիշներուն առջեւ, մատները քիթը խօթէ, թքնէ գետինը, սովորութիւն մը այնքան տգեղ՝ որքան կրնայ ըլլալ փտանգաւոր, թուքը միջնորդ մ'ըլլալով մահացու հիւանդութիւններու փոխանցման։

Դաստիարակը պէտք չէ ներէ որ աշակերտը դասարան մտնէ կեղտոտ եղունգներով, անխնամ յարդուզարդով։

Վերջապէս, պէտք չէ աչք գոցէ ո եւ է շարժուածքի, ո եւ է խօսուածքի որ կը մեղանչեն բարի ճաշակի դէմ։

Եւ, հա՛րկ է յաւելուլ, դաստիարակը ոչ միայն պէտք չէ աչք գոցէ իր աշակերտաց անբարեկիրթ անընտել վարմանց, այլ եւ, այլ մանաւանդ

կատարեալ ազնուութեան մը կենդանի օրինակը պիտի ըլլայ ինքը, դաստիարակը, նախ՝ իր խրատած սկզբունքներուն հետ հակասութիւն մը չկազմելու համար, եւ երկրորդ՝ անոր համար որ՝ դաստիարակին անձին օրինակը իր քարոզներէն անհամեմատ կերպով աւելի կ'արժեն։

Դաստիարակը պէտք է զգուշանայ՝ օրինակի համար՝ խիստ եւ խոցոտիչ խօսքերէ, բուռն ու անկարգ ձեւերէ։ «Մեծ զգուշութիւն պէտք է ընել որ, կ'ըսէր Լուտեր, տղաքը չգայթակղեցնենք կոշտ եւ անպատկառ բառերով, տղաք չուտով կ'ազգուին անոնցմէ, եւ «նոր ամանները հին ամաններէն աւելի երկար ատեն կը պահեն իրենց մէջ դրուած առարկաներուն հօտը», կ'ըսէր Ուլրատիոս։

Փայթակղեցուցիչ բառ մը, որ կ'իյնայ մատաղ սրտի մը վրայ, անմիջապէս կը ծլի եւ կ'ըլլայ թունաւոր տունկ մը։ Վայ անոր որ այս թոյնը ներարկեց անմեղ եւ սուրբ սրտի մը մէջ։

Պէտք է դաստիարակը վարուի իր աշակերտներուն հետ քաղցրութեամբ կամ մանաւանդ Ֆէնըլօնի յանձնարարած «քաղցր խստութեամբ»։

պէտք է քաղաքավարութեամբ առնէ աշակերտին ձեռքէն տետրակը, պէտք է քաղաքավարութեամբ ուղղէ հարցումները, սրբաբէ սխալները՝ առանց իր անհամ կամ մանաւանդ անբարոյացուցիչ ծաղրանքին ու հեգնութեան նշաւակ ընելու խեղճ աշակերտը՝ որուն «մարդկային անձի բացարձակ արժէքը» կը մոռնանք երբեմն, զոր կը նկատենք երբեմն իբր ստրուկ կամ իբր անբան։

Ամօթալից ընթացք, անարժան կրթիչի անուան։

Ներեցէք ինձ, ազնիւ ունկնդիրներ, եթէ ծանրացայ խնդրոյ մը վրայ՝ որոյ վրայէն լուսութեամբ կրնայի անցնիլ, քանի որ խօսքս կ'ուղղեմ այնպիսի անձերու՝ որոց համար վերջի խորհրդածութիւնները աւելորդ պիտի կրնային համարուիլ, քաղաքավարութիւնը ըլլալով հանգամանք մը որմէ զուրկ դաստիարակ դժուար պիտի ըլլար երեւակայել։

Տեսականապէս ճիշդ է այս, բայց մեր դպրոցները միշտ չեն արդարացներ դժբաղդաբար այս տեսականը, եւ աշակերտ-

ներ՝ որոց վրայ ի գործ դրուած յարատեւ եւ աջալուրջ հսկողութիւնը պիտի յաջողէր վերջապէս ուղղել անոնց բարուց անհարթութիւնները՝ կը մեկնին երբեմն դպրոցէն՝ աւելի անընտել քան որքան չէին թերեւս դպրոց մտած տեսնին։ Ահա ինչո՛ւ պիտի ուզէի էրազմը ներկայացնել միմիայն առիթը ունենալու համար վերի դիտողութիւնները ձեր ուշադրութեան յանձնելու, եթէ նոյն իսկ մանկավարժական ուրիշ իրաւունք մը չունենար էրազմ՝ ձեզ ներկայանալու։

Բայց էրազմ ուրիշ կողմերով ալ արժանի է մեր ուշադրութեան առարկայ ըլլալու։ Ինքը որ հմուտ էր լատին եւ յոյն լեզուաց, ինքը որ սնած էր մասնաւորապէս Քէնդիլիէնի դաւանութիւններով, կերպով մը Institutio oratoriae արձագանգը կ'ըլլայ իր հետեւեալ առածներուն մէջ՝ զորս կ'արժէ ի մտի ունենալ.

« Ամէն բան յօծարակամ կը սովորինք այն մարդոցմէն զորս կը սիրենք. » այնքան ճշմարիտ է թէ՛ դաստիարակը իր բարեկրթութեամբ, ճշդապահութեամբ, իր մեթոտով եւ իր անձնուիրութեամբ ինքզինքը պէտք է սիրելի ընէ իր աշակերտներուն՝ որոնք դաստիարակին մէջ պէտք է գտնեն բարի հայր մը կամ մայր մը, երէց եղբայր մը կամ քոյր մը։

« Ծնողներն աչ չեն կրնար աղէկ կրթել իրենց զաւակները՝ եթէ երկիւղը միայն ըլլայ անոնց կրթելու գորութիւնը. » որովհետեւ « կան տղաք՝ որ նախամեծար կը համարին ծեծին տակ մեռնիլ՝ քան թէ ուղղել իրենց թերութիւնները. Քաղցրութեամբ եւ բարեացակամ խրատներով, ընդհակառակը, դիւրին է վարել ուղղել նոյն այդ տղաքը. » այնքան ճշմարիտ է թէ՛ պէտք է, ինչպէս կը պահանջէր ժ.Չ. դարու մէջ սպանիացի մանկավարժ մը եւս, Վիվէս, ուսումնասիրել նկարագիրները եւ ուղղիչ կրթիչ միջոցները պատշաճեցնել նկարագրին, պարագայ մը որ մեծապէս կը դիւրացնէ կարգապահութեան գործը դպրոցին մէջ.

« Տղաք դիւրաւ կը սովորին իրենց լեզուն վարժութեամբ

եւ գործնական հրահանգներով. » նոյն ձգտումն ունի այսօր մայրենի լեզուէն զատ, կենդանի օտար լեզուաց ալ ուսուցման մէթոտը, methode directe կոչուածը՝ որ ամէնամեծ բաժին կուտայ լեզուի վարժութեանց՝ ուսանելի լեզուաւ կատարուած։

« Ընթերցանութեան եւ գրի ուսումը ինչ մը սաղկացուցիչ է. ուսուցիչը պէտք է մեղմացնէ ձանձարոյթը՝ հրապուրիչ մնտքի մը օգնութեամբ. » Այսօր որ ընթերցանութեան եւ գրի ուսումը հին ատենուան մեքենական ուսումը չէ, այսօր որ ընթերցանութիւնը առանցքն է միւս ուսումներուն եւ կը վարէ ճոխաբար մտքին գործունէութիւնը, հազար ու մէկ ձեւի տակ գաղափարները իրարու յաջորդել եւ բարդել տալով, այսօր որ ներգործական մեքոսը եւ հրապուրիչ միջոցները ձեռք ձեռքի տուած են՝ զուարթութեամբ ծանօթացնելու համար տղուն ուսմանց աշխարհը, ընթերցանութիւն, գիր, ինչպէս նաեւ ուրիշ ուսումներ, դադրած են տաղտկացուցիչ ըլլալէ... Հայ վարժարաններուն մէջ, դժուար պիտի ըլլար հաւատալ. Ո՛ւր էր թէ մանկավարժական այս բանախօսութիւնները նպաստէին ու թելադրէին կրթիչ ներգործական մեթոտը ներմուծելու մեր այն վարժարաններուն մէջ — եւ կը վախնամ որ ասոնք մեծամասնութիւնը կազմեն — ուր միջնադարեան կամ էրազմի ժամանակի կրաւորական անջիղ ուսումը կը տիրապետէ մեծազօր. Այս ջերմ իղձը արտայայտել վերջ, աւարտենք էրազմի մէկ երկու առածներու շարքը.

« Հիները սառի ձեւերով կը կաղապարէին տղոց սիրած հաւնադամները եւ այս կերպով կը կրկնէին այբուբենը. » Պէ՛ռնառտէն տը Սէն Բիէռ ալ կ'ըսէ՝ « եթէ տղու մը չուտով կարդալ սովբեցնել կ'ուզէք, ամէն մէկ տառի տակ շաքար մը դրէք. » Առանց այս որկրամոլութեան միջոցին դիմել ստիպուելու, գիտենք թէ Մանկապարտէզի մանկավարժութիւնը գտած է աւելի յանձնարարելի միջոցներ թէ՛ հրապուրիչ եւ թէ՛ մարզող եղանակաւ մը սովբեցնելու այբուբենը։

«Քերականական ամեկեկն պարզ կանոնները պէտք է տալ նախ եւ առաջ» էրազմի այս խրատն ալ անոնց հասցէին է որ՝ թէ՛ մայրենի լեզուի եւ թէ՛ օտար լեզուաց ուսուցման մէջ քերականութեան դժուարամարս — երբեմն ալ անմարսելի կողմերը կ'ուզեն թխմել փափուկ, մատաղ, անյարդար ուղեղներու մէջ: Պէտք է պարզել այս ամէնը. մեր տղաք քերականական այդ նրբութիւններէն լաւագոյն բաներով ունին զբաղել<sup>(1)</sup>: Ընթերցանութեան մէն մի հատուածի մէջ դիտել տալ քերականական մէկ կամ երկու կանոն, ինչպէս կը յանձնարարէր արդէն 16րդ դարու անգղիացի մանկավարժ մը՝ Աշատ կամ Ասքամ, շատ մը գործնական վարժութիւններ ընել տալ անոնց վրայ՝ պարզ ձեւով, տղուն ընտանի եղանակաւ, բայերը խոնարհել տալ նախադասութեանց ձեւով, վերջը մեթոտաւոր կերպով ամփոփել տալ կանոնները. փոխանակ աւանդական տաղտուկ քերականական լուծումներուն, նախադասութեանց մէջ որոշել տալ այս կամ այն բառին պաշտօնը. ահա՛, մէկ երկու բառի մէջ սեղմուած, քերականութեան ուսուցման մեթոտին ընդհանուր յատկապիծը՝ Տարրական նախակրթարանի մէջ, որովհետեւ, ինչպէս կ'ըսէ էրազմ ուրիշ առածի մը մէջ, «ինչպէս որ մարմինը, մատաղ հասակին մէջ, քիչ քիչ պէտք է ստանայ իր սնունդը, այնպէս ալ մանկան մտքին պէտք է տակաւ առ տակաւ ջամբել այնպիսի գիտելիքներ՝ որ պատշաճին անոր տկարութեան»: Այս վերջին խրատը շատ լաւ պիտի յարմարէր նաեւ մեր այն Մանկավարտիզպանուհիներուն՝ որոնք՝ իրենց սանիկներուն ամէնէն արթնամիտները հանդէսներու մէջ իբրեւ փոքրիկ հրաշակերտներ ներկայա-

(1) Փրանսայի Հանրային Կրթութեան նախարարութիւնը 1900 Յուլիս 31 թուականու պաշտօնագրով մեծապէս պարգած է ֆրանսերէն համաձայնութեան ուսումը Կրթական նախարարութեան իշխանութեան տակ գտնուող վարժարաններուն մէջ: Այդ պաշտօնագրին կցուած ցանկը հրատարակուած է Journal officielի Օգոստոսի թուոյն մէջ: (Տես Բիւզակցիոն Դ. Տարի, Թիւ 1188).  
(Յեկնագոյնի ծանօտութիւն)

ցընելու մարմաջէն բռնուած՝ անձնատուր կ'ըլլան ցուցամուկ գդացումներու, եւ ներուած սահմաններէն շատ անդին կ'անցնին՝ մանկական ուղեղը լեցունելու մասին, առանց մտածելու, աւա՛ղ, թէ այդ վայրկեանէն իսկ Մանկավարտէզը գրծեց իր խոստման եւ իր կոչման, եւ թէ ուղեղն որ ահա կը շողայ խարուսիկ փայլով մը՝ շուտով պիտի բթանայ ընդարմանայ:

Այսպէս էր ահա՛ ոգին էրազմի մանկավարժութեան, մանկանց համար գորովով լեցուն մանկավարժութիւն մը, եւ սակայն, պէտք է յաւելուլ, թերի մանկավարժութիւն մը՝ որ շատ քիչ բաժին կուտար գիտութեանց եւ պատմութեան, էրազմ՝ վարդապետ մարդկական հրահանգաց՝ (humanités) դպրութեանց միայն կարեւորութիւն տալով:

Յ. Թ. ԼԻՆԴԵԱՆ

### ՁԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ

Խ Ա Ռ Ն

#### ԳԾԱԳԻՏՈՒԹԵԱՄԵ ԵՒ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՄԵ

Հին եւ նոր աշխարհի ամենէն զարգացեալ ազգերու յառաջդիմութեան ազդակը, ճարտարուեստի՝ գեղարուեստի աղբիւրը եւ իմացական գործունէութեան ոգին ներշնչող միակ միջոցը ձեռարուեստը եղած է:

Գրեթէ քառորդ դարէ ի վեր է որ, ձեռական աշխատութիւնները մուտ գտան արեւմտեան առհասարակ բոլոր կրթական հաստատութիւններու մէջ: Եւ ահա՛ ատոր շնորհիւ, այդչափ կարճ միջոցի մէջ, գտնուեցան ազգեր որոնք արտակարգ յառաջդիմութիւն ցոյց տուին համաշխարհային արուեստահանդէսներու մէջ, ուր ձեռարուեստի հսկայ ար-

տաղրութիւններ ճոխ ցուցադրութեամբ մրցման դրուեցան :

Եթէ երէկ Գոլումպոսի աշխարհը տօնեց , այսօր ալ Յըրանսա վերստին կը տօնէ իր Եզական եւ Տիեզերական ցուցահանդէսը , աշխարհի բոլոր մարդկութեան առջեւ պարզելով ազգերու եւ մանաւանդ ի՛ր յառաջդիմութիւնը , զոր կը պարտի միմիայն՝ վարժարանաց մէջ ձեռական աշխատութիւններու խնամով աւանդուելուն :

Այսօր առհասարակ ամէն ազգ մեծ կարեւորութիւն կուտայ , ի հարկին վարկեր բանալով , ձեռարուեստի բարերար ուսումը տարածելու համար : Մենք միայն բացառութիւն մը կը կազմենք ամենուն մէջ , քանի որ ցարդ լուրջ ջանք մը չենք ըրած սոյն կարեւոր ուսումն եւս մտցնելու մեր վարժարանաց մէջ : Այս նպատակին ձգտելու են մեր թաղականները , հոգաբարձուները եւ ուսուցիչները , եթէ կը փափագին խելացի գործ մը կատարել :

«Նիւթ» պիտի ջանայ ուսման սոյն բարերար ճիւղին ճաշակը տալ , գծելով՝ ձեռական աշխատութիւններու քննակն եւ գործնական կանոնաւոր մէկ յայտագիրը դասական կարգաւորութեամբ՝ որուն պիտի կրնայ հետեւիլ ամէն ձեռնհաս դաստիարակ-ուսուցիչ , զբաղեցնելով տղաքն սոյնպիսի մարզիչ , հրահանգիչ եւ հետաքրքրաշարժ աշխատութիւններով , — ի՛նչ որ անոնց հոգին պիտի շինէ եւ բարեյականը ամրապնդէ , եւ քիչ ատենէն ամենէն յետին կամ յոռի կարծուած աշակերտաց վարքին եւ աշխատութեան կերպին մէջ իսկ՝ մեծ փոփոխութիւն պիտի նշմարուի , եւ թերեւս միայն այս զբաղումներ պատճառ ըլլան ոմանց առանձնայատկութեան եւ ընդունակութեան երեւան գալուն :

Այս առթիւ կը խոստանանք նաեւ մէկ տարուան ընթացքին մէջ՝ պարբերաբար ի մէջ բերել , նախապատրաստական կարգէն սկսելով , Ձեռական աշխատութիւններու տարեկան բովանդակութեան տեսական եւ գործնական մանրամասն ընդլայնումը՝ հետեւեալ կարգով :

1. Դասընթացքներու աւանդուելիք դասերը , ժամանակի տեւողութեան չափով :

2. Գծագրութեան , ինչպէս նաեւ գծագրութեան աստիճանաւորեալ օրինակները ու հրահանգները :

3. Շինուելիք առարկաներուն չափերը ու նիւթերուն տեսակները :

4. Ձեռարուեստի յատուկ գործիչներու պատկերները եւ գործածութիւնները :

### Յ Ա Յ Տ Ա Գ Ի Բ

Ձեռական աշխատութիւններն իրենց դժուարութեան , կարեւորութեան եւ գեղեցկագիտութեան համեմատ կը բաժնուին՝ Տարրական , Միջին եւ Բարձրագոյն երեք դասընթացքներու , որոց պիտի աւանդուին մէկ տարուան ընթացքին մէջ՝ (չարաթական երեք ժամ աշխատութեամբ) առհասարակ հետեւեալ վեց տեսակ աշխատութիւնները .

- Ա. Խաւաքարդում (Cartonnage) .
- Բ. Կաւապակեում (Modelage) .
- Գ. Տախսակաւոյցում (Découpage) .
- Դ. Ոգորհիւսում (Tissage d'osier) .
- Ե. Թեյնիւսում (Tissage de fil de fer) .
- Զ. Թիթեղագործում (Travail de ferblantier) :

Ծանօթութիւն . — վարժարաններ կան , որոնք երեք դասընթացքներէն զատ՝ ունին նաեւ նախապատրաստական կարգ մ'ալ , ուր կ'աւանդուին բոլոր Տարրական ուսումներն համառօտիւ . ուստի մենք ալ նկատի առնելով սոյն բացառիկ պարագան , ստիպուեցանք հոս դնել կանխաւ , սոյն կարգին յատուկ Ձեռական աշխատութիւններու բաժինն ալ՝ որ է հետեւեալը .

### Ն Ա Ն Ա Պ Ա Տ Ի Ս Ր Ա Ս Ս Ա Վ Ա Ն Կ Ա Ր Գ

Գծագրութիւն . — Երկրաչափական պարզ գծապատկերներու\* (1) ճշգրիտ օրինակութիւն եւ գունաւորում :

(1) Աստղանիշ կը դրուի բառացուցակով բացատրելի բառերուն վրայ :

Չեռարուեստ . — Նոյն երկրաչափական գծապատկերները խաւաքարդի\* վրայ գծելով կտրատել եւ վրան գունաւոր փայլուն թղթեր փակցնել :

— Մոզայիգի\* աշխատութիւն գունաւոր թղթերով :

— Համաչափութեամբ երկկողմնազոյգ ծաղկանկարներ\* կտրել :

— Նկարաքարդերու\* կտրատում եւ կազմում :

S U P P O S I T I O N E S

(Տարեկան աշխատութիւններու րովանդակութիւն)

Ա. ԽԱՒԱՔԱՐԳՈՒՄ . — Հրահանգ գծագիտութեան . —

Մասնաւոր տետրակի մէջ ընդօրինակել ճշդութեամբ՝ կանխաւ տրուած գծապատկերներու ձեւերը . որք են , ֆառակուսի , ֆառանկիւն , եռանկիւն , քաղնանկիւն , քոչորշի եւայլն . նաեւ զանազան ձեւերով տուփեր եւ տառերու ու թուանշաններու պարզ ձեւեր :

Հրահանգ ձեռարուեստի . — Նոյն գծուած ձեւերը գծել նաեւ մասնաւոր թղթերու վրայ ու կտրել : ապա միեւնոյն կերպով գծել ու կտրել , այս անգամ ալ խաւաքարդ գործածելով : նաեւ պատրաստ նկարաքարդերու\* կտրատում եւ կազմում :

Հրահանգ գծագրութեան . — Ուաւաքարդով պատրաստուած բոլոր նիւթերը պէտք է վերստին օրինակել մասնաւոր հաւաքածոյ տետրին\* մէջ իրենց բնականին պէս (d'après nature) :

Բ. ԿԱՒԱՊՈՍԿԵՐՈՒՄ . — Հրահանգ գծագիտութեան . — Կանխաւ տրուած գծապատկերներու ձեւերը ընդօրինակել . որք են , ֆառակուսի , ֆառանկիւն , եռանկիւն , քաղնանկիւն , քոչորակաձեւ , վարդակերպ , սուսդաձեւ , նաեւ Հայ . Յրանս . եւ Օսմ . թուանշաններ եւ տառեր . ինչպէս նաեւ գաւաթի , թաղարի , կուժի\* , սափորի\* պարզ ձեւեր ու տերեւներու , ծաղիկներու՝ եւ բնական ուռուցիկ աշխարհացոյցի սկզբնաւորութեան ուրուագծական\* պատկերներ :

Հրահանգ ձեռարուեստի . — Նոյն գծուած ձեւերը կաւով շինել , ապա դիւրագոյններուն կաղապարը հանել գաճով\* : Հրահանգ գծագրութեան . — Կաւով պատրաստուած բոլոր նիւթերուն պատկերները ընդօրինակել վերստին՝ բնականին պէս :

Գ. ՏԱՆՏԱԿԱՍՂՈՑՈՒՄ . — Հրահանգ գծագիտութեան . — Նոյն երկրաչափական ձեւերը ընդօրինակել . այսինքն՝ ֆառակուսի , ֆառանկիւն , եռանկիւն , քաղնանկիւն , քոչորշի . նաեւ պարզ տուփերու ձեւեր . ինչպէս նաեւ եռազգի\* տառերու՝ թուանշաններու պարզ ձեւեր :

Հրահանգ ձեռարուեստի . — Նոյն գծուած ձեւերը տախտակով կտրել , յղկել\* , ջրգեղել\* . նաեւ նկարազարդ ծակոտկէն\* թղթերու միջոցաւ առտնին զարդեր յօրինել\* . ինչպէս նաեւ տախտակի վրայ փորագրութեան\* վարժութիւն :

Հրահանգ գծագրութեան . — Տախտակէ պատրաստուած բոլոր առարկաներուն պատկերները ընդօրինակել մասնաւոր տետրակի մէջ՝ բնականին պէս :

Դ. ՈՂՈՐՀԻՒՍՈՒՄ . — Հրահանգ գծագիտութեան . — Կանխաւ տրուած պատկերները գծել . որք են , ֆառակուսի , ֆառանկիւն , եռանկիւն , քոչորշի , զոզաւոր , կոնքարդ , քաղնանկիւն . նաեւ բունիկներու\* , կողովիկներու եւ շրջանակներու ձեւեր :

Հրահանգ ձեռարուեստի . — Նոյն գծուածներուն նմանը կազմել ողորի շիւղերով . նաեւ ներկել կամ կեղծ տերեւներով զարդարել :

Հրահանգ գծագրութեան . — Ողորով հիւստուած բոլոր առարկաներուն պատկերները ընդօրինակել տետրակին մէջ բնականին նման :

Ե. ԹԵՂԷՐԻՍՈՒՄ . — Հրահանգ գծագիտութեան . — Կանխաւ պատկերները գծել մասնաւոր տետրակին մէջ , հետեւեալ ձեւերով . ֆառակուսի , ֆառանկիւն , եռանկիւն , քոչորշի , զոզաւոր , կոնքարդ , քաղնանկիւն , եւայլն . նաեւ օղակի , շղթայի , կողովիկի ձեւեր :

Հրահանգ ձեռարուեսի. — Նոյն ձեւերը պատրաստել զանազան տեսակ մետաղաթելերով. նաեւ դրուագել\* զանոնք:

Հրահանգ գծագրութեան. — Թելով հիւսուած կամ պատրաստուած նիւթերը օրինակել նաեւ՝ բնականին նման:

2. ԹԻԹԵՂԱԳՈՐԾՈՒՄ. — Հրահանգ գծագրութեան. — Նախապէս գծել կտրատման համար որոշուած ձեւերը. որք են, ֆառակուսի, ֆառակիւն, եռանկիւն, քաղմանկիւն, բոլորչի, եւայլն. նաեւ տուփերու ձեւեր ագուցուած եղանակով. ինչպէս նաեւ տառերու եւ թուանշաններու եռազգի ձեւեր:

Հրահանգ ձեռարուեսի. — Նոյն ձեւերը կտրել գոյն-զգոյն թիթեղներով. նաեւ խաւաքարդով, փայտով եւ թիթեղով խառն զարդեր պատրաստել:

Հրահանգ գծագրութեան. — Թիթեղով պատրաստուած առարկաներուն պատկերը ընդօրինակել բնականին նման, հաւաքածոյ-տետրին մէջ:

Մ Ի Զ Ի Ն Դ Ա Ս Ը Ն Ք Ա Յ Ք

(Տարեկան աշխատութիւններու բովանդակութիւն)

Ա. ԽԱԽԱՔԱՐԳՈՒՄ. — Հրահանգ գծագրութեան. — Մասնաւոր գծագրութեան տետրակի մը մէջ ընդօրինակել հետեւեալ գծապատկերները. որք են, երկրաչափական հաստատուններու ձեւեր՝ տուփերու զանազան ձեւեր, տունի զարդեր, այսինքն՝ լրագրի, այցքարդի\*, լուցկիի, խոզանակի, սանտրի ամաններ. նաեւ կարի հիւսկէն\* տուփերու ձեւեր, հիւսկէն շրջանակներու ձեւեր. ինչպէս նաեւ եռազգի տառերու ձեւեր եւ զանազան ձեւերով պատի ցուցակներ\*, եւայլն:

Հրահանգ ձեռարուեսի. — Սոյն վերոգծեալ ձեւերը կտրատել ու կազմել. ապա դրուագել\* գոյնզգոյն թղթերով, գունազարդել\* ջրաներկով. նաեւ պատրաստ նկարաքարդերու\* կտրատում եւ կազմում. ինչպէս նաեւ գրչահատով\* վարձու թեւոն սկզբնաւորութիւն:

Հրահանգ գծագրութեան. — Բոլոր խաւաքարդով չինուած առարկաներուն պատկերները ընդօրինակել մասնաւոր հաւաքածոյ տետրակի մը մէջ՝ ըստ բնականին\*:

Բ. ԿԱՒԱՊԱՏԿԵՐՈՒՄ. — Հրահանգ գծագրութեան. — Կանխաւ գծել տալ հետեւեալ գծապատկերները. որք են, երկրաչափական հաստատուններու ձեւեր. ապա տերեւներու, ծաղիկներու, պտուղներու ձեւեր. նաեւ փոքրիկ միջանկրու, փոքրիկ զիւղանկարներու\* եւ բնականէն փոքր դէմքի մասերու ձեւեր. ինչպէս նաեւ զանազան տեսակ գաւաթի, բաժակի\*, կուժի, սափորի ձեւեր՝ և ուռուցիկ աշխարհացուցի վարժութիւններու շարունակական ձեւերը:

Հրահանգ ձեռարուեսի. — Սոյն վերոգծեալ գծապատկերներու նման կաւով չինել. ապա դիւրագոյններուն կաղապարները\* հանել, գաճով կամ կենդանատոսինձով\*:

Հրահանգ գծագրութեան. — Կաւով կամ գաճով յօրինուած բոլոր առարկաներուն օրինակները հանել մասնաւոր տետրակի մէջ՝ բնականին պէս:

Գ. ՏՕՆՏԱԿԱՍՂՈՅՈՒՄ. — Հրահանգ գծագրութեան. — Գծագրիտու թեւոն տետրակին մէջ գծել, երկրաչափական հաստատուններու ձեւեր, զանազան տեսակ տուփերու ձեւեր. նաեւ եռազգի տառերու եւ թուանշաններու զարդարուն ձեւեր. ինչպէս եւ զարդարուն ձեւերը՝ շրջանակներու\*, անկիւնազարդերու\*, ծաղկակալներու\*, թաղարներու\*, աշտանակներու\*, եւայլն:

— Տախտակի վրայ փորագրելու սկզբնական մասնաւոր ձեւեր:

Հրահանգ ձեռարուեսի. — Վերոգծեալ բոլոր ձեւերուն նմանը տախտակով կամ խառն նիւթերով յօրինել, ներկել, դրուագել, ջրդեղել, ոսկեզօծել, եւայլն:

Հրահանգ գծագրութեան. — Տախտակով պատրաստուած բոլոր առարկաներուն ընդօրինակութիւնը ընել տալ տրոյ՝ բնականին նման:

Դ. ՈՂՈՐՀԻՍՈՒՄ. — Հրահանգ գծագրութեան. — Կան-

խաւ գծել հետեւեալ առարկաներուն գծապատկերները . կողովիկներ , շրջանակներ , թաղարիկներ , կարի-բունիկներ , ծաղկակալներ\* , եւայլն :

Հրահանգ ձեռարուեսի . — Նոյն վերագծեալ ձեւերը կազմել ողորներով\* կամ շիւղերով . ապա կեղծ ծաղիկներով զարդարել . նաեւ դրուագել ու ներկել :

Հրահանգ գծագրութեան . — Բոլոր ողորով շինուած առարկաները գծել տալ տղոց վերստին՝ բնականին պէս :

Ե. ԹԵԼՀԻՒՍՈՒՄ . — Հրահանգ գծագրութեան . — Կանխաւ գծել տալ՝ տառերու , թուանշաններու , շղթայի եւ շղթայակերպ զարդերու ձեւեր . նաեւ հանդերձակալներու ձեւեր , կողովիկներու , ծաղկակալներու ձեւեր . ինչպէս եւ պարզ տերեւներու եւ ծաղիկներու ձեւեր , եւն. :

Հրահանգ ձեռարուեսի . — Վերագծեալ ձեւերը շինել տալ զանազան տեսակ մետաղաթելերով . ապա դրուագել , ոսկեզօծել , եւայլն :

Հրահանգ գծագրութեան . — Թելով շինուած բոլոր առարկաներուն օրինակը հանել տալ բնական ձեւով :

Զ. ԹԻԹԵՂԱԳՈՐԾՈՒՄ . — Հրահանգ գծագրութեան . — Նախ գծել՝ երկրաչափական հաստատուններու ձեւեր . նաեւ զանազան ձեւերով տուփերու գծապատկերները՝ ազուցուած եղանակով . նաեւ՝ եռագգի տառերու ու թուանշաններու ուռուցիկ կամ զարդարուն ձեւեր . ինչպէս նաեւ՝ շրջանակներու , վարդակերպ զարդերու , Ժանեակներու ձեւեր , եւն. :

— Թիթեղի վրայ քանդակելու\* համար նկարուն օրինակներ :

Հրահանգ ձեռարուեսի . — Վերագծեալ օրինակներուն նմանը գոյնզգոյն թիթեղներով կամ խառն նիւթերով կըտրել ու կազմել տալ :

Հրահանգ գծագրութեան . — Թիթեղով շինուած առարկաներուն օրինակները հանել գծագրութեան մասնաւոր հաւաքածոյ-տետրին մէջ :

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԱՆՔ ԱՅՔ

(Տարեկան աշխատութիւններու բովանդակութիւն)

Ա. ԵԱՒԱՔԱՐԴՈՒՄ . — Հրահանգ գծագրութեան . — Գծագրութեան տետրին մէջ գծել տալ նախ եւ առաջ հետեւեալ գծապատկերները . պէսպիսի գեղեցիկ տուփերու ձեւեր , եռագգի տառերու եւ թուանշաններու խիստ զարդարուն ձեւեր :

Ծաղկանկարաջարդման\* օրինակներ : — Գրչահաստով փորագրուելիք օրինակներ : — Վերտառութիւններու\* ձեւեր : — Վարժարանի , վաճառանոցի եւ տունի ցուցակներու եւ նիշերու\* կոկիկ ձեւեր : — Աշխարհացոյց քարտէսներու ձեւեր , եւայլն :

Հրահանգ ձեռարուեսի . — Վերագծեալ օրինակներուն նմանը յօրինել , կտրել ու կազմել . նաեւ պատրաստ նկարաքարքեր կտրել ու կազմել . այսինքն՝ ( գիւղանկար իր մանրամասնութիւններովը , առկախ կամառջներ , էյֆէլի աշտարակը , կայարաններու շէնքեր , պալատներ , արուեստահանդիսի շէնքեր , եւայլն ) :

Հրահանգ գծագրութեան . — Խաւաքարով պատրաստուած առարկաներուն մէջէն՝ անոնք միայն ընդօրինակել՝ հաւաքածոյ-տետրին մէջ , զորս օրինակել կարելի է բնականին նման :

Բ. ԿԱՒԱՊԱՏԿԵՐՈՒՄ . — Հրահանգ գծագրութեան . — Կանխաւ գծապատկերներն հանել հետեւեալ օրինակներուն . որք են , բոյսի , փոքրիկ կենդանիներու , միջատներու ձեւերը . նաեւ զարդածաղիկներու\* , ծաղիկներու , տերեւներու , պտուղներու խառն կամ անջառ\* ձեւերը՝ ուռուցիկ . ինչպէս նաեւ մարդկային անդամներու մասերը բնական մեծութեամբ . — Բնական ուռուցիկ աշխարհացոյցի տեղադրական\* եւ աշխարհագրական մասերու ձեւեր : — Ճարտարապետական հաշուով շինուելիք կամարի\* մը կամ կամուջի մը եւ կամ աշտարակի մը յատակագիծը\* կամ գծապատկերը , եւայլն :



Հրահանգ ձեռարուեսի. — Վերոգծեալ բոլոր գծապատկերները շինել տալ չափազանց ճշգուծեամբ եւ խնամով. նաեւ կաղապարները հանել. ինչպէս նաեւ բնական աշխարհացոյցներու եւ ճարտարապետական շէնքերու շինութեան հոգ տանիլ. եւ եթէ կարելի ըլլայ, զանոնք կակղաքարով\* կամ մարմարինով ալ շինել տալ. գունազարդել\*, դրուագել, ջրգեղել, ոսկեզօծել, եւայլն, եւայլն:

Հրահանգ գծագրութեան. — Կաւով՝ գաճով կամ տարբեր նիւթերով յօրինուածքները վերատին ընդօրինակել հաւաքածոյ-տետրին մէջ՝ բնականին յար եւ նման:

Գ. ՏԱԵՏԱԿԱՍՂՈՑՈՒՄ. Հրահանգ գծագրութեան. — Գծագրութեան տետրակին մէջ գծել տալ, առտնին վարժարանական կամ արհեստի վերարեբեալ զանազան առարկաներու գծապատկերները չափական ճշգուծեամբ. օրինակ, արասան փաթթելիք, մատիտի ծայր բարակցնելիք, թղթի ծանրոց, անկիւնաչափ, գործաւորի տուփ, ուղի թռուակ, սլատի դրակալ, դրչատուփ, կաղամարակալ, գըղրոց, եւայլն, եւայլն:

Հրահանգ ձեռարուեսի. — Վերոգծեալ բոլոր գծապատկերները շինել տախտակէ կամ խառն նիւթերով. նաեւ մասնաւոր նկարուն ծակոտկէն թղթէ օրինակներու միջոցաւ սղոցել՝ կամուրջներ, ջահեր\*, խորհրդանշաններ\*, էյֆէլի աշտարակը, կսռքեր, պատի զարդեր, վանդակներ, եւայլն: — Աշխարհացոյց քարտէսներ տախտակի վրայ սղոցել: — Գրերու, ծաղիկներու եւ զանազան տեսակ զարդերու փորագրութիւն:

Հրահանգ գծագրութեան. — Տախտակով պատրաստուած առարկաներուն պատկերները ընդօրինակել հաւաքածոյ-տետրին մէջ՝ բնականին պէս:

Գ. ՈՃՈՐՀԻՍՈՒՄ. — Հրահանգ գծագրութեան. — Գծել հարսանեկան ծաղիկողովներու գծապատկերները. նաեւ տղոց խաղալիքներու ձեւերը, որք են, սայլակ\*, արկղիկ\*, օրօրոց, թիկնաթռակ\*, աթռուակ, աթռու, եւայլն:

Հրահանգ ձեռարուեսի. — Վերոգծեալ գծապատկերներու համեմատ. յօրինել, կազմել, դրուագել. նաեւ կեղծ ծաղիկներ շինել, ինչպէս եւ Միլին Դասընթացքին պակաս ձգած զարդարանքները ամբողջացնել:

Հրահանգ գծագրութեան. — Ուրրով շինուած առարկաներուն ընդօրինակութիւնը ընել տալ՝ հաւաքածոյ-տետրին մէջ՝ բնականին նման:

Ե. ԹԵԼՀԻՍՈՒՄ. — Հրահանգ գծագրութեան. — Գծագրութեան տետրին մէջ գծել տալ զանազան ձեւերով շղթայումներ\*, հանդերձակալներու ձեւեր, վանդակներու ձեւեր, եւայլն:

Հրահանգ ձեռարուեսի. — Վերոգծեալ ձեւերը յօրինել թելով կամ խառն նիւթերով ու դրուագել, ոսկեզօծել, եւայլն:

Հրահանգ գծագրութեան. — Թելով պատրաստուած բոլոր առարկաներն ընդօրինակել տալ՝ բնականին պէս:

Զ. ԹԻԹԵՂԱԿՈՐԾՈՒՄ. — Հրահանգ գծագրութեան. — Կանխաւ՝ հետեւեալ շինուելիք առարկաներուն գծապատկերներն հանել. զարդարուն տառեր եւ թուանշաններ, ժանեակներ\*. նաեւ առտնին առարկաներ, օրինակ՝ աճառակալ\*, աճիւնակալ\*, հակթաղէտ\*, եւայլն. նաեւ նաւակ, նաւ, շոգենաւ, կառք, շոգեկառք, եւայլն:

— Աշխարհացոյցի քանդակումներու պատկերներ:

— Պղինձի վրայ քանդակումներու ձեւեր:

Հրահանգ ձեռարուեսի. — Վերոգծեալ բոլոր գծապատկերներուն նմանը կտրել, կազմել, դրուագել զանազան տեսակ նիւթերով, եւայլն:

Հրահանգ գծագրութեան. — Թիթեղով յօրինել առարկաներ եւ զանոնք օրինակել տալ մասնաւոր հաւաքածոյ-տետրին մէջ՝ ըստ բնականին:

(Տես էջ 192—210)

# Մ Ա Ր Դ Ը

## ԱՐԵԱՆ ԵՐՋԱՆ


**29. Արիւն.** — Արիւնը կարմիր հեղուկ մ'է որ մեր մարմնոյն ամէն մասերուն մէջ անդադար շրջան ընելով՝ կը զարգացնէ, կը նորոգէ եւ կը պահպանէ զայն:

**30. Արեան զնճակներ.** — Արիւնը կը պարունակէ խիտ մեծ քանակութեամբ արիւնադիւն զնճակներ (globules), որոցմէ մէկ կաթիլի մէջ կան 5—6 միլիոն հատ:

**31. Արիւնը իր շրջանը կ'ընէ խողովակներու միջոցաւ որոնք կը կոչուին շնչերակ (arteres) կամ երակ (veines):** Արիւնը կը տեղափոխուի՝ սրտին կծկումներուն եւ ընդլայնումներուն շնորհիւ:

**32. Սիրս.** — Սիրսը խոռոչաւոր մկան (muscle) մ'է եւ կը գտնուի կուրծքին մէջ, երկու քոֆերուն միջեւ: Կը բաժնուի 4 անհուսասար խորշերու: Վերին երկու խորշերը կը կոչուին բլրակ (oreillette)• ստորին երկու խորշերը՝ փորոք (ventricules)• Իւրաքանչիւր բլրակ կը հաղորդակցի իր փորոքին հետ, բայց սրտին աջ մասը չի հաղորդակցիր իր ձախ մասին հետ:

**33. Շնչերակներ.** — Թանձր եւ պինդ ներքսակողմերով երկու շնչերակներ սրտէն կը մեկնին, մին՝ ձախ փորոքէն, միւսը՝ աջ փորոքէն, եւ ամբողջ մարմնոյն մէջ



կը տարածուին, հետզհետէ ճիւղաւորուելով եւ նրբանալով, այն աստիճան որ երբ մորթին կը հասնին, այնքան բազմածիւ են որ անկարելի է ասելի մը ամենանուրբ ծայրովը մեր մարմինը խայծել՝ առանց պատռելու շնչերակ մը որ իսկոյն քանի մը կաթիլ արիւն զուրս կուտայ: Այնքան նուրբ են այդ շնչերակներ որ կրցած են մագերու հետ բաղդատուիլ եւ այս պատճառաւ կոչուած են մագաւանաւ խողովակներ (vaisseaux capillaires): Ասոնք վերջին ճիւղաւորումներն շնչերակներուն, կը հաղորդակցին երակներու նոյնքան նուրբ եւ նոյնքան բազմածիւ ճիւղերուն հետ:

**34. Երակներ.** — Երակներուն ներքին երեսները նուրբ են եւ կակուղ: Կը մեկնին բլթակներէն, եւ՝ շնչերակներուն պէս՝ մարմնոյն ամէն կողմը կը տարածուին, հետզհետէ աւելի ճիւղաւորուելով եւ մագանման խողովակներու ձեւին մէջ մորթին յանգելով:

**35. Արեան Երջան.** — Արեան շրջանի բոլոր գործարանները, սիրս, շնչերակ, երակ, արիւնով լեցուած ըլլալով, եթէ սիրտը կծկի, դէպ ի հեռուն կը մղէ արիւնը: Եթէ ընդլայնի, վերադառնալու պիտի պարտաւորէ զայն: Սրտին այս շարժումներն են արգարեւ պատճառ արեան տեղափոխութեան, արեան շրջանի:

Արիւնը մեր մարմնոյն մէջ երկու տեսակ շրջան կը կատարէ. երկայն շրջան մը որ կը կոչուի մեծ շրջան, եւ կարճ շրջան մը որ կը կոչուի փոքր շրջան:

**36. Մեծ Երջան.** — Մեծ շրջանի միջոցին, արիւնը կը մեկնի սրտին ձախ փորոքէն, ամենէն մեծ շնչերակին միջոցաւ որ կը կոչուի մայր շնչերակ (artere aorte), եւ կը հասնի մինչեւ մորթն մեր ամբողջ մարմնոյն, գլխուն մէջ, ինչպէս ոտքերուն մէջ: յետոյ երակներուն միջոցաւ ետ կուգայ եւ կը լեցուի աջ բլրակին մէջ: Հոն կը վերջացնէ իր մեծ շրջանը: Սիրտէն մեկնած ժամանակ կարմիր էր եւ անունդով բեռնաւորուած: վերադարձած ժամանակ

սեւցած է՝ մարդկային յօրինուածքին մաշումներուն հետեւանօր, եւ այլ եւս անկարող է կեանքը պահպանելու:

**37. Փոքր քրտան.** — Այ բլծակէն արիւնը կ'անցնի աչ փորոքին մէջ, ուրկէ՛ դարձեալ շնչերակի մը միջոցաւ որ կը կոչուի *թոքային շնչերակ* (artère pulmonaire)՝ կ'առաջնորդուի թոքերուն մէջ. Հոն, օդին հետ շփմամբ, կը թօթափէ այն կազերն որ զինքը անկարող կ'ընէին կեանքը պահպանելու, մասնաւորապէս ածխային թթուն (acide carbonique). եւ անոր փոխարէն օդէն կ'առնէ կենաց պահպանման համար գերազանցապէս պիտանի եղող կազը, *թթուածինը* (oxygène). Իսկոյն կը վերատանայ իր գեղեցիկ կարմիր գոյնը եւ իր գործօն յատկութիւնները, եւ այդ վիճակին մէջ կը վերադառնայ սրտին ձախ բլծակին մէջ՝ *թոքային երակներու* (veines pulmonaires) միջոցաւ. Արիւնը աւարտած է իր *փոքր շրջանը*, որ արդարեւ կարճ է, քանի որ սիրտը կը գանուի երկու թոքերուն միջեւ. Չախ բլծակէն դարձեալ կ'անցնի ձախ փորոքին մէջ, վերակսելու համար իր մեծ շրջանը:

**38. Այսպէս ուրեմն,** միեւնոյն արիւնը ամէն վայրկեան սնունդով բեռնաւորուելով, եւ յաջորդաբար ապականուելով եւ նորոգուելով, կեանքը կը պահպանեն մեր մարմնոյն ամէն մասերուն մէջ:

**39. Մարմնոյն ամէն մասերուն մէջ արեան մուտ գործելուն համար է որ,** այնչափ վտանգաւոր կամ երբեմն այնչափ փրկարար կրնայ ըլլալ երակներուն մէջ ներմուծումը կամ պատուաստումը օտար հեղուկի մը միակ կաթիլին: Թունաւոր օձը որ կը խայծէ կամ կատղած շունը որ կը խածնէ, կը պատուաստեն թոյնի մասնիկ մը որ կը բաւէ ապականելու արիւնը եւ մահ յառաջ բերելու. Ընդհակառակն, բժիշկին նշտրակին միջոցաւ մարմնոյն մազանման երակներուն մէջ մտցուած կաթիլ մը ժայրը կը բաւէ ընդհանրապէս՝ զերծ մնալու համար ծաղկախոփ հարուածներէն:

**40. Սրտին բարախումները** (pulsation) կ'զգացուին ոչ միայն կուրծքին մէջ, այլ եւ մարմնոյն այն ամէն կողմերն ուր բաւական մեծ շնչերակ մը կայ մորթին մօտ, ինչպէս կոկորդին իւրաքանչիւր կողմը. դաստակներուն մէջ, եւ այլն: Բժիշկները դաստակին շնչերակը կը գնենն ձեռքով, հիւանդին մէջ ջերմի գոյութիւնը հաստատելու համար: Երբ մարդ կանոնաւոր, առողջ վիճակի մէջ է, շնչերակը մէկ վայրկեանի մէջ պէտք է 70 անգամ գարնէ. եթէ աւելի գարնէ, հիւանդը ջերմ ունի:

**ՀԱՅՏՄՈՒՆՔ.** — Ի՞նչ է արիւնը: — Ինչո՞ւ մարմնոյն մէջ շրջան կ'ընէ: — Ի՞նչ կը պարունակէ արիւնը: — Ի՞նչ կը կոչուին այն խողովակները որոց միջոցաւ արիւնը իր շրջանը կ'ընէ: — Սրտին չորս խորշերն իրարու հետ կը հաղորդակցի՞ն: — Շնչերակներն ու երակները կը նմանին իրարու: — Նկարագրեցէ՛ք արեան մեծ շրջանը, նոյնպէս փոքր շրջանը: — Սրտին բարախումներն ո՞ւր կ'զգացուին: — Կանոնաւոր վիճակի մէջ, շնչերակը քանի՞ անգամ պէտք է գարնէ մէկ վայրկեանի մէջ:

Կ Ա Ր Ծ Ի Ք Ն Ե Ր

ԱՂԶԱՆՑ ԴԱՍԵՆԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Ես այն կարծիքէն եմ թէ պէտք է հոգածու ըլլալ աղջրկանց դաստիարակութեան՝ աւելի քան որչափ չի մտածուիր ընդհանրապէս... Գիտութիւնը զոր կը փափաքէի տարածուած տեսնել ամբողջ մարդկութեան մէջ, պարզ է, չափաւոր եւ համեստ. կը կազմէ հոգին եւ կ'ազնուացնէ զայն, առանց երբէք գէշ կիրքերը զրգուելու եւ զանոնք գոհացնելու միջոցներ ստեղծելու... Աղջկանդ միտքը շրջաթայել եւ կաշկանդել, զանկայ անասուն ընել է:

# ՄԻՋՈՑԻ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹԻՒՆ

(Տես էջ 216—229)


## ԿԻՐԱՐԿՈՒԹԻՒՆՔ

**41. ՔԱՐԱԿՈՅՏԵՐՈՒ ԾԱԽԱԼԸ.** — 1<sup>0</sup> **Եթէ** քարակոյտը (կրնայ ըլլալ նաեւ միակաւոր քար մը) սուր եզերքով կաւարաի, ինչպէս ցոյց կուտայ Ձեւ 29)ը, կը բազմապատկենք ԲԿ լայնութեան կէտը՝ ԽԿ բարձրութեամբ (որ զի բաւ կրնայ գտնուիլ՝ ԽԼ անկիւնագծին վրայ քանակ մը դնելով)։ յետոյ արտադրեալը կը բազմապատկենք երեք անկիւնագծերուն զուտարին  $\frac{1}{3}$  ով։ Այսինքն,


$$\text{Մաւալ} = \frac{\text{ԲԿ}}{2} \times \text{Բ} \times \frac{\text{ԱԲ} + \text{ԴԴ} + \text{ԽԼ}}{3}$$

**ՕՐԻՆԱԿ.** — Գտնել ծաւալն սուր անկիւնագծով վերջացող քարակոյտի մը՝ որուն ուղղանկիւն խարիսխն ունի 2մ,75 երկայնութիւն եւ 1մ,50 լայնութիւն, վերին անկիւնագծին է 2 մէթր, բարձրութիւնը՝ 0մ,80։

$$\text{Մաւալ} = \frac{1,50}{2} \times 0,80 \times \frac{2,75 + 2,75 + 2}{3} = 0,6 \times \frac{7,5}{3} = 1 \text{մ}^3,50$$



Ձեւ 29



Ձեւ 30

2<sup>0</sup> **Եթէ** քարակոյտին վերին մասը ուղղանկիւն մը ձեւացած է, ինչպէս Ձեւ 30 ին մէջ, նախ՝ երկու ուղղանկիւն խարիսխներէն զատ, երրորդ ուղղանկիւն մ'եւս կը կազմենք՝ խարիսխներէն հաւասար հեռաւորութեամբ։ Յետոյ, կը գումարենք երկու խարիսխներուն ուղղանկիւնները եւ երրորդ ուղղանկեան քառապատիկը, եւ գումարով կը բազմապատկենք բարձրութեան  $\frac{1}{6}$ ը։

Բարձրութիւնը նշանակենք բ ով, եւ երեք ուղղանկիւնները՝ Ո, Ո', Ո'' ով։ Պիտի ունենանք՝

$$\text{Մաւալ} = \frac{\text{բ}}{6} (\text{Ո} + \text{Ո}' + 4\text{Ո}'')$$

**ՕՐԻՆԱԿ.** — Առնենք քարակոյտ մ'որ ունենայ հետեւեալ տարածութիւնները։ բ=0մ,6.

$$\text{ԱԳ} = 0,80. \quad \text{ԱԴ} = 3մ,40.$$

$$\text{ազ} = 0,40. \quad \text{ադ} = 3մ.$$

Հաշուենք խարիսխներուն մակերեւոյթը.

$$\text{Խ} = 3,4 \times 0,8 = 2,72$$

$$\text{Խ}' = 3 \times 0,4 = 1,2$$

Ունենալու համար Խ'' խարիսխին մակերեւոյթը, կը զըտնեմ իր երկու տարածութիւնները (այսինքն երկայնութիւնը եւ լայնութիւնը)։ Արդ, այս խարիսխ՝ միւս երկու խարիսխներէն հաւասարապէս հեռու գտնուելով, իր տարածութիւնները՝ խարիսխներուն տարածութիւններուն միջինը կը կազմեն, այսինքն

$$\text{մի} = \frac{\text{ԳԱ} + \text{զա}}{2} = \frac{0,80 + 0,40}{2} = 0,60$$

$$\text{իկ} = \frac{\text{ԱԴ} + \text{ադ}}{2} = \frac{3,4 + 3}{2} = 3,20$$

$$\text{Ուրեմն, } \text{Խ}'' = 0,60 \times 3,20 = 1,92մ,62$$

Հետեւաբար,


$$\text{Մաւալ} = \frac{0,6}{6} (2,72 + 1,2 + 1,62 \times 4) = 1 \text{մ}^3,040$$

**42. ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ Ա.** — Գործնականի մէջ, քարի կտորաւանք չափելու համար, կը գործածուի սուսի մը որուն ո՛չ յատակը կայ ո՛չ վրան։ Այս սուսի սովորաբար մէկ խորանարդ մէթր պարունակութիւն ունի։ Տուփին մէջ քար կը լեցնենք մինչեւ բերանը, եւ կ'ունենանք մէկ խորանարդ մէթր քար (Ձեւ 31)։

43. ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ Բ. Միեւնոյն կերպով կրնանք գըտնել սայլակի մը, զառ ի վայր կողեր ունեցող փոսի մը, զաշտի մը, եւայլն, ծաւալը:



Ձեւ 31



Ձեւ 32

ՕՐԻՆԱԿ. — Ո՞րչափ պարունակութիւն ունի տաշտ մը (Ձեւ 32), որուն բերանի երկայնութիւնն է 2 մէթր, լայնքը՝ 0մ.80. յատակի երկայնութիւնն է 1մ.60, լայնքը՝ 0մ.40. խորութիւնն է 0մ.70:

Կը գտնեմ խարիսխներէն հաւասարապէս հեռու գտնուող ուղղանկեան մակերեւոյթը:

Այդ ուղղանկեան երկայնութիւնն է  $\frac{2+1.6}{2}=1.80$ .

» » լայնութիւնն է  $\frac{0.80+0.40}{2}=0.6$ .

» » մակերեւոյթն է  $1.8 \times 0.6 = 1.08$  մ.:

Վերին խարիսխն մակերեւոյթը՝  $2 \times 0.8 = 1.6$  մ.:

Ստորին » »  $1.6 \times 0.4 = 0.64$  մ.:

Տաշտին պարունակութիւնն է՝

$\frac{0.70}{6}(1.6 \times 0.64 + 4 \times 1.08) = 0.765$  մ.:

Խ Ն Գ Ի Բ Ի Ք

ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԻՆ ՄԱԿԵՐԵԻՈՅԹԸ. — 1. Ի՞նչ է 5 մէթր կողմով խորանարդի մը ամբողջական մակերեւոյթը:

2. Ո՞րչափ է կողմն խորանարդի մը որուն կողմնակի մակերեւոյթն է 0.9 մ, 0.648:

3. Ո՞րչափ է կողմն խորանարդի մը որուն ամբողջական մակերեւոյթն է 11.76 մ.:

4. Ո՞րչափ է կողմնակի մակերեւոյթն զուգահեռանի մը որ ունի 5 մէթր երկայնութիւն, 3 մէթր լայնութիւն եւ 8 մէթր բարձրութիւն:

5. 7 մէթր բարձրութեամբ ուղղանկին զուգահեռանի մը կողմնակի մակերեւոյթն է 63 քառակուսի մէթր. ո՞րչափ է խարիսխն շրջաչափը:

6. Ո՞րչափ է կողմնակի մակերեւոյթն ուղիղ հատուածակողմի մը որուն խարիսխն շրջաչափն է 7 մէթր, բարձրութիւնն ըլլալով 7 մէթր:

7. Ո՞րչափ է բարձրութիւնն ուղիղ հատուածակողմի մը որուն կողմնակի մակերեւոյթն է 10.4 մ, 40, գիտնալով որ խարիսխն է 2մ, 60 կողմով կանոնաւոր հնգանկին մը:

8. Ի՞նչ է 0մ, 60 երկայնութիւն, 0մ, 50 լայնութիւն եւ 0մ, 40 խորութիւն ունեցող մետրակի մը զինը, քառակուսի մէթրը 3, 40 ֆրանքէն հաշուելով:

9. 9 մէթր երկայնութիւն, 7մ, 50 լայնութիւն եւ 4մ, 20 բարձրութիւն ունեցող սրահի մը պատերն ու առաստաղը ներկել տուինք, պատերուն ք.մէթրը 0, 30 ֆրանքի եւ առաստաղին քառ.մէթրը 0, 60 ֆրանքի հաշուով: Ի՞նչ ծախսեցինք:

10. Ո՞րչափ է բոլոր անկիւնագծերուն երկայնութեանց զուամարը խորանարդի մը, որուն ամբողջական մակերեւոյթն է 24 քառ. մէթր:

11. Ծեփել տուինք յատակը եւ կողմնակի երեսներն շրամարի մը, որուն խարիսխն կողմն է 1մ, 40, եւ խորութիւնն է 3մ, 20: Ո՞րչափ ծախսեցինք, քառ. մէթրը 15 շրունչէն հաշուելով:

ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԻՆ ԾԱԽԱԼԸ. — 12. Ի՞նչ է ծաւալն 2մ, 80 կողմ ունեցող խորանարդին:

13. Ի՞նչ է ծաւալն խորանարդին որուն ամբողջական մակերեւոյթն է 24 քառ. մէթր:

14. Ի՞նչ է ծաւալն խորանարդի մը որուն անկիւնագծերուն զուամարն է 48 մէթր:

15. Ի՞նչ է ծաւալն եռանկիւնաձեւ հատուածակողմի մը որ ունի 1մ,60 բարձրութիւն, եւ որուն խարիսխին մակերեւոյթն է 0քմ,48:

16. Հաշուել ծաւալն հատուածակողմի մը որոց խարիսխները՝ 0մ,52 խարիսխ եւ 0մ,36 բարձրութիւն ունեցող եռանկիւններ են, հատուածակողմին բարձրութիւնն ըլլալով 3մ,20:

17. Հատուածակողմի մը խարիսխն է երկկողմնազոյգ ուղղանկիւն եռանկիւն մը որուն ուղիղ անկեան կողմերէն իւրաքանչիւրին երկայնութիւնն է 1մ,15. Ի՞նչ է այս հատուածակողմին ծաւալը, իր բարձրութիւնն ըլլալով 0մ,90:

18. Գտնել քառակուսի խարիսխով ուղիղ զուգահեռոտնի մը ծաւալը, կողմնակի մակերեւոյթն ըլլալով 3քմ,4720, եւ բարձրութիւնը՝ 1մ,40:

19. Պատուանդան մը շինուած է քառակուսի զուգահեռոտնի մը ձեւով որ ունի 0մ,80 կողմով խարիսխ եւ 2մ,78 բարձրութիւն. ո՞րչափ արժած է՝ խորանարդ մէթրը 80 ֆրանքի հաշուով:

20. Քանի՞ խորանարդ մէթր օդ կը պարունակէ սենեակ մը որ ունի 6 մէթր երկայնութիւն, 5մ,40 լայնութիւն եւ 3մ,60 բարձրութիւն:

21. Գտնել անկիւնագծով մը վերջացող քարակոյտի մը ծաւալը, գիտնալով որ ուղղանկիւն խարիսխին երկայնութիւնը 3 մէթր եւ լայնութիւնը 1,5 մէթր է. վերին անկիւնագիծն է 2 մէթր. բարձրութիւնը 0մ,50:

22. Գտնել անկիւնագծով մը վերջացող քարակոյտի մը ծաւալը, գիտնալով որ ուղղանկիւն խարիսխին երկայնութիւնը 13,6 մէթր եւ լայնքը 2մ,4 է. վերին անկիւնագիծն է 11մ,2. բարձրութիւնը՝ 1մ,20:

# Տ Ի Ե Ջ Ե Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն


## Գ Ա Ս Ը

### Բ Ա Ր Ջ Ր Ա Գ Ո Յ Ն Գ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք Ի Մ Է Ջ

(Տես էջ 211—215)

#### ԵՐԿՐԱԳՈՒՆՏԻՆ ԳԻԾԵՐԸ ԵՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Երկրային առանցք եւ բեւեռք. — Ինչպէս յետոյ պիտի տեսնենք, գննութիւններով եւ տեսականօրէն ապացուցուած է թէ Երկրի ընդհանուր ձեւը գունտի մը ձեւն է. եւ թէ Երկիրը, Արեւուն շուրջը դառնալով եւ ձուածիր մը գծելով հանդերձ. միեւնոյն ժամանակ թառաչման (rotation) շարժում մը կը կատարէ ամէն օր՝ իր տրամա-



գծերէն մէկուն շուրջը որ կը կոչուի առանցք: Այս առանցքին երկու ծայրերը կը կոչուին բեւեռք:

Եւրոպիոյ ամենէն աւելի մօտ գտնուող Բեւեոք կը կոչուի Հիւսիսային կամ Արջային քեւեռ. միւսը կը կոչուի Հարաւային կամ Հակարջային քեւեռ.

Երկրի առանցքը, անսահման կերպով դէպի երկնային կամարը երկարաձգուելով, յառաջ կը բերէ աշխարհի առանցքը, այսինքն այն մտացածին գիծը որուն վրայ, մեր գունտին թաւալման շարժումին հետեւանօք, մեզ կը թուի թէ բոլոր երկնային մարմիններն իրենց օրական շրջանը կ'ընեն մեր գունտին շուրջը:

Երկնքին այն երկու կէտերը որոնք աշխարհի առանցքին երկու ծայրերուն կը համապատասխանեն, կը կոչուին երկնային քեւեռներ կամ աշխարհի քեւեռները:

Հասարակած. — Հասարակածը՝ Երկրի առանցքին ուղղահայեաց մեծ շրջանակ մ'է:

Գունտի մը մեծ շրջանակը կը կոչուի այն շրջանակը որուն մակարդակը կ'անցնի գունտին կեդրոնէն:

Հասարակածը մեր գունտը կը բաժնէ երկու կիսագունտերու, Հիւսիսային կիսագունտի եւ Հարաւային կիսագունտի:

Երկրի հասարակածին մակարդակը, նկատուելով իրրեւ երկնային գունտին մեծ շրջանակը, կը կազմէ երկնային հասարակածը:

Երկնային հասարակածը երկնային գունտը կը բաժնէ երկու կիսագունտերու որոնք նոյն անունները կ'առնեն, ինչ անուններ որ ունին իրենց համապատասխանող երկրային կիսագունտերը:

Տեղւոյ մը ուղղահայեացքը. — Տեղւոյ մը ուղղահայեացքը (verticale) կը կոչուի այն մտացածին ուղիղ գիծը որ կ'անցնի Երկրի կեդրոնէն եւ այն տեղէն: Հորիզոնական կ'ըսուի որ եւ է ուղիղ գիծ որ ուղղահայեաց է ուղղահայեացին:

Ձէնիք եւ Նասիր. — Այն երկու կէտերը, ուր երկնային գունտին կը հանդպի անսահման կերպով երկարաձգուած

ուղղահայեացքը, կը կոչուին նոյն տեղւոյն, մին՝ Ձէնիք կամ գազարնակէսը, միւսը՝ Նասիր կամ սուզակէսը:

Ձէնիթը սոյն երկու կէտերէն այն է զոր նոյն տեղւոյն մէջ գտնուող մէկը պիտի ունենայ իր գլխոյն վերեւ. նատիրը՝ գէնիթին տրամագծապէս հակադիր կէտն է:

Հորիզոն. — Երեւակայենք Երկրի կեդրոնէն անցնող մակարդակ մը որ ուղղահայեաց ըլլայ տեղւոյ մը ուղղահայեացին: Այս մակարդակը երկնային գունտը պիտի բաժնէ երկու կիսագունտերու որոց մին վերին կիսագունտի կը կոչուի եւ կը կազմէ երկնքի այն մասը որ այն տեղւոյն մէջ տեսանելի է. միւսը ստորին կիսագունտի կը կոչուի եւ կը կազմէ երկնքի այն մասը որ այն տեղւոյն մէջ անտեսանելի է: Ահա՛ այս մակարդակն է որ, երկնային գունտին իրրեւ մեծ բոլորակը կը նկատուի եւ կը կոչուի իմանալի հորիզոն (horizon rationnel). Զգալի կամ տեսանելի հորիզոն (horizon visuel) կը կոչուի այն փոքր շրջանակը որ Երկրի մակերեւութին վրայ գիտողի մը տեսութեան սահման կը դնէ:

Գիտող մը քանի բարձրանայ այս մակերեւոյթէն վեր, իր տեսանելի հորիզոնը կ'ընդարձակուի: Երկրի մակերեւոյթէն վեր մէկ մէթր բարձրութեան վրայ կեցող աչքի մը համար, տեսանելի հորիզոնին բոլորակին (cercle) շառուիղն է  $3\frac{1}{2}$  հազարամէթր. 10 մէթր բարձրութեան վրայ՝ 11 հազարամէթր. 100 մէթր բարձրութեան վրայ՝ 36 հազարամէթր. 1000 մէթր բարձրութեան վրայ՝ 113 հազարամէթր, եւ Մօն Պլանի գագաթին, այսինքն 4810 մէթր բարձրութեան վրայ՝ 247 հազարամէթր:

Գլխաւոր կողմունք. — Արեւելք կը կոչուի հորիզոնին այն կէտն ուր կը թուի մեզ թէ երկնային լուսաւոր մարմին մը կը ծագի: Արեւմուտք կը կոչուի այն կէտն ուր կը թուի մեզ թէ լուսաւոր մարմին մը մարը կը մտնէ (1):

(1) Առաջագրուած տեղ մը, երկնային մարմին մը մեզ կը թուի թէ կը ծագի, երբ երեւի նոյն տեղւոյն իմանալի

Երբ մեր ւաջ կողմն ունինք Արեւելքը, եւ ճախ կողմն՝ Արեւմուտքը մեր առջեւի կողմը կ'ունենանք Հիւսիսը, եւ մեր ետեւը՝ Հարաւը:

Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս, Հարաւ, ասոնք կը կոչուին չորս գլխաւոր կողմեր:

Այս չորս գլխաւոր կողմերուն միջեւ, կան ուրիշ չորս կողմեր եւս որք են:

Հիւսիսային-Արեւելք՝ Հիւսիսին եւ Արեւելքին միջեւ.  
Հիւսիսային-Արեւմուտք՝ Հիւսիսին եւ Արեւմուտքին միջեւ:

Հարաւային-Արեւելք՝ Հարաւին եւ Արեւելքին միջեւ.  
Հարաւային-Արեւմուտք՝ Հարաւին եւ Արեւմուտքին միջեւ:


Հիւսիսին ուղղութիւնը մտաւորապէս կ'որոշուի Բեւեռային լուսաւոր մարմինէն, եւ Հարաւին ուղղութիւնը՝ մեր երկիրներուն մէջ՝ կէս օրին Արեւին ունեցած դիրքէն:

Կողմնացոյց. — Նաւարկուք, ծովերու մակերեւութին վրայ շարունակ հորիզոնին կողմերը կարենալ որոշելու համար, կը գործածեն կողմնացոյց կոչուած գործիք մը, որուն գլխաւոր մասը կը կազմէ շարժուն եւ հորիզոնական մագնիսացեալ սլաք մը. այս սլաքին ծայրերէն մին, երկրի մագնիսականութեան ազդեցութեան ներքեւ, միշտ դէպ ի Հիւսիս կը դառնայ. միւս ծայրը դէպ ի Հարաւ կը դառնայ, մի միայն մէկ քանի աստիճաններու տարբերութեամբ:


Երկրային զուգահեռականք. — Երկրային զուգահեռական կը կոչուին երկրագունտին այն փոքր շրջանակները որոց բոլորակը կամ մակարդակը զուգահեռական է Հասարակածին մակարդակին եւ հետեւաբար ուղղահայեաց է Երկրի առանցքին, Կարելի է երեւակայել անձիւ

հորիզոնին մակարդակէն վեր. մեզ կը թուի թէ մարը կը մտնէ, երբ աներեւութանայ նոյն մակարդակէն վար:

զուգահեռականներ, քանի որ Երկրի մակերեւութին ամէն մէկ կէտէն կարելի է մէկ մէկ զուգահեռական անցունել (երեւակայութեամբ): Զուգահեռականք Երկրի մակերեւոյթը կը բաժնեն երկու անհաւասար մասերու:



Երկնային զուգահեռականք



Միջօրեականք

Երկնային զուգահեռականները երկնային գունտին փոքր շրջանակներն են որոց մակարդակները ուղահայեաց են աշխարհի առանցքին: Յայտնի է թէ երկնային զուգահեռականք՝ երկրային զուգահեռականաց երկայնու մը չեն:

Արեւագարձ եւ բեւեռային օջանակք. — Զուգահեռականաց մէջ ամենէն կարեւորներն են արեւադարձները եւ բեւեռային շրջանակները:

Արեւագարձները երկու զուգահեռականներ են, որոց մին Հիւսիսային կիսագունտին մէջ կը գտնուի, միւսը՝ Հարաւային կիսագունտին մէջ, եւ իւրաքանչիւրը Հասարակածէն 23° 27' հեռու կը մտածուին:

Հիւսիսային կիսագունտին մէջ գտնուած Արեւագարձը կը կոչուի Արեւադարձ խեցգեղնի (tropique du Cancer), եւ Հարաւային կիսագունտին մէջ գտնուած Ա-





րեւադարձը՝ Արեւադարձ Այծեղջեր (tropique du Capricorne):

Արեւադարձները կ'որոշեն Արեւուն՝ Երկրի շուրջն ըրած երեւութական եւ տարեկան ընթացքին սահմանները:

Երկնային արեւադարձները երկնային գունտին փոքր շրջանակներն են, որոնք 23° 27' հեռու կը գտնուին երկնային հասարակածին մակերեւութէն:

Բեւեռային շրջանակները երկրային երկու գուգահեռականներ են, որոնք Երկրի բեւեռներուն մօտ կը զտնուին եւ 23° 27' հեռու, մին՝ Հիւսիսային բեւեռէն, միւսը՝ Հարաւային բեւեռէն:

Երկրային գօտիներ. — Արեւադարձները եւ բեւեռային շրջանակները Երկրի մակերեւոյթը կը բաժնեն հինգ գօտիներու, որք են. Այրեցեալ գօտին որ կը գտնուի երկու Արեւադարձներուն միջեւ եւ որ երկու հաւասար մասերու բաժնուած է Հասարակածէն. երկու Բարեխառն գօտիները որոնք կը գտնուին իւրաքանչիւր Արեւադարձի եւ մօտակայ բեւեռային շրջանակին միջեւ. երկու Սառուցեալ կամ Բեւեռային գօտիները կը տարածուին՝ իւրաքանչիւր կիսագունտին մէջ՝ բեւեռային շրջանակէն մինչեւ բեւեռ:

Այրեցեալ գօտիին մակերեւոյթը 0,40 մասն է ամբողջ երկրի մակերեւոյթին. Բարեխառն գօտիներէն իւրաքանչիւրին մակերեւոյթը 0,26 մասն է, եւ Սառուցեալ գօտիներէն իւրաքանչիւրին մակերեւոյթը՝ 0,04 մասը:

Միջօրէական. — Միջօրէական կը կոչուին Երկրի այն մեծ շրջանակները որոնք երկու բեւեռներէն կ'անցնին:


Տեղւոյ մը միջօրէականը այն մեծ շրջանակն է որ կ'անցնի բեւեռներէն եւ այն տեղէն:

Իւրաքանչիւր միջօրէական Երկիրը կը բաժնէ երկու կիսագունտերու, Արեւելեան կիսագունտս եւ Արեւմտեան կիսագունտս:

Իւրաքանչիւր միջօրէական Երկրին առանցքովը կը բաժնուի երկու կէս-շրջանակներու կամ կէս-միջօրէականներու: Այն կէս-միջօրէականը որուն վրայ կը գտնուի առաջադրեալ տեղ մը, կը կոչուի այն տեղւոյն յերին միջօրէականը. այն կէս-միջօրէականը՝ որ այս վերջնոյն հետ ամբողջ միջօրէական մը կը կազմէ, կը կոչուի իր ստորին միջօրէականը:

Իւրաքանչիւր միջօրէականի մակարդակը, երբ երկնային գունտին մէկ մեծ շրջանակը նկատուի, Երկնային միջօրէական անունը կ'առնէ:

Երկայնութիւն. — Այն անկիւնը զոր տեղւոյ մը միջօրէականին մակարդակը կը կազմէ Առաջին միջօրէական կոչուած պայմանադրական միջօրէականի մը մակարդակին հետ, կը կոչուի այն տեղւոյն երկայնութիւնը: Կամ թէ ըսենք, տեղւոյ մը երկայնութիւնը կը կոչուի այն հեռաւորութիւնը որ կայ նոյն տեղւոյն եւ Առաջին միջօրէականին միջեւ: Այս հեռաւորութիւնը աստիճաններով կը չափուի



առաջին միջօրէականին եւ այն տեղւոյն միջօրէականին միջեւ գտնուած Հասարակածին աղեղին վրայ, կամ տեղւոյն

վերին միջօրէականին եւ առաջին միջօրէականին միջեւ գըտնուող զուգահեռականի մը աղեղին վրայ :

Տեղւոյ մը երկայնութիւնը Արեւելեան է կամ Արեւմտեան , եթէ այս տեղը կը գտնուի առաջին Միջօրէականին Արեւելեան կամ Արեւմտեան կողմը : Առաջին Միջօրէականէն սկսելով , Հասարակածը դէպ ի Արեւելք եւ դէպ ի Արեւմուտք 180 ակնան աստիճան կը բաժնուի . դէպ ի Արեւելք նշանակուած աստիճանները կ'ըսուին Արեւելեան երկայնութեան աստիճաններ . դէպ ի Արեւմուտք նշանակուածները՝ Արեւմտեան երկայնութեան աստիճաններ : Այս երկու թուոց գումարը կը կազմէ 360° կամ Հասարակածին ամբողջ շրջապատը :

Երկրի մակերեւութին այն բոլոր կէտերը որոնք միեւնոյն կէտմիջօրէականին վրայ կը գտնուին , միեւնոյն երկայնութիւնն ունին :


Որովհետեւ բոլոր Միջօրէականները հաւասար են , ամէն ալ կրնան իբրեւ առաջին միջօրէական առնուիլ . Ֆրանսացիք՝ 1791 էն ի վեր՝ առաջին միջօրէական ընտրած են այն միջօրէականը որ կ'անցնի Բարիզի Դիտարանէն : Լուդովիկոս ԺԳ. ի թագաւորութեան օրով , իր հռչակաւոր նախարարը Րիչլիէօ , իբրեւ առաջին միջօրէական ընդունել տուաւ այն միջօրէականը որ կ'անցնի Երկաթի կղզիէն , Գանարեան կղզիներուն մէջ ամենէն աւելի Արեւմտեանը : Անգղիացիք առաջին միջօրէական ընդունած են այն միջօրէականը որ կ'անցնի Կրինիչի Դիտարանէն :

Տեղւոյ մը երկայնութեան աստիճանը կը գտնուի՝ նոյն տեղւոյն եւ առաջին միջօրէականին ժամերուն տարբերութիւնը 15 ով բազմապատկելով (1) :

(1) Երկնային լուսաւոր մարմիններուն օրական շարժումը միաձեւ է եւ կը կատարուի 24 ժամուան մէջ : Ուրեմն երկնային լուսաւոր մարմին մը զանազան միջօրէականներէ կ'անցնի 24 ժամուան մէջ : Մէկ ժամուան մէջ կը շրջի 15°

Տեղւոյ մը ժամուն՝ առաջին միջօրէականին ժամէն աւելի կամ նուազ յառաջացած ըլլալէն կը հասկցուի՝ նոյն տեղւոյն երկայնութեան Արեւելեան կամ Արեւմտեան ըլլալը :

Լայնութիւն . — Տեղւոյ մը լայնութիւնը կը կոչուի այն անկիւնը զոր այն տեղւոյն ուղղաձիգը կը կազմէ Հասարակածին մակարդակին հետ : Կամ թէ ըսենք , տեղւոյ մը լայնութիւնը կը կոչուի այն հեռաւորութիւնը որ կայ այն տեղին եւ Հասարակածին միջեւ : Այս հեռաւորութիւնը աս-



տիճաններով կը չափուի այն միջօրէականին վրայ որ կ'անցնի այն տեղէն եւ Հասարակածէն : Իւրաքանչիւր քառորդ-Միջօրէական կրնայ 90 աստիճաններու բաժնուիլ Հասարակածին եւ Բեւեռին միջեւ : Եթէ Հասարակածին զուգահեռա-

աղեղ մը , իսկ մէկ վայրկեանի մէջ կը շրջի 15° աղեղ մը , եւայն : Ուրեմն , տեղւոյ մը միջօրէականին եւ առաջին միջօրէականին ժամերուն միջեւ քանի՜ վայրկեան որ տարբերութիւն կայ , զայն բազմապատկելու է 15 ով՝ նոյն տեղւոյն երկայնութեան աստիճանը գտնելու համար :

կան շրջանակներ անցունենք այս 90 աստիճաններէն, գունտին վրայ կը նշանակուին լայնութեան աստիճանները: Լայնութեան աստիճանը Հասարակածին վրայ 0 է, եւ իւրաքանչիւր Բեւեռի վրայ՝ 90°:

Լայնութիւնը Հիւսիսային է Հիւսիսային կիսագունտին մէջ գտնուող ամէն երկրի համար. Հարաւային է՝ Հարաւային կիսագունտին մէջ գտնուող ամէն երկրի համար:

Միեւնոյն զուգահեռականին վրայ գտնուող բոլոր կէտերը միեւնոյն լայնութիւնն ունին:

Նշանակելու համար թէ տեղւոյ մը լայնութիւնը Հիւսիսային է կամ Հարաւային, յաճախ + եւ — նշանները կը գործածուին: Օրինակ, Բարիլի լայնութիւնն է + 48°50', Պուէնոզ-Այրէսինը՝ — 34°36':

Տեղւոյ մը լայնութիւնը հաւասար է՝ այն տեղւոյն հորիզոնին վերեւ երկնային բեւեռին բարձրութեան: Ուրեմն, երբ տեղւոյ մը լայնութիւնը կ'ուզենք գիտնալ, կը բաւէ որոշել երկնային բեւեռին բարձրութիւնը: Այս բարձրութիւնը կը գիտցուի՝ գործիննրու միջոցաւ չափելով երկնային բեւեռին մօտ գտնուող երկնային լուսաւոր մարմիններէն որ եւ է մէկը:

Երկայնութեան եւ լայնութեան աստիճանները որոշելու համար երկրագունստեռու գործածութիւնը. — Տեղւոյ մը լայնութեան աստիճանը գիտնալու համար, երկրագունտը իր առանցքին վրայ կը դարձնենք մինչեւ որ հաստատուն միջօրէականը այս տեղւոյն վրայ գայ: Հոն, հաստատուն միջօրէականին վրայ նշանակուած աստիճանը՝ տեղւոյն լայնութեան աստիճանն է: Այն ատեն, նոյն տեղւոյն երկայնութեան աստիճանը պիտի կարգացուի Հասարակածին այն կէտին վրայ ուր այս շրջանակը կը գտնուի հաստատուն միջօրէականին ներքեւ:

Երկրագունտերուն բեւեռին վրայ հաստատուած ժամացուցին միջոցաւ, կրնանք որ եւ է տեղւոյ մը ժամը գիտնալ, երբ ուրիշ տեղ մը կէս օր է: Ասոր համար, Միջօրէա-

կանին տակ բերելու է այս վերջին տեղը, ժամացուցին սլաքը կէս օրուան վրայ բերելէ յետոյ: Այն ատեն դարձնելու է գունտը մինչեւ որ միջօրէականը գտնուի այն տեղւոյն վրայ որուն ժամը կը փնտռենք: Ժամացուցին վրայ սլաքը ցոյց պիտի տայ փնտռուած ժամը: Կէս օրէն ետքի ժամերը կը ցուցնէ, եթէ դէպի Արեւելք դարձուցինք գունտը. հակառակ պարագային մէջ կը ցուցնէ կէս օրէն առջի ժամերը:

Օգտակարութիւն երկայնութեան եւ լայնութեան. — Ծովերուն միջտեղ իր ճամբան գտնել ուզող նաւարկուին համար անհրաժեշտ է ճշգրիւ գիտնալ երկրագունտին այն տեղն ուր կը գտնուի ինքն:

Նոյնպէս աշխարհացոյց մը գծել ուզող աշխարհագէտին համար անհրաժեշտ է որ կարենայ ճշգրիւ որոշել աշխարհացուցին այն կէտը ուր պարտի դնել քաղաք մը, լիճ մը, լեռ մը, եւ այլն:

Թէ՛ նաւարկուն եւ թէ՛ աշխարհագէտը այս արդիւնքը ձեռք կը բերեն՝ որոշելով երկայնութիւնը եւ լայնութիւնը. վասն զի այն կէտը, ուր տեղւոյ մը միջօրէականը այն տեղէն անցնող զուգահեռական շրջանակը կը կարէ, ճշգրիւ կ'որոշէ այն տեղւոյն աշխարհագրական դիրքը:

Ծիր խաւարման. — Ծիր խաւարմանը (Ecliptique) շրջանակ մ'է որ շեղակի կը կտրէ երկրագունտը եւ զայն երկու հաւասար մասերու կը բաժնէ: Կ'անցնի Հասարակածին երկու հակընդդէմ կէտերէն որոնք կը կոչուին Գիշերահաւասար (équinoxe) կամ Գիշերահաւասարային կէտեր (points équinoxiaux): Այս շրջանակ, որուն ուղղութեամբ Արեւը մէկ տարուան միջոցի մէջ երեւութական շրջան մը կ'ընէ երկրի շուրջը<sup>(1)</sup>, Ծիր խա-

(1) Մինչդեռ երկիրը Արեւուն շուրջը կը դառնայ, մեզի այնպէս կ'երեւայ որ Արեւը երկրին շուրջը կը դառնայ: Այս երեւութական ուղին է որ երկրագունտերուն վրայ կը նշանակուի Ծիր խաւարման ըսուած շրջանակով:

շարունակ կը կոչուի անոր համար որ այս գծին վրայ է որ կը պատահին արեւուն եւ լուսնոյ խաւարումները :

Երկրագունտին վրայ, Ծիր Խաւարմանը Հասարակածէն վեր կը բարձրանայ մինչեւ Արեւադարձ Խեցգետնի, եւ Հասարակածէն վար կ'իջնէ մինչեւ Արեւադարձ Այծեղջերու բեմն Հասարակածին վրայ հակած է 23° 37' : Վերին մասը կը կոչուի Հիւսիսային, ստորին մասը՝ Հարաւային : Մարտ 21 ին (Քարուն), Արեւը, գիշերահաւասարի պահուն, կը թողու Հասարակածը . արեւմուտքէն արեւելք եռամեայ երեւութական ընթացքէ մը յետոյ՝ կը հասնի Արեւադարձ Խեցգետնիին (Ամառ), որ իր բարձրացման վերջակէտն է : Այն կէտը ուր Ծիր Խաւարմանը Արեւադարձ Խեցգետնիին կը դպի, կը կոչուի Ամառնային արեւակայ (solstice) : Անմիջապէս Արեւը կը թողու Արեւադարձ Խեցգետնին եւ վերստին դէպի Հասարակած կ'իջնէ (Աշուն) : Այս էջքը կը կատարէ երեք ամսուան մէջ, ինչպէս վերելքը կատարեց երեք ամսուան մէջ . ճամբուն երկայնութիւնը հաւասար է : Այդ կէտին կը հասնի Սեպտեմբեր 22 ին . երեք ամիս յետոյ՝ կը հասնի Արեւադարձ Այծեղջերին, որ է Զմեռնային արեւակայն : Այնուհետեւ Արեւը կը բարձրանայ եւ վերստին կ'սկսի իր տարեկան ընթացքը :

Պէտք չէ շփոթել Արեւուն տարեկան առերեւոյթ շրջանը՝ իր արեւելքէն արեւմուտք օրական առերեւոյթ շրջանին հետ : Բայց, երբ մէկ կողմէն Արեւը մեզ կը թուի թէ կը ծագի եւ մարը կը մտնէ, միւս կողմէն կ'ենթադրուի թէ միջոցին մէջ ալ կը յառաջանայ արեւմուտքէն արեւելք . այնպէս որ այս շարժման հետեւանօք, որ կը կատարուի հակառակ ուղղութեամբ, վաղը չի պիտի ծագի երկնից այն կէտին վրայ ուր այս առաւօտ ծագեցաւ . այդ կէտին պիտի գայ միայն մէկ տարիէն՝ երբ Ծիր Խաւարման ամբողջ շրջանակը շրջած ըլլայ :

Զողիակոս կամ կենդանակամար . — Զողիակոսը 17<sup>0</sup> լայ-

նութիւն ունեցող գօտի մ'է որուն մէջտեղէն կ'անցնի Ծիր Խաւարմանը՝ զայն բաժնելով երկու համաչափ մասերու :

Հիները Զողիակոսը բաժնած են տասն երկու մասերու, որոցմէ իւրաքանչիւրը կը պարունակէ՝ Ծիր Խաւարմանին վրայ՝ 30<sup>0</sup>, քանի որ Ծիր Խաւարմանը 360<sup>0</sup> ի բաժնուած է : Սոյն տասն եւ երկու հաւասար բաժանումները կոչուած են Զողիակոսի նշաններ . ասոնք կը համապատասխանէին երկնային լուսաւոր դուռերու 12 համախմբումներու, որոց դէմ առ դէմ կ'անցնէր Արեւը յաջորդաբար (1) : Ըստ այսմ, բնական էր Խոյ կոչել Զողիակոսին առաջին բաժանումը, Յուշ կոչել երկրորդ բաժանումը, եւ այսպէս միւսները : Բայց, Խոյին նշանը (2), փոխանակ անիփոխ կէտ մը բռնելու Հասարակածին վրայ, Երկնից օրական թաւալման ուղղութեամբ կը շարժի : Իպպարքոսէն, այսինքն իբր 2000 տարիէ ի վեր, այդ նշան յառաջացած է իբր 30<sup>0</sup>, եւ այսօր կը գտնուի գրեթէ Զիւռնի համաձայնութեան ծայրը : Ասկէ կը հետեւի թէ, երկնային հասարակածին առաջին 30 աստիճաններն այլ եւս չեն պարունակեր՝ ինչպէս երբեմն՝ Խոյի համախմբութիւնը, թէ եւ մինչև վերջին ժամանակս պահուած են նշաններու հին բաժանումը, ինչպէս նաեւ անոնց յատկացուած անունները : Ուրեմն պէտք է գիտնալ որ, Զողիակոսի նշանները ցոյց կուտան այն յաջորդական դիրքերը զորս Արեւը կը թուի բռնել իր տարեկան ընթացքին մէջ, եւ պէտք չէ Զողիակոսի նշանները շփոթել այն համախմբութեանց հետ որոց անունը կը կրեն տակաւին այսօր :

Ահաւասիկ Զողիակոսի տասն եւ երկու բաժանումներուն կամ նշաններուն անունները . Խոյ, Յուշ, Երկուրեակի, Խեցգետնի, Առիւծ, Կոյս, Կշիռ, Կարիճ, Աղեղնաւոր, Այծեղջիւր, Զրնոս, Զիւռնի :

(1) Զողիակոս բառը առնուած է յունարէն բառէ մը որ կը նշանակէ կենդանի, որովհետեւ Զողիակոսի գրեթէ բոլոր համախմբումները կենդանի անուններ կը կրեն :

# Ջ Ե Ռ Ա Գ Ո Ր Ծ Ի Դ Ա Ս Ը

## ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔԻ ՄԷՋ

### Գ Ո Ի Լ Պ Ա Յ Հ Ի Ի Ս Ե Լ

Դասէն առաջ կամ յետոյ պէտք է տալ գուլպայի գործածութեան վրայ իրագիտական կարճ բացատրութիւն մը: Գուլպան հագուստին մէկ մասն է. կը ծածկէ սրունքը եւ եւ ոտքը. իր գլխաւոր մասերն ալ կը կոչուին սրունք եւ ոտք: Տղայք պարտին ցոյց տալ տիպար գուլպայի մը սրունքը: Գուլպային սրունքը կ'սկսի եզերքով մը, յետոյ ունի միակերպ հիւսուած միջոց մը, նեղցած մաս մը, յետոյ դարձեալ միակերպ հիւսուած միջոց մը: Ոտքն ունի կրուկը, պճեղին նեղցած մասը, միակերպ հիւսուած մաս մը եւ ոտքին ծայրին նեղցած մասը: Ասոնք կրնան ցոյց տրուիլ տիպար գուլպային վրայ: Գուլպայներ կը շինուին բուրդով, բամպակով, դերձանով եւ մետաքսով: Ե՞րբ կը հագնին բուրդէ գուլպայ, եւ ինչո՞ւ համար: Ե՞րբ կը հագնին բամպակէ կամ դերձանէ գուլպայներ: Ո՞վ կը հագնի մետաքսէ գուլպայ: Կան մեծ եւ փոքր գուլպայներ. մենք կը հիւսենք միջին մեծութեամբ գուլպայներ:

Աշակերտուհիք, իրենց ստացած նախնական ծանօթութիւններէն յետոյ (տես էջ 235—237), կրնան իրենք իրենց սկսիլ գուլպան. պէտք է վարժեցնել զանոնք ող շինելու՝ այն կերպով որ աւանդուեցաւ իրենց նոյն էջէրուն մէջ: Այս նպատակաւ, իւրաքանչիւր աշակերտի պէտք է տալ երկու կամ երեք մէթր երկայնութեամբ դերձան մը: Վարժուհին նախ ցոյց պիտի տայ թէ ի՞նչպէս պէտք է փաթթել այս դերձանը, նոյնը ընել տալով աղջկանց մինչեւ որ բաւական վարժուին. յետոյ իւրաքանչիւր շարժումի համար ուսուցանելու միեւնոյն եղանակն ի գործ պիտի դնէ, մինչեւ որ աշակերտուհիք աղէկ մը ըմբռնած ըլլան ամբողջ գործողութիւնը: Գլխաւորաբար պէտք է հսկել որ իւրաքանչիւր

ող կազմուի առանց անապարանքի, եւ դերձանը անմիջապէս շուրջանակի դարձուի՝ կազմելու համար յաջորդ օղը: Օղերը միեւնոյն դերձանով կրնան շինուիլ ու քակուիլ, մինչեւ որ աշխատութիւնը լաւ կատարուած, եւ գուլպայ մը սկսիլը կարելի ըլլայ: Հիւսքը սկսելէ վերջ պէտք է կանոնաւորապէս շարունակել: Կարեւոր է հսկել եւ ճշդել, որպէս զի գործն ամենուն ձեռք միանգամայն հաւասար չափով եւ անսխալ յաւաճանայ. քանի մը դասերէ յետոյ՝ ճշդելու գործը կրնայ աւելի քիչ անգամ կատարուիլ:

Վ Ե Ր Գ Ի Ն Ե




Հիւսելու ժամանակ ձեռքերուն դիրքը



Ծմրակապ . օղ




Ծմրակապ . Հակառակ կողմի օղ



Պարզ հիւսօք



Կրուկ մանկանց գուլպայի



Կրկին խաչաձև հիւսօք



Ներքին գուլպայ սրու



Գուլպայի ծայր



Գուլպայի ծայր

# ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՅԵԼՉԱՐԱՆՈՒԹԵԱՆ

## Դ Ա Ս Ը

### ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔԻ ՄԷՋ

#### Դ Ա Ս Ա.

1. ՀՆԱՐՈՂՈՒԹԻՒՆ. Գրասեղանս :

1<sup>0</sup> Թուումն. Յոյց տալ եւ անուանել գրասեղանին զանազան մասերը. Յենարանը, Դարակը, Ոտքերը, Ձողը, Կաղամարին ծակը, եւ այլն :

2<sup>0</sup> Խորհրդածութիւն.

Ի՞նչ փայտով կը շինուին գրասեղանները :

— Կաղնեփայտով, եղեւնափայտով, ընկուզի փայտով, մաճոգենիով, եւ այլն :

Ի՞նչ բանի կը ծառայեն գրասեղանին զանազան մասերը :

— Յենարանը աշակերտին կը ծառայէ կռթնելու : — Դարակին մէջ կը պահուին գրիչ, մատիտ, տետրակ, գիրք, եւ այլն : — Ոտքերը նեցուկ կ'ըլլան գրասեղանին : — Ձողը կը բռնէ ստքերը : — Կաղամարին ծակին մէջ կը զետեղուի կաղամարը, որպէս զի չ'ըջի սա եւ թանաքը չի թափի :

Ի՞նչ բանի կը ծառայեն գրասեղանները :

— Գրելու, գծագրելու, կարգալու, եւ այլն :

Ինչո՞ւ հաւտար գրասեղանները կը քրդեղուին :

— Որպէս զի աւելի գեղեցիկ երեւան, չուտով չաղտոտին եւ դիւրաւ մաքրուին :

2. ՇՆԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ. — Գրասեղանս :

ՆՐԱԳԻՐ. — 1<sup>0</sup> Ձեւ եւ սարածութիւնք. — Կլոր, քառակուսի, կամ երկայն է՞ : Մօտաւոր հաշուով ի՞նչ տարածութիւններ ունի : (Չափել զայն) :

2<sup>0</sup> Ձանազան մասեր. — Ի՞նչ ձեւ, ի՞նչ գոյն եւ ի՞նչ օգտակարութիւն ունի :

30 Ի՞նչ կ'ընեն այս գրասեղանին վրայ. — Աշխատու-  
թիւններ: — Անոր վրայ կը խաղանք ալ:

ԸՆԳՂԱՅՆՈՒՄՆ. — 10 Գրասեղանը՝ որուն վրայ նստած  
եմ՝ երկայն է եւ նեղ: Այս առաւօտ մէթրով մը չափեցինք  
զայն: Ունի երկու մէթր երկայնութիւն, կէս մէթր լայնու-  
թիւն եւ վաթսուն հարիւրորդամէթր բարձրութիւն:

20 Գրասեղանին վրայի տախտակը երկու մասէ բազկա-  
նած է. նեղ եւ բոլորովին հորիզոնական մաս մը՝ որուն  
վրայ կան փողածեւ փորուածք մը եւ ծակեր: Փողածեւ  
փորուածքին մէջ կը դրուի գրչակալը. ծակերուն մէջ կը  
զետեղուին կաղամարները: Երկրորդ մասը հակած է դէպ ի  
վար, որպէս զի կարելի ըլլայ յարմար դիրքով նստիլ գրե-  
լու ժամանակ: Գրասեղանը սեւ ներկուած է, որպէս զի՝  
հաւանականաբար՝ թանաքի բիծերը չերեւան:

Վրայի տախտակին ներքեւ կը գտնուին փոքր դարան-  
ներ կամ խորշեր որոց մէջ մեր գործիները կը պահենք:  
Գրասեղանին նեցուկը կը կազմեն չորս քառակուսի ոտքեր:  
Այս ոտքեր միացած են ձողով մը որ արդէն իսկ բաւական  
մաշած է, եւ որուն վրայ մեր ոտքերը կը դնենք:

30 Գրասեղանիս վրայ կ'աշխատիմ, այսինքն կը կարգամ,  
կը գրեմ, կը գծագրեմ: Երբեմն ալ կը խաղամ. բայց երբ  
ուսուցիչը տեսնէ խաղալս, կը յանդիմանուիմ, եւ կ'զգամ  
թէ արծանի եմ յանդիմանութեան. վասն զի դպրոց չենք  
գար մենք՝ խաղալու համար:

3. ՀՐԱՀԱՆԳ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՆՄԱՆՈՂՈՒԹԵԱՆ (բե-  
րանացի կամ գրաւոր). — Գրասեղանս (միւսնոյն ծրագիր):

4. ԳԻՊԱԳՐՈՒԹԻՒՆ. Սիրած անձես:

10 Կը սիրեմ մայրիկը ... (վասն զի մայրիկն է որ ...  
նաեւ ...):

20 Կը սիրեմ հայրիկը ... (անիկայ է որ ...):

30 Կը սիրեմ մեծ մայրը ... (իւնչո՞ն համար):

40 Կը սիրեմ փոքր եղբայրս ... (իւնչո՞ն համար):

### ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ԴԱՍԸ

(ՄԱՅՐԱԿԱՆ ԴՊՐՈՅ, ԾԱՂԿՈՅ, ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋ)

#### ԸՆՏԱՆԻ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՈՐԲԵՐԸ. — «Կը ճանչնամ տղայ մը որ հայրիկ չունի.  
ի՞նչու համար այս տղան դժբաղդ է, — ա՛լ չի տեսներ իր  
հօրը ժպտը, — ա՛լ չի լսեր իր հօրը խօսքը, — ա՛լ չունի  
հայր որ կիրակի օրերը զինքը պտտցնելու տանի, եւ այլն:»

«Պզտիկ Մաննիկին մայրը մեռաւ. հիմա ո՞վ պիտի խը-  
նամէ զինքը...: Առաւօտուն ո՞վ պիտի համբուրէ իր ճա-  
կատը...: Ո՞վ պիտի հագուեցնէ իր գեղեցիկ պէպէքը...:»

«Յակօր ա՛լ ո՛չ հայր ունի ո՛չ մայր. ո՞վ կուտայ իրեն  
ուտելիք...: Ո՛ւր է հիմա իր պզտիկ անկողինը...: Ի՞նչու  
չատ անգամ գերեզմանատուն կ'երթայ...:»

«Շահէնը պատառեց այն երկու շիկահաւերը որոնք  
կտուցով կեր կը տանէին իրենց ձագերուն՝ մացառներուն  
մէջ. ի՞նչ եղան խեղճ փոքրիկ թռչունները:» Եւ այլն:

#### ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ

ՓՈՔՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ. — Վառարանը:

Ի՞նչ կը տեսնենք վառարանին մէջ:

Վառարանին մէջ կը տեսնենք կրակ. — Վառարանին մէջ  
կը տեսնենք կոճղեր. — կես այրած փայտեր, — ուտեր, —  
ածուխ, — այրած փայտեր, — բոց, — մոխիր, — մուր...:

Ի՞նչ կը տեսնենք վառարանին քով:

Վառարանին քով կը տեսնենք քիւմը, — ունեղի, — փեոց  
մը, — երկաթի վանդակապս մը...:

Ի՞նչ կը տեսնենք վառարանին վերի դին:

Վառարանին վերի դին կը տեսնենք խոզովակներ, —  
մուխ, — կայծեր...:

ՄԵԾԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ. — Յեռկ եւ գիւր:

Վարժուհին պիտի անուանէ անձ մը, կենդանի մը կամ իր մը. աշակերտը հակադրութիւն մը պիտի գտնէ ցերեկուան եւ գիշերուան միջեւ :

1. Գործաւորը . Յերեկը՝ գործաւորը կ'աշխատի . գիշերը՝ գործաւորը կը հանգչի : — Հնձողը . Յերեկը՝ հնձողը հունձք կ'ընէ . գիշերը՝ հնձողը խորունկ կը քնանայ : — Զկնորսը . Յերեկը՝ ձկնորսն իր ուռկանները կը պատրաստէ . գիշերը՝ ձուկ կը բռնէ . . . :

2. Բռն . Յերեկը բռն ծակերու մէջ կը պահուի . գիշերը՝ մուկ կ'ուտէ : — Նապաստակը . Յերեկը՝ նապաստակը իր որջին մէջ կը մնայ . գիշերը՝ նապաստակը իր սնունդը կը ճարէ :

3. Արեւը . Յերեկը՝ արեւը կը փայլի . գիշերը՝ արեւը կ'աներեւութանայ . . . : Եւայլն :

ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ . — 1. Պատկերի ընթերցումն . (Տես էջ 48 եւ 231) :

2. Առարկայի վրայ խօսակցութիւն . — Ակնոցը . Տղայք կ'ըսեն ինչ որ կ'ընէ վարժուհին .

Օրիորդ , ակնոցին պատեանք առիք , — Օրիորդ , պատեանը կը բանաք , — Ակնոցը դուրս կը հանէք , — Ստեղները կը բանաք , — Ապակիները կը սրբէք , — Ակնոցը ձեր աչքին կ'անցունէք , — Գիրքը կը կարդաք . . . :

Վարժուհին ցոյց կուտայ , եւ տղայք կ'ըսեն .

Ակնոցը ունի ստեղներ , — Ստեղները կորացած են , — Ստեղները կցուած են ակնոցին շրջանակին , — Երկու ապակիները իրարու բոլորովին նման են , եւայլն :

Վարժուհին կ'ըսէ , եւ տղայք կը կրկնեն .

Մերերը ակնոց կը գործածեն , — Տղայք ակնոցի պէտք չունին . — Ակնոցը կը գնեն ակնոցավաճառէն , եւայլն :

3. Խաղ . — Եզր եւ գործը :

Տղայք երկու խումբի կը բաժնուին . եզներ եւ գորտեր . Եզները կը փափագին ըլլալ ինչ որ փոքր է . գորտերը կը փափագին ըլլալ ինչ որ մեծ եւ խոշոր է :

Եզ մը . — Կ'ուզէի սոխակ ըլլալ :

Գորտ մը . — Կ'ուզէի փիղ ըլլալ :

Եզ մը . — Կ'ուզէի ձանձի թաթիկներ ունենալ :

Գորտ մը . — Կ'ուզէի ուղտի սրունքներ ունենալ , եւայլն :

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ . — ԳԻՐ

ՄԵՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ . — Սովրեցնել ամենէն աւելի գործածական մէկ քանի բաղաձայններ , ինչպէս կ , մ , շ :

Ամենէն աւելի գործածական բաղաձայններուն մէջ՝ յաջորդաբար պիտի առնենք այնպիսիներ որոց ձեւը խիստ կը տարբերի ուրիշ գրերէ , եւ որոց արտասանութիւնը ուրիշ գրերու արտասանութեան հետ չի շփոթուիր : Կարելի եղածին չափ շուտով պէտք է միացնել զանոնք ձայնաւորներու հետ եւ կազմել պզտիկ բառեր եւ շատ պարզ խօսքեր :

Տղայք գիրը պիտի ձեւացնեն մատով՝ միջոցին մէջ , — սեղանին վրայ , — ձեռքին ափին մէջ . . . :

Տղայք գիրը կը փնտռեն սեւ տախտակին վրայ կաւիճով գրուած բառերուն մէջ , — գրքերուն մէջ . . . :

Տղայք գիրը կը գրեն քարտախտակին վրայ կամ թուղթի վրայ (մատիտով) :

Հ Ա Շ Ի Ի

2 ԹՈՒԱՆՇԱՆԸ . — Գրաւոր վարժութիւններ :

Խոշոր 2 մը ցուցնել . — Թո՛ղ տղայք նմանցնեն զայն մատով , — գերձանով , — թուղթի երկզով մը . . . :

2 փնտռել շարժուն թուանշաններուն մէջ , — պատի օրացուցին թերթիկներուն մէջ , — գրքին երեսներուն մէջ , եւայլն :

Քարտախտակին կամ թուղթին վրայ գծել շատ մեծ 2 մը , — միջին մեծութեամբ 2 մը , — պզտիկ 2 մը , — շատ մը 2՝ մէկ գծի վրայ շարուած , շատ մը 2՝ վրայէ վրայ դրուած , — շատ մը 2՝ զոյգ զոյգ խմբուած , — շատ մը 1 եւ շատ մը 2՝ իրարու ետեւէ փոխն ի փոխը գրուած . . . եւայլն :



**ԳԻՏՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ**

Ահաւասիկ մուրճս . գամ մը կը գամեմ : եւ տղայք , ա-  
մենն ի միասին , կը նմանցնեն շարժումը մուրճին որ կը  
գարնէ ու կը գարնէ :

Ահաւասիկ աքծանը (ֆելիքթին) . գամ մը կը հանեմ : եւ  
տղայք իրենք ալ կ'ընեն սեղմելու , դարձնելու եւ դուրս փ-  
շելու շարժումներ :

Ահաւասիկ խարտոցը , քերիչը , սղոցը , պտուտակի բա-  
նային , հերիւնը , շաղափը (մասգապ) , եւ այլն :

Այս վարժութիւնն պիտի դրդէ տղայքը՝ դիտելու ար-  
հեստաւորներու աշխատութիւններն . պէտք չէ թողուլ որ  
վարժուին նայիլ՝ առանց տեսնելու :

**ՅԵՇՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐժՈՒԹԻՒՆ**

**ԿՈՅՐԵՐԸ**

Յառա՛ջ , յառա՛ջ , խարխափելով , ջրփալէն  
Առաջ կ'երթան . սքեքեքին միտ վախ ունի :  
Վա՛խ կոյրերուն՝ մութերուն մէջ կը փալեն  
եւ չեն տեսնուիր արեւ՝ կապոյտն ալ երկնի :


Ա՛խ փաշտով եւ տեսնելու զուրկ յոյսէ ,  
Յուպին վրայ կը կրքնին , կուգան ման :  
Ի՞նչ է արդեօք այսպէս կեանք մը զուրկ յոյսէ :  
— Գիշեր՝ , գիշեր՝ , մութ ու խաւար գերեզման :

ՄԻՆՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

**ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԱՐժՈՒԹԻՒՆՔ**

Տեսն ՄԱՔՐՈՂՆԵՐԸ . — (Գծագրու թեամբ) ներկայացնել  
երկու պզտիկ ծխան մաքրողներ՝ իրենց վարպետին հետ :  
Անոնցմէ մին ճամբուն եզրը նստած է եւ կուլայ , մտածե-  
լով իր հօրը եւ իր մօրը վրայ որոնք շատ հեռուն մնացած  
են : Միւսը շերտ մը չոր հաց կը լափէ :

**ՉՅՈՒՔԻ ՎԱՐժՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԽԱՂՔ**



10 ԿՏՐԱՏՈՒՄ . — Թերթ  
մը կամ երես մը թուղթը  
երկու բաժնե՛լ՝ երկայնքէն ,  
— երկու կէսերու բաժնե՛լ՝  
լայնքէն , — երկու կէսերու  
բաժնե՛լ՝ մէկ անկիւնէն միւ-  
սը , եւ այլն :

20 Ճարճոնական հողմա-  
հար . — 159րդ էջին մէջ բա-  
ցատրեցինք թէ սովորական  
հողմահարը ի՞նչպէս կը շի-  
նուի : Եթէ կրկին լայնու-  
թեամբ թուղթի երկզ մ'առ-  
նենք , արտաքին ծալքերը

միացնենք , յետոյ՝ ամուր  
դերձանով մը ծալքերուն  
խարխուր կապենք , կրկին  
հողմահարը բանալով՝ կ'ու-  
նենանք ամբողջ բոլորակ մը  
որուն շառաւիղներն են ծալ-  
քերը : Այն ատեն կ'ունե-  
նանք ճարճոնական հողմա-  
հարը : Հողմահարին բռնա-  
տեղը կամ կոթը ունենալու  
համար , երկու ծալքերուն  
մէջտեղ յարդի շիւղ մը ան-  
ցունելու է :

# ԺՈՂՈՎՂՐԴԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

## Ն Ե Ի Ր Ա Ս Թ Ե Ն Ի (1)

Ա.

### ՆԵԻՐԱՍԹԵՆԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Նեւրասթենին ջղային հիւանդութիւն մ'է: Նիւ-Եորքցի բժիշկ մը՝ Պէրա՝ 1869 ին Նեւրասթենի անուանեց սոյն հիւանդութիւնը, թէեւ այդ թուականէն առաջ զանազան անուններ ունէր, ինչպէս Ողնածուծային գրգռում (Irritation spinal), Ընդհանուր ջղացաւ (Nevralgie générale), Զղայ-նութիւն (Nervosisme), Զղային սպառում (Epuisement nerveux), Ընդհանուր գերզգայնութիւն (Hyperesthésie générale), եւ այլն:

Վերջերս բժիշկները սկսան ալ աւելի զբաղիլ սոյն հիւանդութեամբ եւ անոր գոյութիւնը հաստատող մեծ թուով խառնակ եւ զանազան ախտանիշեր անոր արդիւնքը նկատեցին:

Այս ախտին բնութիւնը, կամ լաւ եւս, ինչպէս յառաջ գալը՝ ծանօթ չէ, այսինքն չենք գիտեր թէ ջղային կեդրոններն ինչ փոփոխութիւններ կը կրեն որ այս ախտը երեւան կ'եղնէ. սա՛ միայն հաւանական է թէ թերեւս, ջղային կեդրոններու մշտնջենական գրգռման հետեւանքն է այդ հիւանդութիւնը: Քաղաքակրթութեան հսկայաքայլ յառաջդիմութեան պատճառաւ, ջղակեդրոնները գրգռող ազդակներն ալ բազմապատկուած, եւ այս առթիւ ներկայ դարուս՝ սոյն ախտէն տառապողներու թիւն ալ անհամեմատ շատ-

ցած է: Մինչեւ իսկ ըսողներ կան թէ՛ հին ժամանակներ սոյն ախտը գոյութիւն չունէր, սակայն այդ կարծիքը հաստատ հիմ չունի, պէտք է գիտնալ որ աշխարհիս ստեղծումէն ի վեր, կեանքի պայքարին հետ սոյն ախտն ալ կար միշտ. սակայն որովհետեւ հիմա՝ կեանքի պայքարն ալ աւելի սաստկացած, թէեւ քաղաքակրթութիւնն յառաջդիմած՝ նեւրասթենին ալ համընթաց յառաջ գացած է:

Հին ցարնաֆին՝ մասնաւորապէս Եւրոպայի քաղաքակիրթ ազգերուն մէջ՝ այս ախտը տարածուած է. սակայն նոր ցարնաֆին՝ Ամերիկայի՝ մէջ աւելի ծաւալած է. նոյն իսկ Պէրտ Ամերիկեան ախտ կոչել չէ վարանաց զայն. թէ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ տնտեսական, առեւտրական, դիտական, քաղաքական, եւ այլն, խնդիրներ մարդկային ուղեղը այնչափ կ'զբաղեցնեն որ անոր գրգռումը ծայրագոյն աստիճանի հասած կը համարուի, որով նեւրասթենին ալ աւելի ընդարձակորէն ճարակ գտած կ'ըլլայ:

Մանուկներն ու ծերերը դրեթէ այս ախտէն զերծ են. ընդհանրապէս 20-էն 50 տարեկաններուն մէջ կը պատահի. որովհետեւ սոյն հասակներուն մէջ կենաց դժուարին պայքարը մղելու պէտքն աւելի զգալի կ'ըլլայ: Այրերն աւելի ենթակայ են քան թէ կիները. վիճակագրութեանց համեմատ 828 նեւրասթենիքներէ 604-ը այր է, իսկ 224-ը կին: Այս տարբերութեան պատճառն են այրերուն չարաչար աշխատութիւնները, վիշտերու եւ ապրելու միջոցներուն վրայ ծայրայեղ մտածումն: Մտաւոր չարաչար աշխատութիւնը պահաջող արուեստներն ալ աւելի տրամադիր կ'ընեն մարդս նեւրասթենիի. ինչպէս բժիշկները, փաստաբանները, ուսուցիչները, ուսանողներն աւելի տրամադիր են քան երկրագործներն եւ այլեւայլ գործաւորներն, ժառանգականութիւնը, ինչպէս միւս ջղային հիւանդութեանց մէջ, նոյնպէս նեւրասթենիի մէջ մեծ դեր կը խաղայ: Զխախտուորներէ սերած տղաքներն աւելի տրամադիր են սոյն հիւանդութեան: Իսրէրիէ, շախարախէ, երկարուրեֆի աւա-

(1) Թէպէտ հայերէն շատ մը անուններ տրուած են սոյն հիւանդութեան, ինչպէս Զղայնութիւն, Զղայնութիւն, Զղայնութիւն, Զղայնութիւն, սակայն աւելի յարմար գտեցինք յիշեալ բժիշկին՝ Պէրտի՝ կամ միջազգային բառը, այսինքն նեւրասթենի, նոյնուձեւ գործածել:

գի, յօղացաւե, յօղակաթուածե (goutte) տառապողները նեւրասթենի տրամադիր են: Դասխարակուքեան եւ կրթութեան պակասը՝ մարդս արտաքին տառապանքներու տոկաւու անկարող ընելով՝ նեւրասթենի աւելի շատ տրամադիր կ'ընէ:

Արդարեւ վերոյիշեալ պատճառներէն մին կամ աւելին ունեցող անձ մը նեւրասթենի պատրաստուած կը համարուի. որպէս զի աստը երեւան ելնէ, պէտք է դուրսէն ուրիշ պատճառներ ալ ազդեն. այս պատճառները առթիջ պատճառներ կամ ախտաշայտ կը կոչուին.

Տեսնենք այժմ թէ նեւրասթենի տրամադիր անձ մը ի՞նչ առթիջ պատճառներու ընդհարելու է, որպէս զի իր հիւանդութիւնը մերկապարանոց երեւան գայ:

Ամենէն առաջ պէտք է յիշատակել ուղեղային յոգևորթիւնը: Ուղեղը յոգևեցնող պատճառներուն գլխաւորը մտաւորական չափազանց աշխատութիւնն է. գիտունները, գըրագէտները, քննութեանց եւ մրցմանց պատրաստուող երիտասարդները չափազանց աշխատութենէ մը ետք՝ կրնան նեւրասթենի ախտանիշերը ունենալ. բայց քանի մը օրուան հանգիստէ եւ օգտափոխութենէ ու ջրարուժութենէ յետոյ՝ կրնան այս նշաններն անհետանալ անվտանգ: Բայց երբ աշխատութիւններն անընդհատ կերպով շարունակուին, վտանգն ալ այն աստիճան կ'աւելնայ. Այս մտաւոր աշխատութեանց երբ ուրիշ հոգեր կ'ընկերանան, զոր օրինակ մրցումի կամ քննութեան պատրաստուող պատանին իր տալիք քննութեան կամ մրցման յաջողութեան կամ անյաջողութեան վրայ մտածելով յուզումներ ունենայ, ջլալին դըրութիւնն աւելի շատ կը յոգնի:

Քանի որ քննութեան պատրաստուող պատանին իբր օրինակ մէջ բերինք, տեսնենք դպրոցական յոգևորթիւններն ի՞նչպէս կ'ազդեն ջլալին յօրինուածութեանց վրայ:

Անժխտելի ճշմարտութիւն մ'է թէ բարձրագոյն նախակրթարանները եւ համալսարանները յաճախող աշակերտները

րու առողջական վիճակը նախանձելի ըլլալէ հետի է. եւ գրեթէ բոլորն ալ նեւրասթենի ենթակայ են, որուն գլխաւոր նշաններն են բարկացոտում, ջլաձգական խնդումներ, սրտի բարախումներ եւ վերջապէս մտային դանդաղութիւն եւ աշխատելու անկարողութիւն. յօրանջ, քնանալու մեծ տենչ, ուշադրութեան նուազութիւն եւ մեղմադճոտ ու գունատ դէմք: Հաստատուած է թէ երկրորդական ուսմանց միջին կարգերը գտնուող 588 ուսանողներէ 180ը կ'ունենան նեւրասթենի նշաններէն եղող սրտի բարախումներ, գլխի ցաւ, քնատութիւն, ջլացաւեր, եւ դասարանի աստիճանը ո՛րչափ բարձրանայ, ինչպէս նէսթէրօֆի խմբագրած հետեւեալ վիճակացոյցէն կը հասկցուի, նեւրասթենիքներու թիւն ալ կ'աւելնայ.

Նախապատրաստական դասարանի աշակերտներէն	100ին	8ը
Ա. կարգի	»	15ը
Բ. »	»	22ը
Գ. »	»	28ը
Դ. »	»	44ը
Ե. »	»	57ը
Չ. »	»	58ը
Է. »	»	64ը
Ը. »	»	89ը

Նեւրասթենի ենթակայ եղած են:

Նեւրասթենի պատճառը միայն մտաւոր աշխատութիւններ չեն ուսանողին համար, այլ աւելի ծանրակշիռ պատճառներ ալ կ'աւելնան իր ուսանողական կեանքին մէջ ի նպաստ նոյն հիւանդութեան: Նախնական վարժարանաց մէջ գրեթէ այնչափ ծանր մտաւոր աշխատութիւն չի կայ, երկրորդական ուսումնարանաց մէջ միայն մէկ երկու աշակերտ կրնան գտնուիլ մտաւորական ծանր աշխատութեանց ենթակայ, այն ալ միայն իրենց դասին մէջ ունեցած առաջնութիւնը կամ երկրորդութիւնը չկորսցնելու համար, միւս ուսանողներն գրեթէ գիտեն իրենց ուղեղային առողջութիւնը պահպանել, երբ իրենց մտաւոր աշխատութեանց մէջ քիչ մը

յոգնին, գիրք կամ գիրն մէկդի թողլով՝ խաղով կամ ուրիշ զբօսանքով կ'զբաղին:

16—18 տարեկան տղաքներն են որ բարձրագոյն վարժարան մը, ինչպէս բժշկական, իրաւագիտական վարժարանները, վարժապետանոց, եւ այլն, մտնելու մեծ տենչ մը կ'զգան եւ քննութեանց մէջ յաջողելու եւ իրենց սոյն տենչն իրականացնելու համար ամէն ջանք ու ճիգ ի գործ կը դնեն. ահա՛ւաստի այս ճիգերն ալ կուգան կը միանան մտային աշխատութեանց եւ կ'ըլլան իբր առթիւ պատճառ ներաստթենիի:

Բարձրագոյն վարժարանի մը մէջ ընդունուելէ վերջ՝ խեղճ ուսանողը ներաստթենիի ենթարկող պատճառները տակաւին կը շարունակուին: Հոս ալ տենչը մեծ գեր ունի. ուսանողը միշտ իր աշխատութեան արդիւնքը վայելել ուզելով, կը ձգտի ժամ առաջ իր նպատակին հասնիլ:

Բարձրագոյն վարժարաններն ընդհանրապէս մայրաքաղաքներու եւ կամ գլխաւոր քաղաքներու մէջ գտնուելուն պատճառաւ, զաւառացի ուսանողք իրենց ապագան պարտելու համար կը թողուն ծնող, ծննդավայր, եւ այլն, եւ կուգան նժդեհութեան մէջ ապրելով ուսանիլ՝ տարիներով խաներու եւ սենեակներու անկիւններու մէջ քաշքռտելով իրենց թանկագին կեանքը: Ասոնց ո՛չ ճաշի, ո՛չ աշխատութեան եւ ո՛չ ալ ննջելու ու հանգստի ժամերն որոշ են. բաց աստի, կան ա՛յնպիսի ուսանողներ որոնք պարտաւորուած են նիւթականն ապահովելու համար ուրիշ գործով մ'ալ զբաղիլ: Մէկ կողմէ ապրուստի մտածմունք, դասերու եւ քննութեանց պատրաստութիւնք եւ միւս կողմանէ ծննդավայրին ու ծնողաց կարօտը կուգան կը ջախջախեն խեղճ ուսանողին ուղեղն ու մարմինը միանգամայն: Այս կարգի ուսանողներու մէջ կը գտնուին նաեւ ամուսնացեալներ որոց ընտանեկան խոչնդոտները կուգան կ'աւելնան վերոյիշեալ անպատեհութեանց վրայ:

Եթէ վարժարանը գիշերօթիկ է, գասարաններու եւ

աշխատանոցներու եւ ննջարաններու բազմութիւնն ալ մեծ գեր ունի, ինչպէս նաեւ վարժարանի կարգապահական եւ առողջապահական կանոնները, դասատուներու ուսանողաց հետ վարմունքը, եւ այլն:

Մտաւոր յոգնութիւններէ վերջ կուգան քառոյակակ յոգնութիւններ իրրեւ ճշմարիտ առթիւ պատճառներ ներաստթենիի, որոցմէ գլխաւորներն են վիշտերը, հոգերը, պատրանքը, խղճի խայթերը, սիրոյ անհամաձայնութիւնը, զաւակներու կամ սիրելիի մը մահը, մեծ հարստութեան մը յանկարծուստ փճացումը, նիւթական կեանքի խոչնդոտները:

Ընկերակալ կեանքի վերաբերեալ պատշաճութիւնները, այսինքն այցելութիւնները, կոչունքները, պարահանդէսները, երեկոյթները, զանազան նորաձեւութեանց հետեւելու իղձերը, ֆիզիքական յոգնութեանց պատճառներ ըլլալով, ներաստթենին կը ծնուցանեն:

Միակակն չափազանց յոգնութիւնները կրնան նաեւ ներաստթենի յառաջ բերել, սակայն խիստ հազուագիւտ կերպով: Ալքոլի, ծխախոտի, ափիոնի չարաչար ու ծայրայեղ գործածութիւններն ալ ներաստթենի կը պատճառեն: Արհեստի բնութեան իբր արդիւնք քունաւորուող անձերու, ինչպէս նկարիչներու, կապարով եւ սնդիկով աշխատող գործաւորներու նաեւ յաճախադէպ է ներաստթենին:

Վարակիչ հիւանդութիւններն ալ, ինչպէս ժանտատենդը, համաճարակ հարբուխը (grippe), Ափրոզիտեան հիւանդութիւնները, հիւժախտը կրնան ներաստթենի բերել:

Ուղեղի եւ ողնաձուծի զանազան հիւանդութիւններն ալ կրնան ներաստթենի պատճառել:

Ներաստթենին երբեմն յանկարծական յուզումէ կամ սոսկումէ մ'ալ կրնայ յառաջ գալ. ինչպէս շոգեկառքի արկածները, հանքային պայթումները եւ երկրաշարժի ցնցումները: Դժուարամարտութիւնը, ծննդական գործարանաց հիւանդութիւնը, սեռական յարաբերութեանց չափազանցութիւնը, գիջութիւնը, եւ այլն, այս աստի կրնան դոյացման տեղի տալ:



8047. P. 261/262

## ՏԻԿԻՆ ԳԱՅԻԱՆԷ ՄԱՏԱԿԵԱՆ

Կովկասէն գալով մեր մէջ, նշանակիչ դէմք մ'եղաւ: Իր առաջին գործն եղաւ Գատը գիւղի մէջ հիմնել Մանկապարտէզ մը՝ որ քիչ ատեն միայն ապրեցաւ, եւ որուն համար չենք կրնար ըսել թէ առաջին Մանկապարտէզը եղաւ ի Պոլիս, քանի որ իրմէն տարիներ առաջ՝ առաջին Մանկապարտէզը բացուած էր, 1880ին, ի Գումգաբու հաստատուած Սուրէնեան վարժարանին մէջ, եւ յետոյ երկրորդ Մանկապարտէզ մը գոյութիւն ունեցած էր ի Խասգիւղ: Տիկին Մատակեանի հետ գրեթէ միեւնոյն ժամանակ, երիտասարդ ուսուցիչ մը, Յակոբ Էտիլեան, նուիրուած էր Մանկապարտէզներու դրութեան ուսումնասիրութեան եւ կիրարկութեան, յաջողելով կանոնաւոր Մանկապարտէզներ հաստատել յիւսկիւտար եւ ի Գատը գիւղ, եւ պատրաստելով մէկ քանի կարող մանկապարտիզականուհիներ, որոնք այժմ իր գործը կը շարունակեն զանազան տեղեր բաւական յաջողութեամբ: Տիկին Մատակեանի ամենէն կարեւոր գործն եղաւ Բերայի մէջ հաստատել Դասընթացք մը եւ հասցունել բազմաթիւ մանկապարտիզականուհիներ, որք եթէ նորութիւն մը չի ներմուծեցին ուսուցման եղանակին մէջ, գէթ սա օգուտն ունեցան որ մայրաքաղաքիս ամէն թաղերուն մէջ եւ ի գաւառս ընդհանրացուցին Մանկապարտէզ անունը, կարմիր գոգնոցը, երգն ու պարը:

Տիկին Մատակեան, իբրեւ գործունեայ կին, ժամանակ մը վարեց նաեւ Նուրեան Յովհ. Էֆէնտիի այնքան փայլուն վիճակի մէջ հիմնարկած Բերայի ազնկանց Արհեստանոցը՝ որ հետզհետէ նսեմացաւ եւ վերջապէս փակուեցաւ: Մէկ քանի տարիէ ի վեր Տիկին Մատակեան ինքզինքը նուիրած էր Բերայի Աղքատախնամին եւ Դարմանատան, որոց հոգին եղած էր: Իր կանխահաս մահով, կ'անհետի գործունեայ եւ ձեռներեց կնոջ տիպար մը եւ պզտիկներու կրթութեան նուիրեալ անխոնջ գործաւորուհի մը:

0023283

0023283

2013 5980

« Ազգային գրադարան



NL0023283

